ՀՍՍՀ
ԱԿԱԴԵՄԻԱ

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ЯЗЫКА ИМ. АЧАРЯНА

Н. А. ПАРНАСЯН

СИНТАКСИЧЕСКИЕ СИНОНИМЫ В СОВРЕМЕННОМ АРМЯНСКОМ ЯЗЫКЕ

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1970

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՐ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Ն. Ա. ՊԱՌՆԱՍՅԱՆ

ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ՀԱՄԱՆԻՇՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1970

4 Ар
9—25

Աշխատությունը նվիրված է ժամանակակից հայերենի առ այսօր չուսումնասիրված հարցերից մեկի՝ շարահյուսական համանիշների քննությանը։ Ներածության մեջ տրված է տեսական ակնարկ քերականական, մասնավորապես շարահյուսական համանիշների վերաբերյալ, շարադրված են այն սկզբունքները, որոնցով առաջնորդվել է հեղինակը ուսումնասիրությունը կատարելիս։ Հաջորդ գլուխներում հանգամանորեն հետազոտված են նախադասության բնույթի, կառուցվածքի, ինչպես նաև նախադասության անդամների քերականական արտահայտության հետ կապված համանիշները։ Ուսումնասիրությունը կատարված է հայ դասական և ժամանակակից գեղարվեստական գրականության, մամուլի ու հրապարակախոսության լեզվից քաղած փաստական հարուստ նյութի հիման վրա։

7—1

ԱՌԱՋԱԲԱՆ

Համանիշությունը լեզվաբանության՝ ամենաքիչ ուսումնասիրված և մշակված հարցերից է: Միաժամանակ դա այնպիսի լեզվական երևույթ է, որի ուսումնասիրության կարևորությունը լեզվի արտահայտության պլանի և բովանդակության պլանի փոխհարաբերությունները վեր հանելու, լեզվական համակարգի, որպես հաղորդակցման միջոցի, ամբողջական ուսումնասիրությունը իրականացնելու համար ընդունվում է բոլորի կողմից. Կապված լինելով լեզվի իմաստային կողմի հետ՝ համանիշությունը հատուկ է լեզվական այն բոլոր մակարդակներին, որոնք ունեն իմաստակիր միավորներ. այն է՝ բառական, ձևաբանական և շարահյուսական մակարդակներին: Վերջին երկու մակարդակներում երևան եկած համանիշները խմբավորվում են մեկ խմբի՝ քերականական համանիշներ խմբի մեջ:

Նորագույն լեզվաբանական գրականության մեջ վերջին շրջանում ուժեղացել է հետաքրքրությունը հատկապես դեպի քերականական համանիշները՝ կապված փոխակերպությունների մեթոդի մշակման հետ: Այլ է պատկերը, սակայն, հայ քերականագիտության մեջ: Ցավոք, պետք է նշել, որ հայ քերականագիտության մեջ առ այսօր համանիշները, հատկապես քերականական համանիշները ուսումնասիրության հատուկ նյութ չեն հանդիսացել: Միայն երբեմն քերականական այս կամ այն հարցի ուսումնասիրությանը նվիրված առանձին աշխատություններում հանդիպում ենք ակնարկների որոշ քերականական կառուցվածքների համանիշ լինելու վերաբերյալ: Այդ հանգամանքը հաշվի առնելով, ինչպես նաև նկատի առնելով քերականական համանիշների ուսումնասիրության կարևորությունը լեզվի քերականական կառուցվածքի ամ-

բողջական ուսումնասիրության, ինչպես նաև լեզվի ոճական-արտահայտչական միջոցների վերհանման բնագավառում, ձեռնամուխ եղանք բերականական համանիշների ուսումնասիրությանը ժամանակակից հայերենում:

Սույն աշխատությունը նվիրված է շարահյուսական համանիշների ուսումնասիրությանը: Շարահյուսական համանիշները լեզվում ունեն շատ մեծ ընդգրկում: Բավական է ասել, որ չորս բառից բաղկացած նախադասության միայն շարադասության և հնչերանգի փոփոխությամբ կարելի է ստանալ 124 համանիշ տարբերակ: Սույն աշխատության մեջ մենք սահմանափակվել ենք հիմնականում պարզ նախադասության սահմաններում, տալով միայն նախադասության բնույթի, կառուցվածքի, ինչպես նաև նախադասության անդամների բերականական դրսևորման հետ կապված համանիշությունը:

Աշխատությունը գրելիս օգտագործել ենք ժամանակակից հայերենի շարահյուսական կառուցվածքի ուսումնասիրությանը նվիրված աշխատությունները, ինչպես նաև ընդհանուր լեզվաբանական գրականության մեջ եղած այս հարցին նվիրված ուսումնասիրությունները: Իհարկե, հիմնական նյութ մեզ համար ծառայել է հենց ժամանակակից հայոց լեզուն, հայ դասական և ժամանակակից գրականության, մամուլի լեզվի, ինչպես նաև մասամբ բանավոր խոսքի ուսումնասիրությունը, որոնցից քաղված օրինակներով էլ հենց աշխատել ենք հիմնավորել մեր եզրակացությունները՝ շարահյուսական տարբեր կառուցվածքների համանիշության վերաբերյալ:

Աշխատության մեջ անշուշտ կլինեն թերի լուսաբանված, ինչպես նաև վիճելի հարցեր՝ կապված մի կողմից հարցի առաջին անգամ ուսումնասիրվելու, մյուս կողմից՝ նյութի առանձնահատկության հետ: Մենք սիրով կընդունենք աշխատանքի վերաբերյալ եղած յուրաքանչյուր դիտողություն, որը կօժանդակի մեզ աշխատանքը ամբողջացնելու և բերականական համանիշների ամբողջական ուսումնասիրությունը ավարտին հասցնելու գործում:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայտնի է, որ լեզուն ունի զարգացման իր ներքին օրինաչափությունները։ Միաժամանակ լեզվի մեջ փոփոխություններ են առաջանում նաև մարդկային հասարակության, գիտության, տեխնիկայի զարգացմանը զուգընթաց։ Այդ փոփոխությունները ամենաանմիջականն կերպով կատարվում են բառային կազմի մեջ. առաջանում են նորանոր բառեր, փոխվում են արդեն գոյություն ունեցող շատ բառերի իմաստները, բառերը իրենց հին իմաստների հետ մեկտեղ ձեռք են բերում նոր իմաստներ և այլն։ Այդ ընթացքում հաճախ միևնույն առարկան, երևույթը կամ հատկանիշը անվանվում են տարբեր բառերով, կատարվում են տարբեր բառերի իմաստային մերձեցումներ, այսինքն՝ առաջանում են բառային համանիշներ։ Մարդկային մտածողության, հասարակության զարգացմանը զուգընթաց փոփոխություններ են առաջանում նաև լեզվի քերականական կառուցվածքի մեջ։ Եվ դա բնական է։ Ավելի խորը ճանաչելով բնությունը, ռեալ իրականության առարկաների, երևույթների միջև եղած կապը, պատճառային պայմանավորվածությունը և այլն՝ մարդը որոնում է նորանոր միջոցներ այդ հարաբերությունները ավելի ճշգրիտ դրսևորելու համար։ Դրա հետ կապված առաջանում են նորանոր ձևեր ու փոփոխություններ նաև լեզվի քերականական կառուցվածքի, հատկապես շարահյուսության մեջ։ Միաժամանակ խոսքը ավելի դիպուկ, պատկերավոր և և արտահայտիչ դարձնելու, ինչպես նաև միօրինակությունից խուսափելու նպատակով հաճախ երևույթների, առարկաների միջև եղած միևնույն հարաբերությունները դրսևորելու համար նույնպես գործածվում են քերականական տարբեր միջոցներ ու ձևեր,

այսինքն՝ կան համանիշներ նաև լեզվի քերականական կառուցվածքի մեջ։

Համանիշները բառական կազմի ու քերականության մեջ լեզվի միասնական համանիշական համակարգի օղակներն են։ Նրանք իրավամբ համարվում են լեզվի ճկունության, զարգացածության, հարստության չափանիշ։ Եվ իրոք. տարբերվելով իրարից իմաստային նրբերանգներով և ոճական երանգավորումով, համանիշները ծառայում են մտքերն ավելի ճշգրտորեն հաղորդելուն, ասացվածքին պարզություն ու գեղեցկություն տալուն, հնչյունաբանորեն և ոճական առումով խոսքը բազմազան դարձնելուն։

Ձևայած լեզվական համակարգում ունեցած իրենց մեծ դերին և տարածվածությանը, համանիշները առ այսօր մնում են լեզվաբանության համեմատաբար քիչ ուսումնասիրված ու մշակված հարցերից մեկը։ Ոչ մեզանում և ոչ էլ արտասահմանյան լեզվաբանական գրականության մեջ չկա լեզվական այս երևույթի վերաբերյալ այնպիսի ուսումնասիրություն, որը չլինի բանավիճային։ Հատկապես մեծ դժվարություն է ներկայացնում և վիճաբանությունների տեղիք է տալիս համանիշների սահմանումը, նրանց ընդգրկման սահմանները որոշելը։

Ամենաընդհանուր կերպով ընդունված է ասել, որ համանիշ են կոչվում ձևով տարբեր, իմաստով խիստ մոտ բառերը, բառաձևերը, բառակապակցությունները, նախադասությունները և այլն։ Այսպես՝ համանիշ են խանգարել–խափանել, արդարացի–իրավացի, մտածել–մտորել–խորհել, հիանալի–հրաշալի, հրդեհել–հրկիզել, վարանել–երկմտել բառերը, բարձր որակի աշխատանք–բարձր որակ ունեցող աշխատանք–բարձրորակ աշխատանք, սև աչքերով աղջիկ–սևաչյա աղջիկ կապակցությունները, Հրավերն ընդունվեց ուրախությամբ–Հրավերն ընդունեցին ուրախությամբ, Ինչպե՞ս կարող եմ գնալ–Ձեմ կարող գնալ նախադասությունները և այլն։

Համանիշները բաժանվում են երկու խմբի՝ բառական համանիշների և քերականական համանիշների։ Բառական համանիշների ուսումնասիրության առարկան մեկն է՝ բառը և նրա իմաստը. հետևաբար բառական համանիշների ուսումնասիրությունը վերա-

բերում է բառագիտության, կազմում է իմաստաբանության բաժիններից մեկը[1]։ Ի տարբերություն բառական համանիշների՝ քերականական համանիշները ունեն շատ լայն ընդգրկում. այն է՝ բառի ձևը, բառակապակցությունը, նախադասությունը, բարդ նախադասությունն ու դերբայական դարձվածները և այլն։

Հայ քերականագիտության մեջ համանիշության մասին խոսվել է միայն բառագիտության մեջ, իսկ քերականական համանիշները առ այսօր չեն ուսումնասիրվել[2]։ Ճիշտ է, քերականության հարցերին նվիրված ուսումնասիրություններում հաճախ խոսվում է միևնույն քերականական հարաբերության դրսևորման տարբեր ձևերի մասին, սակայն վերջիններս չեն դիտվել որպես քերականական հատուկ երևույթ և հատուկ ուսումնասիրության չեն ենթարկվել։ Իհարկե, որոշ աշխատություններում հանդիպում են նաև ակնարկներ որոշ քերականական ձևերի համանիշ լինելու վերաբերյալ։ Այսպես՝ Մ. Աբեղյանը «Հայոց լեզվի տեսություն» աշխատության «Բառերի նշանակությունը» բաժնում խոսելով նույնանիշ բառերի դերի մասին ճարտասանական և բանաստեղծական լեզվի մեջ, ակնարկում է նաև նույնանիշ բառաձևերի, կապակցության ձևերի և շարադասական ձևերի գոյության մասին. «Բանաստեղծն ազատությամբ փոխեփոխ բանեցնում է նույնանիշ բառերը։ Նույնը պետք է ասել և նույնանիշ բառաձևերի ու կապակցության ձևերի մասին։ Օրինակ՝ փոխանակ գրելու՝ «Հուշի պես բարակ մի թել կապում է իմ սիրտը քեզ.—ի՛մ երկիր, սիրտդ արդյոք զգո՞ւմ է հոգուս տենդը», բանաստեղծը (Չարենց) շեշտերի ռիթմական դասավորության համար, օգտվելով լեզվի մեջ եղած նույնանիշ շարադասական ձևերից, գրում է. «Հուշի պես թել մի բարակ՝ կապում է սիրտը իմ քեզ.— երկի՛ր իմ, սիրտդ արդյոք զգո՞ւմ է տենդը հոգուս»։ Սրանով է հենց մեր բանաստեղծական լեզուն տարբերվում մեր արձակ լեզվից, այնպես որ մենք ունինք թե պրոզայիկ լեզու, առանց նույնանիշ բառերի և միակերպ պարզ շարահյուսու-

---

[1] Բառական համանիշների խմբի մեջ են մտնում նաև բառա-դարձվածքային համանիշները։

[2] Հայ քերականագիտության մեջ հատուկ մենագրական ուսումնասիրություններ չկան նաև բառական համանիշների վերաբերյալ։

թյամբ, և թե բանաստեղծական լեզու, նույնանիշ բառերի և նույնանիշ շարահյուսական ձևերի ազատ գործածությամբ»[1]։

Վ. Առաքելյանը իր «Ժամանակակից հայերենի հոլովների և հոլովական կապակցությունների իմաստային առումները» արժեքավոր աշխատության մեջ հանգամանորեն վերլուծելով հոլովների և կապերի շարահյուսական կիրառությունները, բնականաբար խոսում է նաև նրանց, հատկապես կապերի, համանիշ կիրառությունների մասին[2], որոնք հենց շարահյուսական համանիշներ են (շարահյուսական համանիշ տերմինը Վ. Առաքելյանը չի գործածում)։

Շարահյուսական համանիշների մասին հիշատակություն կա Ա. Գրիգորյանի՝ VIII—X դասարանների համար գրված հայոց լեզվի դասագրքի մեջ։ Այստեղ տրված է շարահյուսական համանիշների հետևյալ սահմանումը. «Այն նախադասությունները, որոնք իրենց արտահայտած իմաստով խիստ մոտիկ են, բայց նույնը չեն և ունեն նուրբ տարբերություն ու շարահյուսական տարբեր կառուցվածք, կոչվում են շարահյուսական համանիշներ»[3]։ Սա շարահյուսական համանիշների թերի սահմանում է։ Նախ՝ շարահյուսական համանիշ կարող են լինել ոչ միայն նախադասությունները, այլ նաև բառակապակցությունները, որոնք լեզվի շարահյուսական կառուցվածքի նվազագույն միավորներն են, այնուհետև՝ անհրաժեշտ էր սահմանման մեջ ընդգծել, որ խոսքը վերաբերում է միևնույն առարկաների, երևույթների միջև եղած նույն հարաբերությունների՝ քերականական տարբեր միջոցներով արտահայտելուն։ Որպես օրինակ Ա. Գրիգորյանը բերում է հետևյալ զույգ ձևերը՝ Պար է գալիս–Պարում է, Անձրև է գալիս–Անձրևում է, Մութն ընկավ–Մթնեց, Գրիգորը առողջ է–Գրիգորը հիվանդ չէ, Արամը ներկա չէ–Արամը բացակա է, Մարգոն բարի սիրտ ունի–Մարգոն բարեսիրտ է, Գարեգինը սիրում է աշխատանք–Գարեգինը աշխատասեր է և այլն։ Բերված օրինակներից առաջինները պար-

---

1 Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965, էջ 157։

2 Վ. Առաքելյան, Ժամանակակից հայերենի հոլովների և հոլովական կապակցությունների իմաստային առումները, Երևան, 1957։

3 Ա. Գրիգորյան, Հայոց լեզու, Դասագիրք միջնակարգ դպրոցի VIII—X դասարանների համար, Երևան, 1953, էջ 294—295։

զապես բառական համանիշներ են (Մութն ընկավ–Մթնեց, Պար է գալիս–Պարում է և այլն), իսկ մյուսները բառա-շարահյուսական համանիշներ, որոնց մի մասում նախադասության տարբեր շարահյուսական կառուցվածքը (դրական և ժխտական) պայմանավորված է հականիշ բառերի գործածությամբ (հիվանդ–առողջ, ներկաբացակա, սուտ–ճիշտ և այլն), իսկ մյուս մասում՝ բառաբարդումով (Մարգոն բարի սիրտ ունի– բարեսիրտ է և այլն)։

Կրավորական և ներգործական կառուցվածքի նախադասությունների՝ շարահյուսական համանիշ լինելու վերաբերյալ ակնարկի ենք հանդիպում Մ. Ասատրյանի «Բայի սեռերը ժամանակակից հայերենում» աշխատության մեջ։ Բայի ներգործական և կրավորական սեռերի իմաստային տարբերությունները ցույց տալու համար վերլուծելով ներգործական և համապատասխան կրավորական կառուցվածքի նախադասությունների իմաստային ու կառուցվածքային առանձնահատկությունները՝ Մ. Ասատրյանը դրանք իրավամբ համարում է շարահյուսական համանիշներ և վերջիններիս վերաբերյալ անում է հետևյալ ճիշտ դիտողությունը. «Ինչպես լեզվի բառապաշարի մեջ հանդես եկած համանիշները (գեղեցիկ-սիրուն, վերջ—վախճան և այլն) լրիվ նույնական չեն և տարբերություններ ունեն ըստ իրենց արտահայտած իմաստի երանգների և համաժողովրդական լեզվի տարբեր ոճերում ունեցած գործածությունների, այնպես էլ լրիվ նույնական չեն շարահյուսական համանիշները»[1]։

Համանիշության վերաբերյալ որոշ դիտողություններ կան նաև Պ. Պողոսյանի «Բայի եղանակային ձևերի ոճական կիրառությունները արդի հայերենում» աշխատության ներածության մեջ։ Խոսելով լեզվական միավորների գլխավոր և երկրորդական կիրառությունների մասին, Պ. Պողոսյանը գտնում է, որ ձևաիմաստային

[1] Մ. Ասատրյան, Բայի սեռերը ժամանակակից հայերենում, Երևան, 1959, էջ 129։

Աշխատանքը դտնվում էր տպագրության ընթացքում, երբ լույս տեսավ նույն հեղինակի «Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր» աշխատությունը, որտեղ համառոտակի նշված են հոլովների և կապերի համանիշ կիրառությունները (տե՛ս Մ. Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր, Երևան, 1970, էջ 377—385)։

յուրաքանչյուր միավոր կարելի է փոխարինել մեկ այլ միավորով, ինչպես, ասենք, հաստատումը հարցումով, հրամանը հարցումով, բայի մի եղանակային ձևը մյուսով և այլն։ «Լեզվի մեջ փոխարինելիությունը առաջ է բերում մի երևույթ, առանց որի ուսումնասիրության ոճաբանությունը յոլա գնալ չի կարող։ Դա համանշությունն է կամ սինոնիմիան... Համանշությունն այժմ ըմբռնվում է ոչ միայն իբրև լեքսիկական մեկ միավորի փոխարինելի լինելը մի այլ միավորով, այլև ամեն մի ձևաիմաստային միավորի փոխարինելի լինելը ամեն մի այլ ձևաիմաստային միավորով, ըստ որում մեկ բառ կարող է փոխարինվել մեկ այլ բառով, մեկ քերականական ձևը՝ այլ քերականական ձևով (ձևաբանական ձևը՝ այլ ձևաբանական ձևով, շարահյուսական ձևը՝ այլ շարահյուսական ձևով, ձևաբանական ձևը՝ շարահյուսական ձևով և ընդհակառակն), մեկ քերականական ձևը՝ լեքսիկական ձևով, քերականականը՝ լեզվական այնպիսի ձևով, որ քերականական չէ և այլն»[1]։ Ինչպես երևում է մեջբերումից, Պ. Պողոսյանը համանիշության համար հիմնական չափանիշ է համարում փոխարինելիությունը. մի բան, որ, ինչպես կտեսնենք հետագա շարադրանքի մեջ, ոչ միշտ է կիրառելի։

Շաղկապական բառերով և անշաղկապ կամ շարահարությամբ կապակցված բարդ նախադասությունների շարահյուսական համանիշ լինելու վերաբերյալ դիտողություններ կան Ն. Պառնասյանի «Անշաղկապ բարդ նախադասությունները ժամանակակից հայերենում» և Ա. Պապոյանի «Կախյալ շարահարությամբ բարդ նախադասությունները արդի հայերենում» աշխատությունների մեջ[2]։

Քերականական համանիշների մասին խոսելիս անհրաժեշտ է անդրադառնալ ռուս քերականագիտությանը, ինչպես նաև նորագույն լեզվաբանական գրականությանը, որտեղ վերջերս մեծ հետաքրքրություն է նկատվում դեպի լեզվական այդ երևույթը։

---

1 Պ. Պողոսյան, Բայի եղանակային ձևերի ոճական կիրառությունները արդի հայերենում, Երևան, 1959, էջ 18—19։

2 Տե՛ս Ն. Պառնասյան, Անշաղկապ բարդ նախադասությունները ժամանակակից հայերենում, Լեզվի և ոճի հարցեր, հատոր 2, Երևան, 1964 Ա. Պապոյան, Կախյալ շարահարությամբ բարդ նախադասությունները արդի հայերենում, Երևան, 1968։

«Քերականական համանիշ» տերմինը և հասկացությունը ռուս քերականագիտության մեջ մտցրել է Ա. Մ. Պեշկովսկին իր «Ոճաբանական վերլուծության և գեղարվեստական արձակի սկզբունքներն ու միջոցները» հոդվածում՝ տպված 1927 թվականին „Ars poetica„ ժողովածուում[1]։ Քերականական համանիշները սահմանելիս նրա ելակետն այն է, թե ինչպիսի լեզվական միջոցներով կարող է արտահայտվել միևնույն միտքն ու քերականական նույն իմաստը։ Ելնելով դրանից՝ նա քերականական համանիշները բաժանում է երկու խմբի՝ 1) ձևաբանական համանիշներ, որի տակ հասկանում է նույն քերականական իմաստի ձևական տարբերակները, ինչպես՝ сыра—сыру, чая—чаю, аптекари—аптекарю, հայերենում՝ ընկերոջ-ընկերի, ձմեռվա-ձմռան և այլն և 2) շարահյուսական համանիշներ։ Հատկապես ընդարձակ է շարահյուսական համանիշներին նվիրված բաժինը, որտեղ Պեշկովսկին, ընդգծելով շարահյուսության մեջ ոճական միջոցների ավելի շատ ու բազմազան լինելու հանգամանքը, տալիս է իր կողմից շարահյուսական համանիշ համարվող շարքերի համառոտ թվարկումը՝ ընթերցողներին թողնելով խորամուխ լինելու նրանց ներքին տարբերությունների մեջ։ Ահա նրա բերած շարքից մի քանիսը. 1) նախդիրների համանիշությունը (от стыда—со стыда), 2) շաղկապների համանիշությունը (строг и справедлив—строг, но справедлив), 3) նախդրավոր և առանց նախդրի կապակցություններ (сделал мне—сделал для меня), 4) շաղկապավոր և անշաղկապ կապակցություններ, 5) բայ և դերբայական դարձված (пришел и сказал—придя, сказал), 6) ածական և գոյական (старый человек—старик), 7) նախադասության անդամների առանձնացված և չառանձնացված խմբեր, 8) համադասություն և ստորադասություն և այլն[2]։ Այս, իր կողմից շարահյուսական համանիշ համարվող շարքերի թիվը Պեշկովսկին հասցնում է 32-ի։ Այստեղ տեղ են գտել քերականական ձևերի իմաստային մերձեցման դեպքերը, տարբեր կառուցվածքի նախադասությունները, համանիշ շաղկապները, ինչպես նաև բառակազմական ու

[1] Ars poetica, Сборник статей, М. 1927.
[2] Նույն տեղում, էջ 57—58։

ընդհանրապես բառագիտական որոշ տարբեր։ Շարահյուսական համանիշների և ձևաբանական համանիշների հստակ սահմանումը, դրանց ընդգրկման սահմանները Պեշկովսկու մոտ բացակայում են։

Այն, ինչ Պեշկովսկին տվել է միայն թվարկման ձևով, փաստական հարուստ նյութի հիման վրա ուսումնասիրել է Ա. Ն. Գվոզդևը «Ակնարկներ ռուսերենի ոճաբանության վերաբերյալ» մեծարժեք աշխատության մեջ, որտեղ հեղինակի նպատակն է եղել վեր հանել ռուսերենի ոճական միջոցները։ Նա ուսումնասիրել է բառագիտության, ձևաբանության ու շարահյուսության դերը ոճաբանության մեջ և այս կապակցությամբ բնականաբար անդրադարձել է նաև համանիշության հարցին։ Պեշկովսկու նման Գվոզդևը ևս համանիշները բաժանում է երեք խմբի՝ բառական, ձևաբանական և շարահյուսական։

Ձևաբանական համանիշներ ասելով նա հասկանում է տարբեր հոլովական վերջավորությունների համանիշությունը, ռուսերենին այնքան հատուկ նախածանցների քերականական ու իմաստային ընդհանրությունները, տարբեր խոսքի մասերի իմաստային առնչակցությունները, ինչպես նաև դրանց շարահյուսական կիրառությունների հետ կապված համանիշությունը (ինչպես կտեսնենք հետագա շարադրանքի մեջ, վերջիններս ավելի շատ վերաբերում են շարահյուսական մակարդակին, հետևաբար շարահյուսական համանիշներ են)։ Ձևաբանական համանիշների սահմանումը, ինչպես նաև շարահյուսական համանիշներից նրանց տարբերակման հիմնավորումը Գվոզդևի մոտ բացակայում է։

Խոսելով շարահյուսության մեծ դերի մասին ոճաբանության մեջ, Գվոզդևը գտնում է, որ այն հետևանք է շարահյուսական համանիշների առատության ուստաց լեզվում։ Շարահյուսական համանիշ ասելով Գվոզդևը հասկանում է «խոսքի զուգահեռ դարձվածքները, որոնք տարբերվում են միայն նշանակությունների նրբերանգներով և այդ պատճառով հաճախ կարող են փոխարինել իրար»[1]։ Սա շարահյուսական համանիշների հիմնականում ճիշտ,

[1] **А. Н. Гвоздев,** Очерки по стилистике русского языка, М., 1955, էջ 175։

սակայն շատ ընդհանուր սահմանում է։ Այստեղ չի պարզաբանված, թե ինչ պետք է հասկանալ խոսքի զուգահեռ դարձվածք ասելով, հստակորեն չեն սահմանված դրանց նրբերանգները, չի ընդգծված շարահյուսական համանիշների կարևոր հատկանիշը, այն, որ նրանք կառուցվածքով տարբեր են։ Քանի որ Գվոզդևի ուսումնասիրության հիմնական նպատակը ոճաբանությունն է, նրա աշխատանքը ընթացել է իր կողմից շարահյուսական համանիշ համարվող շարքերի ոճական կիրառությունները ցույց տալու ուղղությամբ։ Շարահյուսական համանիշների քերականական-կառուցվածքային առանձնահատկությունների ուսումնասիրությամբ նա չի զբաղվել։

Պեշկովսկու հոդվածի, իսկ այնուհետև նաև Գվոզդևի աշխատության լույս տեսնելուց հետո ռուս քերականագիտության մեջ առաջացավ հետաքրքրություն հատկապես դեպի շարահյուսական համանիշները։ Սակայն ուսումնասիրությունները ընթացել են հիմնականում երկրորդական նախադասությունների և դերբայական դարձվածների զուգահեռ քննության ուղղությամբ։ Ճիշտ է, վերջիններս շարահյուսական համանիշների ամենատարածված ձևերից են, սակայն միայն դրանց ուսումնասիրությունը բավարար չէ լեզվական այս երևույթի մասին ամբողջական պատկերացում կազմելու համար։ Այս տեսակետից հիշատակության արժանի է Վ. Պ. Սուխոտինի «Շարահյուսական համանիշները ժամանակակից ռուսաց գրական լեզվում» աշխատությունը[1], որի առաջին մասը նվիրված է շարահյուսական համանիշների տեսությանը։ Սուխոտինը ճիշտ կերպով ընդգծում է, որ, ի տարբերություն բառա-դարձվածաբանական համանիշների, շարահյուսական համանիշները կապված են ոչ թե առարկաների, գործողությունների, հատկանիշների իմաստների հետ, այլ նրանց՝ իրականության մեջ գոյություն ունեցող և տվյալ լեզվի ու հասարակական գիտակցության մեջ արտացոլված կապերի հետ և միաժամանակ

---

[1] **В. П. Сухотин,** Синтаксическая синонимия в современном русском литературном языке, М., 1960.

դրսևորում են ասացվածքի տարբեր հարաբերությունները այդ հասկացությունների, երևույթների նկատմամբ։ Այսպես՝ երբ ասում ենք առաջանալ–ստեղծվել, հրաշալի–հիանալի, խոշոր–մեծ, գործ ունենք գործողության, հատկանիշի իմաստի հետ կապված համանիշության հետ, այսինքն՝ տարբեր բառերով անվանված են օբյեկտիվ իրականության մեջ առկա նույն կամ նման գործողությունները, հատկանիշները։ Իսկ երբ ասում ենք՝ Ես կոտրեցի մատիտը–Մատիտը կոտրվեց իմ կողմից, այստեղ արդեն գործ ունենք բնության մեջ առկա նույն հարաբերության դրսևորման տարբեր միջոցների հետ, կամ, ասենք, լռե՛լ–լռեցե՛ք ձևերում՝ խոսողի նույն վերաբերմունքի՝ հրամանի դրսևորման տարբեր ձևերի հետ։ Սուխոտինի աշխատության արժանիքներից մեկն էլ այն է, որ նա հատկապես ուշադրություն դարձրեց շարահյուսական համանիշների կառուցվածքային տարբերությունների վրա՝ ընդգծելով վերջիններիս դերը դրանց բնորոշման և սահմանման համար։ «Հենց շարահյուսական համանիշ հասկացությունը ենթադրել է տալիս ոչ թե նույն, այլ տարբեր կառուցվածքի կազմություններ»[1]։

Ուշագրավ է նաև Սուխոտինի այն դիտողությունը, ըստ որի համախ շարահյուսական համանիշները հանդես են գալիս բառական համանիշների հետ, այսինքն՝ միևնույն միտքը արտահայտող, նույն հարաբերությունները դրսևորող նախադասությունները երբեմն ունենում են տարբեր կառուցվածքներ այն պատճառով, որ նրանցում գործածվում են իրար համանիշ, բայց տարբեր խնդրառություն ունեցող բայեր приступить к работе—взяться за работу): Այս երևույթը, իհարկե, ավելի հատուկ է ռուսերենին։ Հայերենում այնպիսի համանիշ բայերի թիվը, որոնք տարբերվեն նաև խնդրառությամբ, խիստ սահմանափակ է (տիրել երկրին–գրավել երկիրը, ձեռնարկել մի բան–ձեռք զարկել մի բանի)։ Այս տիպի կառուցվածքները Սուխոտինը անվանում է բառաշարահյուսական համանիշներ, և այնուհետև նրա աշխատանքը

---

[1] Նույն տեղում, էջ 22։

գնում է հենց դրանց ուսումնասիրության ուղղությամբ։ Բուն շարահյուսական համանիշները դուրս են մնացել նրա ուսումնասիրության ոլորտից, թեև գիրքը վերնագրված է հենց «Շարահյուսական համանիշները ժամանակակից ռուսաց գրական լեզվում»։

Համանիշների, հատկապես քերականական համանիշների, հարցը հանդիսանում է նաև լեզվաբանական նորագույն ուղղությունների կենտրոնական հարցերից մեկը՝ կապված հատկապես փոխակերպության (трансформация) մեթոդի զարգացման և կիրառության հետ։ Լեզվաբանական նորագույն ուղղությունների մի շարք ներկայացուցիչների մոտ հանդիպում ենք ուշագրավ դիտողությունների՝ քերականական համանիշների հասկացության վերաբերյալ, որոնց վերհանումը և հաշվի առնելը մեծապես կնպաստի այդ հասկացության ճիշտ մեկնաբանմանը։ Այս տեսակետից հետաքրքրություն է ներկայացնում ժնևյան դպրոցի ներկայացուցիչ Ս. Կարցևսկու «Լեզվաբանական նշանի անհամաչափ երկվության վերաբերյալ»[1] հոդվածը, որտեղ քննվում է համանիշների և նույնանունների պրոբլեմը[2]։

Կարցևսկին սկզբունքորեն չի ընդունում համանիշների բաժանումը բառականի և քերականականի, իսկ վերջինս՝ ձևաբանականի և շարահյուսականի՝ ելնելով լեզվաբանական նշան հասկացությունից, որպիսին, ըստ նրա, կարող է լինել յուրաքանչյուր լեզվական միավոր՝ բառը, ձևույթը, քերականական ձևը, կառուցվածքը, նախադասությունը։ Հեղինակի հիմնական միտքն այն է, որ յուրաքանչյուր լեզվաբանական նշան միաժամանակ և՛ համանիշ է, և՛ նույնանուն։ Նշանի անհամաչափ երկվությունը նշանի և նշանակության սահմանների չհամընկնելն է, քանի որ մի նշանը կարող է ունենալ մի քանի նշանակություններ (նույնանունություն), իսկ նույն նշանակությունը կարող է արտահայտվել տարբեր նշաններով (համանիշություն)։ Ըստ որում լեզվաբանական

---

[1] S. Karcevski, Du Dualisme asymétrique du signue linguistigue—Cahiers Ferdinand de Saussure, 14, Geneve, 1956.

[2] Նույնանուն տերմինի տակ Կարցևսկին հասկանում է լեզվական միավորների բազմիմաստությունը։

նշանը առաջանում, կազմավորվում է համանիշ և նույնանուն շարքերի խաչավորումով։ Մենք ոչինչ չենք կարող ասել տվյալ նշանի իմաստի մասին, եթե չգիտենք այն շարքը, որտեղ նա գտնվում է։ Խոսողական պրոցեսը Կարցևսկին պատկերացնում է որպես համանիշների և նույնանունների շղթայում նշանների մշտական տեղաշարժ. մի բան, որը վերաբերում է ոչ միայն բառերին, այլ նաև քերականական ձևերին։ Երբ որևէ մեկին անվանում ենք ձուկ, մի կողմից ստեղծում ենք նույնանուն ձուկ–կենդանի բառի համար, մյուս կողմից՝ համանիշ ֆլեգմատիկ, անզգա բառերի համար։ Տեղաշարժի նույնպիսի պրոցես կատարվում է նաև քերականության բնագավառում։ Այսպես՝ հրամայական եղանակը կարող է գործածվել այլ ֆունկցիայով (օրինակ՝ պայմանի երկրորդական նախադասություններում), որով նրա համար կստեղծվի նույնանուն. միաժամանակ հրամայական եղանակը ունի համանիշներ (օրինակ՝ լռե՛լ)։

Բառական և քերականական միավորների միջև Կարցևսկին ընդունում է միայն քանակական տարբերություններ։ Քերականական միավորները ավելի հաստատուն են, նրանց տեղաշարժը կատարվում է ավելի քիչ և ավելի կանոնավոր բնույթ է կրում։ Քերականական նշանի նույնանունական և համանիշական տեղաշարժերը կարելի է գրանցել, մի բան, որ չի կարելի անել բառերի նկատմամբ (համարյա յուրաքանչյուր բառ խոսողության ընթացքում կարելի է գործածել փոխաբերաբար, նոր իմաստով)։ Համանիշությունը և նույնանունությունը Կարցևսկին համարում է ուղած լեզվական նշանն ընդգրկող հիմնական հարաբերակից շարքերը, որոնք կապված են լեզվի համակարգի հետ, որպես հիմնական համակարգային կապեր։

Նույն մտքին ենք հանդիպում նաև ժամանակակից ամերիկյան կառուցվածքային լեզվաբանության ներկայացուցիչներից մեկի՝ Ռուլոն Ուելսի մոտ, որը Օսլոյի լեզվաբանական կոնգրեսում կարդացած զեկուցման մեջ համանիշների օրինակով խոսում է բովանդակության պլանի և արտահայտության պլանի կոորդինացման անհրաժեշտության մասին։ Նա ևս գտնում է, որ համանիշության և նույնանունության երևույթները կառուցվածքային տեսա-

կետից նման են։ Համանիշությունը հիմնված է այն բանի վրա, որ մեկ բովանդակությունը համապատասխանում է մեկից ավելի արտահայտությունների, ի տարբերություն նույնանունության, որի ժամանակ մեկ արտահայտությունը համապատասխանում է մի քանի բովանդակության։ Սրանց միջև եղած տարբերությունը հաճախականության մեջ է. նույնանունությունը ավելի շուտ բացառություն է, քան կանոն, իսկ համանիշությունը համընդհանուր է։ Ըստ Ուելսի, յուրաքանչյուր լեզվում ամեն մի նշան ունի ամենաքիչը մեկ համանիշ, քանի որ ժամանակակից տրամաբանության տեսակետով ամեն մի նախադասության կրկնությունը կարող է համարվել նրա համանիշը։

Ուշագրավ է սովետական լեզվաբան Ս. Շահումյանի տեսակետը քերականական համանիշներ հասկացության վերաբերյալ։ «Կառուցվածքային լեզվաբանություն»[1] արժեքավոր աշխատության՝ փոխակերպության մեթոդի ուսումնասիրմանը նվիրված բաժնում խոսելով քերականական համանիշների մասին՝ նա ընդգծում է վերջիններիս ուսումնասիրության կարևորությունը ժամանակակից լեզվաբանական գիտության համար, որովհետև անմիջականորեն կապված լինելով փոխակերպության մեթոդի հետ՝ այն կլուծի նաև քերականական անփոփոխակների (ինվարիանտների) պրոբլեմը։ Ս. Շահումյանը գտնում է, որ քերականական համանիշների ուսումնասիրությունը կարող է լինել բավարար միայն այն դեպքում, երբ պահպանվի առնվազն երկու պայման՝ 1) պետք է ձևականացվի քերականական համանիշների հասկացությունը և 2) այդ ձևականացումը պետք է ունենա բավականաչափ բացատրական ուժ։ Քերականական համանիշ հասկացության բացատրական ուժ ասելով նկատի է առնվում ոչ միայն այդ հասկացության միջոցով խոսողների կողմից բնազդական աստիճանում բացահայտված քերականական տարբեր կառուցվածքների միջև եղած նմանության գծերի հիմնավորումը, այլև այդ հասկացության օգտագործումը քերականական կառուցվածքների միջև եղած խորքային (глубинных) անփոփոխակա-

---

[1] **С. К. Шаумян,** Структурная лингвистика, М·, 1965.

յին կապերի բացահայտման համար[1]։ Քերականական համանիշ հասկացության ձևականացումը, ըստ Շահումյանի, կարելի է իրագործել համանիշ քերականական կառուցվածքների ձևական թվարկման մշակման միջոցով. մի բան, որ հանգում է փոխակերպությունների թվարկմանը։ Հետևաբար այդ հարցը կարելի է լուծել փոխակերպությունների թվարկման որոշակի համակարգ մշակելու միջոցով[2]։ Այնուհետև Շահումյանը կատարում է քերականական համանիշները ձևականացնելու փորձ՝ իր առաջարկած ապլիկատիվ կաղապարի (аппликативная модель) օգնությամբ փոխակերպությունները հաշվելու միջոցով[3]։

Փոխակերպության մեթոդը, ինչպես հայտնի է, նպատակ ունի վեր հանելու միևնույն հիմնական անփոփոխակի դրսևորման բոլոր տարբերակները։ Այս տեսակետից, իրոք, այդ միջոցով թվարկված փոխակերպությունների շարքի մեջ են մտնում նաև քերականական համանիշները։ Սակայն այս մեթոդի կիրառությունը քերականական համանիշներն ուսումնասիրելու բնագավառում ունի այն թերությունը, որ չի ընդգծում վերջիններիս ընդգրկման սահմանները։ Շատ հաճախ փոխակերպությունների շարքի մեջ են մտնում այնպիսի կառուցվածքներ, որոնք ամենևին էլ քերականական համանիշ չեն։ Այսպես օրինակ՝ ըստ Շահումյանի ապլիկատիվ կաղապարի կիրառության արդյունքների, համանիշ են համարված Иванов познакомился с Петровым → Иванов и Петров знакомы, Дом строится рабочими → Дом, построенный рабочими փոխակերպությունները[4], որոնք համանիշներ չեն։ Միաժամանակ այս ձևականացումից դուրս են մնում այնպիսի ակնհայտ համանիշներ, ինչպիսիք են, ասենք՝ Шел лесом → Шел через лес։ Այդ բանը նկատել է հենց ինքը՝ Շահումյանը[5]։

[1] Նույն տեղում, էջ 313—314։

[2] Նույն տեղում, էջ 314։

[3] Շահումյանի առաջարկած ապլիկատիվ կաղապարը տարբերվում է խոմսկի կաղապարից նրանով, որ մշակվում է նախորոք տրված իմֆորմացիայի հիման վրա։ Այս մասին տե՛ս **Ю. Д. Апресян,** Идеи и методы современной структурной лингвистики, М., 1966., էջ 229։

[4] Նույն տեղում, էջ 328, 333։

[5] Նույն տեղում, էջ 334։

Մի քանի խոսք համանիշ տերմինի գործածության մասին։ Հայ քերականագիտության մեջ այս տերմինը առաջին անգամ գործածել է Մ. Աբեղյանը[1]*։ Խոսելով նույնանիշ բառերի տարբերակման մասին՝ նա գրում է. «Նշանակությամբ նուրբ կերպով իրարուց տարբերվող բառերը սովորաբար կոչում ենք* համանիշ բառեր, *ինչպես՝* զարմանալ, հիանալ, սքանչանալ, բարկություն, սրտմտություն, ցասում»[2]:

Հետագայում, սակայն, դպրոցական քերականությունների մեջ համանիշ *և* նույնանիշ *տերմինները նույնացվեցին, իսկ իմաստային և կիրառական նրբերանգներ ունեցող բառերի համար սկսեց գործածվել* հոմանիշ *տերմինը*[3]*. մի բան, որի կարիքը բոլորովին չկար, հատկապես եթե հաշվի առնենք, որ* համ- *նախածանցին նույնանիշ գրաբարյան* հոմ *նախածանցը ժամանակակից հայերենում բոլորովին չի գործածվում։*

Հետևելով Մ. Աբեղյանին, մենք համանիշ *տերմինը գործածում ենք իմաստային և ոճական-կիրառական նրբերանգային տարբերություններ ունեցող լեզվական միավորների համար, լրիվ նույն իմաստն ունեցող միավորների համար պահելով միայն* նույնանիշ *տերմինը։ Մեր գործածած* համանիշ *տերմինը որոշ չափով տարբերվում է նաև ընդհանուր լեզվաբանական գրականության մեջ գործածվող* սինոնիմ *տերմինից, որի մեջ մտնում են և՛* համանիշները, *և՛* նույնանիշները:

* * *

Նախքան քերականական և մասնավորապես շարահյուսական համանիշների բնորոշմանն անցնելը անհրաժեշտ է խոսել լեզվում

---

[1] *Մ. Աբեղյանից առաջ համանիշ և նույնանիշ բառերը չեն տարբերակվել իրարից և անվանվել են նույնանշան կամ հոմանուն (տե՛ս, օրինակ,* Ա. Այտնեան, *Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի, Վիեննա, 1866)։*

[2] Մ. Աբեղյան, *Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965, էջ 159։*

[3] *Տե՛ս* Ա. Ղարիբյան, *Հայոց լեզվի քերականություն, Երևան,* Է. Աղայան, Հ. Թառսեղյան, *Հայոց լեզու, Երևան, 1966։*

գոյություն ունեցող և նրա զարգացման հիմնական գործոններից մեկը հանդիսացող երևույթի մասին, որի հետ սերտորեն առընչակցվում է համանիշության հարցը։

Հայտնի է, որ լեզուն ունի երկու կողմ՝ արտահայտության պլան և բովանդակության պլան։ Արտահայտության պլանը լեզվի նյութական կողմն է, այն ձևերը՝ հնչույթ, ձևույթ, բառաձև, բառակապակցություն, նախադասություն և այլն, որոնցով դրսևորվում են զանազան իմաստներ ու հարաբերություններ, միտք։ Բովանդակության պլանը այն իմաստներն ու հարաբերություններն են, որ դրվում են այդ ձևերի մեջ՝ իրականացնելով լեզվի հիմնական ֆունկցիան՝ հաղորդակցությունը։ Արտահայտության և բովանդակության պլանների (այլ կերպ ասած՝ ձևի և բովանդակության) փոխադարձ կապն ու պայմանավորվածությունը վեր հանելու, բացահայտելու համար խիստ կարևորություն ունի համանիշության և բազմիմաստության ուսումնասիրությունը։

Լեզվի արտահայտության ու բովանդակության պլանների փոխհարաբերության մեջ նկատվում է հետևյալ օրինաչափ երևույթը։ Լեզվական յուրաքանչյուր միավոր՝ ձև արտահայտում կամ կարող է արտահայտել մեկից ավելի իմաստներ և ընդհակառակը՝ մեկ իմաստը արտահայտվում կամ կարող է արտահայտվել տարբեր ձևերով։ Սրանք լեզվում գոյություն ունեցող հակադարձ պրոցեսներ են, որոնք գործում են նրա զարգացման ամբողջ ընթացքում և հնարավորություն են ընձեռում արտահայտելու երևույթների ու առարկաների միջև առկա բազմաթիվ ու բազմապիսի հարաբերություններ։ Առաջին դեպքում մենք գործ ունենք լեզվական միավորների բազմիմաստության հետ, երկրորդ դեպքում՝ համանիշության։

Համանիշությունը և բազմիմաստությունը երևույթներ են, որոնք կապված են լեզվի համակարգի հետ, ունեն համակարգային բնույթ և հատուկ են լեզվական այն բոլոր մակարդակներին, որոնք ունեն իմաստակիր միավորներ, այսինքն՝ բառական, ձևաբանական և շարահյուսական մակարդակներին[1]։ Ձևաբանական և շա-

[1] Ձևույթների համանիշությունը մենք չենք առանձնացնում նշված մակարդակներից, որովհետև չունենալով ինքնուրույն կիրառություն, նրանք համանիշական

բահյուսական համանիշները միավորվում են մեկ ընդհանուր խմբի՝ քերականական համանիշներ խմբի մեջ։

Համանիշների բնորոշման համար խիստ կարևոր է այն հանգամանքը, որ բոլոր դեպքերում նրանք մատնանշում են նույն հատկանիշը, առարկան, առարկայական հարաբերությունը և այլն։ Դա էլ հենց այն ընդհանուրն է, որ ընկած է համանիշների հիմքում և նրանց միավորում է մեկ խմբի մեջ։ Համանիշները տարբերվում են իրարից միայն իմաստային խիստ նուրբ երանգներով, ինչպես նաև հատկանիշի դրսևորման որոշ աստիճանավորումով։ Տարբեր համանիշների գործածությունը բխում է հաղորդման նպատակից, խոսողի կողմից տվյալ առարկայի, հարաբերության, հատկապես հատկանշի սուբյեկտիվ ընկալումից։ Երբ միևնույն առարկան բնորոշելու համար գործածում ենք գեղեցիկ, աննման, հրաշագեղ կամ հանդուգն, համարձակ ածականները՝ գեղեցիկ աղջիկ–աննման աղջիկ–հրաշագեղ աղջիկ, հանդուգն արարք–համարձակ արարք, ապա բոլոր դեպքերում առարկան իր հատկանիշով մնում է նույնը։ Փոխվում է միայն հաղորդողի կողմից այդ առարկան ու հատկանիշը ներկայացնելու նպատակը, դրա հետ կապված նաև ձևը։ Նույն ձևով՝ երբ մենք առարկաների միջև եղած նույն սուբյեկտ-օբյեկտային հարաբերությունը դրսևորելու համար գործածում ենք ներգործական և կրավորական կառուցվածքի համանիշ նախադասություններ, ապա դրանով փոխվում է ոչ թե առարկաների միջև եղած հարաբերությունների բնույթը, այլ հաղորդման նպատակը, այն, թե տվյալ դեպքում հաղորդման համար հարաբերության ո՛ր կողմն է կարևոր, խոսողը ինչն է անհրաժեշտ համարում ընդգծել (հմմտ. Ֆաշիստները ոչնչացրին շատ գյուղեր ու քաղաքներ—Շատ գյուղեր ու քաղաքներ ոչնչացան ֆաշիստների կողմից)։ Այսպիսով՝ տարբեր համանիշների գործածությունը կապված է հաղորդածի նկատմամբ խոսողի վերաբերմունքը, սուբյեկտիվ ընկալումը դրսևորելու, խոսքը պատկերավոր դարձնելու, իսկ հաճախ նաև միօրինակությունից խուսափելու պահանջի հետ։

արժեքով հանդես են գալիս միայն համապատասխան մակարդակներում. հիմնական և բառակազմական ձևույթները՝ բառական մակարդակում, քերականական ձևույթները՝ ձևաբանական մակարդակում։

Համանիշները բնորոշելիս անհրաժեշտ է դրանք տարբերակել նույնանիշներից[1]։ Եթե համանիշները անվանում, ցույց են տալիս միևնույն առարկան, հատկանիշը, հարաբերությունը և այլն՝ տարբերվելով իրարից իմաստային ու ոճական որոշ նրբերանգներով, ապա նույնանիշները իրենց իմաստով, ինչպես նաև արտահայտած իմաստների ծավալով լրիվ համընկնում են։ Այնինչ համանիշության ժամանակ մի բառ, բառաձև և այլն իր որևէ իմաստով և կիրառությամբ կարող է համընկնել մեկ այլ բառի, բառաձևի որևէ իմաստի կամ կիրառության հետ, սակայն իր մյուս իմաստներով և կիրառություններով տարբերվել նրանից (հմմտ. ծաղիկ հասակ-երիտասարդ հասակ և Ծաղիկը բույս է)։ Համանիշները և նույնանիշները տարբերվում են նաև իրենց տարածման ծավալով։ Համանիշները լեզվում ունեն կիրառության շատ մեծ ոլորտ, խիստ տարածված են, իսկ նույնանիշները ունեն սահմանափակ կիրառություն։ Եվ դա բնական է։ Լեզուն ընդհանրապես չի սիրում միևնույն առարկան, իմաստը, հարաբերությունը արտահայտելու համար գործածել երկու բառ կամ ձև։ Եթե լեզվում դրանք կան, ստեղծվել են, ապա ժամանակի ընթացքում ստանում են իմաստային, ոճական-կիրառական նրբերանգներ՝ վերածվելով համանիշների և կամ կոնկրետ գործածության ընթացքում նույնանիշներից մեկը դուրս է մղում մյուսին (այդպես է կատարվում հատկապես նույնանիշ տերմինների հետ)։ Իհարկե, երբեմն տեղի է ունենում նաև նույնանիշների իմաստային լրիվ տարբերակում, ինչպես, օրինակ՝ քաղաքային-քաղաքական, լեռնային-լեռնական, մտցնել-մուծել և այլն։

Ինչպես ցույց են տալիս ուսումնասիրությունները, բառական մակարդակում նույնանիշներ են հանդիպում հիմնականում գոյականների մեջ։ Մյուս խոսքի մասերի սահմաններում առավելապես հանդիպում ենք համանիշության երևույթին (գոյականների մեջ ևս, իհարկե, ավելի տարածված է համանիշությունը)։ Ձևաբանության մեջ մենք հանդիպում ենք քերականական ձևույթների նույ-

[1] Նույնանիշները ընդհանուր լեզվաբանական գրականության մեջ մտնում են համանիշներ (синонимы) խմբի մեջ և կոչվում են բացարձակ համանիշներ։ Տե՛ս **Ахманова,** Словарь лингвистических терминов, М., 1966.

նանիշությանը. այստեղ արդեն հազվադեպ է համանիշությունը։ Շարահյուսության մեջ ավելի հաճախ գործ ենք ունենում համանիշության հետ, որովհետև նույն հարաբերությունն արտահայտող տարբեր շարահյուսական ձևերը սովորաբար ունենում են ոճական և վերաբերմունքային տարբերություններ։ Եթե երկու շարահյուսական ձևեր արտահայտում են լրիվ նույն հարաբերությունը և չեն ունենում նրբերանգային, ոճական-կիրառական կամ վերաբերմունքային տարբերություններ, ապա դրանցից մեկը ժամանակի ընթացքում դուրս է մղվում՝ իր տեղը զիջելով մյուս ձևին։ Համեմատի՛ր, օրինակ, «Ռոստով եղած ժամանակս ամեն օր գնում էի Աղայանի մոտ» (Իս., 31,357) և «Ռոստովում եղած ժամանակս ամեն օր գնում էի Աղայանի մոտ» նախադասությունները, որտեղ հայցական և ներգոյական հոլովներով դրված նույնանիշ տեղի պարագաներից առաջինը, որը շատ տարածված էր XIX դարի վերջերի և XX դարի սկիզբների գեղարվեստական գրականության մեջ, արդեն դուրս է եկել գործածությունից՝ իր տեղը զիջելով ներգոյական հոլովով դրված նույնանիշ տեղի պարագային։

Համանիշությունը, ինչպես նաև բազմիմաստությունը ամենաակնառու կերպով երևան են գալիս բառական մակարդակում։ Եվ դա բնական է։ Բնության տարբեր երևույթներ, առարկաներ, հատկանիշներ անվանելու համար շատ հաճախ գործածվում են նույն բառերը և հակառակը՝ միևնույն առարկան, երևույթը հատկանիշը անվանելու համար խոսողը կարող է գործածել տարբեր բառեր՝ դրանով հաճախ դրսևորելով նաև իր վերաբերմունքը հաղորդվածի նկատմամբ, իր ընկալման ձևը։ Օրինակ՝ երբ ասում ենք **քարսիրտ** որպես համանիշ **անզգա** բառի, կամ **երջալ, հոհոալ**, որպես համանիշներ **ծիծաղել** բառի, արտահայտում ենք մեր վերաբերմունքը այդ հատկանշի, գործողության նկատմամբ, մեր սուբյեկտիվ ընկալման ձևը՝ միաժամանակ ավելի խտացրած, պատկերավոր ներկայացնելով դրանք։ Խոսողության պրոցեսում հատկապես բառական համանիշներն ու բազմիմաստ բառերը գտնվում են անընդհատ տեղաշարժի մեջ. այսպես, օրինակ, երբ խոսքի մեջ մազերը բնորոշելու համար գործածում ենք **արծաթ**, բառը՝ **արծաթ մազեր**, ապա մի կողմից ստեղծում ենք համանիշ

սպիտակ բառի համար, մյուս կողմից նոր, փոխաբերական իմաստ ենք տալիս արծաթ–մետաղ բառին։ Կամ՝ ծաղիկ հասակ կապակցությամբ մենք մի կողմից ստեղծում ենք համանիշ երիտասարդ բառի համար, մյուս կողմից՝ նոր, փոխաբերական իմաստ ծաղիկ–բույս բառի համար։ Այս ձևով խոսողական պրոցեսում գրեթե յուրաքանչյուր բառ կարելի է գործածել փոխաբերաբար, դրանով անընդհատ փոփոխություն մտցնելով բառական համանիշների և բառի իմաստների շարքում։ Այդ պատճառով բառական համանիշների ամբողջական շարքերի, ինչպես նաև բառի բոլոր իմաստների գրառումը գործնականորեն անհնար է։

Այս տեսակետից այլ է պատկերը քերականության բնագավառում։ Քերականական ձևերի (քերականական ձև ասելով հասկանում ենք քերականական ձևույթները, բառաձևերը, բառակապակցությունները, նախադասությունները) համանիշությունը և բազմիմաստությունը ունեն ավելի հաստատուն բնույթ։ Իհարկե, տեղաշարժ կատարվում է նաև այստեղ, այլապես լեզուն չէր զարգանա, սակայն քերականական միավորների տեղաշարժերը կատարվում են ավելի դանդաղ և ավելի կանոնավոր բնույթ են կրում։ Այդ պատճառով համանիշների շարքերը քերականության մեջ հիմնականում հնարավոր է որոշել և գրի առնել։

Ի տարբերություն բառական համանիշների, քերականական համանիշները կապված են ոչ թե առարկաների, երևույթների, հատկանիշների իմաստների հետ, այլ դրանց՝ իրականության մեջ գոյություն ունեցող և տվյալ լեզվի ու հասարակական գիտակցության մեջ արտահայտված կապերի, հարաբերությունների հետ, դրանց դրսևորման տարբեր միջոցների հետ։ Այլ կերպ ասած՝ բերականական համանիշները միևնույն բերականական իմաստների, բերականական հարաբերությունների դրսևորումն են տարբեր բերականական միջոցներով, որոնք ունեն իմաստային կամ ոճական նրբերանգներ, և որոնց հիմքում ընկած են միևնույն առարկայական հարաբերությունները։ Իմաստային նրբերանգը ոչ թե փոխում է համանիշների ցույց տված հարաբերությունների բնույթը, այլ ընդգծում է տվյալ հարաբերության որևէ կողմը։ Այսպես՝ ես գնում եմ տուն և ես գնում եմ դեպի տուն նախադասությունը-

ներում առկա են համանիշ տեղի պարագաներ՝ տուն և դեպի տուն, որոնք ցույց են տալիս միևնույն տեղային հարաբերությունը, այն է՝ գործողության ուղղվածությունը դեպի տվյալ վայրը։ Սակայն այս երկու ձևերը ունեն իմաստային այն նրբերանգը, որ առաջին դեպքում ընդգծվում է գործողության կատարման վերջնակետը, այն, որ գործողությունը ավարտվելու է տվյալ վայրը հասնելով, իսկ երկրորդ դեպքում ընդգծվում, ուշադրություն է դարձվում միայն գործողության՝ դեպի տվյալ վայրը ուղղված լինելու վրա։ Հենց այս իմաստային նրբերանգային տարբերությունն էլ հիմք է հանդիսանում, որ այս ձևերը համարվեն համանիշներ և ոչ թե նույնանիշներ։

Ինչպես ասվեց, քերականական համանիշները բաժանվում են երկու խմբի՝ ձևաբանական համանիշների և շարահյուսական համանիշների։

Ձևաբանության մեջ համանիշության, ինչպես նաև բազմիմաստության մասին խոսելիս պետք է տարբերակել երկու կողմ՝ քերականական ձևույթների համանիշությունն ու բազմիմաստությունը և բառաձևերի համանիշությունն ու բազմիմաստությունը։ Միաժամանակ անհրաժեշտ է ընդգծել, որ, ինչպես ասվեց վերևում, քերականական ձևույթների մեջ մենք հանդիպում ենք ոչ թե համանիշության, այլ նույնանիշության երևույթին, որովհետև քերականական նույն իմաստն արտահայտող ձևույթները ոճական և իմաստային թեկուզ չնչին տարբերություններ չունեն։ Նրանց տարբերությունը տարբեր բառերի հետ զուգորդելիության մեջ է, որի մասին կխոսվի ստորև։ Այսպիսով՝ երկու ձևույթներ նույնանիշ են համարվում այն դեպքում, երբ նրանք, ունենալով տարբեր արտահայտության ձև, դրսևորում են նույն քերականական իմաստը։

Քերականական ձևույթների նույնանիշությունը, ինչպես նաև բազմիմաստությունը որոշելու համար անհրաժեշտ է դրանք վերցնել այն հարացույցում և այն շարքի մեջ, որտեղ նրանք հանդես են գալիս։ Օրինակ՝ ժամանակակից հայերենում ի ձևույթը հոլովման համակարգում հանդես է գալիս որպես սեռական-տրական հոլովի իմաստակիր գիրք–գրքի–գրքից–գրքով–գրքում հարացույցում և որպես այդպիսին նույնանիշ է ու, վա, ոջ, ց, ան, ո, ա ձևույթ-

ներին՝ գրքի, որդու, օրվա, ընկերոջ, Գրիգորենց, գարնան, հոր, տան շարքում։ Խոնարհման համակարգում նրան համանուն ի ձևույթը հանդես գալով գրեցի-գրեցիր-գրեց հարացույցում, ցույց է տալիս անցյալ ժամանակի եզակի առաջին դեմք և որպես այդպիսին նույնանիշ է ա ձևույթին (գրեցի, մոտեցա, ընկա շարքում)։ Վերջինս (ա ձևույթը) իր հերթին համանուն է հրամայական եղանակի երկրորդ դեմք ցույց տվող ա ձևույթին (կարդա՛, խաղա՛), որը նույնանիշ է իր, ու ձևույթներին (կարդա՛, մոտեցի՛ր, հեռացրո՛ւ շարքում)։ Ու ձևույթը նույնպես ունի իր համանունը հոլովման համակարգում (որդու) և այլն։ Ինչպես տեսնում ենք, այստեղ մենք գործ ունենք քերականական ձևույթների համանիշության, բազմիմաստության և համանունության մի բարդ համակարգի հետ։

Ընդհանրապես լեզվական միավորների համանիշության և բազմիմաստության մասին խոսելիս անհրաժեշտ է վերջինս խիստ տարբերակել համանունությունից։ Դա վերաբերում է հատկապես քերականական ձևույթներին։ Հայտնի է, որ ձևականորեն լրիվ նույն ձևույթները կարող են արտահայտել բոլորովին տարբեր, երբեմն իրար հետ չառնչվող իմաստներ։ Եթե դրանք հանդես են գալիս տարբեր հարացույցներում և ունենում են տարբեր համանիշների շարք, ինչպիսին էին վերևում բերված ու և ի ձևույթները հոլովման և խոնարհման հարացույցներում, ապա մենք գործ ունենք համանունության երևույթի հետ և ոչ թե նույն ձևույթի բազմիմաստության։ Քերականական ձևույթի բազմիմաստությունն այն է, որ տվյալ ձևույթը, հանդես գալով միևնույն հարացույցում, շարակարգային մակարդակում կարող է դրսևորել տարբեր քերականական հարաբերություններ. ինչպես, ասենք, հոլովման համակարգի ի ձևույթը կարող է դրսևորել պատկանելության, սերման, վերաբերության և այլ հարաբերություններ։ Միաժամանակ քերականական ձևույթների բազմիմաստությունը անհրաժեշտ է տարբերակել սինկրետիզմ կոչվող երևույթից, երբ ձևույթը հարացույցի մեջ միաժամանակ համատեղում է մի քանի քերականական իմաստներ։ Այդպիսին են, օրինակ, խոնարհման վերջավորությունները ժամանակակից հայերենում (մ, ս, նք, ք, ն և այլն), որոնք

միաժամանակ դրսևորում են դեմքի, թվի, ժամանակի քերականական իմաստներ. ըստ որում, եթե տվյալ ձևույթը ունի նույնանիշ, ապա վերջինս ևս արտահայտում է տվյալ բոլոր քերականական իմաստները. օրինակ՝ ի և ա ձևույթները խոնարհման համակարգում նույնանիշներ են, որովհետև արտահայտում են նույն քերականական իմաստները (1-ին դեմք, եզակի թիվ, անցյալ ժամանակ)։ Ի, ու, վա, ան, ոջ, ա, ո, ց ձևույթները նույնանիշներ են, որովհետև արտահայտում են նույն քերականական իմաստները (սեռական-տրական հոլովի)։ Այլ կերպ ասած՝ նույնանիշ քերականական ձևույթները իրենց արտահայտած իմաստների ծավալով լրիվ համընկնում են[1]։

Նույնանիշ քերականական ձևույթները ունեն այն առանձնահատկությունը, որ նրանցից յուրաքանչյուրը ունի կիրառության որոշակի ոլորտ, կարող է զուգորդվել միայն որոշակի խմբի բառերի հետ։ Այսպես՝ ու ձևույթը հոլովման համակարգում կարող է դրվել հիմնականում ի-ով վերջացող գոյականների վրա (ոսկու, գինու, պատանու), վա ձևույթը՝ ժամանակ ցույց տվող գոյականների վրա, ոջ ձևույթը՝ որոշակի կապերով կապված (ազգակցական, ընկերական) անձ ցույց տվող գոյականների վրա և այլն։ Ի ձևույթը խոնարհման համակարգի հարացույցում կարող է գործածվել միայն ե խոնարհման բայերի հետ, իսկ նրան նույնանիշ ա ձևույթը՝ միայն ա խոնարհման բայերի հետ։ Ներ հոգնակերտ ձևույթը դրվում է հիմնականում բազմավանկ բառերի վրա, իսկ եր-ը՝ միավանկ բառերի վրա և այլն։ Կիրառության և զուգորդելիության տարբեր ոլորտներ ունենալն էլ հենց պայմանավորում է այս նույնանիշ ձևերի միաժամանակյա գոյությունը։ Իհարկե, երբեմն քերականական նույն իմաստն արտահայտելու համար նույն բառի հետ ևս զուգորդվում են տարբեր նույնանիշ ձևույթներ կամ ձևույթախմբեր՝ ստեղծելով զուգահեռ բառաձևեր, սակայն դրանք կա՛մ ձեռք են բերում կիրառական-ոճական առանձնահատկություններ

[1] Քերականական ձևույթների նույնանիշական կապերի, ինչպես նաև լեզվաբանական գրականության մեջ դրանց մեկնաբանության մասին հանգամանորեն խոսել ենք ձևաբանական համանիշների ուսումնասիրությանը նվիրված աշխատանքի մեջ, որը շուտով կավարտենք և կներկայացնենք տպագրության։

(խոսակցական, գրքային և այլն) և կամ դրանցից մեկը դուրս է մղում մյուսին։ Այդպիսի զուգահեռ բառաձևեր են ժամանակակից հայերենում, օրինակ, ամսվա-ամսի, ֆեզանից-ֆեզնից, հասկացրի-հասկացրեցի, գրեցեմ-գրեմ, ասացի-ասեցի, բերեցի-բերի, տվեցի-տվի և այլն։

Եթե քերականական ձևույթների նույնանիշությունը, ինչպես նաև համանունությունը կարելի է որոշել հենց ձևաբանական մակարդակում՝ վերցնելով դրանք այն հարացույցների ու շարքերի մեջ, որտեղ հանդես են գալիս, ապա բառաձևերի (բառերի քերականական ձևերի) համանիշությունը[1] և բազմիմաստությունը կարելի է որոշել միայն հաջորդ՝ շարահյուսական մակարդակում։ Այսպես՝ եթե ու ձևույթի իմաստային արժեքը, նրանում խաչավորվող նույնանիշական ու համանունական կապերը որոշելու համար վերցնում ենք այն հարացույցներն ու շարքերը, որոնց մեջ հանդես է գալիս, ասենք՝ որդի-որդու-որդուց և մոտեցրու-մոտեցրեմ հարացույցները՝ պարզելով նրա համանունությունը և գինու, ընկերոջ, աղջկա. պատի ու մոտեցրո՛ւ, գրի՛ր, խաղա՛ շարքերը՝ պարզելով նրա համանիշական կապերը, ապա որդու բառաձևի բազմիմաստությունը կարելի է որոշել միայն հաջորդ՝ շարահյուսական մակարդակում։ Օրինակ՝ որդու նկարը կապակցության մեջ ու ձևույթը կարող է ցույց տալ տարբեր հարաբերություններ՝ որդու պատկերը հանդիսացող նկար, որդուն պատկանող նկար, որդու նկարած նկար։ Կամ՝ այն, որ ներկա ժամանակի բայաձևը կարող է արտահայտել նաև անցյալ և ապառնի ժամանակների իմաստներ՝ համանիշ դառնալով անցյալ և ապառնի ժամանակներ դրսևորող բայաձևերին, կարելի է պարզել միայն նրա կիրառություններում, վերցնելով շարակարգի մեջ[2]։

Անհրաժեշտ է նշել, որ յուրաքանչյուր բառաձևի արտահայտած տարբեր քերականական իմաստների (հարաբերությունների)

---

[1] Այստեղ արդեն գործ ունենք ոչ թե նույնանիշների, այլ համանիշների հետ։

[2] Լեզվական միավորների հարացուցային և շարակարգային հարաբերությունների մասին տե՛ս Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Երևան, 1969, էջ 101—106։

և կիրառությունների մեջ առանձնանում են նրա հիմնական իմաստն ու կիրառությունը և երկրորդական իմաստներն ու կիրառությունները։ Վերջիններս հարաբերական են և երևան են գալիս միայն կոնտեքստում։ Հաղորդակցման պրոցեսում տարբեր քերականական ձևերի հիմնական և երկրորդական նշանակությունները հաճախ խաչաձևվում են և ընկնելով նույն կամ նման խոսքային միջավայրի մեջ՝ արտահայտում են նույնպիսի հարաբերություններ։ Ըստ որում կարող են համընկնել մեկ բառաձևի հիմնական և մյուսի երկրորդական կիրառությունները, երկու բառաձևերի երկրորդական կիրառությունները և այլն։ Երբեմն կարող են համընկնել նույնիսկ իրենց հիմնական քերականական իմաստով հակադիր բառաձևերի երկրորդական կիրառությունները, ինչպես՝ բառերի հոգնակի և եզակի ձևերը (Մարդը մահկանացու է—Մարդիկ մահկանացու են), ներգործական ու կրավորական սեռի բայերը (Անունը մոռացվել է, բայց գործը հիշվում է—Անունը մոռացել են, բայց գործը հիշում են), գոյականների տրական և բացառական հոլովաձևերը (Նկարը կախված է պատին–Նկարը կախված է պատից, կառչել մեկին–կառչել մեկից և այլն)։ Այստեղ արդեն մենք գործ ունենք բառերի քերականական ձևերի համանիշության հետ։ Այստեղ առկա է համանիշություն և ոչ թե նույնանիշություն, որովհետև նույն հարաբերությունները դրսևորելու համար խոսողը գործածում է միևնույն բառի տարբեր քերականական ձևերը՝ հաղորդման նպատակից ելնելով, իմաստային և ոճական որոշ նրբերանգ մտցնելով հաղորդվող հարաբերության մեջ՝ կապված տվյալ ձևի հիմնական իմաստի հետ։ Վերադառնանք վերևի օրինակներին։ Երբ ընդհանրական մտքեր, հանրահայտ ճշմարտություններ հաղորդելիս խոսողը գործածում է գոյականի եզակի թվի ձևը, դրանով ընդգծվում է տվյալ առարկայի, առարկաների խմբի հավաքական ամբողջություն լինելը (Մարդը մահկանացու է)։ Երբ այդ նույն միտքն արտահայտելիս գործածվում է գոյականի հոգնակի թվի ձևը, ընդգծվում է առարկաների խմբի հոգնակիությունը (Մարդիկ մահկանացու են)։ Նույն ձևով՝ երբ ներկա ժամանակի բայաձևը գործածվում է որպես համանիշ ապառնի ժամանակի բայաձևի (օրինակ՝ Վաղը գնում եմ Մոսկվա—Վաղը գնալու եմ Մոսկվա),

ապա խոսողի կողմից այդ գործողությունը դիտվում է որպես հաստատ կատարվելիք, նույնիսկ որպես ընթացքի մեջ եղող գործողություն։ Իմաստային որոշ նրբերանգ կա նաև Նկարը կախված է պատին և կախված է պատից համանիշ ձևերի միջև։ Ճիշտ է, երկու դեպքում էլ դրսևորված են առարկաների միջև եղած նույն տեղային հարաբերությունները, սակայն առաջին օրինակում կա հանգման որոշակի իմաստային երանգ՝ կապված տրական հոլովի հիմնական իմաստի հետ, երկրորդ օրինակում առկա է անջատման իմաստային երանգ՝ կապված բացառական հոլովի հիմնական իմաստի հետ։ Այս բոլոր դեպքերում մենք գործ ունենք քերականական համանիշների հետ։ Սակայն այստեղ առաջանում է մի կարևոր հարց. ինչպիսի՞ համանիշներ են սրանք՝ ձևաբանակա՞ն, թե՞ շարահյուսական։ Առաջին հայացքից կարող է թվալ, որ բառաձևերի համանիշությունը ձևաբանական է, որովհետև բառաձևերը (խոնարհման և հոլովման) ուսումնասիրվում են ձևաբանական մակարդակում։ Սակայն իրականում պատկերը այլ է։ Ինչպես ասվեց, բառաձևերի համանիշությունը հիմնականում երևան է գալիս շարահյուսական մակարդակում, բառակապակցությունների, նախադասությունների մեջ և ծառայում է առարկաների, հատկանիշների միջև եղած միևնույն հարաբերությունը դրսևորելուն։ Հետևաբար դրանք ձևաբանական համանիշներ կոչվել չեն կարող։ Բերված օրինակներում համանիշ են ոչ թե մարդիկ և մարդ կամ պատից և պատին բառաձևերը (դրանք իրենց հիմնական քերականական իմաստով նույնիսկ հակադիր են իրար), այլ ամբողջական նախադասությունները։

Երկու բառաձևեր կարող են կոչվել ձևաբանական համանիշներ միայն այն դեպքում, երբ նրանք խիստ մոտենում են իրենց հիմնական իմաստով նաև կոնտեքստից դուրս կամ նվազագույն կոնտեքստում։ Այդպիսի համանիշ բառաձևերի թիվը ժամանակակից հայերենում (և ոչ միայն ժամանակակից հայերենում) խիստ փոքր է։ Ձևաբանական համանիշ կարելի է համարել թերևս բայերի անցյալ և ապառնի մի շարք ժամանակաձևեր, ինչպես՝ սահմանական եղանակի ապառնի, ենթադրական եղանակի ապառնի ու հարկադրականի ապառնի ժամանակները (գրելու եմ, կգրեմ, պիտի

գրեմ), դրություն, վիճակ ցույց տվող մի շարք բայերի սահմանական եղանակի վաղակատար և հարակատար ժամանակները (կանգնել եմ, կանգնած եմ)[1], վերապահությամբ՝ նաև սահմանական եղանակի անցյալ որոշ ժամանակների դրական ձևերն ու ենթադրական, հարկադրական եղանակների անցյալ ժամանակների ժխտական ձևերը և հակառակը (չպիտի գնայի–գնացել եմ, կգրեի–չեմ գրել և այլն)։

Լեզվում համանիշ կիրառությամբ հաճախ հանդես են գալիս ոչ միայն նույն բառի տարբեր բառաձևերը (քերականական ձևերը), այլ նաև նույն հիմնական ձևույթն ունեցող, սակայն տարբեր խոսքի մասերի պատկանող բառեր ու բառաձևեր։ Հատկապես շատ է հանդիպում գոյականի թեք հոլովաձևերի և այլ խոսքի մասերի համանիշությունը։ Այսպես, օրինակ, որևէ նյութից բաղկացած լինելու քերականական իմաստն ու հարաբերությունը ժամանակակից հայերենում հիմնականում դրսևորվում է հարաբերական ածականի միջոցով (երկաթյա, փայտե, արծաթյա և այլն)։ Սակայն այդ նույն իմաստն արտահայտելու համար գործածվում են նաև գոյականի բացառական հոլովաձևերը (երկաթից, փայտից, արծաթից և այլն)։ Որևէ առարկայի՝ որոշակի տեղի, ժամանակի, երևույթի հատուկ լինելու, պատկանելու քերականական իմաստը ժամանակակից հայերենում դրսևորվում է –ային ածանցով բաղադրված ածականների միջոցով։ Սակայն այդ նույն իմաստը կարող է արտահայտվել նաև գոյականի սեռական հոլովի միջոցով (դաշտային–դաշտի, գարնանային–գարնան, կոլտնտեսային–կոլ-

---

[1] 19-րդ դարի հայերենում բայի վաղակատար ժամանակի կողքին հավասարապես գործածվում էր նաև նրան համանիշ հարակատար ժամանակը։ Սակայն ժամանակի ընթացքում վաղակատարը իր վրա վերցրեց անցյալ ժամանակի տվյալ իմաստն արտահայտելու ֆունկցիան, և հարակատար ժամանակը որպես այդպիսին աստիճանաբար դադարեց գոյություն ունենալուց։ Այժմ միայն դրություն, վիճակ ցույց տվող մի շարք բայերի հարակատար դերբայի ու օժանդակ բայի միացությունը կարելի է համարել բայի ժամանակային ձև։ Մնացած բոլոր դեպքերում այդ կապակցությունը վեր է ածվել բաղադրյալ ստորոգյալի (խոսքը վերաբերում է արևելահայերենին)։ Այս մասին տե՛ս Է. Աղայան, ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Երևան, 1967, էջ 349—353։

տնտեսության և այլն)[1]։ Նույն ձևով որպես համանիշներ կարող են հանդես գալ մակբայները և գոյականի գործիական հոլովաձևերը (համառորեն–համառությամբ, ազահորեն–ազահությամբ, ֆնիշորեն–ֆնիշությամբ), բայանուն գոյականների ու բայի անորոշ դերբայների որոշյալ առումները (կառուցումը–կառուցելը), ածականներն ու մակբայները (դառը–դառնորեն, մեղմ–մեղմորեն) և այլն։ Քանի որ խոսքի մասերը պատկանում են ձևաբանական մակարդակին և ուսումնասիրվում են ձևաբանության մեջ, ինչպես նաև տարբեր խոսքի մասերի համանիշ բառաձևերի միջոցով արտահայտվում են նույն քերականական իմաստները (որոշ նրբերանգներով), հետևաբար սրանք պետք է համարել ձևաբանական համանիշներ։ Սակայն տարբեր խոսքի մասերի համանիշությունը առնչվում է նաև բառական համանիշության հետ, քանի որ որպես համանիշներ հանդես են գալիս փաստորեն տարբեր բառական միավորներ (դաշտի և դաշտային ձևերը ոչ թե միևնույն բառի տարբեր քերականական ձևերն են, այլ տարբեր բառեր-բառույթներ)։ Այդ իսկ պատճառով տարբեր խոսքի մասերի միջև հանդես եկող և նույն բառական ձևույթն ունեցող համանիշները ավելի ճիշտ կլինի կոչել բառա-ձևաբանական համանիշներ։

Այժմ անցնենք շարահյուսական համանիշների բնորոշմանը։

Շարահյուսական միավորները՝ բառակապակցությունները և նախադասությունները, դրսևորում են առարկայական հարաբերություններ, այսինքն՝ ցույց են տալիս բնության երևույթների, առարկաների, նրանց հատկանիշների միջև եղած զանազան հարաբերությունները՝ դրանով հենց իրականացնելով հաղորդակցման պրոցեսը։ Հաճախ խոսողը հաղորդման նպատակից ելնելով՝ միևնույն առարկայական հարաբերություններն արտահայտելու համար օգտագործում է քերականական տարբեր միջոցներ, տարբեր կառուցվածքի նախադասություններ՝ ստեղծելով համանիշներ նաև շարահյուսական մակարդակում։ Այսպես՝ երբ ասում ենք «Ես ջարդեցի սեղանը», ուղղակի հաղորդում ենք կատարված գործողության մա-

[1] Դրա լավագույն ապացույցն այն է, որ բացատրական բառարաններում այդ ածականների բացատրության կողքին որպես համանիշ տրվում է համապատասխան գոյականի սեռական հոլովը, ինչպես՝ Գարնանային–Գարնանը վերաբերող՝ հատուկ, գարնան։

սին, իսկ երբ նույն հարաբերությունն արտահայտելու համար ընտրում ենք կրավորական կառուցվածքի նախադասություն՝ «Սեղանը ջարդվեց իմ կողմից», նպատակ ենք ունենում ընդգծել գործողություն կատարողը։ Այդ նույն իմաստային երանգը կարող ենք հաղորդել նաև տրամաբանական շեշտի օգնությամբ՝ «Ե՛ս ջարդեցի սեղանը»։ Խոսողի տարբեր վերաբերմունքը իր հաղորդածի նկատմամբ հատկապես ակնառու երևում է նախադասության բնույթի հետ կապված շարահյուսական համանիշներում (հմմտ. օրինակ՝ «Ես ինչպե՞ս կարող եմ հիմա գնալ» և «Ես հիմա չեմ կարող գնալ»)։

Շարահյուսական համանիշների առաջին և ամենակարևոր հատկանիշն այն է, որ նրանք քերականական տարբեր միջոցներով արտահայտում են առարկաների, երևույթների միջև եղած նույն հարաբերությունները (քերականական միջոց են նաև տրամաբանական շեշտն ու հնչերանգը, որոնց փոփոխությամբ առաջանում են բազմաթիվ համանիշ բառակապակցություններ ու նախադասություններ)։ Այս դեպքում մենք ստանում ենք երկու պատկեր. կա՛մ առարկաների միջև առկա նույն հարաբերությունները դրսևորվում են քերականական նույն հարաբերությամբ, սակայն քերականական տարբեր միջոցներով, ինչպես, ասենք, տեղային նույն հարաբերությունների դրսևորումը համանիշ տեղի պարագաների միջոցով (Գիրքը դրված է սեղանին → Գիրքը դրված է սեղանի վրա) և կամ նույն առարկայական հարաբերությունները վերացարկվում են որպես քերականական տարբեր հարաբերություններ, որոնք բնականաբար դրսևորվում են քերականորեն իրարից տարբեր, սակայն համանիշ կառուցվածքներով։ Այդպիսին են, օրինակ, կրավորական ու ներգործական կառուցվածքի նախադասությունները, դրական ու ժխտական կառուցվածքի մի շարք նախադասություններ, պատճառի ու պայմանի որոշ երկրորդական նախադասություններ և այլն։

Շարահյուսական համանիշների մյուս առանձնահատկությունն այն է, որ, ինչպես ասվեց, նրանցով արտահայտվում է խոսողի տարբեր վերաբերմունքը իր հաղորդածի նկատմամբ, տարբեր նպատակադրվածությունը։ Երբ խոսողն ընտրում է նույն հարաբե-

ությունն արտահայտող ձևերից մեկը, ապա նպատակ է ունենում ընդգծել այդ հարաբերության տարբեր կողմերը, դրսևորում է իր սուբյեկտիվ ընկալման ձևը, իր վերաբերմունքը և կամ հուզա-արտահայտչական, ոճական տարբեր երանգավորում է տալիս խոսքին։ Այսպես, օրինակ, վերցնենք հետևյալ նախադասությունները. «Աշխատանքը կատարվեց հինգ օրում» և «Աշխատանքը կատարվեց հինգ օրվա ընթացքում»։ Բերված երկու նախադասություններում էլ առկա են ժամանակային նույն հարաբերությունները. հինգ օրում և հինգ օրվա ընթացքում համանիշ ժամանակի պարագաները ցույց են տալիս այն ժամանակահատվածը, որի ընթացքում կատարվում է գործողությունը։ Այս երկու համանիշների ձևական տարբերությունն այն է, որ առաջինում գործածված է գոյականի ներգոյական հոլովը, իսկ երկրորդում՝ սեռական հոլովը ընթացքում կապական բառի հետ։ Վերջինիս գործածությամբ ժամանակային հարաբերության սահմանափակման իմաստային երանգը ընդգծվում, հատուկ շեշտվում է, որով և այս երկու ձևերը ձեռք են բերում նրբերանգային տարբերություն։ Բերենք մեկ այլ օրինակ. «Ի՞նչ կա ավելի ծանր ու խղճալի, Քան թե կսկիծը որդեկորույս մոր» (ՊԱ, ԱՋ, 230) և «Ոչինչ չկա ավելի ծանր ու խղճալի...»։ Այս երկու նախադասությունները ևս համանիշ են, որովհետև արտահայտում են ժխտման նույն հարաբերությունները։ Վերջիններս, սակայն, դրսևորվել են ձևական-քերականական տարբեր միջոցներով։ Մի դեպքում գործածված է հարցական բնույթի նախադասություն՝ հարցական հնչերանգով, ի՞նչ հարցական դերանվամբ և կա բայի դրական ձևով, մյուս դեպքում՝ ժխտական կառուցվածք ունեցող պատմողական նախադասություն՝ ոչինչ ժխտական դերանվամբ և կա բայի ժխտական ձևով՝ չկա։ Սա է այս նախադասությունների ձևական-կառուցվածքային տարբերությունը։ Այս նախադասությունների նրբերանգային տարբերությունը կապված է խոսողի հաղորդման նպատակի, տվյալ հարաբերությունների նկատմամբ սուբյեկտիվ վերաբերմունքի դրսևորման հետ։ Առաջին դեպքում (երբ գործածվում է հարցական բնույթի նախադասություն) նախադասությունը ունի հուզա-արտահայտչական երանգավորում, զգացվում է խոսողի սուբյեկտիվ

վերաբերմունքը հաղորդվածի նկատմամբ, իսկ երկրորդ դեպքում խոսողը պարզապես հաղորդում է այդ նույն երևույթի մասին առանց որևէ երանգավորման, ներկայացնելով այն որպես օբյեկտիվ ռեալություն։ Շարահյուսական համանիշների այս առանձնահատկությունից էլ հենց բխում են նրանց ոճական-կիրառական տարբերությունները։

Այստեղ անհրաժեշտ է խոսել նաև համանիշներից մեկը մյուսով փոխարինելու հնարավորության մասին։ Հաճախ լեզվաբանական գրականության մեջ համանիշները որոշելու համար կիրառում են փոխարինելիության չափանիշը։ Համանիշների հիմնական առանձնահատկություններից մեկը համարվում է այն, որ նրանցից մեկը կարելի է փոխարինել մյուսով. մի բան, որ մեր կարծիքով կարելի է կիրառել միայն առանձին դեպքերում, այն էլ վերապահությամբ։ Թե՛ բառական և թե՛ հատկապես շարահյուսական մակարդակում մեկ համանիշը մյուսով փոխարինելը հաճախ իր հետ բերում է ոճական, հուզա-արտահայտչական, իսկ հաճախ նաև նուրբ իմաստային տարբերություններ, մի բան, որ կարող է անդրադառնալ հաղորդման նպատակի, խոսքի վրա։ Բոլորովին այլ է փոխակերպությունը, որը իրոք կարող է հանդիսանալ շարահյուսական համանիշների որոշման չափանիշ։ Եթե մեկ շարահյուսական կառուցվածքը կարելի է ենթարկել այնպիսի կառուցվածքային-քերականական փոփոխության, որի ընթացքում շարահյուսական հարաբերությունների հիմքում ընկած առարկայական հարաբերությունները մնում են նույնը՝ ձեռք բերելով միայն ոճական, նրբերանգային տարբերություններ, ապա գործ ունենք տվյալ հարաբերության դրսևորման համանիշ ձևերի հետ։ Տվյալ շարահյուսական կառուցվածքը կարող է ունենալ այնքան համանիշ ձև, որքան հնարավոր է այն ենթարկել այդպիսի փոխակերպության։

Շարահյուսական համանիշների մյուս առանձնահատկությունն այն է, որ հիմնականում նույնը լինելով իրենց բառական կազմով՝ նրանք երբեք չեն համընկնում քերականական իմաստների ծավալով։ Հենց դա է պատճառը, որ մենք խոսում ենք նրանցում առկա տարբեր քերականական միջոցների մասին։ Այսպես՝ Սեղանին դրված գիրքը–Սեղանի վրա դրված գիրքը համանիշ բառակապակ-

ցություններ են, որոնք համընկնում են իրենց հիմնական բառային կազմով, սակայն տարբերվում են քերականական իմաստների ծավալով։ Առաջին դեպքում տարածական հարաբերությունը արտահայտված է գոյականի տրական հոլովով, երկրորդ դեպքում՝ սեռական հոլովի և վրա կապի միջոցով։ Բառական կազմի մասին խոսելիս հաշվի չենք առնում տարբեր կապերի և կապական բառերի գործածությունը, որոնք հանդես չեն գալիս որպես նախադասության ինքնուրույն անդամներ և ծառայելով նախադասության անդամների կապակցության դրսևորմանը, փաստորեն կատարում են հոլովական վերջավորությունների դեր։ Հաշվի չենք առնում նաև եղանակավորող բառերն ու կապակցությունները, որոնք նախադասության անդամ չեն հանդիսանում և գործածվում են խոսքը երանգավորելու, խոսողի վերաբերմունքը դրսևորելու համար։ Այսպիսով՝

Շարահյուսական համանիշները նույն հիմնական բառակազմն ունեցող այն բառակապակցությունները, նախադասությունները և ավելի մեծ շարահյուսական կառուցվածքներն են, որոնք տարբեր քերականական միջոցներով արտահայտում են բնության երևույթների, առարկաների միջև գոյություն ունեցող նույն հարաբերություններն ու կապերը, հավասարարժեք են իրար և միաժամանակ դրսևորում են խոսողի տարբեր վերաբերմունքը, հարաբերությունը հաղորդվածի նկատմամբ։

Շարահյուսական համանիշները ամենասերտ կերպով առընչակցվում են ձևաբանական կարգերի և ձևաբանական համանիշների հետ։ Երբ ասում ենք, թե շարահյուսական համանիշները միևնույն հարաբերությունների դրսևորումն են քերականական տարբեր միջոցներով, ապա այդ քերականական միջոցները հենց հիմնականում ձևաբանական միջոցներ են՝ հոլովում, խոնարհում, խոսքի մասային անցումներ և դրանց հետ կապված համանիշություն։ Ձևաբանական համանիշները իրենց հերթին երևան են գալիս հենց շարահյուսական մակարդակում՝ ստեղծելով շարահյուսական համանիշ կառուցվածքներ։ Բերենք մեկ-երկու օրինակ։ «Բագրատի տղայի պարգևատրվելու *լուրը տարածվում է արտադրամասում»* (*ՍԳԱ, 159*) *և* «Բագրատի տղային պարգևատրելու *լուրը տարածվում*

է արտադրամասում» նախադասությունները համանիշ են, որովհետև արտահայտում են միևնույն միտքը, հարաբերությունները, ունեն նույն բառական կազմը, սակայն տարբերվում են նախադասության անդամների միջև եղած հարաբերությունների դրսևորման քերականական միջոցներով, որոնք հենց ձևաբանական միջոցներ են։ Առաջին նախադասության մեջ ընդգծված դերբայական դարձվածը ունի կրավորական կառուցվածք՝ պայմանավորված կրավորական սեռի բայի գործածությամբ, որի մոտ գործողության տրամաբանական օբյեկտը վերացարկվել է որպես քերականական սուբյեկտ՝ կողմնակի ենթակա և դրվել է սեռական հոլովով (տղայի)։ Երկրորդ նախադասության մեջ բայը փոխել է իր սեռը, դրվել ներգործական ձևով (պարգևատրելու), որի հետ կապված փոխվել է նաև բառակապակցության կառուցվածքը. գործողության օբյեկտը արտահայտվել է ուղիղ խնդրի միջոցով (տղային)։ «Աշակերտը վստահորեն մոտեցավ գրատախտակին» և «Աշակերտը վստահությամբ մոտեցավ գրատախտակին» նախադասությունները համանիշ են, որովհետև նրանցում որպես ձևի պարագաներ գործածվել են վստահորեն—վստահությամբ ձևաբանական համանիշները։ Նույն ձևով՝ շենքի կառուցումը և շենքը կառուցելը բառակապակցությունները ևս համանիշ են, որոնց կառուցվածքային տարբերությունը պայմանավորված է նրանցում գործածված կառուցումը-կառուցելը համանիշ բառաձևերի քերականական հատկանիշների տարբերությամբ. կառուցելը բայի մոտ օբյեկտային հարաբերությունը դրսևորվել է ուղիղ խնդրի միջոցով, իսկ կառուցումը բայանունը, չունենալով բայ խոսքի մասին հատուկ սեռի կարգը, չի կարող ընդունել ուղիղ խնդիր։ Այդ պատճառով նրա մոտ նույն օբյեկտային հարաբերությունը դրսևորվում է սեռական հոլովով դրված հատկացուցչի միջոցով։

Շարահյուսական համանիշները հաճախ առնչակցվում են նաև բառական մակարդակի երևույթների հետ, որովհետև միևնույն իմաստային հարաբերությունն արտահայտելու համար երբեմն տարբեր քերականական միջոցների հետ միասին հանդես են գալիս նաև բառական-բառակազմական միջոցներ։ Այսպես, օրինակ՝ բարձր որակի աշխատանք-բարձր որակով աշխատանք-բարձրո-

rակ աշխատանք–բարձր որակ ունեցող աշխատանք բառակապակցությունները շարահյուսական համանիշներ են, որովհետև արտահայտում են որոշիչ-որոշյալի նույնատիպ հարաբերություն։ Սակայն վերջին երկու բառակապակցություններում այդ հարաբերությունն արտահայտելու համար գործածվել են ոչ միայն քերականական տարբեր միջոցներ, այլ նաև բառական միջոցներ։ Մի դեպքում ավելացել է ունեցող բառը, մյուս դեպքում կատարվել է բառաբարդում. ըստ որում բարդ բառի (բարձրորակ) բաղադրիչների միջև եղած հարաբերությունը, նախորդների նման, որոշիչ-որոշյալի հարաբերություն է։ Տարբեր բառական միջոցների, առանձնապես եղանակավորող բառերի և դերանունների կիրառության ենք հանդիպում հատկապես դրական և ժխտական կառուցվածք ունեցող համանիշ նախադասությունների, ինչպես նաև տարբեր բնույթ ունեցող համանիշ նախադասությունների մեջ։ Համեմատի՛ր, օրինակ, հետևյալ համանիշ նախադասությունները. Մի՞թե դրանից ավելի թշվառ, ավելի ողորմելի մարդ կա աշխարհիս երեսին (ՆԴ, 1, 465) → Դրանից ավելի ողորմելի, ավելի թշվառ մարդ չկա աշխարհիս երեսին։ Չե՛ս դիմանա այսպիսի թափի, չէ՛, չե՛ս դիմանա (ՀՔ, ՄՏՉ, 197) → Հնարավոր չէ դիմանալ այսպիսի թափի։ Ինչպե՞ս չխոսե մի մայր, քանի որ... (Շ, 4, 36) → Մայրը չի կարող չխոսել, քանի որ... (Այս մասին մանրամասն տե՛ս համապատասխան գլխում)։

Մեծ հետաքրքրություն է ներկայացնում նաև շարահյուսական կապակցությունների և ձևաբանական միավորների՝ բառաձևերի համանիշությունը։ Ժամանակակից հայերենում երբեմն քերականական նույն հարաբերությունն արտահայտելու համար կարող են գործածվել և՛ շարահյուսական միավորներ՝ բառակապակցություններ, և՛ միայն բառի քերականական ձևեր։ Այսպես, օրինակ՝ պատկանելության քերականական հարաբերությունը դրսևորելու համար, երբ հատկացուցիչը անձնական դերանուն է, գործածվում է տվյալ դերանվան սեռական հոլովը, ինչպես՝ իմ գիրքը, քո գլխարկը, նրա մատիտը և այլն։ Այդ նույն քերականական հարաբերությունն արտահայտվում է նաև զուտ ձևաբանական միջոցով՝ ստացական հոդերի կցումով, որոնք այստեղ կատարում են նույն

դերը, ինչ համապատասխան դերանունների սեռական հոլովները. այսպես՝ իմ գիրքը–գիրքս, քո գլխարկը–գլխարկդ, նրա մատիտը–մատիտը և այլն։ Այստեղ համանիշության մի եզրում ունենք շարահյուսական միավոր, մյուս եզրում՝ ձևաբանական։ Նույն ձևով որոշիչ-որոշյալի համանիշ հարաբերություն կարող է արտահայտվել ցուցական դերանվան և ցուցական հոդերի միջոցով, ինչպես՝ օրերս–այս օրերին, ամսույս 26–ին–այս (սույն) ամսի 26–ին և այլն։

Շարահյուսական համանիշ հանդիսացող կառուցվածքների ուսումնասիրությունը ունի ոչ միայն տեսական, այլ նաև գործնական մեծ նշանակություն։ Այն մի կողմից օժանդակում է լեզվի շարահյուսական կառուցվածքի ամբողջական ուսումնասիրությանը (իզուր չէ, որ ժամանակակից կառուցվածքային լեզվաբանության մեջ այդքան մեծ տեղ է տրվում փոխակերպություններին), մյուս կողմից վեր է հանում լեզվի ոճական հնարավորությունները և դրանով օժանդակում խոսքը ոճական տեսակետից բազմատեսակ, դիպուկ և արտահայտիչ դարձնելուն։ Լեզուն մեզ տալիս է ընտրություն կատարելու մեծ հնարավորություններ՝ ինչպես բառական, այնպես էլ քերականական որոշակի իմաստներ ու հարաբերություններ արտահայտելու համար ներկայացնելով միաժամանակ մի շարք միջոցներ։ Հայտնի է, որ խոսքը երկարաշունչ, ոչ գեղեցիկ է դառնում, երբ խոսքի նույն հատվածում անընդհատ կրկնվում են ոչ միայն նույն բառերը, այլև քերականական նույն միջոցները, կառուցվածքները։ Ահա այս դեպքում անտեղի ու ավելորդ կրկնությունից, միօրինակությունից խուսափելուն օգնում են շարահյուսական համանիշները։

Շարահյուսական համանիշությունը շատ բարդ ու բազմակողմանի երևույթ է։ Այն ընդգրկում է լեզվի ամբողջ շարահյուսական կառուցվածքը։ Համանիշական հարաբերություններ են դիտվում միակազմ և երկկազմ նախադասությունների, տարբեր բնույթի նախադասությունների, լրիվ և թերի նախադասությունների, տարբեր բառակապակցությունների, նախադասության անդամների արտահայտման քերականական միջոցների, կրավորական ու ներգործական շարահյուսական կառուցվածքների, բարդ նախադասությունների տարբեր տեսակների, ուղիղ և անուղղակի խոսքերի, երկրոր-

դական նախադասությունների ու դերբայական դարձվածների միջև և այլն։ Շարահյուսական յուրաքանչյուր տեսակի միավորների սահմաններում այն ունի իր առանձնահատկությունները։ Այդ իսկ պատճառով նպատակահարմար է շարահյուսական համանիշների յուրաքանչյուր խումբը քննարկել առանձին՝ վեր հանելով յուրաքանչյուրի քերականական-կառուցվածքային և ոճական-կիրառական առանձնահատկությունները։

Սույն աշխատության ուսումնասիրության նյութ ենք դարձրել շարահյուսական համանիշների երկու խումբ.

1. Նախադասության կառուցվածքի և բնույթի հետ կապված համանիշություն, երբ միևնույն միտքը, առարկայական նույն հարաբերությունները արտահայտելու համար գործածվում են տարբեր կառուցվածքի, ինչպես նաև տարբեր բնույթի նախադասություններ։ Այս դեպքում համանիշ նախադասությունները ունենում են ոչ միայն շարահյուսական-ձևաբանական տարբերություններ, այլ երբեմն նաև մասնակի բառական տարբերություններ՝ կապված տարբեր եղանակավորող բառերի, առանձին դերանունների գործածության, ինչպես նաև նախադասության առանձին անդամների ղեղչման հետ։

2. Նախադասության անդամների քերականական արտահայտության հետ կապված համանիշություն։ Այս դեպքում նախադասությունը ենթարկվում է միայն մասնակի կառուցվածքային փոփոխության։ Նախադասության անդամների քերականական հարաբերությունների բնույթը մնում է նույնը, փոխվում են միայն դրանց արտահայտման քերականական միջոցները, որոնց հետ կապված՝ համանիշ կապակցությունները ձեռք են բերում իմաստային-ոճական նրբերանգներ։ Այս խմբի հետ է կապված նաև բառակապակցությունների համանիշությունը, քանի որ վերջիններիս բաղադրիչների միջև առկա են հիմնականում քերականական նույն հարաբերությունները, ինչ նախադասության անդամների միջև։ Առանձնահատուկ տեղ են գրավում ստորոգյալի արտահայտության համանիշ ձևերը, քանի որ, ինչպես կտեսնենք համապատասխան գլխում, ստորոգյալի արտահայտության ձևի փոփոխությունը հաճախ առաջացնում է ամբողջ նախադասության կառուցվածքի փոփոխություն։

ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԵՎ ԲՆՈՒՅԹԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ՀԱՄԱՆԻՇՆԵՐ

1. ՄԻԱԿԱԶՄ ԵՎ ԵՐԿԿԱԶՄ ՀԱՄԱՆԻՇ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայտնի է, որ նախադասությունները ըստ իրենց կառուցվածքի լինում են միակազմ և երկկազմ։

Երկկազմ նախադասությունները ունեն նախադասության կառուցման համար անհրաժեշտ երկու հիմնական բևեռները՝ ենթակա և ստորոգյալ, որոնցից յուրաքանչյուրը կարող է ունենալ իրեն ստորադասված անդամներ։ Սա նախադասության կազմավորման հիմնական սխեման է։ Սակայն կան նաև այնպիսի նախադասություններ, որոնք չունեն այս երկու բևեռները և կազմվում են կա՛մ միայն բայական անդամով, կա՛մ անվանական անդամով։ Դրանք միակազմ նախադասություններն են[1]։ Խոսողական պրոցեսում ծառայելով մտքերը ավելի պատկերավոր ու արտահայտիչ դարձնելուն՝ միակազմ նախադասությունները հաճախ հանդես են գալիս որպես երկկազմ նախադասությունների համանիշներ՝ նրանցից տարբերվելով միայն իմաստային որոշ նրբերանգներով, իսկ երբեմն միայն ոճական առանձնահատկություններով ու կիրառության ոլորտով (միակազմ նախադասությունները ավելի տարածված են գեղարվեստական գրականության և ժողովրդական-խոսակցական լեզվում)։ Բերենք միակազմ և երկկազմ նախադասու-

---

[1] *Այս մասին մանրամասն տե՛ս* Ս. Աբրահամյան, *Ժամանակակից հայերենի շարահյուսության մի քանի հարցեր, Երևան, 1962,* Վ. Առաքելյան, *Հայերենի շարահյուսություն, հատոր 2, Երևան, 1964,* Ս. Գյուլբուդաղյան, *Միակազմ նախադասությունները ժամանակակից հայերենում, Երևան, 1967։*

թյունների՝ ժամանակակից հայերենում առավել տարածված համանիշ շարքերը։

1. Միակազմ դիմավոր նախադասությունները հաճախ ունենում են ընդհանուր-անորոշ նշանակություն, այսինքն՝ նրանցով հաղորդվում է այնպիսի գործողությունների կամ եղելությունների մասին, որոնց կատարողը խոսողին հայտնի չէ, անորոշ է, և կամ հաղորդման համար կարևոր է համարվում ոչ թե գործողություն կատարողը, այլ հենց բուն գործողությունը։ Այս դեպքում նախադասության ստորոգյալը ունենում է տարբեր դրսևորումներ, որի հետ կապված հաճախ փոխվում է նաև նախադասության կառուցվածքը. միակազմ նախադասությունը վեր է ածվում երկկազմ նախադասության։

Ընդհանուր-անորոշ նշանակություն ունեցող դիմավոր միակազմ նախադասություններում շատ տարածված է բայի հոգնակի երրորդ դեմքի գործածությունը. օրինակ՝ Առաջին հաղթանակը թև տվեց Մրոցին, ջուր մաղեց Միրի գլխին։ Միրանի տափի բախտը կիսով չափ որոշված համարեցին (ԱԲ, 47)։ Էնպես պատահեց, որ մեր գյուղում ուսումնարան բաց արին (ՀԹ, 1, 409)։ Երկուսին էլ բնից հանել վանդակի մեջ էին մեծացրել (ՎՓ, եժ, 2, 485)[1]։

Հաճախ այդ նույն միտքն արտահայտելու համար ներգործական սեռի բայի հոգնակի երրորդ դեմքի փոխարեն գործածվում է նույն բայի կրավորական սեռի ձևը, որի հետևանքով փոխվում է նախադասության կառուցվածքը։ Գործողության օբյեկտը, որը առաջին դեպքում վերացարկվել էր որպես նախադասության ուղիղ խնդիր, երկրորդ դեպքում վեր է ածվում նախադասության ենթակայի, այսինքն՝ միակազմ նախադասության փոխարեն գործածվում է երկկազմ նախադասություն։ Ահա օրինակներ՝ Նրա հրավերը ընդունվեց ուրախությամբ (ՍԳ, 1962, № 4, 53)։ Անունը մոռացվել է, բայց գործը հիշվում է (Իս., 3,322)։ Ու այդ ծանր օրերից հետո

---

[1] Բերված նախադասությունները միակազմ են, որովհետև տվյալ խոսքային միջավայրում գործողություն կատարողը մատնանշված չէ, ընդհանուր—անորոշ է։ Իհարկե, մեկ այլ խոսքային միջավայրում տվյալ կառուցվածքի նախադասությունները կարող են լինել զեղչված ենթակայով, այսինքն՝ երկկազմ։

ահա մեր դպրոցական հանդեսը, ուր պիտի հայտնվի, թե ով է մեզանից ավարտում (ՍՉ, եժ, 184)։

Պատկերը ավելի պարզ դարձնելու համար կարելի է տալ այս համանիշ նախադասությունների զուգահեռ շարքը։

Միակազմ նախադասություններ	Երկկազմ նախադասություններ
Ծիրանի տափի բախտը *կիսով չափ* որոշված համարեցին *(ԱԲ)։*	*Ծիրանի տափի* բախտը *կիսով չափ* որոշված համարվեց:
Այնտեղ վաճառում են տնտեսական իրեր:	*Այնտեղ* վաճառվում են տնտեսական իրեր:
Անունը մոռացել են, *բայց* գործը հիշում են:	Անունը մոռացվել է, *բայց* գործը հիշվում է *(Իս.)։*
Երկուսին *էլ բնից* հանել, *վանդակի մեջ* էին մեծացրել *(ՎՓ)։*	Երկուսն *էլ բնից* հանվել, *վանդակի մեջ* էին մեծացվել:

Ինչպես երևում է բերված զուգահեռ շարքերի համեմատությունից, այս նախադասությունները ծառայում են միևնույն միտքը հաղորդելուն։ Նույնն է նաև նրանց բառային կազմը։ Սակայն նրանք տարբերվում են իրարից քերականական կառուցվածքով. համանիշ շարքերից յուրաքանչյուրում առարկայական նույն հարաբերությունները վերացարկվել են որպես տարբեր քերականական հարաբերություններ՝ արտահայտված տարբեր քերականական միջոցներով։ Առաջին շարքի նախադասությունները միակազմ են. չունեն ենթակա, ստորոգյալները դրսևորված են ներգործական սեռի բայի հոգնակի թվով։ Բայի հոգնակի թիվը այստեղ ցույց է տալիս ոչ թե այն, որ գործողությունը կատարվում է (կամ կատարվել է) շատերի կողմից, այլ այն, որ գործողություն կատարողը խոսողի համար անհայտ է և կամ տվյալ հաղորդման ժամանակ կարևոր չի համարվում։ Նախադասություններն ունեն նաև ուղիղ

խնդիրներ (ընդգծված են), որոնց անցնում է բայով նկարագրված գործողությունը։ Երկրորդ շարքի նախադասություններում փոխվել է բայերի սեռը։ Գործածված են նույն բայերի կրավորական սեռի ձևերը. մի բան, որ բնականաբար առաջացրել է նախադասության կառուցվածքի փոփոխություն։ Գործողության օբյեկտը այս դեպքում արդեն վերացարկվել է որպես քերականական ենթակա, այսինքն՝ նախադասությունները դարձել են երկկազմ։ Եթե առաջին շարքում բայը միշտ դրվում է հոգնակի երրորդ դեմքով, որով ընդգծվում է գործողության ընդհանուր-անորոշ լինելը, ապա երկրորդ դեպքում բայի դեմքը և թիվը կախված են ենթակա հանդիսացող օբյեկտի դեմքից և թվից (օրինակ՝ Այնտեղ ինձ լավ ընդունեցին → Այնտեղ ես լավ ընդունվեցի)։

Ծանոթություն.— Գործողության օբյեկտը կարող է արտահայտված լինել ինչպես նախադասության պարզ անդամով, այնպես էլ երկրորդական նախադասությամբ։ Վերջինս համապատասխանաբար կարող է լինել կա՛մ ուղիղ խնդիր, կա՛մ ենթակա. օրինակ՝ «...Ուր պիտի հայտնվի, թե ով է մեզանից ավարտում» (ՍՁ) և «...Ուր պիտի հայտնեն, թե ով է մեզանից ավարտում»։ Առաջին նախադասության մեջ երկրորդական նախադասությունը կատարում է ենթակայի պաշտոն, իսկ երկրորդի մեջ նույն երկրորդական նախադասությունը կատարում է ուղիղ խնդրի պաշտոն։ Զևով նույնն են լինում նաև իր ցույց տվող պարզ ուղիղ խնդիրն ու ենթական (տե՛ս վերևի օրինակները)։

2. Ընդհանրական մտքեր, դատողություններ արտահայտելիս միակազմ դիմավոր նախադասության մեջ հաճախ գործածվում է բայի եզակի երկրորդ դեմքը, որը այս կիրառություններում կորցրել է կոնկրետ դեմք մատնանշելու իր արժեքը և ունի ընդհանուր-անորոշ նշանակություն։

ա) Երբ բայը դրվում է ենթադրական եղանակի եզակի երկրորդ դեմքով, ցույց է տալիս ընդհանուր դատողություն, եզրակացություն որևէ գործողության կամ եղելության իրագործման հնարավորության (եթե բայը դրական ձևով է գործածված) կամ անհնարինության (եթե այն ժխտական ձևով է գործածված) վերաբերյալ. օրինակ՝ Մեր հարևան Միքայելն այդ ժողովներում հաճախ պատմում է այնպիսի բաներ, որ ոչ մի գրքում չես գտնի (ՍՁ, ԵԺ, 3, 431)։ Չեմ հիշում, մտածում եմ ու չեմ հիշում։ Տասը

հազարից ավելի մարտիկներ կան զորամասերում, բոլորին չես հիշի (ՀՔ, ՄՏՁ, 2, 61)։ Ինչ ասես, որ թույլ չես տա ու չես ների մահու չափ վախեցած մորը (ՀԲ, ԾԱ, 207)։

Հաճախ այս նույն միտքն արտահայտելու համար գործածվում են բաղադրյալ ստորոգյալով միակազմ նախադասություններ, որոնցում ստորոգյալը բաղադրված է վերևում որպես պարզ ստորոգյալ հանդես եկած բայի անորոշ դերբայով և կարելի է, հնարավոր է եղանակավորող կապակցություններով, ըստ որում դրական կառուցվածք ունեցող պարզ ստորոգյալով միակազմ նախադասությանը համապատասխանում է դրական բաղադրյալ ստորոգյալով նախադասություն, ժխտական կառուցվածք ունեցող պարզ ստորոգյալով միակազմ նախադասությանը՝ ժխտական բաղադրյալ ստորոգյալով նախադասություն։ Բերենք այդ համանիշների զուգահեռ շարքերը։

Պարզ ստորոգյալով միակազմ նախադասություններ	Բաղադրյալ ստորոգյալով միակազմ նախադասություններ
Մեր հարևան Միքայելն այդ ժողովներում պատմում է այնպիսի բաներ, որ ոչ մի գրքում *չես գտնի (ՍՁ)։*	*... Որ* ոչ մի գրքում հնարավոր չէ (չի կարելի) գտնել։
Տասը հազարից ավելի մարտիկներ կան զորամասերում, բոլորին *չես հիշի (ՀՔ)։*	*Տասը հազարից ավելի մարտիկներ կան զորամասերում, բոլորին* հնարավոր չէ հիշել։
Մտիր ակումբ հիմա, մտիր թատրոն ու կաֆեն՝ Հազար արքա ու Արա *կհանդիպես ժպտադեմ (ԵՁ)։*	*... Հազար արքա ու Արա* կարելի է հանդիպել *ժպտադեմ։*

Ինչ ասես, որ թույլ չես տա *ու* չես ների *մահու չափ վախեցած մորը (ՀԲ)։*	*Ամեն ինչ* կարելի է (հնարավոր է) թույլ տալ ու ներել *մահու չափ վախեցած մորը։*

Ինչպես երևում է բերված շարքերի համեմատությունից, առաջին շարքը՝ պարզ ստորոգյալով միակազմ նախադասությունները ավելի հատուկ են ժողովրդական-խոսակցական լեզվին, ունեն ոճական այն առանձնահատկությունը, որ ավելի պատկերավոր ու արտահայտիչ են դարձնում խոսքը։ Երկրորդ շարքի նախադասությունները չունեն առաջինների պատկերավորությունը և ավելի հատուկ են գրավոր խոսքին։ Ինչպես ասվեց, այս նախադասությունները ունեն կառուցվածքային-քերականական այն տարբերությունը, որ առաջին դեպքում գործողությունների կատարման հնարավորության կամ անհնարինության վերաբերյալ դատողությունը արտահայտվել է բայի ենթադրական եղանակի ապառնի ժամանակի եզակի երկրորդ դեմքով, իսկ երկրորդ դեպքում այդ նույն միտքը արտահայտվել է տվյալ գործողությունը ցույց տվող բայի անորոշ դերբայով և հնարավոր է (հնարավոր չէ, անհնար է), կարելի է *եղանակավորող կապակցություններով բաղադրված ստորոգյալներով, ըստ որում երկու դեպքում էլ նախադասությունները միակազմ են։ Այս տիպի պարզ ստորոգյալով միակազմ նախադասությունները սովորաբար ունենում են ժխտական կառուցվածք, այսինքն՝ գործածվում են որևէ գործողության, եղելության կատարման անհնարինությունը ցույց տալու համար, իսկ նույն իմաստով բաղադրյալ ստորոգյալով նախադասությունները հավասարապես հանդիպում են և՛ դրական, և՛ ժխտական կառուցվածքով (տե՛ս վերևի օրինակները)։*

Հնարավոր է (կարելի է)+անորոշ դերբայ *կապակցությունը հայ քերականագիտության մեջ համարվում է նաև ենթակայի և ստորոգյալի կապակցություն։ Այս տեսակետի ընդունման դեպքում վերոհիշյալ նախադասությունները պետք է համարել երկկազմ։ Մեր կարծիքով այս կապակցություններում անորոշ դերբայի ընկալումը որպես ենթակա մթագնել է, և այն այլևս չի գիտակցվում*

որպես նախադասության առանձին անդամ։ Սակայն, երբ անորոշ դերբայը փոխում է իր շարադասությունը և դրվում է եղանակավորող կապակցությունից առաջ, հատկապես երբ դրա հետ միաժամանակ ընդունում է որոշիչ հոդ, փոխվում է ամբողջ կապակցության բնույթը՝ վերածվելով ենթակայի և ստորոգյալի կապակցության։ Այսպես՝ եթե «Հնարավոր չէ կատարել այդ առաջադրանքը» նախադասության մեջ հնարավոր չէ կատարել-ը բաղադրյալ ստորոգյալ է, իսկ ամբողջ նախադասությունը միակազմ, ապա «Այդ աշխատանքը կատարելը հնարավոր չէ» նախադասության մեջ այդ նույն կապակցությունը վեր է ածվել ենթակա-ստորոգյալի կապակցության, իսկ միակազմ նախադասությունը՝ երկկազմ նախադասության, որը համանիշ է առաջինին։

Եթե եզակի երկրորդ դեմքով դրված բայ-ստորոգյալը ներգործական սեռի է, ապա նրան կարող է համանիշ լինել նաև կրավորական կառուցվածքի երկկազմ նախադասություն, որի բայ-ստորոգյալը կլինի նույն բայի կրավորական սեռի երրորդ դեմքը, եզակի կամ հոգնակի՝ նայած գործողության օբյեկտը ինչ թիվ ունի։ Վերջինս այս նախադասություններում վերացարկվում է որպես նախադասության ենթակա. օրինակ՝ Տասը հազարից ավելի մարտիկներ կան զորամասերում, բոլորին չես հիշի → Բոլորը չեն հիշվի։ Սրանց որ ժամանակ տաս... → Սրանց որ ժամանակ տրվի, բան ու գործ թողած առավոտից իրիկուն ժողովի կնստեն (ԸԷՍԳ, 416)։

Հաճախ այս տիպի միակազմ նախադասությունը ունենում է հարցական հնչերանգ, որը, սակայն, նախադասությանը տալիս է ոչ թե հարցման իմաստ, այլ ժխտման, եթե բայն ունի դրական ձև (մեծ մասամբ) կամ հաստատման, եթե բայն ունի ժխտական ձև (հազվադեպ)։ Ըստ այդմ ժխտական կառուցվածք և հարցական հնչերանգ ունեցող նախադասությանը կարող են համապատասխանել դրական կառուցվածքի պարզ ստորոգյալ կամ եղանակավորող կապակցությամբ բաղադրյալ ստորոգյալ ունեցող համանիշ միակազմ նախադասություններ, իսկ դրական կառուցվածք և հարցական հնչերանգ ունեցող նախադասությանը՝ համապատասխան

ժխտական կառուցվածքի նախադասություններ։ Այսպես՝ Նա այնքան ծածկամիտ է, որ նրանից բան կիմանա՞ս → *Նա այնքան ծածկամիտ է, որ նրանից* բան չես իմանա → *նրանից* հնարավոր չէ բան իմանալ։ *Այնքան անկապ է գրված, որ* բան կհասկանա՞ս → *Այնքան անկապ է գրված, որ* բան չես հասկանա → *որ* հնարավոր չէ բան հասկանալ։ *Ասի ինչ ուզում է լինի, ընթրիքի համար մի քանիսը պետք է զարկեմ։ Բայց* ինչո՞վ զարկես, *ոչ մի հատ գնդակ չի մնացել (ՀԹ, 2, 322)* → Բայց հնարավոր չէ զարկել → *Բայց* չես կարող զարկել։

Այստեղ արդեն համանիշների շարքը երեքն է՝ դրական ձևով, բայց հարցական հնչերանգով միակազմ նախադասություն, ժխտական կառուցվածքով, սովորական հնչերանգով միակազմ նախադասություն, ժխտական կառուցվածքով, սովորական հնչերանգով, բաղադրյալ ստորոգյալով նախադասություն։ Ժխտման իմաստը հարցական հնչերանգով կարող է արտահայտվել նաև բաղադրյալ ստորոգյալով միակազմ նախադասության մեջ։ Դրանով համանիշների շարքը կավելանա մեկ անդամով։ Օր. այսպես՝ Այնքան մութ է, որ բան կտեսնե՞ս → որ բան չես տեսնի → *որ* հնարավո՞ր է բան տեսնել → որ հնարավոր չէ բան տեսնել։

բ) Երբեմն միակազմ նախադասություններում բայի եզակի երկրորդ դեմք է գործածվում ընդհանրապես որևէ երևույթի մասին ընդհանուր դատողություն անելիս։ Այս դեպքում ևս բայի երկրորդ դեմքը կորցնում է իր կոնկրետ դիմային նշանակությունը։ Գործողությունը վերաբերում է ոչ թե որոշակի երկրորդ դեմքի, այլ վերցվում է ընդհանրացնող նշանակությամբ (վերաբերում է բոլորին)։ Օրինակ՝ Արևն արդեն միջօրեում էր և այրում էր ամբողջ ուժով, թվում է, որ եթե հետևես, կարող ես տեսնել, *թե ինչպես հենց աչքիդ առջև փոխվում է մաշկիդ գույնը (ԱՍեկ., 265)։ Երբ* գիտակցում ես, *որ մահը մոտիկ է, չորս քայլի վրա, զգաստ* ես լինում, *որպեսզի նրան քեզանից* հեռացնես *(ՀՔ, ՄՏՁ, Ձ, 39)։ Եթե պատերազմի ժամանակ* չապրես, *...Աշխատանքի ժամանակ* չապրես, *ապա ե՞րբ* ապրես *(Ն. տ., 54)։*

Հաճախ այդ նույն իմաստն արտահայտելու համար գործածվում է նույն բայի եզակի երրորդ դեմքը, որի մոտ դրվում է մարդ ձևական ենթական։ Վերջինս այս կիրառություններում չունի կոնկրետ նյութական իմաստ և գործածվում է ընդհանուր-անորոշ նշանակությամբ։ Այդ է պատճառը, որ չնայած այս կառուցվածքի նախադասություններում առկա է ձևական ենթակա, սակայն քանի որ այն չի մատնանշում գործողության կոնկրետ կատարողին, այս նախադասությունները ևս ընդունված է համարել միակազմ։

Ահա այս համանիշ նախադասությունների շարքը։

Թվում է, որ եթե հետևվես, կարող ես տեսնել, թե ինչպես հենց աչքիդ առջև փոխվում է մաշկիդ գույնը (ԱՍեկ.)։	Թվում է, որ եթե մարդ հետևի, կարող է տեսնել. թե ինչպես հենց աչքի առջև փոխվում է մաշկի գույնը։
Երբ գիտակցում ես, որ մահը մոտիկ է, շորս քայլի վրա, զգաստ ես լինում, որպեսզի նրան քեզանից հեռացնես (ՀՔ)։	Երբ մարդ գիտակցում է, որ մահը մոտիկ է, շորս քայլի վրա, զգաստ է լինում, որպեսզի նրան իրենից հեռացնի:
Եթե պատերազմի ժամանակ չապրես ...աշխատանքի ժամանակ չապրես, ապա ե՞րբ ապրես (Ն. տ.)։	Եթե մարդ պատերազմի ժամանակ չապրի աշխատանքի ժամանակ չապրի, ապա ե՞րբ ապրի:
Ես ինձ ու ինձ որոշում եմ, որ այս քաղղեկը լավ մարդ է և իրոք սրա հետ չես տխրի (ԲՀ, ՍՉ)։	Ես ինձ ու ինձ որոշում եմ, որ այս քաղղեկը լավ մարդ է, և իրոք սրա հետ մարդ չի տխրի:

Այս համանիշ նախադասությունների քերականական-կառուցվածքային տարբերությունը դարձյալ ստորոգյալների դրսևորման մեջ է. մի դեպքում այն արտահայտված է բայի եզակի երկրորդ դեմքով (առաջին շարք), մյուս դեպքում՝ նույն բայի եզակի երրորդ

դեմքով։ Երկրորդ տարբերությունն այն է, որ առաջին շարքում նախադասությունները ենթակա չունեն, իսկ երկրորդ շարքում առկա է մարդ ձևական ենթական, որը նախադասության միավորյալ լինելու դեպքում դրվում է միայն առաջին ստորոգյալի մոտ (տե՛ս օրինակները)։

Այս օրինակները ունեն նաև հետևյալ կառուցվածքային տարբերությունը. առաջին նախադասության աչիդ և մաշկիդ բառերի դ երկրորդ դեմքի ստացական հոդը, որը կոնկրետ դեմք չի նշում, այլ ստորոգյալի նման ունի անորոշ-ընդհանրական նշանակություն, ընկնում է։ Նույն ձևով երկրորդ նախադասության fեզանից անջատման խնդիրը, որը նույնպես գործածված է ընդհանուրանորոշ դեմք ցույց տալու համար, ստորոգյալի դեմքի փոփոխման հետ կապված՝ փոխարինվել է երրորդ դեմքի դերանվամբ՝ իրենից:

Այդ նույն իմաստը երբեմն հնարավոր է լինում արտահայտել բայի հոգնակի առաջին դեմքով. այսպես՝ Ինչ որ ցանես, այն կհնձես → Մարդ ինչ ցանի, այն կհնձի → Ինչ որ ցանենք, այն կհնձենք:

Ընդհանուր դատողություն անելիս թվալ բայի մոտ կարող է գործածվել fեզ հանգման խնդիրը, որին համապատասխան երկրորդական նախադասության մեջ գործածվում է երկրորդ դեմքի ստացական հոդ։ Այս կառուցվածքի նախադասությանը համանիշ կարող է լինել երրորդ դեմքով կազմավորված նախադասություն, որտեղ որպես հանգման խնդիր գործածվում է մարդու բառը (fեզ-ի փոխարեն), իսկ դ ստացական հոդին փոխարինում է ն հոդը. օրինակ՝

Դա Մարտիրոս Սարյանի տուն-թանգարանն է, որի կտավներից այնքան լույս, ջերմություն ու հույզ է հորդում, որ fեզ թվում է, թե իրոք շուրջդ ամառ է («Հայրենիքի ձայն»)։

...Մարդու թվում է, թե իրոք շուրջը ամառ է։

Ընդհանրական մտքեր հայտնելիս, ընդհանուր դատողություններ, եզրակացություններ անելիս՝ հաճախ հանդիպում է դ ստացական հոդի և մարդու ձևի ու ն հոդի համանիշ գործածությունը նաև երկկազմ նախադասություններում. օրինակ՝

Պարզկա է սկսվում,— ասաց նա,— շրթունքներիդ վրա շունչդ սառչում է (ՀՔ, ՄՏՁ, 2, 194)։	*Պարզկա է սկսվում,— ասաց նա,— մարդու շրթունքների վրա շունչը սառչում է։*

գ) Երբ միակազմ նախադասությամբ տրվում է խորհուրդ՝ ընդհանրական նշանակությամբ, այսինքն՝ երբ խորհուրդը ուղղված է ոչ թե որևէ անձնավորության, այլ շատերին, հաճախ ստորոգյալը դրվում է բայի հրամայական եղանակի եզակի երկրորդ դեմքով, որը ևս այս կիրառություններում կորցրել է իր կոնկրետ դիմային նշանակությունը։ Այս կառուցվածքի նախադասությունները հաճախ ունենում են առածական արժեք և շատ են տարածված ժողովրդական-խոսակցական լեզվում. օրինակ՝ Տասը չափի՛ր, *մեկ* կտրի՛ր։ *Շան հետ* ընկերացիր, *փետը ձեռքիցդ* մի՛ գցիր։ *Ամառվա անձրևին, ձմեռվա արևին* մի՛ հավատա։

Այս նախադասությունները ևս կարող են ունենալ համապատասխան բաղադրյալ ստորոգյալով համանիշ նախադասություններ, որոնք, սակայն, գրքային են, ավելի քիչ գործածական և խոսքը որոշ չափով զրկում են պատկերավորությունից ու արտահայտչականությունից։ Ահա համանիշների այդ շարքը.

Տասը չափի՛ր մեկ կտրի՛ր։	Պետք է *տասը* չափել, *մեկ* կտրել։
Ամառվա անձրևին, ձմեռվա արևին մի՛ հավատա։	*Ամառվա անձրևին, ձմեռվա արևին* չպետք է հավատալ։
Շան հետ ընկերացիր, *փետը ձեռքիցդ* մի՛ գցիր։	*Շան հետ* պետք է ընկերանալ, *բայց փայտը ձեռքից* չգցել։

Այս նախադասությունների կառուցվածքային-քերականական տարբերությունը դարձյալ ստորոգյալների դրսևորման մեջ է։ Առաջին շարքում, ինչպես ասվեց, գործածված է բայի հրամայական եղանակի եզակի դեմքը, իսկ երկրորդ շարքում այդ նույն բայի անորոշ դերբայը պետք է անհրաժեշտություն ցույց տվող միադիմի կապակցության հետ կազմել է բաղադրյալ ստորոգյալ։

Վերջին օրինակում ստորոգյալի փոփոխությունը առաջացրել է նաև բարդ նախադասության բաղադրիչ մասերի կապակցության փոփոխություն։ Առաջին դեպքում կապակցությունը անշաղկապ է, երկրորդ դեպքում այն իրացվել է բայց համադասական շաղկապի միջոցով։

Ընդհանրական իմաստով խորհուրդ, կարծիք արտահայտելու համար հաճախ միակազմ նախադասություններում գործածվում է նաև բայի ենթադրական եղանակի հոգնակի երրորդ դեմքը։ Այս նախադասություններում, նախորդների համեմատությամբ, ընդհանրական-անորոշ իմաստը ավելի է ընդգծվում։ Այդ է պատճառը, որ այս կառուցվածքի նախադասությունները ունեն առածական բնույթ և շատ են տարածված հատկապես ժողովրդական-խոսակցական լեզվում։ Այսպես՝ Մարդուն ընկերով կճանաչեն։ Շիտակ խոսքը հանաքով կասեն։ Պտղատու ծառին քար շատ կգցեն։ Մի ձեռքով երկու ձմերուկ չեն բռնի։

Այս նախադասությունները ևս կարող են ունենալ իրենց համանիշները, որոնց ստորոգյալը դարձյալ բաղադրյալ է, կազմված համապատասխան բայի անորոշ դերբայով և պետք է, կարելի է միադիմի կապակցություններով. օրինակ՝ Մարդուն ընկերով պետք է (կարելի է) ճանաչել։ Շիտակ խոսքը հանաքով պետք է ասել։ Մի ձեռքով երկու ձմերուկ չի կարելի (չպետք է) բռնել։

Այս նախադասությունները ևս հաճախ արտասանվում են հարցական հնչերանգով, որը նախադասությանը տալիս է ժխտական բնույթ՝ ցույց տալով որևէ գործողության կատարման, երևույթի երևան գալու անհնարինությունը, կամ իրագործման աննպատակահարմար լինելը։ Այս դեպքում նրանք համանիշ են լինում նույն նախադասության ժխտական ձևին, ինչպես նաև համապատասխան բաղադրյալ ստորոգյալով նախադասության ժխտական

ձևին, որոնք ունենում են սովորական պատմողական հնչերանգ։ Օրինակ՝ Այդքան ժամանակ հյուր կլինե՞ն (Շ, 3, 307) → Այդքան ժամանակ հյուր չեն լինի → Այդքան ժամանակ հյուր չի կարելի լինել։

Ենթադրական եղանակի հոգնակի երրորդ դեմքի փոխարեն նույն ընդհանրական իմաստով հաճախ գործածվում է սահմանական եղանակի հոգնակի երրորդ դեմքը, որը ևս հանդես է գալիս վերևում բերված ձևերի համանիշ։ Օրինակ՝ Մարդուն ընկերով կճանաչեն → Մարդուն ընկերով են ճանաչում։ Երկաթը տաք-տաք կծեծեն → Երկաթը տաք-տաք են ծեծում։ Այս երկու համանիշ ձևերի միջև կա իմաստային այն նուրբ տարբերությունը, որ առաջին դեպքում ընդգծվում է տվյալ գործողության, եղելության կատարման անհրաժեշտությունը, մասամբ նաև խոսողի ընդհանրական խորհուրդը տվյալ գործողության կատարման կամ չկատարման վերաբերյալ, իսկ երկրորդ դեպքում (սահմանական եղանակի ներկա ժամանակի հոգնակի երրորդ դեմքի գործածության դեպքում) տրվում է ընդհանուր-անորոշ դատողություն տվյալ գործողության կատարման վերաբերյալ։

դ) Զեզոք սեռի բայերը, երբեմն (շատ սակավ) ընդունելով վ կրավորական սեռածանցը, եզակի երրորդ դեմքով և մեծ մասամբ ժխտական առումով կազմում են միակազմ նախադասություններ, որոնցով արտահայտվում է ընդհանուր դատողություն տվյալ գործողության կատարման անհնարինության վերաբերյալ։ Օրինակ՝ «Այստեղ չի նստվում»։ «Այս անձրևին չի գնացվի»։ «Շատ է մեծամտացել, հետը չի խոսվում»։ Այս իմաստն արտահայտելու համար ժամանակակից հայերենում ավելի հաճախ գործածվում են բաղադրյալ ստորոգյալով միակազմ նախադասություններ, որտեղ տվյալ չեզոք բայի անորոշ դերբայը հանդես է գալիս հնարավոր չէ, անհնար է, չի կարելի եղանակավորող կապակցությունների հետ։ Այսպես՝ Այստեղ հնարավոր չէ նստել։ Այս անձրևին հնարավոր չէ (չի կարելի, անհնար է) գնալ։ Հետը անհնար է (հնարավոր չէ) խոսել։ Այդ նույն իմաստն արտահայտելու համար կարող են գործածվել նաև նույն միակազմ նախադասություն-

ների դրական ձևերը հարցական հնչերանգով, որոնց հաճախ ավելանում է նաև nr *հարցական-հարաբերական դերանունը։ Այսպես՝ Այստեղ* կնստվի՞, նստվո՞ւմ է nr: *Այս անձրևին* կգնացվի՞: *Հետը* խոսվո՞ւմ է nr: *Հարցական հնչերանգի դեպքում բայը ավելի հաճախ դրվում է ենթադրական եղանակի ապառնի ժամանակի եզակի III դեմքով։ Այս նախադասությունները նախորդների համեմատությամբ ունեն իմաստային այն նրբերանգը, որ արտահայտում են խոսողի դժգոհությունը տվյալ գործողության կատարման անհնարինության կապակցությամբ (տե՛ս օրինակները)։ Այսպիսով ստացվում է համանիշ նախադասությունների հետևյալ շարքը։* Այստեղ չի նստվում → Այստեղ կնստվի՞ nr → Այստեղ հնարավոր չէ նստել: Այս անձրևին չի գնացվի → Այս անձրևին կգնացվի՞ → Այս անձրևին հնարավոր չէ գնալ:

Նույնիմաստ համանիշ նախադասություններ, այսինքն՝ այնպիսի նախադասություններ, որոնցով տրվում է որևէ գործողության իրագործման անհնարինությունը, կարելի է կազմել նաև ներգործական սեռից բաղադրված կրավորաձև չեզոք բայերով։ Սակայն սրանք տարբերվում են նախորդներից նրանով, որ բոլոր համանիշ ձևերն էլ կարող են նաև երկկազմ լինել, թեև մեծ մասամբ կիրառվում են որպես միակազմ նախադասություններ՝ ընդգծելով միայն տվյալ գործողության կատարման անհնարինությունը։ Օրինակ՝ Այս գիրքը շատ անհետաքրքիր է, չի կարդացվում → *Այս գիրքը շատ անհետաքրքիր է,* կկարդացվի՞ (nr) → *Այս գիրքը շատ անհետաքրքիր է,* հնարավոր չէ կարդալ: *Գետինը շատ է չոր,* չի փորվում → կփորվի՞ → հնարավոր չէ փորել: *Խաղողը խակ է,* չի ուտվում → կուտվի՞ → հնարավոր չէ ուտել:

Հաճախ հնարավոր չէ *կապակցության փոխարեն գործածվում է լինել վերացական բայի եզակի երրորդ դեմքը կա՛մ հարցական հնչերանգով և կամ ժխտական ձևով։ Երկու դեպքում էլ այդ բայի և տվյալ գործողությունը ցույց տվող բայի միացությունը, որը ցույց է տալիս գործողության կատարման անհնարինություն, կարելի է համարել բաղադրյալ ստորոգյալ, իսկ ամբողջ նախադա-*

սությունը միակազմ։ «Այստեղ նստել չի լինում», «*Հետը* խոսել չի լինում», «*Այստեղ* նստել կլինի՞», «Հետը խոսել կլինի՞» *նախադասությունները միակազմ են, որովհետև* նստել չի լինում, խոսել չի լինում (նստել կլինի՞, խոսել կլինի՞) *կապակցությունները գիտակցվում են որպես բաղադրյալ ստորոգյալներ և ոչ թե ենթակայի-ստորոգյալի կապակցություններ*[1]։

*2. ա) Միակազմ անդեմ նախադասություններից համանիշների շարքում հանդիպում են հատկապես հրաման, կարգադրություն արտահայտող բայական անդեմ նախադասությունները։ Սրանց գերադաս անդամը, ինչպես հայտնի է, անորոշ դերբայն է։ Վերջինս արտասանվում է հատուկ հրամայական հնչերանգով, որով և հիմնականում պայմանավորված է այս նախադասությունների հրաման, կարգադրություն դրսևորելը։ Օրինակ՝ —*Հագնվե՛լ,— *նույն բարկությամբ հնչեց միևնույն ձայնը,— արագ, արագ (ԲՀ, ՍՉ, 10)։ Բռնելով արյունոտ կուրծքը նա հրաման տվեց.—* Բարձրացնե՛լ *մեր հայրենիքի սուրբ դրոշը (Անթ., 631)։ Մի րոպե հետո եղավ երկրորդ հրամանը.—* Ցրվե՛լ, պառկե՛լ *(ՀՔ, ՄՏՉ)։—* Հաստատե՛լ,— *կանչեց Բուրդենկոն (Ն. տ.)։*

Այս նախադասությունները համանիշ են հրամայական եղանակի հատկապես հոգնակի թվով դրսևորված հրամայական բնույթի նախադասություններին, որովհետև սովորաբար ցույց են տալիս հրաման, կարգադրություն՝ ուղղված շատերին։ Մեկ հոգուն ուղղված հրամանը սովորաբար դրսևորվում է բայի հրամայական եղանակի եզակի թվով։ Իհարկե, բացառված չէ, որ համապատասխան կոնտեքստում անորոշ դերբայով արտահայտված հրամանը ևս ուղղված լինի մեկ հոգու։ Ահա հրաման արտահայտող միակազմ և երկկազմ համանիշ նախադասությունների զուգահեռ շարքը։

Հագնվե՛լ։	*Հագնվեցե՛ք։*
Բարձրացնե՛լ դրոշը։	*Բարձրացրե՛ք դրոշը։*
Ցրվե՛լ, պառկե՛լ։	*Ցրվեցե՛ք, պառկեցե՛ք։*
Հաստատե՛լ։	*Հաստատեցե՛ք։*

---

[1] *Տե՛ս* Վ. Առաքելյան, *Հայերենի շարահյուսություն, հատոր 2, Երևան, 1964, էջ 25։*

Երբ բայական անդեմ նախադասություններով հրամայվում, կարգադրվում է չկատարել որևէ գործողություն, նրանք ավելի համապատասխանում են բայի ըղձական եղանակի ժխտական ձևով արտահայտված հրամայական նախադասություններին։ Դա հետևանք է այն երևույթի, որ ըղձական եղանակի ժխտական ձևերը հատուկ հնչերանգով ավելի կտրուկ հրաման են արտահայտում, քան բուն արգելական հրամայականի ձևերը (հմմտ. մի՛ գնա և չգնա՛ս)։ Բայական անդեմ նախադասություններում ևս հրամանը ավելի ուժեղ, կտրուկ է արտահայտվում, քան բուն հրամայական եղանակով դրսևորված բայ-ստորոգյալ ունեցող նախադասություններում։ Բերենք արգելք պարունակող հրամայական անդեմ նախադասությունների և նրանց համանիշ երկկազմ նախադասությունների զուգահեռ օրինակներ։ Սակայն մինչև հրամանս չարձակե՛լ ոչ մի նետ (ՍՁ, ՀԲ) → Սակայն մինչև հրամանս չարձակե՛ք ոչ մի նետ → Մի՛ արձակեք ոչ մի նետ։ Զթողնե՛լ մեկին ողջ հեռանա (ՍՁ, ՊԹ) → Զթողնե՛ք մեկին ողջ հեռանա → Մի՛ թողնեք մեկին ողջ հեռանա։ Զաղմկե՛լ → Զաղմրկե՛ք → Մի՛ աղմկեք։

բ) Բայական անդեմ նախադասություններից նրանք, որոնք արտասանվում են հարցական հնչերանգով և արտահայտում են ներքին հարցում, խոսողի երկմտանքը, վարանանքը որևէ գործողություն կատարելու վերաբերյալ, կարող են ունենալ բայի ըղձական եղանակի ապառնի ժամանակի առաջին դեմքով դրսևորված իրենց համանիշը. ըստ որում վերջինս նույնպես ունենում է հարցական հնչերանգ։ Օրինակ՝ Ուղղակի չգիտեմ ինչ անել։ Հեռանա՞լ այստեղից, թե՞ հաշտվել ամեն ինչի հետ → Ուղղակի չգիտեմ ինչ անել։ Հեռանա՞մ այստեղից, թե՞ հաշտվեմ ամեն ինչի հետ։

Այս նախադասությունների իմաստային նուրբ տարբերությունն այն է, որ առաջին դեպքում կասկածը, երկմտանքը դրսևորված է ավելի անորոշ ձևով, և գործողության՝ առաջին դեմքին վերաբերելը հասկացվում է միայն կոնտեքստից իսկ երկրորդ դեպքում այն ավելի որոշակի է, կոնկրետ և կոնտեքստից դուրս էլ վերաբերում է առաջին դեմքին՝ խոսողին։

Այս անդեմ նախադասություններով գործողության կատարման վերաբերյալ արտահայտված կասկածանքը, երկվությունը համապատասխան խոսքային միջավայրում, հատկապես ուրիշի անուղղակի խոսքի մեջ, կարող է վերաբերել նաև երրորդ դեմքին։ Այդ դեպքում որպես համանիշ կարող է գործածվել ըղձական եղանակի ապառնի ժամանակի երրորդ դեմքի բայով կազմավորված երկկազմ նախադասություն։ Օրինակ՝ Օլիմպիան կանգ առավ. մտնե՞լ, թե՞ չմտնել (ՍՁ, ՀԲ) → Օլիմպիան կանգ առավ.— մտնի՞, թե՞ չմտնի։ Նրանք վարանանքով կանգ առան։ Ի՞նչ անել, շարունակե՞լ ճանապարհը, թե՞ ետ դառնալ → Նրանք վարանանքով կանգ առան։ Ի՞նչ անեն, շարունակե՞ն ճանապարհը, թե՞ ետ դառնան։

Ինչպես երևում է բերված համանիշ նախադասությունների զուգադրությունից, անդեմ նախադասությունները ավելի պատկերավոր, արտահայտիչ են դարձնում խոսքը։ Երկրորդ դեպքում զգացվում է անհարթություն, նախադասությունները կապակցող մի երրորդ օղակի (ասենք՝ մտածել բայի) բացակայությունը։ Այդ է պատճառը, որ գեղարվեստական գրականության մեջ այս նախադասություններից անհամեմատ ավելի տարածված են անդեմները։

գ) Երբ հարցական հնչերանգ ունեցող բայական անդեմ նախադասության մեջ գործածվում է որևէ հարցական դերանուն (մեծ մասամբ ինչո՞ւ և ինչպե՞ս), փոխվում է նախադասության բնույթը։ Այն դադարում է կասկածանք, երկմտանք արտահայտելուց և գործածվում է դրսևորելու համար կա՛մ խոսողի բացասական՝ ժխտական վերաբերմունքը տվյալ գործողության կատարման վերաբերյալ (երբ գործածվում է ինչո՞ւ հարցական դերանունը) և կամ խոսողի կարծիքը տվյալ գործողության կատարման անհնարինության վերաբերյալ (երբ գործածվում է ինչպե՞ս հարցական դերանունը)։

Այս դեպքում ևս գործողությունը, կոնտեքստի թելադրանքով, կարող է վերաբերել կամ խոսողին (առաջին դեմքին) և կամ երրորդ անձնավորության։

Առաջին դեպքում (երբ դրսևորվում է խոսողի բացասական վերաբերմունքը գործողության կատարման վերաբերյալ), որպես համանիշ կարող են հանդես գալ պետք չէ, հարկավոր չէ, կարիք չկա և այլ եղանակավորող կապակցություններով ու դարձյալ անորոշ դերբայով կազմված նախադասություններ, որոնք արտասանվում են սովորական պատմողական հնչերանգով։ Բերենք այդպիսի համանիշ նախադասությունների զուգահեռ օրինակներ։

Ինչո՞ւ կեղծել և ստել, ինչո՞ւ խաբել և մի ուրիշ ավելի վատ սխալ գործել (Շ, 3, 291).	Պետք չէ (կարիք չկա, հարկավոր չէ) կեղծել և ստել, պետք չէ խաբել...
Ինչո՞ւ երկար մտածել. միթե՞ ամենքի վերջը այդ չէ (Շ, 3, 294)։	Պետք չէ երկար մտածել, քանի որ ամենքի վերջը այդ է։

Վերջին օրինակում նախադասության առաջին մասի կառուցվածքի փոփոխությունը թելադրել է երկրորդ մասի կառուցվածքի փոփոխություն, այն հարցական բնույթի համադասական նախադասությունից վեր է ածվել պատմողական բնույթի հիմունքի երկրորդական նախադասության։ Այս երկու շարքի նախադասությունների նրբերանգային տարբերությունն այն է, որ առաջին դեպքում խիստ ընդգծվում է խոսողի սուբյեկտիվ վերաբերմունքը հաղորդվածի նկատմամբ, երկրորդ դեպքում այդ նույն միտքը հաղորդվում է ավելի օբյեկտիվ եղանակով։

Այս նախադասություններին համանիշ է նաև ինչո՞ւ հարցական դերանվամբ և, կոնտեքստին համապատասխան, նույն բայի ըղձական եղանակի ապառնի ժամանակի առաջին կամ երրորդ դեմքերով ձևավորված երկկազմ նախադասություն, որը մի կողմից ավելի կոնկրետ է դարձնում գործողության ում վերաբերելը, մյուս կողմից, անդեմ հարցական նախադասության նման, ընդգծում է խոսողի սուբյեկտիվ վերաբերմունքը։ Օրինակ՝ Ինչո՞ւ կեղծել և ստել → Ինչո՞ւ կեղծեմ և ստեմ (նաև՝ Ինչո՞ւ կեղծի ու ստի) →

Պետք չէ կեղծել ու ստել: Ինչո՞ւ այդքան շարշարվել → Ինչո՞ւ այդքան շարշարվեմ → Պետք չէ այդքան շարշարվել:

Երկրորդ դեպքում (երբ դրսևորվում է խոսողի կարծիքը գործողության կատարման անհնարինության, աննպատակահարմարության վերաբերյալ) որպես համանիշ կարող են հանդես գալ հնարավոր չէ, չեմ կարող, չի կարող, անհնար է *գործողության անհնարինություն ցույց տվող եղանակավորող կապակցություններով և անորոշ դերբայով ձևավորված նախադասություններ, որոնք ունենում են սովորական պատմողական հնչերանգ, ինչպես նաև* ինչպե՞ս *հարցական դերանվամբ և համապատասխան բայի ըղձական եղանակի ապառնի ժամանակի առաջին և երրորդ դեմքերով կազմավորված երկկազմ նախադասություններ։ Ահա օրինակներ։*

Ինչպե՞ս բաժանվել *նրանից* → Ինչպե՞ս բաժանվեմ *նրանից* → Չեմ կարող (հնարավոր չէ) բաժանվել *նրանից։ Բայց* ինչպե՞ս մոռանալ *նրան* → *Բայց* ինչպե՞ս մոռանամ *նրան (մոռանա նրան)* → Չեմ կարող (հնարավոր չէ) մոռանալ *նրան։* Բայց ինչպե՞ս գրել *նրան այդ մասին* → *Բայց* ինչպե՞ս գրեմ *(գրի) նրան այդ մասին* → Չեմ կարող (հնարավոր չէ, դժվար է) գրել *նրան այդ մասին։*

Այս զուգահեռ համանիշ նախադասությունների տարբերությունը դարձյալ խոսողի սուբյեկտիվ վերաբերմունքի դրսևորման աստիճանի մեջ է, որը հարցական հնչերանգի դեպքում ավելի ցայտուն է երևում։ Իսկ երկու՝ հարցական հնչերանգով արտասանված նախադասությունների տարբերությունը այն է, որ երկրորդի մեջ գործողություն կատարողը որոշակի դրսևորված է (առաջին, ինչպես նաև երրորդ նախադասություններում այն որոշվում է միայն կոնտեքստի օգնությամբ)։

դ) Բայական անդեմ նախադասությունները բացականչականին մոտ հատուկ հնչերանգի օգնությամբ կարող են դրսևորել խոսողի իղձը, մեծ ցանկությունը որևէ գործողության կատարման վերաբերյալ[1]. *օրինակ՝* Հեռանա՛լ, մոռանա՛լ, մոռանա՛լ Ամեն

---

[1] *Տե՛ս* Ս. Աբրահամյան, *ժամանակակից հայերենի շարահյուսության մի քանի հարցեր, Երևան, 1962, էջ 140,* Վ. Առաքելյան, *Հայերենի շարահյուսություն, հատոր 2, 1964, էջ 39։*

ինչ, ամենին մոռանալ, Զսիրել, չխորհել, չափսոսալ (ՎՏ)։ Լինե՞լ կաղնի, մնա՞լ հավետ այստեղ (ՆՁ)։

Այս նախադասությունները ևս նախորդ միակազմ անդեմ նախադասությունների նման գործածվում են հիմնականում գեղարվեստական գրականության լեզվում (հատկապես չափածո խոսքում) և ավելի պատկերավոր, արտահայտիչ են դարձնում խոսքը։ Սրանց համանիշ կարող են համարվել այն երկկազմ նախադասությունները, որոնք կազմվում են բայի ըղձական եղանակի ապառնի առաջին դեմքով՝ իղձ, ցանկություն ցույց տվող որևէ եղանակավորող ձայնարկության հետ (մեծ մասամբ երանի)։ Օրինակ՝ «Հեռանա՞լ, մոռանա՞լ...» նախադասությունը համանիշ է «Երանի՜ հեռանամ, մոռանամ» նախադասությանը։ Միայն առաջին դեպքում իղձը, տենչանքը արտահայտված է ավելի ընդհանուր-անորոշ ձևով, երկրորդ դեպքում՝ ավելի որոշակի. մի բան, որ պայմանավորված է նախադասությունների կառուցվածքային տարբերությամբ։

Հետաքրքրական է մի երևույթ. բացականչական հնչերանգ ունեցող բայական անդեմ նախադասություններին համանիշ երկկազմ նախադասություններում, ըստ կոնտեքստի, կարող է համապատասխանել ըղձական եղանակի կա՛մ ապառնի և կամ անցյալ ժամանակը։ Երբ անդեմ նախադասությամբ խոսողը արտահայտում է իղձ, ցանկություն ապագայում կատարվելիք գործողության վերաբերյալ, ապա նրան համապատասխանում է ըղձական եղանակի ապառնի ժամանակը։ Իսկ երբ դրա հետ միաժամանակ հատուկ հնչերանգով ընդգծվում է ցանկալի գործողության կատարման անհնարին համարվելը (խոսողի կողմից), այս դեպքում արդեն նրան կարող է համապատասխանել ըղձական եղանակի անցյալ ժամանակը։ Այսպես՝ եթե «Գնա՞լ, տեսնե՞լ այդ բոլորը» և «Գնա՞մ, տեսնե՞մ այդ բոլորը» համանիշ նախադասությունները արտահայտում են խոսողի իղձը, ցանկությունը տվյալ գործողությունների կատարման վերաբերյալ՝ առանց ընդգծելու դրանց կատարման հնարավորությունը կամ անհնարինությունը, ապա

Գնա՞լ, տեսնե՞լ այդ ամենը» և «Գնայի՞, տեսնեի՞ այդ ամենը» շարքում ընդգծվում է այն միտքը, որ խոսողը տվյալ գործողությունների կատարումը համարում է խիստ ցանկալի, սակայն անիրագործելի։

ե) Անվանական անդեմ նախադասությունները, ինչպես հայտնի է, կազմված են լինում մեծ մասամբ գոյականից կամ գոյականաբար գործածված որևէ բառից և ցույց են տալիս որևէ առարկայի, երևույթի գոյությունը, լինելությունը, առկայությունը[1]։ Սրանք ևս գործածվում են հիմնականում գեղարվեստական գրականության մեջ՝ նկարագրությունների ժամանակ և օժանդակում են խոսքը ավելի սեղմ, պատկերավոր, արտահայտիչ դարձնելուն։

Անվանական անդեմ նախադասությունները ևս, նախորդների նման, կարող են ունենալ համանիշ երկկազմ նախադասություններ, որոնցից նրանց տարբերությունը միայն ոճական է և կիրառական։ Երկկազմ նախադասությունների կիրառության ժամանակ խոսքը որոշ չափով կորցնում է իր արտահայտչականությունը, այն վեր է ածվում մտքերի, իրադրությունների սովորական շարադրանքի։ Իհարկե, անվանական նախադասությունների ոչ տեղին, չափազանց գործածությունը ևս կարող է խանգարել խոսքի դիպուկությանը, այն դարձնել ոչ հարթ, զրկել գեղեցկությունից։ Բերենք անվանական անդեմ նախադասությունների և նրանց համանիշների առավել տարածված շարքերը։

1) Ինչպես ասվեց, անվանական անդեմ նախադասությունները կարող են ցույց տալ որևէ առարկայի, երևույթի առկայությունը, երևան գալը։ Այս իմաստով նրանք կա՛մ հաստատում են խոսելու պահին երևան եկող երևույթները և կամ նկարագրությունների ժամանակ մատնանշում են անցյալում երևան եկած երևույթներ, առարկաներ։ Ըստ այդմ նրանք կարող են ունենալ տարբեր կառուցվածքի համանիշ նախադասություններ։ Այսպես՝ Ամառ: Կեսօրվա կիզիչ

---

[1] Տե՛ս Վ. Առաքելյան, նույն տեղում, էջ 42, Ս. Աբրահամյան, նույն տեղում, էջ 141։

արև: Դրսում անտանելի շոգ է: *Խոսքի այս հատվածում* «Ամառ: Կեսօրվա կիզիչ արև» *անվանական նախադասությունները մատնանշում են խոսելու պահին առկա եղելությունը, իրողությունը։ Այս նախադասություններին համանիշ են* «Ամառ է: Կեսօրվա կիզիչ արև է» *դիմավոր նախադասությունները, որտեղ, խոսքին համապատասխան, որպես հանգույց, հանդես է եկել է օժանդակ բայը։ Եթե այդ նույն անվանական նախադասությունները գործածվեն անցյալին վերաբերող նկարագրությունների մեջ, նրանց համանիշ դիմավոր նախադասություններում կգործածվի էր բայը։ Այսպես՝* «Ամառ: Կեսօրվա կիզիչ արև: Հեռվում երևացին մի խումբ ձիավորներ»: *Այստեղ արդեն նշված նախադասություններին համանիշ կարող են լինել* «Ամառ էր: Կիզիչ արև էր» *նախադասությունները։*

2) Երբ անվանական նախադասությունը ընդարձակ է, և գլխավոր անդամն ունի որոշիչ լրացում, նրան համանիշ երկկազմ նախադասության մեջ այդ որոշիչը կարող է վերածվել ստորոգելիական հանգույցի։ Այս դեպքում փոխվում է նախադասության տրամաբանական շեշտը, նաև հաղորդման նպատակը. օրինակ՝ Ամայի գյուղ... Գանգերի պես պարապ խրճիթներ *(ԴԴ, ԵԺ, 1, 70) միակազմ անվանական նախադասությունները կարելի է փոխակերպել հետևյալ երկկազմ համանիշ նախադասությունների՝* Գյուղն ամայի է... խրճիթները գանգերի պես պարապ են: *Ինչպես երևում է այս նախադասությունների համեմատությունից, թեև սրանցով հաղորդված է նույն երևույթի մասին, սակայն հաղորդման նպատակը այս նախադասություններում տարբեր է։ Առաջին դեպքում ուղղակի հաղորդվում է տվյալ երևույթի առկայության մասին, երկրորդ դեպքում* գյուղը *և* խրճիթները *դիտվում են որպես արդեն հայտնի երևույթներ, և նրանց վերագրվում են որոշակի հատկանիշներ՝ շեշտելով դրանք (առաջին դեպքում ևս խոսվում է այդ հատկանիշների մասին, սակայն առանց հատուկ շեշտելու)։ Այս անվանական նախադասությունները կարող են ունենալ նաև հետևյալ համանիշները՝* Ամայի գյուղ է: Գանգերի պես պարապ խրճիթներ կան: *Բերենք այլ օրինակներ։*

Մանր ու անձրևոտ օր *(ՄԳՄ, 372)։*	Մանր ու անձրևոտ օր է։ Օրը ծանր է ու անձրևոտ։
Խորունկ, վիթխարի գիշեր *(ն. տ.)։*	Խորունկ, վիթխարի գիշեր է։ Գիշերը խորունկ, վիթխարի է։

3) Հաճախ անվանական միակազմ նախադասությանը կարող է համապատասխանել կա բայ-ստորոգյալն ունեցող երկկազմ համանիշ նախադասություն։ Դա այն դեպքում է լինում, երբ անվանական նախադասությամբ ընդգծվում է որևէ առարկայի, երևույթի առկայությունը։ Բերենք օրինակներ։

Փոքրիկ մի նախախրճիթ, մի դույլ, *մի* քանի պղինձ *և մի քանի* կավե ամաններ *(ՄԳՄ, 429)* → *Փոքրիկ մի նախախրճիթ* կա, *մի դույլ* կա, *մի քանի* պղինձ *և մի քանի* կավե ամաններ։ *Ճեմարանի բակում արձակ՝ խոսվածքների, տարազների* խայտաբղետ հավաքածու *(ՊՍ, ԱՀ, 17)* → *Ճեմարանի բակում արձակ՝ խոսվածքների, տարազների խայտաբղետ հավաքածու* կա։

Ինչպես երևում է բերված օրինակներից, այս զուգահեռ համանիշ նախադասություններից յուրաքանչյուրը ունի իր կիրառության ոլորտը, և նրանցից մեկը մյուսով փոխարինելը հաճախ կարող է առաջացնել ոճի խախտում, վնասել խոսքի դիպուկությանն ու պատկերավորությանը։

Անվանական անդեմ նախադասությունը կարող է գործածվել նաև որոշյալ առումով։ Այս դեպքում այն սովորաբար սկսվում է ահա *բառով. օրինակ՝* «Ահա *քահերի* կույտը, *հիմնվող գյուղի* տնակները, *խաղաղության մեջ ծաղկող* սալորենիները, նշենիները, *դաշտերում դեղնակարմիր* ծիլերը» *(«Գրական թերթ»)։ Այս կառուցվածքի նախադասությունները ևս գործածվում են հիմնականում նկարագրությունների ժամանակ և համանիշ են անորոշ կառուցվածքի անդեմ նախադասություններին։ Այսպես՝* Քահերի կույտ, *հիմնվող գյուղի* տնակներ, *խաղաղության մեջ ծաղկող* սալորենիներ. նշենիներ, *դաշտերում դեղնակարմիր* ծիլեր։

4) Ժխտական կառուցվածք ունեցող անվանական միակազմ նախադասությունը ևս կարող է ունենալ իր համանիշը։ Այսպես՝

երբ ժխտական անվանական անդեմ նախադասությունը կազմված է լինում ոչ մի ժխտական դերանունից և անուն խոսքի մասից, ապա այդ նույն ժխտումը կարող է դրսևորվել ոչ մի դերանվան հետ գործածելով նաև չկա (չկար) ժխտական կազմություն ունեցող բայ-ստորոգյալը, որը դրվում է անուն-խոսքի մասից հետո, իսկ ոչ մի դերանունը միշտ դրվում է անուն-խոսքի մասից առաջ։ Օրինակ՝

Ոչ մի ծառ։ Ոչ մի ստվեր։	Ոչ մի ծառ չկա։ Ոչ մի ստվեր չկա։
Շրջեցինք բոլոր ծաղկի խանութները։ Ոչ մի ծաղիկ։	Ոչ մի ծաղիկ չկար։
Սահակը ուժեղացրեց դարբասի թակոցը։ Ոչ մի ձայն (ԴՎ, 363)։	Սահակը ուժեղացրեց դարբասի թակոցը։ Ոչ մի ձայն չկար։

Երբ անվանական նախադասությունը բարդ համադասական է, նրա ժխտականը կարող է կազմվել նաև միայն ոչ ժխտական մասնիկի միջոցով, որը դրվում է յուրաքանչյուր նախադասության սկզբում։ Այս դեպքում նրան համանիշ երկկազմ նախադասությունը կազմվում է կա բայի դրական ձևի օգնությամբ՝ ոչ ժխտական մասնիկի հետ։ Վերջինս դարձյալ դրվում է նախադասության սկզբում, ենթակայից առաջ, իսկ կա ստորոգյալը՝ ենթակայից հետո։ Ստորոգյալը բարդ նախադասության երկրորդ, երրորդ բաղադրիչներում կարող է պեղչվել։ Այս դեպքում վերջիններս թեև ձևով նման են լինում անվանական անդեմ նախադասություններին, սակայն իրականում այդպիսին չեն, այլ պեղչված ստորոգյալով նախադասություններ։ Բերենք օրինակներ։

Լռին խոկում են երկինք, գետ ու արտ, Եվ ոչ մի շարժում, ու ոչ մի հընչյուն... (ՎՏ, 3)։	...Եվ ոչ մի շարժում ու ոչ մի հնչյուն չկա։ ... Եվ ոչ շարժում կա, ոչ հնչյուն։

Ու լռություն։— Ոչ լաց և ոչ կական (*ՍՍԲ, 394*)։	*Ու լռություն։*— Ոչ լաց կա և ոչ կական:
Երբեմն շրջվում էր և նայում ետ։ Ոչ nf, ոչ մի շունչ, ոչ գազան, ոչ թռչուն (*ԴԴ, եժ, 3, 346*)։	*Երբեմն շրջվում էր և նայում ետ։* Ոչ nf շկար, ոչ մի շունչ, ոչ գազան կար, ոչ թռչուն:

Այս համանիշ նախադասությունների տարբերությունն այն է, որ սովորական անդեմ կառուցվածքի դեպքում ժխտումը ավելի ցայտուն է դրսևորվում, քան երկկազմ կառուցվածքի դեպքում։

2. ԹԵՐԻ ԵՎ ԼՐԻՎ ՀԱՄԱՆԻՇ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Շարահյուսական համանիշների անսպառ շարք կարող են ունենալ թերի նախադասությունները[1]։

Հայտնի է, որ թերի նախադասությունները խիստ տարածված են գեղարվեստական գրականության երկխոսությունների, ինչպես նաև ժողովրդական-խոտակցական լեզվի մեջ։ Դրանց առաջացումը կապված է լեզվի այն առանձնահատկության հետ, որ վերջինս չի սիրում կրկնություններ, ձգտում է սեղմության, աշխատում է ավելի սեղմ միջոցներով և ավելի կարճ ժամանակվա ընթացքում հնարավորին չափ շատ մտքեր հաղորդել։ Թերի նախադասություններ հատկապես շատ են հանդիպում հարց ու պատասխան պարունակող խոսքի մեջ, երբ նախորդ նախադասությունը, հատկապես հարցը, հնարավորություն է ընձեռում նախադասության մի մասով, երբեմն նույնիսկ մեկ անդամով, հասկանալի դարձնել միտքը։ Բերենք մեկ օրինակ։ «—Լևոն,— ասացի,— շա՞տ ես փափագում տեսնել Լուիզային։— Այո՛, իհարկե:— Եթե չտեսնես,

---

[1] *Թերի նախադասությունների մասին մանրամասն տե՛ս* Ս. Աբրահամյան, *Ժամանակակից հայերենի շարահյուսության մի քանի հարցեր, Երևան, 1960, էջ 153—167,* Վ. Առաքելյան, *Հայերենի շարահյուսություն, հատոր 2, Երևան, 1964, էջ 58—80։*

շա՞տ կտխրես:— *Բայց ես կտեսնեմ նրան, սինյոր...։— Լուիզան այժմ Միլանում չէ։ —Ո՞վ ասաց։—* Սինյորա Ստեֆանյայի հեռագիրը:— Հապա որտե՞ղ է:— Փարիզում:— Ո՞ւմ հետ:— Կավալարոյի... *(Շ, 4, 463)։*

Եթե երկախոսության այս հատվածում եղած ընդգծված թերի նախադասությունները փոխարինենք համանիշ լրիվ նախադասություններով, կստանանք հետևյալ պատկերը։

— Լևոն,— ասացի,— շա՞տ ես փափագում տեսնել Լուիզային։— Այո, իհարկե, շատ եմ փափագում տեսնել Լուիզային:— Եթե չտեսնես Լուիզային, շա՞տ կտխրես:— *Բայց ես կտեսնեմ նրան, սինյոր...։— Լուիզան այժմ Միլանում չէ։—* Ո՞վ ասաց, որ Լուիզան Միլանում չէ:—Սինյորա Ստեֆանյայի հեռագիրը ասաց:— Հապա որտե՞ղ է Լուիզան:— Լուիզան Փարիզում է:— Լուիզան ո՞ւմ հետ է Փարիզում:— Լուիզան Փարիզում է Կավալարոյի հետ:— *Կավալարրոյի...*

Ինչպես երևում է նույն բովանդակությունն ունեցող այս երկու հատվածների համեմատությունից, առաջին դեպքում, երբ օգտագործված են թերի նախադասություններ, խոսքը ավելի սեղմ է, չկան ավելորդ կրկնություններ, որոնք խոսքը դարձնում են ձգձգված, քիչ արտահայտիչ (այդպես է երկրորդ հատվածում)։

Թերի նախադասությունները հնարավորություն են տալիս համեմատաբար ավելի կարճ ժամանակահատվածում առավել շատ մտքեր հաղորդել։ Այդ է պատճառը, որ դրանք շատ են տարածված հատկապես բանավոր-խոսակցական լեզվում։ Երկախոսությունների մեջ ևս, հատկապես հարցին տրվող պատասխանի ժամանակ, լրիվ նախադասություններ շատ հազվադեպ են գործածվում և հանձնարարելի չեն։ Միայն ուսուցման նպատակով դպրոցներում հաճախ հարց ու պատասխանի ժամանակ աշակերտներից պահանջվում է հարցին պատասխանել ոչ թե թերի նախադասությամբ, ինչպես նրանք անում են սովորաբար, այլ լրիվ նախադասություններով։ Այսպես, երբ ուսուցիչը աշակերտին հարցնում է՝ «Հինգին գումարած երեք քանիսի է հավասար», աշակերտի առաջին բնական պատասխանը լինում է սովորաբար թերի նախադասությամբ՝ «Ութի»։ Դիտողությունից հետո միայն նա այդ նախադասությունը

փոխարինում է «Հինգին գումարած երեք հավասար է ութի» լրիվ նախադասությամբ։

Թերի նախադասություններ են գործածվում ոչ միայն երկխոսությունների մեջ, այլ նաև խոսքի այլ հատվածներում, երբ կրկնությունից խուսափելու համար հաճախ նախադասության այս կամ այն անդամը զեղչվում է։ Զեղչվել կարող են նախադասության և՛ գլխավոր անդամները, և՛ երկրորդական անդամները։ Բերենք օրինակներ զեղչման յուրաքանչյուր դեպքի համար և տանք դրանց համանիշ լրիվ նախադասությունները։

ա) Ժամանակակից հայերենում շատ ենք հանդիպում հատկապես ենթակայի զեղչման երևույթին, որը երևան է գալիս այն դեպքերում, երբ

1) Գործողություն կատարողը խոսողը կամ խոսակիցն է, և միայն ստորոգյալը բավական է այն դրսևորելու համար։ Օրինակ՝ Այսօր երեկոյան գնալու եմ դասախոսության → Այսօր երեկոյան ես գնալու եմ դասախոսության։ Երեկ գնացել էիր կինո → Դու երեկ գնացել էիր կինո։ Ընդհանրապես երբ գործողություն կատարողը խոսողն է կամ խոսակիցը, ենթական սովորաբար զեղչվում է, այսինքն՝ գործածվում են զեղչված ենթակայով նախադասություններ։ Վերջիններիս փոխարեն գործածվում են նրանց համանիշ լրիվ նախադասություններ միայն այն դեպքում, երբ ահրաժեշտ է լինում շեշտել ենթական, հատկապես ընդգծել, որ գործողություն կատարողը խոսողը կամ խոսակիցն է. ինչպես՝ «Ես եմ գնալու դասախոսության» կա՝ «Դո՛ւ էիր երեկ գնացել կինո»։

2) Երբ նախորդ նախադասություններից. ենթական արդեն հայտնի է, և կրկնությունից խուսափելու համար այն տվյալ նախադասության մեջ չի գործածվում։ Օրինակ՝ «Երկու շաբաթից ավելի էր, որ Սարիբեկյանը տուն չէր գնացել։ Ամեն օր մենակ գնում էր, ստուգում, թե սարում որքան խոտ է հարվել»... (Անթ., 346)։ Այս օրինակում ենթական զեղչված է, որովհետև հայտնի է նախորդ նախադասությունից (Սարիբեկյանը): Այն հեշտությամբ կարելի է վերականգնել. ինչպես՝ «Սարիբեկյանը (կամ նա)

ամեն օր մենակ գնում էր, ստուգում, թե սարում որքան խոտ է հարվել»։

Եթե առաջին և երկրորդ դեմքի համար սովորականը զեղչված ենթակայով նախադասության գործածությունն է, ապա այս դեպքում զեղչված ենթակայով նախադասություն համեմատաբար քիչ է հանդիպում։ Սրանք ավելի հաճախ գործածվում են բարդ նախադասության կազմում, եթե վերջինիս բաղադրիչների ենթական ընդհանուր է. օրինակ՝ «Սուրենն ասաց, որ գնալու է կինո» կամ՝ «Արամն անհանգստանում է, որովհետև կարող է ուշանալ»։

բ) Ստորոգյալի զեղչումը ևս ժամանակակից հայերենում սովորական երևույթ է։ Ստորոգյալը զեղչվում է հատկապես բարդ համադասական նախադասություններում, երբ այն երկու (կամ ավելի) համադաս նախադասությունների համար ընդհանուր է. այսպես՝ «Աշոտը գնաց կինո, իսկ Արամը՝ թատրոն» բարդ նախադասության երկրորդ բաղադրիչում՝ «Արամը՝ թատրոն», զեղչված է գնաց ստորոգյալը։ Այս նախադասությունը համանիշ է «Արամը գնաց թատրոն» նախադասությանը և գործածված է խոսքին սեղմություն տալու, ավելորդ կրկնությունից խուսափելու համար։

Ստորոգյալը զեղչվելիս, պարտադիր չէ որ ունենա քերականական բոլոր այն հատկանիշները, ինչ նախորդ նախադասության ստորոգյալը։ Սովորաբար նույնն է լինում միայն բայ-բառույթը, ժամանակը և եղանակը, ինչպես նաև բաղադրյալ ստորոգյալի ստորոգելիական վերադիրը, իսկ դեմքը և թիվը կարող են տարբեր լինել։ Օրինակ «Զարմանալի է, ես շատ եմ հոգնել, իսկ դու՝ բոլորովին» նախադասության մեջ զեղչված ստորոգյալը՝ չես հոգնել, նույն բայն է, ինչ որ նախորդ նախադասության մեջ է (հոգնել եմ), սակայն նրանից տարբերվում է դեմքով և խոնարհման ձևով (ունի ժխտական ձև)։ Իսկ հետևյալ նախադասության մեջ՝ «Ես եկա երեկ, իսկ նրանք՝ այսօր» զեղչված եկան ստորոգյալը տարբերվում է առաջին նախադասության եկա ստորոգյալից և՛ դեմքով, և՛ թվով։

Երբ զեղչված ստորոգյալը տարբերվում է նախորդից ժխտական առումով, այդ դեպքում թերի նախադասության մեջ զեղչված ստորոգյալի փոխարեն դրվում է ոչ ժխտական մասնիկը և կամ

ժխտական նշանակությամբ որևէ բառ (բոլորովին, ամենևին). ինչպես՝ Ես վերջացրի, իսկ նա՝ ոչ → նա չվերջացրեց: Աշոտը շատ է մտահոգված, իսկ դու՝ բոլորովին → դու բոլորովին մտահոգված չես: Վարդը կարմիր է, մանուշակը՝ ոչ → մանուշակը կարմիր չէ:

Երբ բարդ նախադասության մասերի ստորոգյալները տարբեր բառերով են արտահայտված, սակայն ունեն նույն հանգույցը, կարող է կրճատվել վերջինս. օրինակ՝ Բայց բոլոր խոսքերը իզուր են արդեն, Թալիսմանները՝ մեռած և անուժ (ՎՏ, 77)։ Նա ճարպիկ է, թեթևաշարժ և ըստ երևույթին քաջասիրտ (Մ, 2, 9). կամ՝ Նրանք կամ ճախարակն էին հավաքում, կամ հավերը տուն անում և կամ վառած թոնրի շուրջը պտտում (Ն. տ.)։ Բերված օրինակներից առաջիններում զեղչված են են և է ստորոգելիական հանգույցները, երկրորդում՝ էին օժանդակ բայը։ Այս նախադասությունները համանիշ են «Բայց բոլոր խոսքերն իզուր են արդեն, թալիսմանները մեռած են և անուժ են», «Նա ճարպիկ է, թեթևաշարժ է և ըստ երևույթին քաջասիրտ է» և «Նրանք կամ ճախարակն էին հավաքում, կամ հավերն էին տուն անում և կամ վառած թոնրի շուրջն էին պտտում» լրիվ նախադասություններին։ Ինչպես պարզ երևում է նաև օրինակներից, այս դեպքում ևս զեղչումը կատարվում է ավելորդ կրկնությունից խուսափելու, խոսքը ավելի սեղմ դարձնելու, ինչպես նաև նախադասությունների կապը ուժեղացնելու համար։

Բանաստեղծական խոսքում հանգույցը երբեմն զեղչվում է ոչ միայն բարդ նախադասության մեջ կամ բազմակի ստորոգյալների առկայության պայմաններում, այլ պարզապես չափածո խոսքի պահանջներով։ Այս դեպքում ստորոգելիական վերադիրը կարող է ընկալվել նաև որպես բացահայտիչ կամ որոշիչ։ Այսպես, օրինակ, «Իմ ճամփան՝ անվախճան մի գիշեր, Ինձ շոյող ոչ մի շող չի ժպտա» (ՎՏ, 24) նախադասության մեջ անվախճան մի գիշեր-ը կարելի է ընկալել որպես բաղադրյալ ստորոգյալ, որի հանգույցը զեղչված է, այսինքն՝ վերևի նախադասությունը կարելի է համանիշ համարել «Իմ ճամփան անվախճան մի գիշեր է» նախադասությանը։ Այն կարելի է համարել նաև բացահայտիչ, որը այս դեպ-

քում համանիշ կլինի «որը անվախճան գիշեր է» երկրորդական նախադասությանը։

Ժողովրդական-խոսակցական լեզվում ստորոգյալը երբեմն զեղչվում է ոչ թե այն պատճառով, որ նախորդ նախադասության մեջ առկա է և կրկնելն ավելորդ է համարվում, այլ պարզապես նրա համար, որ մտքից հասկացվում է։ Այսպես շատ են զեղչվում հատկապես ասացական և ընկալական բայերը անշաղկապ բարդ նախադասություններում։ Բերենք օրինակներ։ Մին էլ Ավագը թե՝ ա՛յ տղա, էն ո՞վ է (ՀԹ, 3, 52)։ Մին էլ ետ նայեց՝ գյուղը ծածկվել էր բլուրի ետև (ՀԹ, 3, 35)։ Ականջ եմ դնում՝ ներսից ինչ-որ աղմուկ է գալիս։ Հասավ հացթուխի խանութին՝ փակ էր (Մ. Մանվ., 63)։ Ճաշին վազում եմ մոտը, տանն է (Լեո, 468)։ Միաժամանակ և հիացավ Լյուսիենի վրա—գեղեցիկ դեմք ունի (Իէ, ՓԱ, 1, 14)։ Աքել ամի, դու երկիր տեսած մարդ ես, էս կռիվն ինչո՞վ կվերջանա (ԱԲ, 204)։

Այս նախադասություններում զեղչված են տեսնել, լսել, ասել բայերը, որոնք սակայն զորությամբ հասկացվում են։ Սրանք համանիշ են հետևյալ նախադասություններին. Մին էլ Ավագը ասաց, թե՝ ա՛յ տղա, էն ով է։ Մին էլ ետ նայեց, տեսավ գյուղը ծածկվել էր բլուրի ետև։ Ականջ եմ դնում, լսում եմ՝ ներսից ինչ-որ աղմուկ է գալիս։ Հասավ հացթուխի խանութին, տեսավ փակ էր։ Ճաշին վազում եմ մոտը, տեսնում եմ տանն է։ Միաժամանակ և հիացավ Լյուսիենի վրա, մտածեց՝ գեղեցիկ դեմք ունի։ Աքել ամի, դու երկիր տեսած մարդ ես, ասա՝ էս կռիվն ինչո՞վ կվերջանա։

Ինչպես երևում է օրինակներից, զեղչված ստորոգյալների վերականգնումով խոսքը որոշ չափով զրկվում է իր կենդանությունից, արտահայտչականությունից, վեր է ածվում մտքերի սովորական շարադրանքի։

գ) Նախադասության այլ անդամների զեղչում հանդիպում է հատկապես երկախոսությունների մեջ. այսպես օրինակ՝ «— Դու Մոսկվայում եղե՞լ ես։— Այո՛, եղել եմ»։ Ընդգծված թերի նախադասությունը, որի մեջ զեղչված է Մոսկվայում տեղի պարագան, համանիշ է «Այո՛, Մոսկվայում եղել եմ» նախադասությանը։ Կամ՝ «Այդ կինոնկարը տեսե՞լ ես։— Դեռ չեմ տեսել»։ Ընդգծված թերի

նախադասության մեջ զեղչված է այդ կինոնկարը ուղիղ խնդիրը։ Այն համանիշ է «Այդ կինոնկարը դեռ չեմ տեսել» նախադասությանը։ «Այդ աշխատանքից արդեն ձանձրացել եմ։— Իսկ ես վաղուց եմ ձանձրացել»։ Ընդգծված թերի նախադասության մեջ զեղչված է այդ աշխատանքից անջատման խնդիրը։ Այն համանիշ է «Իսկ ես այդ աշխատանքից վաղուց եմ ձանձրացել» լրիվ նախադասությանը։

Նախադասության յուրաքանչյուր անդամի զեղչումը պետք է կատարվի անպայման տեղին և հասկանալի ձևով։ Այդ դեպքում այն նպաստում է խոսքը կենդանի, արտահայտիչ, սեղմ դարձնելուն։ Այլապես այն կխանգարի մտքերը ճիշտ և հասկանալի հաղորդելուն։

Թերի և լրիվ նախադասությունները տարբերվում են նաև իրենց կիրառության ոլորտով։ Թերի նախադասությունները հատուկ են ժողովրդական-խոսակցական լեզվին և գեղարվեստական գրականությանը (հատկապես երկխոսություններին)։ Գիտական գրականության լեզվում, որտեղ անհրաժեշտ է մտքերի առավել ճշգրիտ հաղորդում, թերի նախադասություններ քիչ են գործածվում։

3. ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԲՆՈՒՅԹԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՀԱՄԱՆԻՇՆԵՐ

Յուրաքանչյուր նախադասություն ունի երկու հիմնական կողմ, այն է՝ 1) նկարագրում է որևէ գործողություն, եղելություն, դրություն վիճակ՝ վերագրելով այն որևէ կոնկրետ ժամանակահատվածի և 2) դրսևորում է խոսողի սուբյեկտիվ վերաբերմունքը հաղորդածի նկատմամբ, անխզելիորեն կապված է եղանակավորման հետ։ Այն, ինչ հաղորդվում է, կարող է լինել կա՛մ դեպքերի, իրադրությունների սոսկական շարադրանք, կա՛մ հարցում դրանց վերաբերյալ, կա՛մ հրաման, խնդիրք՝ որևէ գործողության կատարման վերաբերյալ և կամ խոսողի զգացական վերաբերմունքի դրսևորում (զարմանք, հիացմունք, հուզմունք և այլն՝ տվյալ երե-

վույթի, իրողության երևան գալու առթիվ)։ Ըստ այդմ նախադասությունները բաժանվում են չորս խմբի՝ պատմողական, հարցական, հրամայական և բացականչական, որոնցից յուրաքանչյուրը ունի իր կառուցվածքային և հնչերանգային առանձնահատկությունները[1]։

Նախադասությունների՝ ըստ բնույթի դասակարգման մեջ հատկապես մեծ է հնչերանգի դերը։ Կառուցվածքով լրիվ նույն նախադասությունը տարբեր հնչերանգներով արտասանվելիս կարող է փոխել իր բնույթը. այսպես՝ «Այստեղից դու կգնաս տուն», «Այստեղից դու կգնա՞ս տուն», «Այստեղից դու կգնա՛ս տուն» նախադասությունները թեև ունեն լրիվ նույն կառուցվածքը, բայց տարբեր հնչերանգ ունենալու հետևանքով տարբեր բնույթի են և խոսքի մեջ գործածվում են տարբեր նպատակով։ Առաջին դեպքում այն պատմողական է և սոսկ հաղորդում է որևէ իրողության մասին, երկրորդ դեպքում հարցական է և գործածվում է տվյալ իրողության կատարման վերաբերյալ հարցում դրսևորելու համար, երրորդ դեպքում այն հրամայական է և գործածվում է խոսողի կամքը, հրամանը տվյալ գործողության կատարման վերաբերյալ դրսևորելու համար։

Սակայն լեզվում այս նախադասությունները անխառն ձևով չեն հանդես գալիս։ Շատ հաճախ միևնույն միտքը արտահայտելու և խոսողի միևնույն վերաբերմունքը դրսևորելու համար գործածվում են տարբեր բնույթի նախադասություններ, որոնք հաճախ իրարից տարբերվում են միայն հաղորդածի նկատմամբ խոսողի միևնույն վերաբերմունքի տարբեր աստիճանի դրսևորումով։ Այսպես՝ «Աշոտ, մի բաժակ ջուր բերե՞ս», և «Աշոտ, մի բաժակ ջուր բե՛ր» նախադասությունները ունեն նույն բովանդակությունը, գործածված են նույն նպատակով՝ դրսևորում են խոսողի խնդիրքը, հրամանը, հորդորը տվյալ գործողության կատարման վերաբերյալ։ Սակայն իրենց բնույթով այս նախադասությունները տարբեր

---

[1] Այս մասին տե՛ս Վ. Առաքելյան, Հայերենի շարահյուսություն, հատոր 1, 1958 և Ս. Աբրահամյան, Ժամանակակից հայերենի շարահյուսության մի քանի հարցեր, Երևան, 1962։

են. առաջին դեպքում նախադասությունը ունի հարցական հնչեղանգ, բնույթով հարցական է, որը նպաստում է հրամանը, խնդիրքը, պահանջը մեղմելուն, երկրորդ դեպքում նախադասությունը հրամայական է. այստեղ հրամանը, պահանջը ավելի որոշակի և խիստ է ներկայացված։ Տարբեր բնույթի այս նախադասությունները համանիշ են, քանի որ դրսևորում են նույն միտքը, ծառայում են հաղորդման նույն նպատակին։

Այսպիսի զուգահեռ համանիշներ գոյություն ունեն դրական ու ժխտական կառուցվածք ունեցող պատմողական նախադասությունների, պատմողական-հարցական, հարցական-հրամայական, պատմողական-հրամայական նախադասությունների միջև։ Քննենք դրանցից առավել տարածվածները։

ԴՐԱԿԱՆ ԵՎ ԺԽՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ ՈՒՆԵՑՈՂ ՀԱՄԱՆԻՇ ՊԱՏՄՈՂԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Պատմողական նախադասությունները, ինչպես հայտնի է, ամենատարածված և ամենագործածական նախադասություններն են։ Նրանք գործածվում են հաստատելու կամ ժխտելու համար որևէ իրողություն, գործողություն, նկարագրելու համար որևէ երևույթ։ Պատմողական նախադասությունները կարող են ունենալ ամենաբազմազան կառուցվածք՝ լինել լրիվ, թերի, պարզ, ընդարձակ, բարդ, բազմաբարդ և այլն։ Նախադասության կառուցվածքային հատկանիշները ամենաակնառու կերպով երևում են պատմողական նախադասության մեջ։ Ամենաշատը այստեղ են դրսևորվում նաև բառերի միջև եղած միևնույն հարաբերությունների արտահայտման տարբեր քերականական միջոցները, այսինքն՝ քերականական-շարահյուսական համանիշները։ Այդ է պատճառը, որ նախադասության անդամների համանիշության քննության ժամանակ հիմնվում ենք հիմնականում պատմողական նախադասությունների վրա։

Ինչպես ասվեց, պատմողական նախադասություններով հաստատվում կամ ժխտվում է որևէ իրողություն, եղելություն և այլն։

Որևէ իրողության, գործողության հաստատումը կատարվում է սովորաբար բայի դրական ձևերի օգնությամբ, դրական՝ հաստատական կառուցվածք ունեցող նախադասություններով. օրինակ՝ ժամանակով մի հարուստ մարդ է լինում: Այդ հարուստը որոշում է մի մեծ շենք կառուցել։ Բազմաթիվ վարպետ ու բանվոր է վարձում ձեռնարկի համար։ Ինքը՝ առավոտ վաղ, աշխատավորներից առաջ, կանգնում է ոտքի՝ հսկելու համար աշխատանքը և երեկոյան, բանթողից հետո միայն, գնում է հանգստանալու (Իս., Աէ, 105)։ Խոսքի այս հատվածը ունի դրական կառուցվածք և նկարագրում է կատարված, տեղի ունեցած (կամ որպես այդպիսին դիտված) գործողություններ, իրողություններ։ Այստեղ գործածված են բայի դրական խոնարհման ձևերը (ընդգծված են)։

Ժխտում արտահայտելու համար լեզուն ունի հատուկ միջոցներ՝ ժխտական մասնիկներ և ժխտական իմաստով բառեր (ամենևին, բոլորովին, ոչ մի, ոչինչ և այլն)։ Դրանց օգնությամբ ժխտվում է որևէ իրողության, երևույթի առկայությունը կամ որևէ գործողության կատարումը. օրինակ՝ Իմաստունները ուրախության պատեհը չեն կորցնում երբեք և թափուր չեն թողնում գինու գավաթը (Իս., Աէ, 142)։ Ո՛չ, իմ հայրենիքից դուրս չեմ եղել երբեք (Ն. տ., 39)։ Այդ մասին ես ոչինչ չգիտեմ: Բերված օրինակներում ժխտումը արտահայտվել է բայի ժխտական խոնարհման, հատուկ ժխտական մասնիկների և ժխտական իմաստ ունեցող բառերի օգնությամբ (ընդգծված են)։

Սակայն լեզվում միշտ չէ, որ հաստատումը արտահայտվում է դրական կառուցվածքի նախադասությունների միջոցով, իսկ ժխտումը՝ ժխտական մասնիկների և բառերի օգնությամբ։ Շատ հաճախ, ոճական նպատակներով, ինչպես նաև խոսողի վերաբերմունքը հաղորդվածի նկատմամբ ավելի ցայտուն դրսևորելու համար հաստատումը արտահայտվում է ժխտական կառուցվածքի նախադասություններով, ժխտում դրսևորող քերականական միջոցներով, իսկ ժխտումը՝ դրական կառուցվածքի նախադասություններով՝ առանց ժխտական հատուկ միջոցների։

1. Ժխտական միջոցներով որևէ գործողության, իրողության կատարման հաստատումը, արձանագրումը կատարվում է հիմնա-

կանում երկու ձևով՝ կրկնակի ժխտման միջոցով և ըղձական, ենթադրական ու հարկադրական եղանակների անցյալ ժամանակների ժխտական ձևերի օգնությամբ։

ա) Երբ խոսողը հաղորդում է որևէ գործողության կատարման, եղելության տեղի ունենալու մասին՝ միաժամանակ ընդգծելով դրանց կատարման անպայմանությունը, անխուսափելիությունը, անպայմանություն, անխուսափելիություն ցույց տվող եղանակավորող բառեր պարունակող դրական կառուցվածք ունեցող նախադասություններին զուգահեռ կարող են գործածվել նրանց համանիշ կրկնակի ժխտում պարունակող նախադասություններ։ Օրինակներ՝

Ես անպայման պիտի գնամ:	Ես չեմ կարող չգնալ:
Նա այդ մասին անպատճառ պիտի ասեր:	Նա այդ մասին չէր կարող չասել:
Ես պետք է նշեմ, որ մեր Սիլվան ջատագովն ու երգիչն է այդ մեծ դաշնության և բարեկամության։	Ես չեմ կարող չնշել, որ մեր Սիլվան ջատագովն ու երգիչն է այդ մեծ դաշնության և բարեկամության («Հայրենիքի ձայն»)։
Ես հավատացած եմ, որ դու այդ մասին անպայման կգրես:	Դու այդ մասին չես կարող չգրել:

Բերված համանիշ նախադասությունների առաջին շարքում գործողության կատարման անհրաժեշտությունը ընդգծվում է անպայման, անպատճառ եղանակավորող բառերի օգնությամբ՝ բայի դրական ձևերի հետ միասին։ Երկրորդ շարքում այդ նույն իմաստը ավելի է ընդգծված տվյալ գործողության չկատարման հնարավորությունը ժխտելու միջոցով։ Քերականորեն դա դրսևորվում է չի կարող, հնարավոր չէ ժխտական եղանակավորող բառակապակցության և տվյալ բայի անորոշ դերբայի ժխտական ձևի հարադրությամբ, որը կազմում է բաղադրյալ ստորոգյալ (չի կարող չգնալ, հնարավոր չէ չանել և այլն)։ Հետաքրքրական է այն

երևույթը, որ հաճախ լեզվում այս երկու համանիշ նախադասությունները գործածվում են միասին՝ տվյալ գործողության կատարման անխուսափելիությունը, անհրաժեշտությունը առավել ընդգծելու համար։ Խոսողը նախ հաղորդում է տվյալ գործողության կատարման մասին դրական կառուցվածքի նախադասության միջոցով, ապա շեշտելու համար վերջինիս անխուսափելիությունը՝ ժխտում է դրա չկատարման հնարավորությունը։ Սա ոճական հնարանք է, որ գործածվում է հատկապես գեղարվեստական գրականության մեջ։ Օրինակ՝ «Մի՛ մտահոգվիր։ Դու անպայման պիտի գնայիր: Դու չէիր կարող չգնալ»։ «Ես հավատացած եմ, որ նա այդ մասին ինձ կգրի։ Նա չի կարող չգրել»։ «Պետք է անպայման գնալ նրանց մոտ: Հնարավոր չէ չգնալ»:

Ինչպես երևում է բերված օրինակներից, երկրորդ՝ կրկնակի ժխտում պարունակող նախադասությունը հաճախ լինում է թերի։ Ավելորդ կրկնությունից խուսափելու և խոսքը ավելի սեղմ դարձնելու նպատակով այստեղ զեղչվում են նախորդ նախադասության հետ ընդհանուր շատ անդամներ։ Ավելին։ Երկրորդ նախադասությունը հաճախ բաղկացած է լինում միայն կրկնակի ժխտում ցույց տվող բաղադրյալ ստորոգյալից (տե՛ս վերևի օրինակները)։ Լինում է նաև հակառակը. թերի է լինում նախադասության դրական մասը, որը հաճախ բաղկացած է լինում միայն պիտի (պետք է) եղանակիչից. ինչպես՝ Իսկական բանաստեղծը, այո՛, պիտի և չի կարող չարտահայտել իր ժամանակը, իր դարը (ՍԳ)։

բ) Անցյալում կատարված գործողություններ, եղելություններ նկարագրելիս խոսողը հաճախ բայի սահմանական եղանակի անցյալ ժամանակաձևերի դրական ձևերի փոխարեն գործածում է ըղձական, ենթադրական, հարկադրական եղանակների անցյալ ժամանակների ժխտական ձևերը, որոնք տարբերվում են նախորդներից եղանակավորումով։ Այսպիսով ստեղծվում են անցյալում կատարված գործողություններ և եղելություններ նկարագրելու համար դրական և ժխտական կառուցվածքի համանիշ նախադասություններ։ Հատկանշական է, որ ժխտական կառուցվածք, բայց հաստատական իմաստ ունեն հատկապես պայմանի երկրորդական նախադասություն պարունակող բարդ նախադասությունները,

տրոնց համանիշ դրական կառուցվածք ունեցող բարդ նախադասություններում առկա է լինում պատճառային հարաբերություն։ Բերենք օրինակներ։ Չէիր ձանձրանա դու գիտությունից, չէիր ձանձրանա սիրուց ու կյանքից, թե ունենայիր թշնամիներ մեծ (ԵՉ)։ Ես, իհարկե, չէի գնա, եթե չլսեի այդ լուրը։ Եթե ինձ չտեսներ, չէր հավատա։

Բերված ժխտական կառուցվածքի նախադասությունները, որոնք միաժամանակ արտահայտում են պայմանի հարաբերություններ, գործածված են անցյալում կատարված և պատճառային կապով իրար հետ կապված գործողություններ, իրողություններ նկարագրելու համար։ Նրանք համանիշ են նույնպիսի հարաբերություններ պարունակող և անցյալում կատարված գործողություններ ցույց տվող դրական կառուցվածք ունեցող հետևյալ նախադասություններին. Դու ձանձրացել ես գիտությունից, ձանձրացել ես սիրուց ու կյանքից, որովհետև չունես թշնամիներ։ Ես գնացի, որովհետև լսեցի այդ լուրը։ Հավատաց, որովհետև ինձ տեսավ։

Ինչպես երևում է բերված նախադասությունների համեմատությունից, այս համանիշները ունեն և՛ կառուցվածքային-քերականական, և՛ իմաստային-նրբերանգային տարբերություններ։ Մի դեպքում գործածված է ժխտական կառուցվածքի նախադասություն (եթե չլսեի, չէի գնա), մյուս դեպքում՝ դրական կառուցվածքի (Գնացի, որովհետև լսեցի)։ Միաժամանակ միևնույն պատճառահետևանքային հարաբերությունները դրսևորվել են քերականական տարբեր միջոցներով։ Առաջին դեպքում (ժխտական կառուցվածք) այդ հարաբերությունները ներկայացվել են որպես պայմանի հարաբերություններ, այսինքն՝ ընդգծվել է, որ մի գործողության կատարումը պայմանավորված է եղել մեկ այլ գործողության կատարմամբ, իսկ երկրորդ դեպքում ընդգծվել է նույն գործողությունների միջև եղած պատճառային կապը, այն, որ մի գործողությունը պատճառ է հանդիսացել մյուս գործողության կատարման համար։

Հաճախ հաստատական իմաստով ժխտական կառուցվածք է ունենում ոչ թե ամբողջ բարդ նախադասությունը, այլ միայն մի մասը, ինչպես՝ «Ես այդ մասին չէի ասի, բայց դա կվնասեր գոր-

ծին»։ Այս նախադասությունը համանիշ է «Ես այդ մասին ասացի, որովհետև չասելը կվնասեր գործին» նախադասությանը։ Ինչպես երևում է օրինակներից, այս դեպքում ևս երկու նախադասությունները տարբերվում են իրարից և՛ կառուցվածքով, և՛ քերականական հարաբերությունների բնույթով, թեև արտահայտում են նույն միտքը՝ որոշ իմաստային նրբերանգներով։ Երկու դեպքում էլ բարդ նախադասության մասերի միջև գոյություն ունի պատճառահետևանքային հարաբերություն, որը սակայն, առաջին օրինակում արտահայտվել է քերականական համադասական կապակցությամբ (բայց շաղկապով), երկրորդ դեպքում՝ ստորադասական կապակցությամբ (որովհետև շաղկապով)։ Կապակցության եղանակի տարբերությունը թելադրել է նաև բայի ժամանակների տարբեր հարաբերակցություն։ Առաջին դեպքում բարդ նախադասության բայ-ստորոգյալները եղանակով և ժամանակով համաձայնել են (դրված են ենթադրական եղանակի անցյալ ժամանակով), իսկ երկրորդ դեպքում գլխավոր նախադասության բայ-ստորոգյալի սահմանական եղանակի անցյալ ժամանակին համապատասխանել է ենթադրական եղանակի անցյալ ժամանակը։ Ձևական-քերականական տարբերություն է նաև մի դեպքում բայի ժխտական ձևի, մյուս դեպքում դրական ձևի գործածությունը։

գ) Բայի ժխտական և դրական ձևերի հակառակ հարաբերակցություն կա այն բարդ նախադասություններում, որոնցում նկարագրվում են անցյալում չկատարված, սակայն պատճառապայմանային հարաբերությամբ կապված գործողություններ ու եղելություններ։ Այս դեպքում արդեն ժխտական ձևով են դրվում բայի սահմանական եղանակի անցյալ ժամանակաձևերը, իսկ ըղձական, ենթադրական կամ հարկադրական եղանակների անցյալի բայաձևերը գործածվում են դրական ձևով, սակայն ցույց են տալիս դարձյալ անցյալում չկատարված գործողություն, իրողություն, այսինքն՝ դրսևորում են ժխտում։ Այս համանիշ նախադասությունների մյուս կառուցվածքային առանձնահատկությունները նույնն են նախորդ խմբի համանիշներին։ Բերենք օրինակներ։ Եթե կարդացած լիներ, կհասկանար→Չէր հասկացել, որովհետև չէր կարդացել։ Եթե ունենայի կտայի → Չտվեցի (չեմ տվել),

որովհետև չունեի (չեմ ունեցել): Պիտի գնայի, բայց խանգարեցին → Չգնացի, որովհետև խանգարեցին:

Հաճախ բարդ նախադասության մի մասը ունենում է ժխտական կառուցվածք, մյուսը՝ դրական կամ հակառակը, այսինքն՝ պատճառապայմանային հարաբերությամբ կապված են լինում կատարված և չկատարված գործողություններ։ Այս դեպքում համանիշ նախադասություններում դրական և ժխտական ձևերի տեղերը համապատասխանաբար փոխվում են։ Ահա օրինակներ։ Եթե գնացքը չուշանար, *նա ժամը հինգին այստեղ* կլիներ → *Նա ժամը հինգին այստեղ* չեղավ, *որովհետև գնացքը* ուշացավ: *Եթե* տեսնեի, *այդքան* չէի անհանգստանա → *Այդքան* անհանգստացա, *որովհետև չէի տեսել։ Ժամկետը* չվերջանար՝ *էլի* կմնար → էլի չմնաց, *որովհետև ժամկետը* վերջացավ:

դ) Անցյալում կատարված գործողություններ նկարագրելիս ժխտական կառուցվածքի նախադասություն է գործածվում նաև այն դեպքում, երբ խոսողը դրսևորում է իր սուբյեկտիվ վերաբերմունքը՝ ափսոսանքը գործողության կատարման վերաբերյալ։ Այս դեպքում գործածվում է բայի ըղձական եղանակի անցյալ ժամանակի ժխտական ձևը։ Վերջինիս հետ հաճախ գործածվում են իղձ, ցանկություն, արտահայտող եղանակավորող բառեր, որոնցով խոսողը ընդգծում է այդ գործողությունները չկատարված, չիրականացած տեսնելու իր ցանկությունը. օրինակ՝ ...Երանի չտեսնեիր *այն աշխարհը, որ լի է աղաներով։ Երանի չտեսնեիր արևի փայլը, որ քեզ այրեց խորովեց (ՎՓ)։* Երանի *այսօր* չգնայի: Ո՞ւր էր թե չտեսնեի: *Այս նախադասությունները համանիշ են «Ափսոս* մտար *այն աշխարհը, որ լի է աղաներով, ափսոս* տեսար *արևի փայլը, որ քեզ այրեց խորովեց»,* «Ափսոս *այսօր* գնացի», «Ափսոս (իզուր) *տեսա» նախադասություններին, որտեղ նույն միտքը արտահայտված է բայ-ստորոգյալի սահմանական եղանակի անցյալ կատարյալ ժամանակով և ափսոսանք արտահայտող եղանակավորող բառով* (ափսոս, իզուր):

Նույն միտքը (ափսոսանք անցյալում կատարված գործողության վերաբերյալ) կարելի է արտահայտել նաև հարցական բնույթի նախադասությամբ, երբ անցյալում կատարված գործողություն

ցույց տվող սահմանական եղանակի անցյալ կատարյալ ժամանակի հետ գործածվում է ինչո՞ւ, երբեմն նաև ինչպե՞ս հարցական դերանունը. այսպես՝ Ինչո՞ւ մտար այս աշխարհը, ...Ինչո՞ւ տեսար արևի փայլը..., Ինչո՞ւ այսօր գնացի, Ինչո՞ւ տեսա: Այսպիսով ստացվում է համանիշ նախադասությունների հետևյալ շարքը. Ափսոս գնացի → Երանի չգնայի → Ինչո՞ւ գնացի: Ափսոս ասաց → Երանի չասեր → Ինչո՞ւ ասաց, որոնցից առաջին երկուսը տարբերվում են իրարից կառուցվածքով, իսկ երրորդը՝ նաև բնույթով. առաջին երկու նախադասությունները պատմողական են (բացականչականի որոշ երանգով), երրորդը հարցական բնույթի նախադասություն է: Այս նախադասությունները տարբերվում են նաև խոսողի սուբյեկտիվ վերաբերմունքի դրսևորման աստիճանով: Այդ վերաբերմունքը ավելի ուժեղ է ժխտական կառուցվածքի և հարցական բնույթի նախադասություններում:

ե) Երբ նկարագրվում են անցյալում չկատարված, սակայն խոսողի համար ցանկալի գործողություններ, եղելություններ, դարձյալ կարող են գործածվել երեք տիպի համանիշ նախադասություններ, որոնք տարբերվում են նախորդներից դրական և ժխտական կառուցվածքների հակառակ հարաբերակցությամբ: Սահմանական եղանակի անցյալ կատարյալ ժամանակն ունեցող բայ-ստորոգյալը դրվում է ժխտական ձևով, որով ցույց է տրվում անցյալում չկատարված գործողություն, ժխտվում է գործողության կատարումը, իսկ ըղձական եղանակի անցյալ ժամանակով դրված բայ-ստորոգյալը դրվում է դրական ձևով, որը նույնպես ցույց է տալիս գործողության կատարման ժխտում: Խոսողի վերաբերմունքի դրսևորմանը դարձյալ օժանդակում են եղանակավորող բառերը և նախադասության բնույթը:

Բերենք օրինակներ: Ջուր դառնայիր մորդ փորում, Հասո (ՎՓ) → Ափսոս ջուր չդարձար մորդ փորում, Հասո → Ինչո՞ւ ջուր չդարձար մորդ փորում, Հասո: Ո՞ւր էր թե[1] հարվածեր՝

---

[1] Ո՞ւր էր թե բառակապակցությունն ունի եղանակավորող նշանակություն և համանիշ է Երանի եղանակավորող բառին:

խելքի գայլ (ՊՍ) → Ափսոս չհարվածեց՝ *խելքի գայլ* → Ինչո՞ւ չհարվածեց՝ *խելքի գայլ։*

Ինչպես երևում է առաջին օրինակից (ջուր դառնայիր), *երբեմն ըղձական եղանակի բայաձևը առանց եղանակավորող բառի էլ կարող է դրսևորել խոսողի վերաբերմունքը՝ իղձը, ցանկությունը գործողության կատարման (կամ չկատարման) վերաբերյալ. մի բան, որ երկրորդ դեպքում անպայման դրսևորվում է եղանակավորող բառի օգնությամբ, իսկ երրորդ դեպքում՝ հարցական հնչերանգով և հարցական դերանվամբ (տե՛ս օրինակները)։*

զ) Հաճախ անցյալում կատարված և ժամանակային անմիջական հաջորդականության հարաբերությամբ կապված գործողություններ նկարագրելիս, որոնց խոսողը ականատես է եղել և միաժամանակ արտահայտում է իր զարմանքը, հիացմունքը տվյալ գործողությունների կատարման վերաբերյալ, որ *շաղկապով միացած առաջադաս ժամանակի պարագա երկրորդական նախադասություններում բացականչականին մոտեցող հատուկ հնչերանգով գործածվում են սահմանական եղանակի անցյալ կատարյալ ժամանակի ժխտական ձևերը՝ հաստատական իմաստով. օրինակ՝* —Որ չտեսա՜, *ծառերի տեղակ սիրտս կտոր-կտոր եղավ (ԱՇ, ՍՍԱ, 138)։* Որ *չզարկե՞ց, աչքերից կայծեր դուրս թռան։ Այս նախադասությունները հատուկ են հատկապես ժողովրդական-խոսակցական լեզվին, որից և անցնում են գեղարվեստական գրականության, հատկապես երկխոսությունների մեջ և գործածվում են խոսքը պատկերավոր, դինամիկ դարձնելու համար։ Սրանք համանիշ են* երբ *և* հենց որ *շաղկապներով միացած և սահմանական եղանակի անցյալ կատարյալ ժամանակի դրական ձևեր պարունակող ժամանակի պարագա նախադասություններին, սակայն վերջիններս չունեն վերոհիշյալ կառուցվածքի նախադասությունների կենդանությունը, արտահայտչականությունը։ Համեմատի՛ր վերևի նախադասությունները հետևյալ համանիշ նախադասությունների հետ.* Երբ (հենց որ) տեսա *, ծառերի տեղակ սիրտս կտոր-կտոր եղավ։* Երբ (հենց որ) զարկեց, *աչքերից կայծեր դուրս թռան։*

Ինչպես ասվեց, ժխտման ձևերը ժամանակակից հայերենում բազմազան են։ Դրանք կարող են դրսևորվել և՛ հատուկ ժխտական մասնիկների ու ժխտական իմաստ ունեցող բառերի օգնությամբ, և՛ հատուկ կառուցվածքի նախադասությունների միջոցով։ Ըստ որում հաճախ միևնույն տիպի ժխտում արտահայտելու համար գործածվում են համանիշ ձևեր։ Դրանցից մեկը քննվեց վերևում (Եթե տեսնեի, կասեի → Չեմ տեսել, դրա համար չեմ ասել: Երանի տեսնեի → Ափսոս չեմ տեսել → Ինչո՞ւ չեմ տեսել):

1. Ժխտում արտահայտող համանիշ ձևերից հատկապես շատ են տարածված ժխտական կառուցվածք ունեցող պատմողական բնույթի նախադասությունները և նրանց զուգահեռ դրական կառուցվածք ունեցող, բայց հարցական հնչերանգ ունեցող, հետևաբար հարցական բնույթի նախադասությունները։ Վերջին դեպքում նախադասությունը ունենում է հարցական բնույթ ոչ թե այն պատճառով, որ հարցում է պարունակում, այլ տվյալ գործողության տեղի չունենալու, երևույթի, իրողության առկա չլինելու գաղափարը ավելի շեշտելու համար, այսինքն՝ տվյալ դեպքում հարցումը միայն ոճական հնարանք է։ Հարցման միջոցով ժխտումը ունի այն առանձնահատկությունը, որ դրսևորում է խոսողի կարծիքը, համոզմունքը տվյալ գործողության ժխտման վերաբերյալ, շեշտվում է այն հանգամանքը, որ այդ գործողությունը չի կատարվում ոչ ոքի կողմից, և կամ տվյալ երևույթը երևան չի եկել (չի գալիս) ընդհանրապես։

Ժխտական կառուցվածքի և հարցական բնույթի համանիշ նախադասությունները հաճախ ունենում են նաև բառական կազմի մասնակի տարբերություն։ Վերջինս բխում է այդ նախադասությունների կառուցվածքային (ժխտական—դրական) և բնույթի (պատմողական—հարցական) տարբերություններից։ Հարցական նախադասություններում գործածվում են հարցական դերանուններ, իսկ ժխտական կառուցվածք ունեցող նախադասություններում՝ նրանց համապատասխան ժխտական դերանուններ կամ ժխտական

իմաստ ունեցող այլ բառեր ու բառակապակցություններ (հատկապես մակբայներ)։

Այս համանիշ նախադասությունները ունեն կառուցվածքային նաև այն առանձնահատկությունը, որ հանդես են գալիս հիմնականում պատճառահետևանքային հարաբերություններ արտահայտող բարդ նախադասություններում և հիմնավորում են գործողության՝ որևէ մեկի կողմից կամ որևէ վայրում, որևէ ժամանակամիջոցում չկատարվելը այն ընդհանրապես ժխտելու միջոցով։

ա) Երբ ժխտումը վերաբերում է ենթակային, այսինքն՝ ցույց է տրվում, որ տվյալ գործողությունը չի կատարվել կամ չի կատարվում (չի կատարվելու) ոչ ոքի կողմից, ժխտական կառուցվածք ունեցող նախադասության ենթական դրսևորվում է անձ ցույց տվող ժխտական դերանվամբ՝ ոչ ոք, *բայ-ստորոգյալը դրվում է ժխտական ձևով։ Նրան համանիշ հարցական նախադասության ենթական լինում է համապատասխանաբար անձ ցույց տվող հարցական դերանուն, բայ-ստորոգյալը դրվում է դրական ձևով։ Երբ ենթական* ոչինչ *ժխտական դերանունն է, վերջինիս հարցական համանիշ նախադասության մեջ համապատասխանում է* ի՞նչ *հարցական դերանունը։ Օրինակներ՝*

... Ոչ ոք չէր հանդգնի *անցնել նրանց միջով։*	*Մոնչում էին նրանք քաղցի մոլուցքից, և* ո՞վ կհանդգներ *անցնել նրանց միջով, վայրկյանի մեջ պատառ-պատառ կանեին (Իս., 339)։*
Այդ մասին ինձ ոչ ոք չի ասել, *դրա համար էլ չեմ գնացել։*	Ո՞վ է ինձ այդ մասին ասել, *որ ես էլ գնայի։*
Ոչինչ չի կասեցնի *նրանց առաջընթացը։*	Ի՞նչը կկասեցնի *նրանց առաջընթացը։*
Ոչ ոք չի լսում: *Ով էլ որ լսում է,* շատ բան չի հասկանում:	Ո՞վ է լսում: *Ով էլ որ լսում է,* շա՞տ բան է հասկանում *(ԲՁ, Ը՝Բ, 15)։*

Ոչինչ չի հաղթի *կյանքում հերոսին, թե չլինին կինն ու գինին։*	Ի՞նչը կհաղթի *կյանքում հերոսին, թե չլինին կինն ու գինին (ՀԹ)։*
— Նրան ոչ ոք չի սիրում, *ես էլ չեմ սիրում։*	Նրան ո՞վ է սիրում, *որ ես սիրեմ (Ր, 3, 158)։*

Ինչպես երևում է համանիշ նախադասությունների համեմատությունից, հարցական նախադասության գործածության դեպքում ժխտման հետ մեկտեղ ընդգծվում է խոսողի համոզմունքը, ափսոսանքը, զարմանքը կամ դժգոհությունը տվյալ գործողության չկատարման վերաբերյալ։

բ) Երբ ժխտումը վերաբերում է նախադասության ուղիղ խնդրին, վերջինիս պաշտոնով ժխտական կառուցվածք ունեցող նախադասություններում հանդես են գալիս ոչինչ, ոչ ոք, ոչ մի բան *ժխտական դերանունները, բայը դարձյալ դրվում է ժխտական ձևով։ Դրան համանիշ հարցական նախադասության մեջ ուղիղ խնդրի պաշտոն են կատարում* ի՞նչ *կամ* ո՞ւմ *հարցական դերանունները, իսկ բայը դրվում է դրական ձևով։ Օրինակներ՝*

Ոչինչ չի կարող անել։	Ի՞նչ կարող է անել, *բերքը քիչ ստացվեց, աշխօրին էլ շատ չի հասնում (ԱՍեկ., 573)։*
Նա այնտեղ ոչ ոքի չի հանդիպել։	*Նա այնտեղ* ո՞ւմ է հանդիպել որ...
... *Բայց* ոչինչ չես կարող անել, *մարդն ուզում է աշխատել։*	*Բայց* ի՞նչ կարող ես անել, *մարդն ուզում է աշխատել (ԵԵ)։*
Նա ոչ մի բան չի տեսել, *դրա համար* ոչինչ չի իմացել։	Նա ի՞նչ է տեսել, *որ* ինչ իմանար։

Թռչունն այս դեպքում բույնն է շտապում։ Իսկ ես քանի որ իմ բնում էի, էլ ի՞նչ էր մնում, *որ* ինչ անեի *(ՊՍ, ՄԱՄ, 12)։*	էլ անելու բան չէր մնում:
Ոչինչ չունեն այդ խեղճերը, *դրա համար չեն կարող շուկա բանալ։*	Ի՞նչ ունեն այդ խեղճերը, *որ ինչ շուկա բանան (ԲՀ, ՍՉ, 43)։*
Ոչինչ չէր կարող անել, *դրա համար էլ ոչխարը ծախեց։*	Ի՞նչ պիտի աներ (ի՞նչ կարող էր անել): *Ոչխարը ծախեց (ՍԽ, Անձրևից հետո)։*

Երբ ժխտում պարունակող հարցական նախադասությունը հանդես է գալիս որպես երկրորդական նախադասություն, կորցրնում է իր հարցական հնչերանգը։ Այս դեպքում հարցական հնչերանգ է ունենում միայն գլխավոր նախադասությունը (տե՛ս օրինակները)։

գ) Երբ ժխտումը վերաբերում է գործողության, իրողության որևէ վայրում կամ որևէ ժամանակամիջոցում կատարվելուն, ժխտական կառուցվածք ունեցող նախադասության մեջ որպես տեղի, ժամանակի պարագաներ հանդես են գալիս երբեք *մակբայը,* ոչ մի տեղ *և* ոչ մի ժամանակ *ժխտական կապակցությունները։ Բայստորոգյալը դարձյալ դրվում է ժխտական ձևով։ Նրան համապատասխան հարցական նախադասության մեջ տեղի կամ ժամանակի պարագայի պաշտոն են կատարում* որտե՞ղ, ե՞րբ *հարցական դերանունները։ Օրինակներ.*

Բայց բանվորը երբեք չի լռել աշխարհում...	*Բայց* ե՞րբ է բանվորը լռել աշխարհում, *նա խուլ պայքարում էր, անդուլ պայքարում (ԵՉ, ԸԵ, 9)։*

Այդ գետը երբեք չի տեսել...	*Այդ գետը* ե՞րբ է արդյոք տեսել, *որ մի մարդկային մոգական ձեռք Իր վեհ ընթացքը կասեցրնե (ԵՁ, Ըե, 423)։*
Նա ոչ մի տեղ չի հանդիպել *այսպիսի համարձակ մարդկանց։*	*Իսկ* որտե՞ղ է նա հանդիպել *այսպիսի համարձակ մարդկանց։*

Հարցական նախադասության մեջ հարցական-ժխտական բնույթը շեշտելու համար կարող է գործածվել նաև արդյոք *եղանակավորող բառը (տե՛ս նախավերջին օրինակը)։*

Այսպիսով՝ համապատասխան հարցական և ժխտական դերանունների գործածությամբ ստեղծվում են հարցական և ժխտական-պատմողական համանիշ նախադասություններ, որոնցում կարող է ժխտվել նախադասության յուրաքանչյուր անդամ։ Տե՛ս նաև հետևյալ օրինակները.

Ո՞ւմ է պետք *անտաղանդ ու անտարբեր քարոզչի սառը քարոզն ու հորդորը (ՍԳ)։*	Ոչ ոքի պետք չէ *անտաղանդ ու անտարբեր քարոզչի սառը քարոզն ու հորդորը։*
Իսկ նա ինչի՞ց է վախենում որ:	*Նա* ոչնչից չի վախենում:

դ) Երբ ժխտվում է որևէ գործողության կատարման հնարավորությունը, գործածվում են հնարավոր չէ, չի կարող *ժխտական կառուցվածքները բայի անորոշ դերբայի հետ, և կամ տվյալ բայի դրական ձևի հետ գործածվում է* ինչպե՞ս *հարցական դերանունը (հարցական բնույթի նախադասություն)։ Օրինակներ.*

Հնարավոր չէ բաժանվել *հարազատ զավակներից, քանի որ...*	*Բայց* ինչպե՞ս բաժանվել *հարազատ զավակներից, քանի որ ամեհի գազանն անգամ դեն չի շպրտում իր զավակներին (Շ, 4, 34)։*
Չեմ կարող գնալ, *քանի որ հիվանդ եմ։*	Ինչպե՞ս գնամ, *երբ հիվանդ եմ։*
Հնարավոր չէ այդ գործը կատարել, *քանի որ ոչ մի գործիք չկա։*	Ինչպե՞ս այդ գործը կատարել, *երբ ոչ մի գործիք չկա։*

Ինչպես երևում է օրինակներից, այս դեպքում հաճախ փոխվում է նաև գլխավոր և երկրորդական նախադասությունների կապակցության միջոցը (քանի որ – երբ):

Այդ նույն իմաստն արտահայտելու համար հարցական նախադասության մեջ կարող է գործածվել նաև մի՞թե հարցական եղանակավորող բառը. օրինակ՝ Մի՞թե *դրանից ավելի թշվառ, ավելի ողորմելի* մարդ կա աշխարհիս երեսին *(ՆԴ, 1, 465)* → *Դրանից ավելի թշվառ, ավելի ողորմելի* մարդ չկա աշխարհիս երեսին: Ինչո՞ւ հեռու գնանք: Մի՞թե *ժամանակին* ազգային էին համարվում *Տերյանը և Չարենցը (ԳԹ)* → Պետք չէ հեռու գնալ: *Ժամանակին* ազգային չէին համարվում *Տերյանը և Չարենցը։*

ե) Երբ ժխտվում է որևէ գործողության կատարման անհրաժեշտությունը կամ նպատակահարմարությունը, ժխտական կառուցվածք ունեցող նախադասության մեջ գործածվում են պետք չէ, հարկավոր չէ, կարիք չկա *ժխտական միադիմի եղանակավորող կապակցությունները բայի անորոշ դերբայի դրական ձևի հետ, իսկ նրան համանիշ հարցական նախադասության մեջ նույն բայը դրվում է* ինչո՞ւ *հարցական դերանվան հետ. ըստ որում բայը կարող է դրվել և՛ անորոշ դերբայի ձևով՝ կազմավորելով միակազմ նախադասություն, և՛ խոնարհված ձևով՝ կազմավորելով երկկազմ նախադասություն։ Օրինակներ՝*

Միայն իրենց տեղը կմատնեն և ուրիշ ոչինչ։ Էլ ինչո՞ւ կրակել *(ԲՀ, ՍՉ, 50)։*	... Պետք չէ (հարկավոր չէ) կրակել։
Ինչո՞ւ հեռու գնանք... *(ԳԹ)։*	Պետք չէ (կարիք չկա) հեռու գնալ։
Ինչո՞ւ գնանք, *այնտեղ ոչ մի հետաքրքիր բան չկա։*	Կարիք չկա գնալ (պետք չէ գնալ), *այնտեղ ոչ մի հետաքրքիր բան չկա։*

(Այս մասին տե՛ս նաև «Միակազմ և երկկազմ համանիշ նախադասություններ» գլխում)։

զ) Երբեմն խոսողի նպատակն է լինում պարզապես ընդգծելով ժխտել որևէ երևույթ, գործողություն։ Այս դեպքում սովորական ժխտական կառուցվածք ունեցող նախադասությանը համանիշ հաճախ գործածվում է հարցական բնույթի դրական կառուցվածք ունեցող նախադասություն, որի ստորոգյալից, կամ ժխտվող անդամից առաջ կարող է դրվել ի՞նչ հարցական դերանունը։ Դրանով ժխտումը ավելի է ընդգծվում և միաժամանակ շեշտվում է, ըստ խոսողի, տվյալ երևույթի, գործողության երևան գալու անհնարինությունը։ Օրինակներ.

Դե աշնան օրն ի՞նչ կյանք ունի որ. *առավոտյան հացի ես նստում, մինչև կշտանալդ օրը մթնում է (ՎԱ, ԼՀ, 45)։*	Դե աշնան օրը երկար կյանք չունի...
Ես գրել եմ ինձ համար, ի՞նչ իրավունք ունեմ *իմ սեփական զգացմունքները ուրիշի վզին փաթաթել (Շ, 4, 339)։*	... Իրավունք չունեմ *իմ սեփական զգացմունքները ուրիշի վզին փաթաթել։*

Դե մենք գիշեր-ցերեկ հողի ու քարի հետ կոխ բռնած հոտաղ-ռամիկ տղերք էինք, ժամանակ եղե՞լ էր, որ պահեինք նրա աղավնիները (ՍԽ, ԿՇ, 6)։	... Ժամանակ չէր եղել, որ պահեինք նրա աղավնիները։
Ի՞նչ դժվար բան է հիմա լավ հագնվելն ու սնվելը (ՍԳ)։	Դժվար բան չէ հիմա լավ հագնվելն ու սնվելը։
Մեկ էլ առանց որսի գյուղ վերադառնա՞լ կլինի... է, Բողարը անխե՞լք է, որ նման առաջարկի դեմ լինի (ՎԱ, ԼՀ, 24)։	Մեկ էլ առանց որսի գյուղ վերադառնալ չի լինի... է, Բողարը անխելք չէ, որ նման առաջարկի դեմ լինի։
... Օրը տարի էր կերակրում. ձուկ որսալու ժամանա՞կ էր (ՎԱ, ԼՀ, 27)։	... Ձուկ որսալու ժամանակ չէր։

2. Հարցական և պատմողական բնույթի նախադասությունների միջև հակառակ հարաբերություն է լինում, երբ ժխտական կառուցվածք է ունենում հարցական նախադասությունը։ Այս դեպքում հարցական նախադասությունը ունենում է հաստատական նշանակություն, այսինքն՝ ժխտական կառուցվածքի և հարցական հնչերանգի օգնությամբ հաստատվում, արձանագրվում է տվյալ գործողության, իրողության կատարումը։ Այս դեպքում ևս դրական և ժխտական կառուցվածք ունեցող նախադասությունները կարող են հանդես գալ որպես համանիշներ, սակայն հակառակ հարաբերությամբ՝ պատմողական նախադասությունը ունենում է հաստատական կառուցվածք իր բուն նշանակությամբ, իսկ հարցական նախադասությունը ունենում է ժխտական կառուցվածք, որը հարցական հնչերանգի, իսկ հաճախ նաև հարցական դերանվան շնորհիվ ձեռք է բերում հաստատող նշանակություն, ցույց

տալիս տվյալ գործողության, իրողության կատարումը։ Այս նախադասությունները ևս, նախորդների նման, գործածվում են հիմնականում պատճառահետևանքային հարաբերություններով կապված բարդ նախադասություններում և ունեն կիրառության նույն դեպքերը, միայն այն տարբերությամբ, որ հարցական դերանուններին պատմողական նախադասության մեջ համապատասխանում են ոչ թե ժխտական դերանուններ, այլ որոշյալ։ Այսպես՝

ա) Պատմողական և հարցական համանիշ նախադասության միջոցով հաստատվում է որևէ գործողության կատարումը բոլորի կողմից կամ ամեն ինչի նկատմամբ. օրինակ՝

Եվ ի՞նչը չի մոռացվում աշխարհում... Որքա՛ն թըշվառ կլիներինք մենք, եթե մոռանալու ունակություն չունենայինք (Մ, 2, 318)։	Ամեն ինչ մոռացվում է *աշխարհում...*
Ո՞վ չի տեսել, *երբ իջնում է թանձր գիշեր, Շիրիմներից դուրս են թռչում ոսկի լույսեր (ԵՉ, Ը, 15)։*	Բոլորը տեսել են...
Ո՞վ չէր ճանաչում *կալվածատեր և հանքատեր Մարկոս Ալիմյանին (Շ, 4, 7)։*	Բոլորը ճանաչում էին *կալվածատեր և հանքատեր Մարկոս Ալիմյանին։*
Ի՞նչ կար զարմանալու։ Ո՞վ չի լսել և ո՞վ չի խոսում այդ մասին:	*Ոչինչ չկար զարմանալու։* Բոլորը լսել և բոլորը խոսում են այդ մասին:

Շատ հաճախ հարցական նախադասության վերջում ավելանում է nr *շաղկապը, որով ավելի է ընդգծվում նախադասության հարցական բնույթը, իսկ հարցական հնչերանգը որոշ չափով թուլանում է. այսպես՝* Ո՞վ չի լսել այդ մասին nr, Իսկ ո՞վ չի տեսել nr:

Մանրություն.— Որ շաղկապը այս կառուցվածքներում հավանաբար առաջացել է երկրորդական նախադասությունների զեղչումից։ Նախօրոք եղել է՝ Ո՞վ չի տեսել, որ ես տեսած չլինեմ, Ո՞վ չգիտի, որ ես չիմանամ *և այլն։ Իհարկե, այժմ կան նաև ա՛յս կառուցվածքի բարդ նախադասություններ, բայց սրանց զուգահեռ և նույն բովանդակությամբ տարածված են նաև սրանց կրճատված ձևերը՝* Ո՞վ չի տեսել որ, Ո՞վ չգիտի որ *և այլն։ Վերջին ձևերը հատկապես շատ են տարածված ժողովրդական-խոսակցական լեզվում և գեղարվեստական շարականության երկխոսությունների մեջ։*

բ) Ցույց է տրվում որևէ խնդրի նկատմամբ տեղի ունեցող գործողություն, դարձյալ ամբողջական ընդգրկումով։ Այս դեպքում ի՞նչ կամ ո՞ւմ հարցական դերանվան մոտ հաճախ ավելանում է ասես *եղանակավորող բառը* որ *շաղկապի հետ։ Դրա հետ կապված՝ հարցական հնչերանգը թուլանում է՝ մոտենալով բացականչականին։ Հարցական դերանունները* ասես, որ-*ի հետ կազմում են եղանակավորող բառակապակցություններ (ի՞նչ* ասես, որ, *ո՞վ* ասես, որ, *ինչի՞՞* ասես, որ *և այլն)։ Օրինակներ.*

Ինչե՞ր ասես, որ չեմ տեսել *այնտեղ։*	Ամեն ինչ (շատ բան) տեսել եմ այնտեղ:
Իսկ նա ո՞ւմ չի պատմել *այդ մասին։*	Նա բոլորին պատմել է *այդ մասին։*
Ո՞՞ւմ ասես, որ չգիտի նա:	Նա բոլորին գիտի:
Ինչի՞՞ ասես, որ նա ընդունակ չէ:	Նա ամեն ինչի ընդունակ է:

Հաճախ ինչ *կամ* ով *դերանունները դրվում են որևէ գոյական խնդրի վրա՝ ցույց տալով տվյալ խնդրի ընդգրկման չափը (բայստորոգյալը դարձյալ դրվում է ժխտական ձևով)։ Այս դեպքում* ասես, որ *եղանակավորող կապակցությունը դրվում է այդ գոյականից անմիջապես հետո. ըստ որում գոյականը կարող է հանդես գալ ոչ միայն խնդրի, այլ նաև ենթակայի պաշտոնով։ Այստեղ ևս* ասես, որ *եղանակավորող կապակցության մոտ հարցական-հա-*

բաբերական դերանվան հարցական հնչերանգը հաճախ փոխվում է բացականչականի։ Այս կառուցվածքի նախադասություններին համանիշ դրական կառուցվածք ունեցող նախադասությունների մեջ հարցական դերանուններին համապատասխանում են ամեն կամ բոլոր դերանունները։ Բերենք օրինակներ։

Ի՞նչ մարդու ասես, որ չես հանդիպի այնտեղ:	Ամեն մարդու կհանդիպես այնտեղ։
Ի՞նչ դեղ ասես, որ չէին գործադրել հեքիմները (ՎԱ, ԼՀ, 25)։	Ամեն դեղ գործադրել էին հեքիմները։
Ի՞նչ գիրք չկա այնտեղ։ Ուզածդ գիրքը կգտնես։	Ամեն գիրք կա այնտեղ։
Ի՞նչ միրգ ասես, որ չկա շուկայում։	Ամեն (տեսակի) միրգ կա շուկայում։
Իսկ ո՞ր աշակերտը չգիտե այդ:	Բոլոր աշակերտները գիտեն այդ։

գ) Հաճախ ժխտական կառուցվածք ունեցող հարցական նախադասությամբ և նրան համանիշ հաստատական նախադասությամբ հաստատվում, արձանագրվում է գործողության՝ որոշակի ժամանակամիջոցում կամ տեղում կատարվելը. ըստ որում տեղը և ժամանակը դարձյալ վերցվում են ընդհանրական նշանակությամբ։ Հարցական նախադասության մեջ գործածվում են ե՞րբ, որտե՞ղ հարցական դերանունները բայի ժխտական ձևի հետ, գլխավոր նախադասության մեջ վերջիններիս համապատասխանում են միշտ, ամենուրեք, ամեն տեղ տեղի և ժամանակի մակբայները։ Այստեղ ևս հարցական նախադասության մեջ կարող է գործածվել ասես եղանակավորող բառը։ Հատկանշական է, որ հարցական նախադասության սկզբում, հատկապես երբ բացակայում է ասես որ եղանակավորող բառակապակցությունը, դրվում

է իսկ շաղկապը, որով ընդգծվում է տվյալ գործողության ժխտման անհնարինությունը։ Այս նախադասություններում փաստորեն հարցի միջոցով ժխտվում է բայով դրսևորված ժխտումը։ Բերենք օրինակներ։

Իսկ ե՞րբ չի հարցրել այդ մասին, որ այսօր չհարցնի։	Միշտ հարցրել է այդ մասին, այսօր էլ հարցընում է։
Որտե՞ղ ասես չի եղել նա։	Ամեն տեղ եղել է նա։
Իսկ որտե՞ղ չեն խոսում այդ մասին։	Ամենուրեք խոսում են այդ մասին։

դ) Երբ հարցական նախադասության մեջ ժխտական բայի մոտ գործածվում է ինչպե՞ս հարցական դերանունը, նախադասությունը ցույց է տալիս այնպիսի իրողություն, գործողություն, որը, ըստ խոսողի, անհրաժեշտաբար պիտի կատարվի, անհնար է չկատարել։ Այս նախադասությունները ունենում են երկու տիպի պատմողական համանիշ նախադասություն՝ 1) կրկնակի ժխտում պարունակող նախադասություն, երբ տվյալ գործողությունը ցույց տվող բայի անորոշ դերբայի ժխտական ձևի հետ գործածվում են կամ հնարավոր չէ, չի կարելի միադիմի ժխտական եղանակավորող կապակցությունները՝ ստեղծելով միակազմ նախադասություն և կամ չեմ (չես, չի) կարող ժխտական ձևը՝ կազմելով երկկազմ նախադասություն, 2) հաստատական նախադասություն, երբ դրական բայ-ստորոգյալի կողքին շեշտված հնչերանգով դրվում է պետք է (ոr) եղանակավորող կապակցությունը։ Օրինակներ.

Ես ինչպե՞ս Ձեզ չսիրեմ- Դուք արվեստ եք ու հոգի (ԵՁ, 154)։	Ես չեմ կարող Ձեզ չսիրել: Ես պե՛տք է որ Ձեզ սիրեմ:

Ես ինչպե՞ս *այդ հարցի մասին* չխոսեմ, *երբ դա ինձ շատ է հուզում։*	*Ես* չեմ կարող *այդ հարցի մասին* չխոսել, *քանի որ դա ինձ շատ է հուզում։* Ես պե՛տք է *որ այդ հարցի մասին* խոսեմ:
Ինչպե՞ս չգնալ. *չէ՞ որ այդ հարցը խիստ կարևոր է։*	Հնարավոր չէ չգնալ, *չէ՞ որ այդ հարցը խիստ կարևոր է։* Պետք է գնալ...
Ինչպե՞ս չխոսե *մի մայր, քանի որ նրա սիրեցյալ զավակի վրա կարող է ծանրանալ հայրական անեծքը (Շ, 4, 36)։*	*Մայրը* չի կարող չխոսել, *քանի որ...* *Մայրը* պե՛տք է խոսի, *քանի որ...*

Ինչպես երևում է նաև վերոբերյալ նախադասություններից, հարցական նախադասության մեջ այս դեպքում ասես (որ) *եղանակավորող բառը չի կարող գործածվել։ Սրանց մյուս առանձնահատկությունն այն է, որ նրանցում գործածվում են միայն բայի ըղձական եղանակի ձևերը և կամ անորոշ դերբայը՝ ժխտական ձևով (վերջին դեպքում հարցական նախադասությունը լինում է միակազմ)։*

Երբ հարցական նախադասությամբ դրսևորված ժխտումը ունենում է ընդհանրական նշանակություն (լինում է միակազմ), նրան համանիշ պատմողական նախադասության ստորոգյալը կարող է դրվել նաև ենթադրական եղանակի ապառնի ժամանակի II դեմքի ժխտական բայաձևով, որը նույնպես ունենում է ընդհանրական նշանակություն (նախադասությունը դարձյալ միակազմ է) և հաճախ արտասանվում է բացականչական հնչերանգով. օրինակ՝ —Եվ տեսնո՞ւմ եք, պատասխան կրակ չի զգացվում... Կնշանակի մեր թափած հրե հեղեղը անմիջապես խեղդեց նրանց իրենց բներում։ Չե՞ս դիմանա այսպիսի թափի, չէ՛, չե՞ս դիմանա

(ՀՔ, ՄՏՀ, 2, 197) → Հնարավոր չէ դիմանալ *այսպիսի թափի* → Ինչպե՞ս դիմանալ *այսպիսի թափի։*

ե) Երբ այս նախադասություններում ինչպե՞ս *հարցական դերանվան հետ գործածվում է բայի անցյալ կատարյալ ժամանակի ժխտական ձևը, նախադասությունը արտահայտում է ափսոսանք տվյալ գործողության չկատարման վերաբերյալ։ Այս դեպքում* ինչպե՞ս *դերանվան փոխարեն կարող է գործածվել նաև* ինչո՞ւ *դերանունը։ Սրան համանիշ պատմողական նախադասությունը կարող է ունենալ երկու տեսակի կառուցվածք. 1) ժխտական կառուցվածք, երբ բայի անցյալ կատարյալ ժամանակի ժխտական ձևի կողքին գործածվում է* ափսոս *եղանակավորող բառը և 2) դրական կառուցվածք, երբ գործածվում են նույն բայի ըղձական կամ հարկադրական եղանակների անցյալ ժամանակները, իսկ նախադասությունը արտասանվում է ափսոսանք արտահայտող հատուկ հնչերանգով։ Ըղձական եղանակի անցյալ ժամանակի հետ հաճախ գործածվում է* երանի *եղանակավորող բառը։ Օրինակ՝* Ինչպե՞ս չգնացի → Ափսոս չգնացի → Պիտի գնայի: *Դու* ինչպե՞ս *մեզ հետ* չեկար → Ափսոս *մեզ հետ* չեկար → *Մեզ հետ* պիտի գայիր (պիտի եկած լինեիր): Ինչո՞ւ (ինչպե՞ս երեկ չեկար → Ափսոս երեկ չեկար → Երանի երեկ գայիր → Երեկ պիտի գայիր:

զ) Երբ ժխտական կառուցվածք ունեցող հարցական նախադասության մեջ գործածվում է ինչո՞ւ *դերանունը՝ բայի անորոշ դերբայի կամ ըղձական եղանակի ժխտական ձևերի հետ, ցույց է տալիս խոսողի կարծիքը տվյալ գործողության կատարման հնարավորության վերաբերյալ (խոսողը հնարավոր, նույնիսկ անհրաժեշտ է համարում տվյալ գործողության կատարումը)։ Սրան համանիշ պատմողական նախադասությունը կա՛մ լինում է միակազմ՝ կազմված* հարկավոր է, կարելի է, պետք է *եղանակավորող կապակցություններից ու անորոշ դերբայի դրական ձևից և կամ լինում է երկկազմ՝ կազմված բայի հարկադրական եղանակի ձևերով։ Այս դեպքում ևս հարցական նախադասության սկզբում հաճախ ավելանում է* իսկ *շաղկապը։ Օրինակներ.*

Իսկ ինչո՞ւ չգնամ:	Պիտի գնամ:
(Իսկ) Ինչո՞ւ չգնալ *և այդ մասին ուղղակի իրեն* չասել:	Կարելի է (հնարավոր է, պետք է) գնալ *և այդ մասին ուղղակի իրեն ասել։*
Ինչո՞ւ չգտնել *ավելի նպատակահարմար միջոցներ։*	Կարելի է (պետք է, հնարավոր է, հարկավոր է) գտնել *ավելի նպատակահարմար միջոցներ։*

Ժխտական ու դրական կառուցվածք ունեցող վերը նկարագրված հարցական ու պատմողական նախադասությունները, լինելով համանիշ, միաժամանակ ունեն ոճական, արտահայտչական ու կիրառական տարբերություններ։ Պատմողական նախադասությունները ավելի պակաս են դրսևորում խոսողի սուբյեկտիվ վերաբերմունքը հաղորդվածի վերաբերմամբ (հատկապես երբ չկան եղանակավորող բառեր), այնինչ, ի հակադրություն դրանց, հարցական նախադասությունները շատ ուժեղ դրսևորում են խոսողի սուբյեկտիվ վերաբերմունքը հաղորդածի նկատմամբ, ավելի արտահայտիչ, կենդանի ու պատկերավոր են դարձնում խոսքը։ Նրանք շատ են գործածվում ժողովրդական-խոսակցական լեզվում և գեղարվեստական գրականության երկխոսությունների, հատկապես հարց ու պատասխան պարունակող խոսքի մեջ, որպես պատասխան նախօրոք տրված հարցի։ Օրինակ՝ —Դո՞ւ էլ չես սիրում էֆենդուն, Ստեփանիկ։— Նրան ո՞վ է սիրում, որ ես սիրեմ (Ր, 3, 158)։ Եթե այստեղ պատասխանի մեջ գործածվեր «Նրան ոչ ոք չի սիրում. ես էլ չեմ սիրում» համանիշ ձևը, խոսքը կկորցներ իր արտահայտչականությունը։

Որևէ երևույթ հաստատելու կամ ժխտելու համար հարցական նախադասություն շատ է գործածվում նաև հրապարակախոսության լեզվում՝ խոսքը պատկերավոր ու կենդանի դարձնելու համար։ Այդ պատճառով այն կոչվում է նաև ճարտասանական հարց։

3. Բացի վերը նշված դեպքերից, համապատասխանաբար դրական ու ժխտական կառուցվածք ունեցող հարցական ու պատ-

մողական նախադասությունները կարող են հանդես գալ որպես համանիշներ նաև հետևյալ դեպքերում։

ա) Երբ որևէ գործողություն կատարվել է, և խոսողը իր բացասական վերաբերմունքն է հայտնում այդ գործողության՝ տվյալ անձի կողմից, տվյալ վայրում, տվյալ ժամանակ, տվյալ ձևով և այլն կատարվելու վերաբերյալ։ Հարցական նախադասության մեջ ժխտվող անդամը արտասանվում է հարցական հնչերանգով և արտահայտվում է անձնական կամ ցուցական դերանուններով (ցույց են տալիս կոնտեքստից հայտնի առարկաներ, հատկանիշներ), ինչպես նաև այլ խոսքի մասերով։

Բայ-ստորոգյալը գործածվում է հարկադրական եղանակի անցյալ ժամանակի դրական ձևով, իսկ նախադասության սկզբում հաճախ դրվում է հենց եղանակավորող բառը։ Սրան համանիշ պատմողական նախադասությունը ունենում է ժխտական կառուցվածք, որտեղ բայ-ստորոգյալը դրված է լինում նույն բայի հարկադրական եղանակի ժխտական ձևով, իսկ ժխտվող անդամը շեշտվում է։ Պատմողական նախադասության մեջ կարող է գործածվել նաև ըղձական եղանակի անցյալ ժամանակը պետք չէր, որ եղանակավորող կապակցությամբ։ Վերջին ձևը իմաստով ավելի մոտ է հարցական նախադասությանը։ Օրինակներ.

Վատ եղավ։ Հենց դո՞ւ պիտի գնայիր:	*Վատ եղավ։* Դո՛ւ չպիտի գնայիր: Պետք չէր, որ *դու* գնայիր:
Ի՞նչ վատ զուգադիպություն։ Հենց այստե՞ղ պիտի կատարվեր *այդ։*	*Ի՞նչ վատ զուգադիպություն։* Այստե՛ղ չպիտի կատարվեր *այդ։* Պետք չէր, որ այստեղ կատարվեր *այդ։*
Հենց այսո՞ր պիտի նրան հանդիպեր:	Այսո՛ր նրան չպիտի հանդիպեր: Պետք չէր, որ այսոր նրան հանդիպեր:

Հենց քեզանի՞ց պիտի սկսեր իր *հարցուփորձը։*	Պետք չէր, որ քեզանից սկսեր *հարցուփորձը։* Քեզանից չպե՛տք է սկսեր *հարցուփորձը։*

Այս նախադասություններում հարկադրական եղանակի ձևերի փոխարեն կարող են գործածվել նաև կարելի էր–չէր կարելի *ձևերը անորոշ դերբայի դրական ձևի հետ։ Այս դեպքում հարցական հնչերանգով արտասանվում է ոչ թե բացառվող անդամը, այլ* կարելի էր *կապակցությունը. օրինակ՝ Նրա հետ* այդպես կարելի՞ էր խոսել → *Նրա հետ* այդպես չէ՛ր կարելի խոսել: *Ա՜յ, ա՜յ, ա՜յ։* Մի՞թե այդտեղով կարելի էր գնալ → Այդտեղով չէ՛ր կարելի գնալ:

Վերջին զուգահեռ օրինակի հարցական նախադասության սկզբում ավելացել է մի՞թե *հարցական եղանակավորող բառը, որին և անցել է հարցական հնչերանգը։*

Ժողովրդական-խոսակցական լեզվում շատ տարածված է բա *եղանակավորող բառի գործածությունը* մի՞թե-ի *փոխարեն. օրինակ՝* Բա կարելի՞ էր *այդ դասախոսությունը* բաց թողնել → *Այդ դասախոսությունը* բաց թողնել չէր կարելի:

բ) Երբ խոսողը դրսևորում է իր բացասական վերաբերմունքը որևէ ձևով կատարված գործողության նկատմամբ՝ ժխտելով տվյալ գործողության այդ ձևով կատարումը ընդհանրապես, հարցական նախադասության մեջ գործածվում է այդպես ցուցական դերանունը հարցական հնչերանգով, բայը դրվում է սահմանական եղանակի ներկա կամ ենթադրական եղանակի ապառնի ժամանակներով։ Նրան համապատասխան պատմողական նախադասության մեջ գործածվում են նույն ժամանակների ժխտական ձևերը։ Օրինակ՝

Բա *լավությանն* այդպե՞ս կպատասխանեն *(են)։*	Լավությանն այդպես չեն պատասխանի:

Ճաշ ուտելիս գդալն այդպե՞ս են բռնում:	Ճաշ ուտելիս գդալն այդպես չեն բռնում:

Այստեղ հարցական նախադասությունը իր մեջ ներառնում է նաև հարցի ժխտական պատասխանը։

Հարցական նախադասությունները վերը թվարկած իմաստներն ստանում են համապատասխան կոնտեքստում՝ պայմանավորված ամբողջ խոսքի կառուցվածքով և իմաստով։ Այլ խոսքային միջավայրում այդ նույն նախադասությունը երբեմն կարող է գործածվել բուն հարցի նշանակությամբ, արտահայտել հարցում որևէ երևույթ, իրողություն պարզաբանելու համար։ Այսպես՝ «Դու ինչպե՞ս գնացիր այնտեղ, չէ՞ որ գիտեիր, որ քեզ լավ չէին ընդունի» բարդ նախադասության մեջ Դու ինչպե՞ս գնացիր այնտեղ հատվածը թեև բնույթով հարցական է, բայց բուն հարցում չի պարունակում և համանիշ է «Դու չպետք է գնայիր այնտեղ» ժխտական կառուցվածք ունեցող նախադասությանը, իսկ հետևյալ հատվածում՝ «Բարի գալուստ, ե՞րբ ես եկել։ Դե պատմիր տեսնենք. ինչպե՞ս ես գնացել այնտեղ», այդ նույն նախադասությունը գործածված է բուն հարցական նշանակությամբ, պարունակում է հարցում խոսողի համար անհայտ իրողությունը պարզելու նպատակով։ Այստեղ արդեն առկա է համանիշությանը հակադիր երևույթ, շարահյուսական բազմիմաստություն, երբ բառական նույն միավորներից բաղկացած շարահյուսական կառուցվածքը, տվյալ դեպքում նախադասությունը, գործածվում է տարբեր նպատակով, տարբեր միտք արտահայտելու համար։

Ծանոթություն.— Բազմիմաստությունը, որպես լեզվական երևույթ, ինչպես ասվել է, հատուկ է ոչ միայն բառական միավորներին, այլև քերականական ձևերին, հատկապես ձևույթներին։ Բազմիմաստությունը հատուկ է նաև շարահյուսական միավորներին՝ բառակապակցություններին, մասամբ նաև նախադասություններին։ Այդպիսին են վերևում նկարագրված նախադասությունների մի մասը, հատկապես նրանք, որոնք չունեն եղանակավորող բառեր ու բառակապակցություններ։

4. Վերևում խոսվեց հարցական և պատմողական համանիշ նախադասությունների միջոցով ժխտում, բացասական վերաբեր-

մունք դրսևորելու դեպքերի մասին։ Սակայն երբեմն ժխտում, բացասում է արտահայտվում նաև հրամայական բայաձևերի դրական ձևերի օգնությամբ։ Այսպես, երբ խոսողը նպատակ է ունենում ժխտել որևէ գործողության կատարման հնարավորությունը, օգտագործում է կա՛մ հնարավոր չէ, անհնար է ժխտական ձևերը գործողություն ցույց տվող բայի անորոշ դերբայի դրական ձևի հետ (հնարավոր չէ գտնել, անհնար է լռել) և կամ այդ բայի հրամայական եղանակի եզակի թվի դրական ձևը գնա ու, արի ու (եկ ու) անհնարինություն ցույց տվող եղանակավորող կապակցությունների հետ (գնա ու գտիր, արի ու լռիր)։ Մի դեպքում առկա է ժխտական կառուցվածք ունեցող պատմողական նախադասություն, մյուս դեպքում՝ դրական կառուցվածք ունեցող, սակայն դարձյալ ժխտական իմաստ ունեցող հրամայական նախադասություն, որոնք հանդես են գալիս որպես համանիշներ։ Երկու նախադասությունն էլ միակազմ են, սակայն տարբերվում են իրարից և՛ բնույթով (պատմողական, հրամայական), և՛ կառուցվածքով (ժխտական, դրական), մասամբ նաև բառային կազմով։ Ինչպես ասվեց, առաջին դեպքում ժխտվող գործողությունը ցույց տվող բայը դրվում է անորոշ ձևով, որը հնարավոր չէ, անհնար է ձևերի հետ կազմում է բաղադրյալ ստորոգյալ։ Երկրորդ դեպքում այդ նույն բայը հանդես է գալիս որպես անկախ ստորոգյալ, դրվելով հրամայական եղանակի եզակի թվի ձևով։ Վերջինս, սակայն, այս կիրառությունում զրկվել է բուն հրամայական նշանակությունից՝ ձեռք բերելով ընդհանուր-անորոշ նշանակություն։ Երկրորդ դեմքը ևս կորցրել է իր բուն նշանակությունը։ Գործողությունը վերագրվում է ոչ թե կոնկրետ երկրորդ դեմքին, այլ շատերին, բոլորին։ Այդ է պատճառը, որ այս կառուցվածքի նախադասությունը ևս միակազմ է համարվում։ Երկու նախադասությունների բառական տարբերությունը գնա ու, արի ու, եկ ու ձևերի գործածումն է հնարավոր չէ, անհնար է ձևերի փոխարեն։ Բերենք այս համանիշների զուգահեռ օրինակներ։

Դեհ, հիմա գնա ու գտիր *նրան իր հայրենի անծայր անտառներում (Իս., Եղ-նիկը)։*	Այլևս հնարավոր չէ *նրան* գտնել *իր հայրենի անծայր անտառներում։*
Արի ու սրանից բան հասկացիր:	*Սրանից* հնարավոր չէ (անհնար է) բան հասկանալ:
Դե արի *ու էս տեսակ մարդկանց հետ բրիգադում* համերաշխություն հաստատիր (ՆՁՀ):	*Էս տեսակ մարդկանց հետ բրիգադում* համերաշխություն հաստատել հնարավոր չէ:

Ինչպես երևում է օրինակներից, գնա ու, արի ու ձևերի *կողքին հաճախ հանդես է գալիս* դեհ (դե) *ձայնարկությունը, որով ընդգծվում է այդ ձևերի եղանակավորող նշանակությունը։ Առաջին օրինակում հիմա մակբայը գործածվելով* գնա ու *ձևի և* դեհ-*ի հետ, ուժեղացնում է գործողության կատարման անհնարինության գաղափարը, այդ պատճառով նրան համանիշ ժխտական կառուցվածք ունեցող նախադասության մեջ այդ իմաստը լրիվ արտահայտելու համար պիտի գործածել* այլևս *ժխտական բովանդակությամբ մակբայը* (այլևս հնարավոր չէ...):

Այս կառուցվածքի հրամայական նախադասությունները հաճախ ցույց են տալիս ոչ թե գործողության կատարման անհնարին համարվելը, այլ նաև անհրաժեշտ չհամարվելը, ավելորդ համարվելը։ Ըստ խոսողի՝ գործողությունը կարելի է, սակայն պետք չէ կատարել։ Դա դրսևորվում է որպես եզրակացություն՝ արված գործողության կատարվելուց առաջացած ոչ ցանկալի հետևանքից. օրինակ՝ «Դե արի ու այդպիսի մարդկանց լավություն արա» նախադասությունը համանիշ է «Պետք չէ այդպիսի մարդկանց լավություն անել» նախադասությանը։ Երկու նախադասություններն էլ ցույց են տալիս եզրակացություն, հետևություն՝ արված տվյալ գործողության կատարումից առաջացած ոչ ցանկալի հետևանքից։ Այստեղ

դրսևորվում է նաև խոսողի դժգոհությունը։ Այս զուգահեռ նախադասություններն ունեն նույն կառուցվածքային առանձնահատկությունները, ինչ որ նախորդները, միայն այն տարբերությամբ, որ այստեղ հնարավոր չէ կապակցության փոխարեն գործածվում է պետք չէ ձևը (դրանով էլ պայմանավորվում է նրանց իմաստային տարբերությունը)։

Այս կառուցվածքի հրամայական նախադասության մեջ բայի հրամայական եղանակի ժխտական ձևի գործածման դեպքում նախադասությունը ձեռք է բերում հաստատական նշանակություն, այսինքն՝ դրսևորում է խոսողի կարծիքը, եզրակացությունը տվյալ գործողության կատարման անհրաժեշտության, անխուսափելիության վերաբերյալ։ Օրինակ՝ «Դե գնա ու այդքանից հետո մի հուզվիր»։ Սրան համանիշ պատմողական նախադասությունը ունենում է կրկնակի ժխտական ձև, այսինքն՝ ժխտվում է գործողությունը չկատարվելու հնարավորությունը. այսպես՝ «Այդքանից հետո հնարավոր չէ (անհնար է, չի կարելի) չհուզվել»։ Այս տիպի նախադասությանը համանիշ կարող է լինել նաև հարցական բնույթի նախադասություն՝ «Այդքանից հետո մի՞թե կարելի է (հնարավոր է) չհուզվել»։ Ընդհանրապես պետք է նշել, որ վերը նկարագրված հրամայական նախադասությունները կարող են ունենալ ոչ միայն պատմողական բնույթի, այլ նաև հարցական բնույթի համանիշ նախադասություններ։ Այսպիսով՝ այստեղ առկա է համանիշ նախադասությունների երեք շարք՝ հարցական—հրամայական—պատմողական։ Բերենք օրինակներ։

Սրանից հետո դե գնա ու հավատա նրան։	Մի՞թե սրանից հետո կարելի է հավատալ նրան։	Սրանից հետո նրան հավատալ չի կարելի (հնարավոր չէ, պետք չէ)։
Դե եկ այդպիսի մարդուց վրեժ մի հանիր քո ընկերոջ համար (Վ.Ա., Լ.Հ., 55)։	Այդպիսի մարդուց կարելի՞ է վրեժ չհանել։	Այդպիսի մարդուց չի կարելի վրեժ չհանել։

Այնքան գործ կա։ Արի ու մի՛ շտապիր։	*Այնքան գործ կա։* Կարելի՞ է չշտապել։	Հնարավոր չէ *(չի կարելի)* չշտապել։

5. Վերևում խոսվեց այն դեպքերի մասին, երբ հարցական նախադասությունը՝ հանդես գալով որպես պատմողական նախադասություններին համանիշ, արտահայտում է ժխտում (երբ ունի հաստատական կառուցվածք) կամ հաստատում (երբ ունի ժխտական կառուցվածք)։ Սակայն դրանով չեն սպառվում հարցական ու պատմողական նախադասությունների համանիշության դեպքերը։ Հաճախ, հատկապես ժողովրդական-խոսակցական լեզվում, հարցական բնույթ (հնչերանգ) ունեցող նախադասությունը, հանդես գալով անշաղկապ բարդ նախադասությունների կազմում, արտահայտում է պայման, ստորադասվելով որևէ պատմողական կամ հրամայական բնույթի գլխավոր նախադասության։ Այս ժամանակ ևս, այն թեև ունենում է հարցական հնչերանգ, սակայն, նախորդ դեպքերի նման, չի արտահայտում հարցում և համանիշ է շաղկապով միացած պատմողական բնույթ ունեցող պայմանի երկրորդական նախադասություններին։ Օրինակներ՝

— Կկատարվի խնդիրս— լավ, չի՞ կատարվի—խոմ ինձանից մի բան չի պակասիլ (Շ, 1, 33)։	Եթե չկատարվի, *խոմ ինձանից մի բան չի պակասիլ։*
Չի՞ լինի, *իրենց փոխարեն կտան հարուստ կոլտնտեսությունները (ԱՍԵԿ., 398)։*	Եթե չլինի, *իրենց փոխարեն կտան հարուստ կոլտնտեսությունները։*
Ուզո՞ւմ ես՝ *բռնեմ հոգիդ այսօրվա... ու նետեմ... դեպի կյանքը գալիք (ԵՉ, 43)։*	Եթե ուզում ես, *բռնեմ հոգիդ այսօրվա...*
Կա՞ հնարավորություն, օգտվիր (Ալ., ՀԱ, 150)։	Եթե կա հնարավորություն, *օգտվիր։*

Այս երկու շարքի պայմանի նախադասությունների տարբերությունը կապակցության եղանակի ու հնչերանգի մեջ է։ Առաջին շարքում պայմանի երկրորդական նախադասությունները ունեն հարցական հնչերանգ, որի միջոցով և հիմնականում իրականանում է նրանց կապը գլխավոր նախադասությունների հետ։ Երկրորդ շարքում պայմանի նախադասությունները ունեն սովորական պատմողական հնչերանգ, որի հետևանքով պահանջվում է հատուկ կապակցության միջոց։ Որպես այդպիսին հանդես է գալիս եթե շաղկապը։ Այս երկու կառուցվածքի նախադասությունների տարբերությունը նաև ոճական է ու կիրառական։ Առաջին շարքի նախադասությունները, ինչպես ասվեց, ավելի հատուկ են ժողովրդական-խոսակցական լեզվին (բանավոր խոսքին), որտեղից հաճախ մուտք են գործում նաև գեղարվեստական գրականության մեջ։ Սրանք, միաժամանակ, հատուկ հնչերանգ ունենալու հետևանքով, ավելի պատկերավոր ու արտահայտիչ են դարձնում խոսքը։ Երկրորդ շարքի նախադասությունները հավասարապես գործածվում են բանավոր ու գրավոր խոսքում, ունեն սովորական շարադրանք և զուրկ են նախորդի արտահայտչականությունից (հմմտ. «Կա՞ հնարավորություն՝ օգտագործիր» և «Եթե կա հնարավորություն, օգտագործիր»)։

ՀԱՐՑԱԿԱՆ ԵՎ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՄԱՆԻՇ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Երբեմն խոսողը խոսակցին ուղղած խնդրանքը, հորդորը մեղմելու համար հրամայական նախադասության փոխարեն գործածում է հարցական հնչերանգով նախադասություն։ Դրանով ստեղծվում են հրամայական և հարցական բնույթի համանիշ նախադասություններ։ Հարցական բնույթի խնդրանք, հրաման պարունակող նախադասություններն ունեն հետևյալ կառուցվածքային առանձնահատկությունները. նախադասության բայ-ստորոգյալը դրվում է ենթադրական եղանակի անցյալ ժամանակի ժխտական ձևերով՝ արտասանվելով հարցական հնչերանգով և կամ չէի՞ կարող, չէի՞ր կարող ժխտական ձևերը գործողություն ցույց տվող բայի անորոշ դերբայի հետ կազմում են բաղադրյալ ստորոգյալ՝ դարձյալ արտասանվելով հարցական հնչերանգով։ Սրանց համանիշ հրամայական

նախադասություններում բայ-ստորոգյալը դրվում է հրամայական եղանակով, բնականաբար փոխվում է նաև նախադասության հնչերանգը։ Օրինակներ՝

Վաղը չէի՞ք կարող գալ, այսօր խիստ զբաղված եմ (ԲՎ, ԻԳԵ, 306)։	Եկե՛ք վաղը, այսօր խիստ զբաղված եմ։
Աշոտ, չէի՞ր գնա նրան կանչելու։	Աշոտ, գնա՛ նրան կանչելու։
Նեղություն չէի՞ք կրի այդ գիրքը տալ ինձ։	Նեղություն կրեցեք այդ գիրքը տալ ինձ։

Հատկանշական է այն երևույթը, որ երբ հարցական նախադասություններում անցյալ ժամանակի փոխարեն գործածվում են ապառնի կամ ներկա ձևեր, նախադասությունը ստանում է բուն հարցումի նշանակություն. այսպես՝ եթե «վաղը չէի՞ք կարող գալ» ձևը նշանակում է «եկեք վաղը», ապա «Վաղը չե՞ք կարող գալ» ձևը արտահայտում է բուն հարցում՝ «Վաղը կարո՞ղ եք գալ» նշանակությամբ։

Հրամանը խնդրանքը մեղմելու համար հաճախ վերը նկարագրված հարցական նախադասության փոխարեն գործածվում է հրամայական նախադասություն, որտեղ հրամայական եղանակով դրված բայից առաջ, կամ հենց նախադասության սկզբում դրվում է մի մասնիկը։ Վերջինս շեշտ չի կրում և այդ պատճառով բային չի տալիս ժխտական իմաստ. օրինակ՝ «Այդ գիրքը չէի՞ր տա ինձ → Մի այդ գիրքը տուր ինձ»։ Այս դեպքում հրամայական հնչերանգը որոշ չափով թուլանում է՝ մոտենալով պատմողականին։

ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՎ ՊԱՏՄՈՂԱԿԱՆ ՀԱՄԱՆԻՇ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ա) Հայտնի է, որ հրաման, հորդոր, կոչ, խնդրանք և այլն արտահայտելու համար գործածվում են հատուկ բնույթի նախադա-

սություններ, որոնք կոչվում են հրամայական[1]։ Հրամայական նախադասությունները ունեն հատուկ հնչերանգ, որի միջոցով հենց հաճախ արտահայտվում է խոսողի կամքը, հրամանը, խնդրանքը՝ ուղղված մեկին կամ շատերին։ Բացի հնչերանգից, այդ իմաստը դրսևորելու համար կարևորություն ունի բայ-ստորոգյալի ձևը։ Եվ դա բնական է։ Այս նախադասություններով խոսողը հրամայում, հորդորում, խնդրում, կոչ է անում, թելադրում է որևէ մեկին կատարելու որևէ գործողություն. մի բան, որ կարող է արտահայտվել հիմնականում բայի միջոցով։ Հրաման դրսևորելու համար լեզուն ունի բայի հատուկ ձևեր՝ հրամայական եղանակի բայաձևերը, որոնցով և հիմնականում ձևավորվում են հրամայական նախադասությունները. օրինակ՝ էհե՛յ, լսեցե՛ք վեհ հայրենիքի կտրիճ զավակներ, ժողովուրդնե՛ր քաջ, նլե՛ք, զարթնեցե՛ք, կանգնեցե՛ք արթուն... (Իս., 1, 305)։ Կամ՝ Եվ որոտա՛, Զա՛նգ, և արթնացրո՛ւ դարևոր նիհրից Մասիսն ու Կազբեկ, թա՛փ տուր թևերդ, արծի՛վ լեռներու, Քնա՛ծ առյուծներ, բաշերդ թոթվե՛ք (Իս., 1, 124)։

Մյուս՝ հրամայական նախադասությունների համար բնորոշ ձևը միակազմ անդեմ նախադասություններն են՝ ձևավորված բայի անորոշ դերբայով և հրամայական հնչերանգով. օրինակ՝—Լռե՛լ,—հրամայեց մայորը։ Պանպանե՛լ լռություն։ Վռնդե՛լ այդ անկոչ հյուրին, դո՛ւրս նետել նրան իմ հողից, իմ տերությունից (ՎՓ)։

Եթե հրամայական եղանակի բայաձևերով հնարավոր է արտահայտել շատ իմաստներ՝ սկսած հրամանից մինչև խնդրանքը, աղաչանքը, ապա անորոշ դերբայով դրսևորվում է միայն հրաման, կոչ, կարգադրություն (տե՛ս վերևի օրինակները), այսինքն՝ անորոշ դերբայով և հատուկ հնչերանգով ձևավորվում են բուն հրամայական նախադասություններ։ Այս տեսակետից նրանք համանիշ են հրամայական եղանակի բայաձևերով ձևավորված և հրաման, կոչ, կարգադրություն դրսևորող հրամայական նախադասություններին։ Այս երկու ձևերի միջև կա այն տարբերությունը,

---

[1] Տե՛ս Վ. Առաքելյան, Հայերենի շարահյուսություն, հատոր 1, 1958, էջ 21—25, Ս. Աբրահամյան, Ժամանակակից հայերենի շարահյուսության մի քանի հարցեր, 1962, էջ 86—97։

որ առաջինը (անորոշ դերբայի ձևը) հրամանը, կոչը, կարգադրությունը դրսևորում է ավելի ընդհանրական ձևով, այն հաճախ ուղղված չի լինում որևէ կոնկրետ անձնավորության։ Այդպիսին են հատկապես կոչերը, որևէ բան անելու, կամ չանելու վերաբերյալ եղած հայտարարությունները, ինչպես՝ Պահպանե՛լ լռություն, Զծխե՛լ, Զաղմկե՛լ և այլն։ Իհարկե, հատուկ կոնտեքստի մեջ այս ձևերը ևս կարող են ստանալ կոնկրետ ուղղվածության նշանակություն, ինչպես՝ «—Զաղմկե՛լ,— դիմեց նրանց ուսուցիչը»։ Երկրորդ՝ հրամայական եղանակի ձևերը որոշակի դեմք ունենալու հետևանքով հիմնականում դրսևորում են հրամանը, կոչը և այլն՝ ուղղված որևէ կոնկրետ անձի կամ անձերի։ Այդ է պատճառը, որ սրանք ունեն կիրառության ավելի լայն ոլորտ և դրսևորում են ավելի շատ իմաստներ։ Իհարկե, բացառված չէ, որ այս ձևերը ևս գործածվեն ընդհանրական իմաստով և ցույց տան հրաման, կոչ, առաջադրանք՝ ուղղված ոչ կոնկրետ անձնավորության (օրինակ՝ Պահպանեցե՛ք լռություն)։ Բերենք հրամայական եղանակի բայաձևերով և անորոշ դերբայով ձևավորված համանիշ հրամայական նախադասությունների զուգահեռ օրինակներ։

Կրակե՛լ,— հրամայեց մայորը։	— Կրակեցե՛ք,— հրամայեց մայորը։
Պահպանե՛լ լռություն։	Պահպանեցե՛ք լռություն։
Ոչ մի ձայն չհանե՛լ, քայլե՛լ անաղմուկ,— կարգադրեց խմբի ղեկավարը։	Ոչ մի ձայն չհանե՛ք, քայլեցե՛ք անաղմուկ,— կարգադրեց խմբի ղեկավարը։
Արտագրե՛լ հետևյալ հատվածը։	Արտագրեցե՛ք հետևյալ հատվածը։

Հաճախ հրամանը, կարգադրությունը, մի որևէ բան անելու հանձնարարությունը դրսևորվում է ոչ թե հրամայական եղանակի, այլ ենթադրական եղանակի երկրորդ դեմքի բայաձևերի միջոցով։ Այս դեպքում նախադասության հնչերանգը դադարում է հրամայա-

կան լինելուց և ավելի մոտենում է պատմողականին (գրավում է միջին տեղ հրամայական և պատմողական հնչերանգների միջև)։ Այդ է պատճառը, որ պրոֆ. Վ. Առաքելյանը այս նախադասությունները չի համարում հրամայական[1]։ Այս նախադասություններում զգալիորեն թույլ է նաև հրամանի նշանակությունը։ Այն ավելի շատ հանձնարարություն, կարգադրություն, հրահանգ է որևէ մեկին կամ շատերին՝ որևէ գործողություն կատարելու։ Օրինակ՝ Իսկ հիմա կփակվես ախոռապետ Վարաժի տանը և այնտեղ կհավաքես հետախույզ մարդկանց (ԴՎ)։ —Այո... Կգնաս այն կողմը... կհարցնես... Հովհաննես Քեհյային և կտաս նրան այս թուղթը (ՎՓ)։ Էգուց տավարը Սիմոնին պահ կտաս, կգաս բակատեղ, համ հետդ հաց կբերես, համ մեզ կօգնես (ՎԱ, ԼԿ, 33)։

Այս օրինակների ենթադրական եղանակի բայաձևերը կարելի է փոխակերպել հրամայական եղանակի ձևերի՝ ստեղծելով առաջիններին համանիշ նախադասություններ։ Այսպես՝ Իսկ հիմա փակվի՛ր ախոռապետ Վարաժի տանը և այնտեղ հավաքի՛ր հետախույզ մարդկանց։ Գնա՛ այն կողմը... հարցրո՛ւ Հովհաննես Քեհյային և տո՛ւր նրան այս թուղթը։ Էգուց տավարը Սիմոնին պահ տուր, արի բակատեղ, համ հետդ հաց կբերես, համ մեզ կօգնես։ Ինչպես երևում է այս համանիշ նախադասությունների համեմատությունից, երկրորդ դեպքում (հրամայական բայաձևերի օգտագործման դեպքում) հանձնարարությունը, կարգադրությունը ավելի որոշակի, կոնկրետ է դրսևորվում, քան առաջին դեպքում։

Համեմատի՛ր նաև հետևյալ նախադասությունները. Որտեղից լացի ձայն լսես, ներս մտիր՛ (ԱԲ, 308) → Որտեղից լացի ձայն լսես, ներս կմտնես։ Հենց որ տեսնես, շուտ կրակի՛ր (ՀՔ, ՄՏՋ, 65) → Հենց որ տեսնես, շուտ կկրակես։

Երբ խոսողը կարգադրում, հրամայում, հանձնարարում է խոսակցին (կամ խոսակիցներին) որևէ գործողություն կատարել-ավարտել որոշակի ժամանակամիջոցում, գործածվում է հրամայական եղանակի երկրորդական բաղադրյալ հարակատար ժամանակը, ավե-

---

[1] Տե՛ս Վ. Առաքելյան, Հայերենի շարահյուսություն, հատոր 1, Երևան, 1958, էջ 24։

լի հաճախ՝ ըղձական եղանակի երկրորդական բաղադրյալ հարակատար ապառնի ժամանակ, որոնք այս կիրառությունում հանդես են գալիս որպես համանիշներ. օրինակ՝ «Տե՛ս հա, վաղը մինչև ժամը հինգը ավարտած լինես աշխատանքը → Վաղը մինչև ժամը հինգը ավարտած եղիր աշխատանքը»։ Այս ձևերի գործածության դեպքում հրամանը, կարգադրությունը, հանձնարարությունը ստանում են նաև առարկություն չվերցնող, կատեգորիկ բնույթ. իմաստային երանգ, որ թուլանում է հրամայական եղանակի պարզ ձևերը գործածելիս։ Համեմատի՛ր վերևի նախադասությունները հետևյալի հետ՝ «Վաղը մինչև ժամը հինգը ավարտի՛ր աշխատանքը»։ Հաճախ կարգադրության, հանձնարարության, հրամանի անառարկելի լինելը ընդգծելու համար գործածվում են ներգործական կառուցվածք ունեցող հրամայական նախադասություններին համանիշ կրավորական կառուցվածք ունեցող նախադասություններ, որտեղ կիրառվում են համապատասխան ներգործական սեռի բայի կրավորականի ըղձական եղանակի երկրորդական բաղադրյալ հարակատար ապառնի, երբեմն նաև պարզ ապառնի ժամանակները։ Ահա այդ համանիշների շարքը։ Ցտեսություն... լեյտենանտ, մինչև առավոտ ֆողարկված լինեն հրանոթները (ՀՔ, ՄՏՁ, 270) → Մինչև առավոտ ֆողարկվեն հրանոթները → Մինչև առավոտ ֆողարկած լինեք հրանոթները → Մինչև առավոտ ֆողարկեցե՛ք հրանոթները։

Երբ խոսողը հրամայում, կարգադրում, հանձնարարում է որևէ մեկին կամ շատերին որևէ գործողություն չկատարել, այսինքն՝ երբ հրամանը ունի արգելման բնույթ, հրամայական եղանակի բայաձևերի փոխարեն հաճախ գործածվում են ըղձական եղանակի ապառնի ժամանակի երկրորդ դեմքի ժխտական ձևերը, որոնցով կազմված հրամայական նախադասությունները համանիշ են առաջիններին։ Բերենք օրինակներ։ Դո՛ւրս իմ տանից սևերես, Եռ չնայե՛ս դեպի մեզ, Ոտ չդնե՛ս էլ տունս, Մրոտեցիր անունս (ՀԹ)։ Իշխաննե՛ր, չծախե՛ք մեր հոգիները,— գոչեց համարյա հրամայական ձայնով մռայլ զինվորը։— Զանե՛ք ձեզ անպատիվ (ԴՎ, 951)։ Չշարժվե՛ս,— խոստորեն պատվիրեց նա (ԱՀՍ, 378)։ Գլխավորը՝

շշփոթվես, հարցերին պատասխանիր հանգիստ ու վստահ (ՎԱ, ԼՀ, 100)։

Այս նախադասությունները համանիշ են հրամայական եղանակի արգելական բայաձևերով կազմված հետևյալ նախադասություններին՝ «... Ետ մի՛ նայիր դեպի մեզ, ոտ մի՛ դնիր էլ տունս...», «Իշխաններ, մի՛ ծախեք մեր հոգիները.», «Մի՛ շարժվիր,—խստորեն պատվիրեց նա»։ Ինչպես երևում է օրինակների համադրումից, ըղձական եղանակի ժխտական ձևերը երբեմն ավելի վճռական են դրսևորում հրամանը, քան բուն հրամայական եղանակի ձևերը։

Երբ արգելման հրամանը ուղղված է ոչ թե մեկին, այլ շատերին և ունի որոշ ընդհանրական իմաստ, անորոշ դերբայի ժխտական ձևերի և արգելական հրամայականի փոխարեն դարձյալ կարող են գործածվել ըղձական եղանակի հոգնակի երկրորդ դեմքի ժխտական բայաձևերը՝ ստեղծելով համանիշ նախադասությունների եռանդամ շարք։ Ըստ որում վերը նշված իմաստն արտահայտելու համար արգելական հրամայականի ձևերը համեմատաբար քիչ են գործածվում. այսպես՝ Չշարժվե՛լ,— հրամայեց քաղղեկը → Մի՛ շարժվեք, հրամայեց քաղղեկը→ Չշարժվե՛ք,— հրամայեց քաղղեկը։ Չաղմկե՛լ → Մի՛ աղմկեք → Չաղմկեք։ Չվազե՛լ, քայլել հանգիստ → Մի՛ վազեք, քայլեցեք հանգիստ —Չվազե՛ք, քայլեցեք հանգիստ։

Ծանոթություն.— Ըղձական եղանակի ժխտական ձևերի այս կիրառությունն է հավանաբար օժանդակել այն երևույթին, որ ժամանակակից հայերենում և խոնարհման բայերի հրամայական եղանակի հոգնակի ձևերի փոխարեն հաճախ գործածվում են ըղձական եղանակի հոգնակի երկրորդ դեմքի ձևերը (գրեցե՛ք—գրե՛ք)։

Ըղձական եղանակի ապառնի ժամանակի երկրորդ դեմքի դրական ձևերը ևս երբեմն կարող են գործածվել հրաման դրսևորելու համար, սակայն այս դեպքում հրամանի ուժը թուլանում է և կրում է ավելի հանձնարարության բնույթ։ Համեմատի՛ր հետևյալ համանիշ նախադասությունները. Ապա՛, երիտասա՛րդ,... դու վարվել գիտես երեխաների հետ. տե՛ս, լավ հիշատակ թողնես այս տանը (ԸԷՍԳ, 314) → Տե՛ս, լավ հիշատակ թող այս տանը։

Բեռներս շատ է, հետներս հաց չենք տանում հա՞, էնպես որ էգուց ճաշին հաց հասցնես *(ՎԱ, ԼՀ, 43)* → *...էնպես որ էգուց ճաշին* հաց հասցրու: *Տես, հա՞, վաղը անպայման* բերես → *Տե՞ս, հա, վաղը անպայման* բեր: *Վաղը ժամը հինգին բոլորդ* լինեք *այնտեղ* → *Վաղը ժամը հինգին բոլորդ* եղեք *այնտեղ։*

Երբեմն հատուկ հնչերանգի օգնությամբ հրաման, հանձնարարություն են արտահայտում նաև բայի սահմանական եղանակի ներկա ժամանակի երկրորդ դեմքի բայաձևերը։ Այս ձևերով կազմավորված նախադասությունները համանիշ են հրամայական բայաձևերով և ենթադրական եղանակի երկրորդ դեմքի ձևերով կազմված նախադասություններին. այսպես՝ Ո՛չ մի առարկություն։ Վաղը մեկնում ես → *Ո՛չ մի առարկություն։* Վաղը կմեկնես → *Ո՛չ մի առարկություն։* Վաղը մեկնի՛ր: *Այսպես ուրեմն. դու հենց հիմա* գնում ես *նրա մոտ և* ներողություն *խնդրում* →
Դու հենց հիմա կգնաս *նրա մոտ և* ներողություն կխնդրես →
Դու հենց հիմա գնա *նրա մոտ և* ներողություն խնդրիր:

Այս համանիշ ձևերը ունեն կիրառական և իմաստային որոշակի տարբերություն։ Ներկա ժամանակի ձևերը գործածվում են այն ժամանակ, երբ խոսողը իր հրամանը, կարգադրությունը, հանձնարարությունը համարում է անառարկելի, դիտում է որպես արդեն կատարման ընթացքի մեջ եղող։ Երկրորդ դեպքում այն ունի ավելի հանձնարարության, առաջադրանքի բնույթ, իսկ երրորդ դեպքում ուղղակի հրաման, կարգադրություն է։

Երբեմն հրամանը, կարգադրությունը մեղմելու, դրան խնդրանքի ձև տալու համար խոսողը հրամայական եղանակի ձևերի փոխարեն գործածում է ըղձական եղանակի անցյալ ժամանակի երկրորդ դեմքի ձևերը. օրինակ՝ Եթե ձեզ այդ նեղություն չէր լինի, ինձ համար մի բան նվագեիք *(ՆԴ,1, 216)։* Գնայիր *գիրքը* բերեիր, *արդեն կարդացած-վերջացրած կլինի։*

Սրանց համանիշ նախադասություններում բայը դրսևորված է լինում կամ հրամայական եղանակի, կամ ըղձական եղանակի ապառնի ժամանակի բայաձևերով. այսպես՝ Ինձ համար մի բան նվագեիք → *Ինձ համար մի բան* նվագեք → *Ինձ համար մի բան* նվագեցեք: Գնայիր, *գիրքը* բերեիր → Գնա, *գիրքը* բեր →

Գնա՞ս, գիրքը բերես: Ըղձական եղանակի ապառնի ժամանակի եզակի երկրորդ դեմքի գործածման դեպքում նախադասության հնչերանգը մոտենում է հարցականին, նախադասության սկզբում կարող է դրվել նաև մի եղանակավորող բառը, որով ավելի է ընդգծվում հրամանի, խնդրանքի մեղմումը. օրինակ՝ Մի գնա՞ս ջուր բերես, կամ՝ Մի վազե՞ս նրանց տուն: Այս ձևերը գործածվում են որպես խիստ քաղաքավարական ձևեր:

Հրաման, կարգադրություն, որևէ գործողություն կատարելու թելադրանք կարող են դրսևորել նաև հարկադրական եղանակի ապառնի ժամանակի երկրորդ դեմքի ձևերը, սակայն սահմանական եղանակի ներկա ժամանակի նման միայն հատուկ հնչերանգի օգնությամբ: Այդ հնչերանգը մոտենում է հրամայականին, սակայն չի նույնանում նրա հետ. օրինակ՝ Այսօր ևեթ պիտի գնաս բժշկական քննության: Ո՛չ մի առարկություն, անմիջապես պիտի հեռանաք այստեղից:

Այս նախադասություններում հրամանի իմաստը զուգակցվում է անհրաժեշտության գաղափարի հետ: Խոսողը ոչ միայն հրամայում, հորդորում է կատարել վերոհիշյալ գործողությունները, այլև դրանց կատարումը համարում է անհրաժեշտ, պարտադիր: Դրանով էլ հենց սրանք տարբերվում են համապատասխան համանիշ նախադասություններից:

Այսպիսով՝ հրաման, հանձնարարություն, կարգադրություն արտահայտող համանիշ նախադասությունների շարքը հասնում է վեցի: Դրանք են՝

1) Հրամայական եղանակով ձևավորված նախադասություն (Այսօր ևեթ գնա՛):

2) Անորոշ դերբայով միակազմ նախադասություն (Այսօր ևեթ գնա՛լ):

3) Ներկա ժամանակի երկրորդ դեմքի բայաձևերով և հատուկ հնչերանգով կազմավորված նախադասություն (Այսօր ևեթ գնում ես):

4) Ըղձական եղանակի երկրորդ դեմքի ձևերով կազմավորված նախադասություն (Այսօր ևեթ գնաս):

5) Ենթադրական եղանակի ապառնի ժամանակի երկրորդ

դեմքի բայաձևերով կազմավորված նախադասություն (Այսօր եթե կգնաս):

6) Հարկադրական եղանակի, ապառնի ժամանակի երկրորդ դեմքի բայաձևերով կազմավորված նախադասություն (Այսօր եթե պիտի գնաս):

Ինչպես երևում է թվարկված շարքից և ինչպես ասվել է դրանցից յուրաքանչյուրի առանձին նկարագրության ժամանակ, այս համանիշ ձևերից յուրաքանչյուրն ունի իր իմաստային և ոճական նուրբ առանձնահատկությունները. մի բան, որի հետևանքով միշտ չէ, որ հնարավոր է սրանցից մեկը փոխարինել մյուսով: Խոսողը ընտրում է այս ձևերից մեկը ըստ հաղորդման նպատակի և կիրառության տեղի:

Եթե հրաման, հանձնարարություն, կարգադրություն և այլն արտահայտելը հրամայական եղանակի բայաձևերի հիմնական իմաստն է, ապա բայի մյուս եղանակները այդ իմաստն արտահայտում են միայն երկրորդական կիրառություններում, հատուկ հնչերանգի օգնությամբ և որոշակի կոնտեքստում: Այդ է պատճառը, որ այս ձևերի համանիշությունը դրսևորվում է միայն նրանց որոշ կիրառություններում, նախադասությունների մեջ: Այստեղ համանիշ են ոչ թե գնա՛, կգնաս, գնաս, պիտի գնաս բայաձևերը, այլ ամբողջ նախադասությունները (տե՛ս վերևի օրինակները):

բ) Մենք տեսանք, թե ինչպիսի համանիշներ կարող է ունենալ հրամայական եղանակի բայաձևերով կազմավորված հրամայական բնույթի նախադասությունը: Սակայն այն կարող է արտահայտել ոչ միայն հրաման, այլ նաև պայման և այս դեպքում հանդես գալ որպես պայման դրսևորող պատմողական նախադասության համանիշ: Այդպիսի գործածություն հրամայական նախադասությունները ունեն պայմանի հարաբերություններ դրսևորող անշաղկապ բարդ նախադասություններում: Այս կիրառությունում հրամայական եղանակի բայաձևերը կորցրել են իրենց եղանակային, ինչպես նաև դիմային կոնկրետ իմաստները և գործածվում են ընդհանրական նշանակությամբ: Բերենք օրինակներ: Անցի՛ր դու աջ ու ձախ կողմերում գտնվող գյուղերը և շատ բան կտեսնես (ԳՍԹ, 2, 397): Գնա՛ մինչև հին Բաբելոն, ելամների աշխարհը, մինչև

աղի լիճը..., ամեն տեղ կտեսնես այդ բիբլիական կավը (ԱԲ, 238)։ Հիմա, նոյեմբերին շրջի՛ր գյուղը՝ ոչ մի կարասի չես հանդիպի (ՎԱ, 29)։ Այս անշաղկապ նախադասություններում հրամայական բնույթի երկրորդական նախադասությունները արտահայտում են պայման և համանիշ են շաղկապով միացող պատմողական բնույթի պայմանի երկրորդական նախադասություններին, որտեղ ստորոգյալը դրսևորված է լինում ըղձական եղանակի բայաձևերով։ Բերված նախադասությունների համանիշները կլինեն հետևյալները. Եթե անցնես դու աջ ու ձախ կողմերում գտնվող գյուղերը, շատ բան կտեսնես։ Եթե գնաս մինչև հին Բաբելոն..., ամեն տեղ կտեսնես այս բիբլիական կավը։ Հիմա, նոյեմբերին, եթե շրջես գյուղը, ոչ մի կարասի չես հանդիպի։ Ինչպես երևում է համեմատությունից, այս համանիշ նախադասությունների տարբերությունը ոճական է։ Առաջինները՝ հրամայական բնույթի նախադասությունները, խոսքը դարձնում են ավելի արտահայտիչ, պատկերավոր, կենդանի և այդ պատճառով հատուկ են հատկապես գեղարվեստական գրականության լեզվին ու բանավոր խոսքին։ Վերջին շրջանում այս կառուցվածքի նախադասություններ հանդիպում են նաև հրապարակախոսության լեզվում. օրինակ՝ Շրջի՛ր բոլոր ընտրական տեղամասերը, խոսի՛ր բոլոր ընտրողների հետ, ամենուր նույն խանդավառությունն է (ԵԵ)։ Սրանց համանիշ պատմողական բնույթի շաղկապավոր նախադասությունները ունեն սովորական շարադրանքի բնույթ և տարածված են ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր լեզվում։

գ) Հրամայական նախադասություններն ունեն մի երկրորդական կիրառություն ևս, որտեղ դարձյալ հանդես են գալիս ընդհանրական նշանակությամբ, ցույց են տալիս սովորաբար կրկնվող գործողություններ, միաժամանակ դրսևորելով խոսողի դժգոհությունը տվյալ գործողությունների կատարման առթիվ։ Այս դեպքում հրամայական բայաձևի հետ հաճախ հանդես են գալիս գնալ կամ գալ բայերի հրամայական բայաձևերը, որոնք այս կիրառությունում կորցրել են իրենց նյութական իմաստը՝ վերածվելով եղանակավորող բառերի։ Օրինակ՝ Պարապմունքները վերջանալուց հետո մինչև բարձրանում էինք լեռան լանջին ծվարած մեր գյուղը,

ձմռան կարճ օրը վերջանում էր։ Դե անասունների համար ջուր բեր, գոմը մաքրիր, *ձեռքերիդ փչելով դեզից* խոտ տեղափոխիր *ու* դիր *ախոռներում (ՎԱ, ԼՀ, 83)։ Մանր երեխանց տեր, աղջկակոխ եղած, հիմի* արի *սրանց շորերը* կարի, կարկատիր, լվա, թափ տուր, հագցրու, տունը սրբիր *(ՂԱ, Երկու քույր)։ Կարծում ես իմ գործը հե՞շտ է։ Ութ ժամ աշխատելուց հետո* գնա *սենյակ* մաքրիր, *աման* լվա, *ճաշ* եփիր. *խիստ հոգնել եմ։*

Այս նախադասությունները համանիշ են ընդհանրական նշանակություն ունեցող հետևյալ պատմողական նախադասություններին՝ ...Անասունների համար ջուր էի բերում, գոմը մաքրում, *ձեռքներիս փչելով դեզից* խոտ տեղափոխում *ու* դնում *ախոռներում։ ...*Պետք էր սրանց շորերը կարել, կարկատել, լվալ, թափ տալ, հագցնել, տունը սրբել։ *Ութ ժամ աշխատելուց հետո սենյակ* եմ մաքրում, աման լվանում, ճաշ եփում. *խիստ հոգնել եմ։ Ինչպես ակնհայտ երևում է, վերջին օրինակներում հուզաարտահայտչականությունը նվազել է, զգալի թուլացել է նաև խոսողի վերաբերմունքի՝ դժգոհության դրսևորումը նկարագրված գործողությունների կատարման նկատմամբ։*

Ծանոթություն.— Գնա և արի *եղանակավորող բառերով ձևավորված հրամայական նախադասությունների՝ գործողության ժխտման, կատարման անհնարինությունը, դժվարությունը շեշտելու իմաստով կիրառության և համապատասխան համանիշների մասին խոսվել է նախորդ ենթագլխում (հմմտ. նաև հետևյալ նախադասությունները.* Դե գնա՛ *ու այդքան հոգնելուց հետո* դաս սովորիր → *Այդքան հոգնելուց հետո* հնարավոր չէ (դժվար է) դաս *սովորել* → *Այդքան հոգնելուց հետո հնարավո՞ր է (կարելի՞ է) դաս սովորել։*

ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՆԻՇ ՁԵՎԵՐԸ

1. ՍՏՈՐՈԳՅԱԼԻ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ՀԱՄԱՆԻՇՆԵՐ

Հայտնի է, որ ստորոգյալը նախադասության կազմավորման հիմնական գործոնն է։ Այդ է պատճառը, որ ստորոգյալի արտահայտության ձևի փոփոխությունը հաճախ առաջացնում է նախադասության կառուցվածքի լրիվ կամ մասնակի փոփոխություն։ Իսկ երբ այդ փոփոխությունից առաջացած տարբեր կառուցվածքի նախադասությունները արտահայտում են միևնույն միտքը, դրսևորում ռեալ իրականության նույն հարաբերությունները, տարբերվելով իրարից իմաստային ու ոճական նրբերանգներով, դրանք հանդես են գալիս որպես շարահյուսական համանիշներ։

ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԵՎ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՀԱՄԱՆԻՇ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ստորոգյալի արտահայտության տարբեր ձևերի հետ են կապված ներգործական և կրավորական կառուցվածքի նախադասությունները, որոնք հանդես են գալիս որպես շարահյուսական համանիշներ։

Այս նախադասությունները գործածվում են այն ժամանակ, երբ հաղորդվում են սուբյեկտի և օբյեկտի հարաբերություններ ցույց տվող գործողություններ, այսինքն՝ այնպիսի իրողություններ, երբ մի որևէ առարկա կամ անձ իր վրա է կրում որևէ գոր-

ծողություն։ Այս երկու տիպի նախադասությունները իմաստային տեսակետից նույնն են, սակայն տարբերվում են խոսողի տարբեր վերաբերմունքով հաղորդված գործողության նկատմամբ։ Երբ խոսողի նպատակն է լինում հաղորդել պարզապես գործողության կատարման մասին՝ մասամբ ընդգծելով գործողություն կատարողը, գործածվում են ներգործական կառուցվածքի նախադասություններ, իսկ երբ հաղորդման նպատակն է լինում ընդգծել գործողությունը իր վրա կրող առարկան, գործողության օբյեկտը և նրա հետ կատարված փոփոխությունը, գործածվում են կրավորական կառուցվածքի նախադասություններ։ Իրենց արտահայտած իմաստով նույնը լինելով՝ այս նախադասությունները ունեն իրար լրիվ հակադիր քերականական կառուցվածք. մի բան, որ պայմանավորված է ստորոգյալի արտահայտության ձևով։ Երբ ստորոգյալը ներգործական սեռի բայ է, նախադասությունը ունենում է ներգործական կառուցվածք, իսկ երբ բայը կրավորական սեռի է, նախադասությունը ունենում է կրավորական կառուցվածք։ Այս երկու տիպի նախադասությունները ունեն հետևյալ կառուցվածքային տարբերությունները.

1. Ներգործական կառուցվածքի դեպքում գործողություն կատարողը՝ սուբյեկտը դրսևորվում է ենթակայի միջոցով, ստորոգյալը, ինչպես ասվեց, լինում է ներգործական սեռի բայ, իսկ գործողությունը իր վրա կրող առարկան՝ գործողության օբյեկտը արտահայտվում է ուղիղ խնդրի միջոցով։ Բերենք օրինակներ։ Կյանքի վերջին շողը լուսավորեց Մարկոս Ալիմյանի հողագույն դեմքը... և մի անցողիկ ուրախություն պարզեց հոնեղ ճակատը (Շ, 4, 13)։ Մի անհուն դառնություն և կսկիծ ավերեց նրա չքնաղ օրը (ԱԲ, 234)։ Շատ հուզեց ինձ ժողովրդի երգչի այս խանդավառ երգը (Իս., 3, 294)։ Վերջին խոսքերը բավական քաջալերեցին Ռուստամին (Ր, 7, 216)։

2. Կրավորական կառուցվածքի դեպքում նախադասության ստորոգյալը լինում է կրավորական սեռի բայ, գործողության օբյեկտը հանդես է գալիս որպես նախադասության ենթակա, իսկ գործողություն կատարողը դրսևորվում է նախադասության խնդրի միջոցով, որը կոչվում է ներգործող խնդիր։ Վերջինս կարող է ար-

տահայտվել քերականական տարբեր միջոցներով։ Դրանք են՝

ա) Գոյականի բացառական հոլովով. օրինակ՝ Նրա նախորդը *յուր հանդգնության համար* սպանվեցավ *Մերուժանի հայր* Շավասպ Արծրունուց *(Ր, 7, 425)։* Նա *շատ* սիրված *ու* գնահատված էր *քաղաքի* արհեստավորներից *(Իս., 3, 377)։* Վասակը սպանված էր *պարսից* Շապուհ թագավորից *(Ր, 7, 50)։ Իբրև մարդ* հարգված էր հասարակությունից *և* յուր արհեստակիցներից *(Շ, 4, 467)։*

բ) Գոյականի գործիական հոլովով։ Երբ այս հոլովով դրսևորվում են իր ցույց տվող սուբյեկտներ, ներգործող խնդիրը ունենում է միջոցի խնդրի իմաստային երանգ։ Օրինակ՝ Քիչ հետո շրջապատվեցի *հասակավոր* որբ-որբուհիներով, կառավարչուհիներով *և* բժշկով *(ԳՄ, ԵՍ, 122)։ Բանվորների* բազմությամբ լցվեց *այս* փողոցը:

գ) Գոյականի սեռական հոլովի և ձեռքով, միջոցով *կապերի օգնությամբ. ըստ որում* ձեռքով *կապը միշտ գործածվում է անձ ցույց տվող գոյականի հետ, իսկ* միջոցով-*ը՝ և՛ անձ ցույց տվող, և՛ իր ցույց տվող գոյականների հետ. օրինակ՝ Իմ որդին* սպանվեց *մեր կառավարության* զինվորների ձեռքով *(Իս., 3, 188)։ Մայրաքաղաքը վերջ ի վերջո* գրավվեցավ *հայոց* քաջերի ձեռքով *(ՄԳՄ, 460)։ Ու* Թամարի ձեռքով վառած *Լույսը հանգցրին մի գիշեր (ՀԹ, 1, 276)։*

Այսպիսով՝ այս տեսակի շարահյուսական համանիշ հանդիսացող շարքերը հետևյալներն են.

Այս սրտագին ընդունելությունը ինձ *շատ* հուզել էր:	Ես *շատ* հուզվել էի *այս* սրտագին ընդունելությունից *(Իս., 3, 214)։*
Սիրտս ճնշում է *մի անծանոթ* ծանրություն *(ՍՁ, ԵԺ, 3, 197)։*	Սիրտս ճնշվում է *մի անծանոթ* ծանրությունից:
Նրան *շատ* էին սիրում *և* գնահատում *քաղաքի* արհեստավորները:	Նա *շատ* սիրված և գնահատված էր *քաղաքի* արհեստավորներից (արհեստավորների կողմից) *(Իս., 3, 377)։*

Մեր կառավարության զինվորները սպանեցին իմ որդուն:	*Իմ* որդին սպանվեց *մեր կառավարության* զինվորների ձեռքով (զինվորների կողմից) *(Իս., 3, 188)։*
Ելան տներից, եկան մյուս փողոցներից, և բանվորների բազմությունը լցրեց այս փողոցը *(ԱԲ, 219)։*	*...Բանվորների* բազմությամբ լցվեց *այս* փողոցը:
...Որոնց դեմքերից կարծես մի չար ձեռք ջնջել էր *բնորոշ* շարժումը, աշխուժությունը *(Շ, 4, 150)։*	*...Որոնց դեմքերից կարծես մի* չար ձեռքով ջնջվել էր *բնորոշ* շարժումը, աշխուժությունը (... Մի չար ձեռքի միջոցով):
Անանց կարոտն է իմ սիրտը տանջում *(ՎՏ, 60)։*	*Անանց* կարոտից իմ սիրտն է տանջվում:

Ինչպես երևում է բերված համանիշ զուգահեռ ձևերից, նախադասության անդամների միջև եղած քերականական հարաբերությունների փոփոխությունը երբեմն առաջ է բերում նաև շարադասության փոփոխություն։

Ներգործական ու կրավորական կառուցվածքի համանիշ նախադասությունների ստորոգյալները իրենց ժամանակներով սովորաբար համընկնում են։ Միայն երբեմն, երբ կրավորական կառուցվածքի նախադասություններում նկարագրվում են բայի սահմանական եղանակի հարակատար և անցյալի հարակատար ժամանակներով արտահայտված դրություն, երևույթ, վիճակ, նրանց համապատասխան ներգործական կառուցվածքի նախադասություններում դրանց փոխարեն գործածվում են տևական գործողություն ցույց տվող այլ ժամանակներ, հատկապես վաղակատար, անցյալի վաղակատար, մասամբ նաև անցյալի անկատար ժամանակները. մի բան, որ պայմանավորված է ժամանակակից

հայերենում ներգործական սեռի բայերի՝ հարակատար և անցյալի հարակատար ժամանակներ չունենալով։ Այսպես՝ Նա շատ սիրված ու գնահատված էր քաղաքի արհեստավորներից (Իս., 3, 377) → *Նրան շատ էին սիրում ու գնահատում քաղաքի արհեստավորները։ Վասակը սպանված էր պարսից Շապուհ թագավորից (Ր, 7, 50)*→ *Վասակին սպանել էր պարսից Շապուհ թագավորը։*

Չգացական, ինչպես նաև իմացական բայ-ստորոգյալ ունեցող ներգործական կառուցվածքի որոշ նախադասությունների համանիշ են լինում ոչ թե համապատասխան կրավորական սեռի բայով կազմավորված կրավորական կառուցվածքի նախադասություններ, այլ տվյալ բայարմատից —ելի կամ —ալի ածանցով կերտված ածականի և էական կամ լինել բայի հարադրությամբ առաջացած բաղադրյալ ստորոգյալ ունեցող պասիվ կառուցվածքի նախադասություններ։ Այս դեպքում գործողության՝ անձ ցույց տվող սուբյեկտը դրսևորվում է տրական հոլովով դրված ներգործող խնդրով, իսկ օբյեկտը՝ դարձյալ ենթակայով։ Ներգործող խնդիրը երբեմն արտահայտվում է նաև համար կամ կողմից կապերով։ Ահա այդ համանիշների զուգահեռ օրինակներ։

Այդ հասկանում են բոլորը:	*Այդ* հասկանալի է բոլորին (բոլորի համար):
Այդ տեսակետը կընդունեն շատերը:	*Այդ տեսակետը* ընդունելի կլինի շատերի համար (շատերի կողմից):
Նա սիրում է *ազնիվ մարդկանց։*	*Ազնիվ մարդիկ* սիրելի են նրան (նրա համար):
Հիմա ես հասկանում եմ, *թե...*	*Հիմա* ինձ համար հասկանալի է, *թե ինչու էր ստեպ-ստեպ կանգ առնում և ետ նայում... (ՎԱ, ԼՀ)։*
Ես ցանկանում եմ *տեսնել այդ բոլորը։*	Ցանկալի է ինձ *տեսնել* այդ բոլորը: Ինձ համար ցանկալի է...

Բոլոր մարդկանց էլ ատում էր նա:	Զավակը կորցնելուց հետո բոլոր մարդիկ էլ ատելի էին նրան (ՎԱ, ԼՀ, 256):

* * *

Իրենց կառուցվածքով ներգործական և կրավորական համանիշ նախադասություններին նման են չեզոք սեռի ու նրան համապատասխան պատճառական սեռի բայ-ստորոգյալ ունեցող, ինչպես նաև ներգործական սեռի ու դարձյալ նրան համապատասխան պատճառական սեռի բայ-ստորոգյալ ունեցող նախադասությունները, որոնք ևս հանդես են գալիս որպես շարահյուսական համանիշներ: Այս նախադասությունները ունեն իմաստային այն առանձնահատկությունը, որ մատնանշում են գործողության կատարման պատճառ հանդիսացող երևույթը, առարկան կամ այն միջոցը, որով կատարվում է գործողությունը: Բերենք այս համանիշ շարքերը և ցույց տանք նրանց կառուցվածքային առանձնահատկությունները:

1. Չեզոք սեռի բայով և համապատասխան պատճառական սեռի բայով արտահայտված ստորոգյալ ունեցող համանիշ նախադասություններ—Ակտիվ և պասիվ կառուցվածք ունեցող համանիշ նախադասություններից տարածված են հատկապես նրանք, որոնք ունեն չեզոք սեռի բայով և համապատասխան պատճառական սեռի բայով արտահայտված ստորոգյալներ: Սրանք ունեն հետևյալ կառուցվածքային տարբերությունները.

ա) Պասիվ կառուցվածքի դեպքում նախադասության ստորոգյալը չեզոք սեռի բայ է, նախադասությունն ունենում է նաև միջոցի խնդիր (երբեմն՝ պատճառի զգալի երանգով), որով ցույց է տրվում ենթակայի գործողության կատարման կամ որևէ երևույթի երևան գալու պատճառը կամ միջոցը հանդիսացող առարկան. օրինակ՝ Բայց հարստությունից չգոռոզացավ Սայիդը (ՀԹ, 2, 415): Հագեցել է օդը փշատենիների բույրով (ԳՄ, ԵՍ, 100): Անտառը դրմբում է նրա ձայնից (ՍՁ, ԵԺ, 161):

բ) Ակտիվ կառուցվածքի դեպքում նախադասության ստորոգ-

յալը տվյալ չեզոք բայից կազմված պատճառական սեռի բայ է։ Գործողության կատարման միջոցը կամ սկզբնապատճառը հանդես են գալիս որպես ենթակա, իսկ այն առարկան, որի հետ կատարվում է գործողությունը և որը առաջին դեպքում հանդիսանում էր նախադասության ենթական, այստեղ դրսևորվում է ուղիղ խնդրի միջոցով. օրինակ՝ ...Մինչև առավոտ գուսանների հերոսական տաղերգը *և պարողների* տրոփյունը թնդացնում էին *ընդարձակ* սրահները *(Ր, 7, 405)։ Ահա հենց այդ* բանն էր ինձ վախեցնում *(Շ, 1, 369)։* Անշարժությունը, հաղորդակցության դժվարությունը... *ավելի ևս* զարգացնում էին *նրանց մեջ տեղական հատկանիշ* առանձնահատկությունները *(Ր, 7, 173)։*

Ուրեմն՝ այս տիպի համանիշ նախադասությունների շարքը կունենա հետևյալ պատկերը.

Ահա հենց այդ բանն էր ինձ վախեցնում *(Շ., 4, 369).*	*Ահա հենց այդ* բանից էի ես վախենում:
Փշատենիների բույրը հագեցրել է օդը:	Հագեցել է օդը *փշատենիների* բույրով *(ԳՄ, ԵՍ, 100)։*
Նրա ձայնը դրմբացնում է անտառը:	Անտառը դրմբում է նրա ձայնից *(ՍՋ, ԵԺ, 161)։*
Բայց հարստությունը չգոռոզացրեց Սայիդին:	*Բայց* հարստությունից չգոռոզացավ Սայիդը *(ՀԹ, 2, 415)։*
Մինչև առավոտ գուսանների հերոսական տաղերգը և պարողների տրոփյունը թնդացնում էին ընդարձակ սրահները *(Ր, 7, 405)։*	*Մինչև առավոտ գուսանների հերոսական* տաղերգից և պարողների տրոփյունից թնդում էին *ընդարձակ* սրահները:

Ծանոթություն.— Երբեմն չեզոք սեռի բային համապատասխանում է ոչ թե պատճառական սեռի բայ, այլ նրան զուգահեռ ներգործական սեռի բայ,

օրինակ՝ ընկնել—գցել: *Այսպես՝ Տիգրանի* այս խոսքերն ինձ *լուրջ մտածմունքների* մեջ են գցում *(ՍՋ, ԵԺ, 3 289)* → *Տիգրանի* այս խոսքերից ես *լուրջ մտածմունքների մեջ* եմ ընկնում:

Շարահյուսական համանիշ են նաև «Գրեթե ամեն երեկո արժանանում էի *հայրիկի տեսակցությանը» և «Գրեթե ամեն երեկո* հայրիկն արժանացնում էր ինձ *իր տեսակցությանը» (Իս., 3, 373) զուգահեռ ձևերը, որոնց առանձնահատկությունը նախորդներից այն է, որ երկրորդ նախադասության ենթական առաջին նախադասության հանգման խնդրի հատկացուցիչն է (հայրիկը—հայրիկի):*

2. Ավելի սակավ են հանդիպում ներգործական սեռի ու նրան զուգահեռ պատճառական սեռի բայերով կազմված համանիշ նախադասություններ: Սրանք ունեն հետևյալ առանձնահատկությունները.

ա) Նախադասության ստորոգյալը արտահայտված է լինում ներգործական սեռի բայով, բնականաբար առկա է լինում նաև ուղիղ խնդիր: Նախադասությունը ունենում է նաև բացառական հոլովով արտահայտված պատճառի պարագա, որով դրսևորվում է գործողության կատարման համար պատճառ հանդիսացող երևույթը. այսպես՝ Անակնկալ հանդիպումից ես մոռանում եմ *ամեն ինչ:*

բ) Այս նույն իմաստային հարաբերությունն արտահայտելու համար կարող է գործածվել տվյալ ներգործական սեռի բային համապատասխան պատճառական սեռի բայ: Պատճառ հանդիսացող երևույթը քերականորեն դրսևորվում է որպես նախադասության ենթակա, իսկ գործողության սուբյեկտը և օբյեկտը արտահայտվում են խնդիրների միջոցով (ուղիղ խնդիր և միջնորդական խնդիր). օրինակ՝ Անակնկալ հանդիպումը ինձ մոռացնել է տալիս ամեն ինչ *(ՍՋ, ԵԺ, 3, 294):*

Այսպիսով՝ այս զուգահեռ համանիշ ձևերն են՝ Անակնկալ հանդիպումից ես *մոռանում եմ ամեն ինչ* → *Անակնկալ* հանդիպումն ինձ մոռացնել է տալիս *ամեն ինչ:*

Ինչպես երևում է բերված օրինակներից, երկու դեպքում էլ գործողության օբյեկտը արտահայտվում է նախադասության ուղիղ

խնդրի միջոցով, իսկ գործողության սուբյեկտը՝ կատարողը մի դեպքում (առաջին դեպքում) հանդիսանում է ենթակա, մյուս դեպքում՝ միջնորդական խնդիր[1]։

ՍՏՈՐՈԳՅԱԼԻ ՄԻՋՈՑՈՎ ԴՐՍԵՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՆԱԿԻ ՀԱՄԱՆԻՇ ՁԵՎԵՐԸ

Ստորոգյալի արտահայտության ձևաբանական-շարահյուսական հատկանիշների դրսևորման հետ է անմիջականորեն կապված նախադասության մեկ կարևոր հատկանիշը, այն է՝ ժամանակի կարգը։ Յուրաքանչյուր նախադասություն ունի երկու կարևոր կողմ՝ 1) եղանակավորումը (модальность), այսինքն՝ խոսողի վերաբերմունքի դրսևորումը հաղորդվածի նկատմամբ, որով որոշվում է նախադասությունների բնույթը և 2) ժամանակը, կարելի է ասել շարահյուսական ժամանակը։ Յուրաքանչյուր նախադասությամբ հաղորդվում է որևէ միտք՝ կապված որոշակի ժամանակի հետ։ Հատկանիշը վերագրվում է առարկային, ստորոգումը իրականանում է միմիայն ժամանակի հետ կապված։ Այդ է պատճառը, որ նախադասության կազմավորման հիմնական գործոններից մեկը ժամանակի կարգն է։ Այսպես՝ երբ ասում ենք Նա գնաց տուն, գործողության վերագրումը կատարողին որոշ տարածային հարաբերության մեջ կատարվում է անցյալ ժամանակամիջոցի հարաբերակցությամբ, հաղորդվող միտքը վերագրվում է անցյալին։ Նա գնում է տուն նախադասությունը ունի շարահյուսական նույն կառուցվածքը, ինչ նախորդ նախադասությունը՝ ենթակա+ստորոգյալ+տեղի պարագա, սակայն այս նախադասությամբ արտահայտված իրողությունը վերագրվում է ոչ թե անցյալին, այլ ներկային։ Նախադասության ժամանակային այս ձևավորումը կա-

---

[1] Ներգործական ու կրավորական համանիշ նախադասությունների մասին տե՛ս նաև «Միակազմ և երկկազմ նախադասություններ» գլուխը։

տարվում է հիմնականում բայի ժամանակային ձևերի միջոցով[1], որոնց ժամանակային իմաստը, սակայն, կոնկրետանում, որոշակի է դառնում միայն նախադասության մեջ, հաճախ ժամանակ ցույց տվող այլ բառերի օգնությամբ։ Դրա լավագույն ապացույցն այն է, որ շատ հաճախ բայով արտահայտված միևնույն քերականական ժամանակային ձևը տարբեր նախադասությունների մեջ, տարբեր բառային միջավայրում դրսևորում է իրական տարբեր ժամանակներ։ Օրինակ՝ ներկա ժամանակի քերականական ձևը (գնում եմ) գործածվում է հիմնականում իրողությունը, գործողությունը ներկա ժամանակամիջոցին, խոսելու պահին վերագրելու համար։ Սակայն շատ հաճախ այն գործածվում է անցյալ ժամանակամիջոցում կատարված դեպքեր, իրադրություններ, երևույթներ նկարագրելու համար (օրինակ՝ «Լինում է, չի լինում, մի թագավոր է լինում, Այդ թագավորը ունենում է մի աղջիկ։ Մի օր թագավորը գնում է որսի...») և կամ խոսելու պահին հաջորդող ապառնի ժամանակամիջոցում կատարվող գործողություն նկարագրելու համար («Վաղը նրանք գնում են Մոսկվա»)։ Սա բայերի քերականական ժամանակային ձևերի բազմիմաստության երևույթի դրսևորումն է, մի երևույթ, որ կապված է գործողությունների, իրողությունների միջև եղած ժամանակային հարաբերությունները ավելի ճշգրտությամբ արտահայտելու պահանջի հետ։

Յուրաքանչյուր բայական քերականական ժամանակ ունի գլխավոր կիրառություն և երկրորդական կիրառություն[2]։ Գլխավոր կիրառությունը տվյալ ժամանակաձևի հիմնական իմաստն է, որը ընկալվում, հասկացվում է կոնտեքստից, նախադասությունից դուրս ևս և այդ պատճառով ձևաբանական մակարդակի երևույթ է։ Սակայն երկրորդական կիրառությունները անմիջակա-

[1] Բացառություն են կազմում բայական ու անվանական անդեմ նախադասությունները, որոնց որևէ կոնկրետ ժամանակահատվածի վերաբերելը հայտնի է դառնում միայն կոնտեքստից։

[2] Ժամանակակից հայերենի բայերի ժամանակային ձևերի իմաստային առանձնահատկությունների մասին տե՛ս Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն 1965, Հ. Բարսեղյան, Արդի հայերենի բայի և խոնարհման տեսություն, 1953, Պ. Պողոսյան, Բայի եղանակային ձևերի ոճական կիրառությունները արդի հայերենում, 1959։

նորեն կապված են նախադասության, կոնտեքստի հետ, երևան են գալիս միայն բառական, խոսքային որոշակի միջավայրում, հարաբերության մեջ մտնելով համապատասխան բառերի հետ։ Այդ պատճառով բայերի ժամանակաձևերի երկրորդական կիրառությունները կարելի է բացահայտել և ուսումնասիրել միայն շարահյուսական մակարդակում։ Այսպես՝ եթե գնում եմ ձևը կոնտեքստից դուրս, անկախ վերցրած ընկալվում է որպես ներկա ժամանակի ձև, այսինքն՝ այս բայաձևի հիմնական ժամանակային իմաստը խոսելու պահին, ներկա ժամանակամիջոցում կատարված գործողություն մատնանշելն է, ապա նրա՝ ապառնի ժամանակի իմաստով կիրառությունը կարելի է բացահայտել միայն կոնտեքստի մեջ, այլ բառերի հարաբերակցությամբ՝ «Վաղը ես գնում եմ»։ Այստեղ գնում եմ բայաձևին ապառնի իմաստ թելադրել է միմիայն տվյալ նախադասությունը, վաղը ժամանակ ցույց տվող մակբայի հետ ունեցած նրա հարաբերությունը։

Հաճախ բայի տարբեր ժամանակաձևեր իրենց կիրառություններով համընկնում են, այսինքն՝ տարբեր ժամանակաձևեր գործածվում են միևնույն ժամանակային հարաբերությունն արտահայտելու համար. ըստ որում կարող են համընկնել մի ժամանակաձևի գրչախավոր կիրառությունը մյուսի երկրորդական կիրառության հետ, կամ երկու ժամանակաձևերի երկրորդական կիրառությունները։ Այսպիսով ստեղծվում են համանիշ ձևեր միևնույն ժամանակային հարաբերությունն արտահայտելու համար։ Բերենք օրինակ՝ «Եթե գնացի, կասեմ» և «Եթե գնամ, կասեմ» նախադասություններում առկա են միևնույն ժամանակային հարաբերությունները—ցույց են տալիս ապառնի ժամանակամիջոցում կատարվելիք և պայմանային հարաբերությամբ կապված գործողություններ։ Սակայն ժամանակային այդ նույն իմաստը դրսևորված է տարբեր քերականական ձևերով՝ մի դեպքում գործածված է գնամ ապառնի ժամանակաձևը, մյուս դեպքում՝ գնացի անցյալ ժամանակաձևը։ Այս ձևերը խոսքից դուրս, իրենց հիմնական իմաստով հակադրվում են իրար և համանիշ համարվել չեն կարող, սակայն տվյալ կիրառությունում, տվյալ խոսքային միջավայրում նրանք հանդես են եկել որպես համանիշներ։ Այստեղ համանիշ են ո՛չ թե առանձին բայա-

ձևերը, այլ ամբողջ նախադասությունները, այսինքն՝ այստեղ գործ ունենք ո՛չ թե ձևաբանական համանիշների, այլ շարահյուսական համանիշների հետ (այս մասին տե՛ս նաև աշխատության ներածությունը)։

Այժմ տեսնենք, թե տարբեր ժամանակներ դրսևորելու համար ժամանակակից հայերենում ինչպիսի համանիշ ձևեր են գործածվում։

Ներկա ժամանակի դրսևորումը համանիշ ձևերի օգնությամբ

Խոսելու պահին կատարվող գործողություններ, իրողություններ, դեպքեր, երևույթներ նկարագրելու համար նախադասության մեջ գործածվում են բայի սահմանական եղանակի ներկա ժամանակի ձևերը։

Վերջիններս հանդես են գալիս կա՛մ որպես պարզ ստորոգյալ և կամ կազմում են բաղադրյալ ստորոգյալի մասը՝ կատարում են ստորոգելիական հանգույցի դեր՝ ներկա ժամանակահատվածում ենթակային վերագրելով որևէ հատկանիշ։ Բերենք մի քանի օրինակ։ Քնքուշ երգերից հյուսում եմ մանյակ, Որ պճնեմ սիրով պատկերդ տրտում (ՎՏ, 74)։ Լռին խոկում են երկինք, գետ ու արտ... (Ն. տ., 3)։ Եվ ես դժվար եմ հիմա հավատում, որ այսքան մոտ են աստղերն այս սուտակ (ՀՍ, 24)։

Բայի ներկա ժամանակաձևերի գործածության դեպքում խոսողը միաժամանակ դրսևորում է իր օբյեկտիվ վերաբերմունքը հաղորդածի նկատմամբ՝ վերջինս դիտելով որպես խոսելու պահին ստույգ կատարվող, երևան եկող, ընթացքի մեջ գտնվող։

Խոսելու պահին ստույգ, հաստատապես կատարվող գործողություններ նկարագրելու համար ժամանակակից հայերենում բայի ներկա ժամանակաձևերին համանիշ այլ քերականական ձևեր չկան։ Սակայն, երբ նախադասություններում նկարագրվում են ներկայում երևան եկող երևույթներ, վեր են հանվում խոսելու պահին առկա հատկանիշներ և այլն, կարող են գործածվել տարբեր կառուցվածքի բաղադրյալ ստորոգյալներ, որոնք հանդես են գալիս որպես համանիշներ և ունեն կիրառական ու ոճական որո-

շակի տարբերություններ։ Այսպես՝ երբ նախադասության մեջ հաստատվում է որևէ իրողության, երևույթի առկայությունը ներկա ժամանակահատվածում, նախադասության ստորոգյալը սովորաբար լինում է բաղադրյալ, որի ստորոգելիական վերադիրը լինում է այդ իրողությունը, երևույթը ցույց տվող բառը, իսկ հանգույցը՝ էական բայը. օրինակ՝ Դա մի գեղեցիկ ամրոց է։ Դրանք հիանալի կեր են ձկների համար։

Սակայն գրքային լեզվում հաճախ այդ իմաստն արտահայտելու համար որպես ստորոգելիական հանգույց գործածում են իրենից ներկայացնում է կապակցությունը, ըստ որում վերադիրը լինում է դարձյալ նույն երևույթը, առարկան ցույց տվող բառը. օրինակ՝ «Վերջինս իրենից ներկայացնում է ուրարտական շրջանի ժայռափոր «սրբազան դուռ» (ՍԱ, № 1, 1962 թ.)։ Օպերայի երաժշտությունը իրենից ներկայացնում է... մի կուռ համաձուլված (ԵԵ)։ Այս ոճը հայերենի մեջ մուտք է գործել ռուսերենի ազդեցությամբ, գրքային է և ոչ հանձնարարելի։ Հայերենում ավելի գործածական և հանձնարարելի են դրան համանիշ «Վերջինս ուրարտական շրջանի ժայռափոր «սրբազան դուռ է», «Մի կուռ համաձուլված է» տիպի կառուցվածք ունեցող նախադասությունները։

Գրավոր խոսքում, հատկապես գիտական գրականության լեզվում, հաճախ որպես ստորոգելիական հանգույց գործածվում է հանդիսանում է բայը. օրինակ՝ «Բառի իմաստի փոփոխությունը և այդ նույն բառի խոսքի մասային պատկանելության փոփոխությունը... հանդիսանում են միևնույն երևույթի տարբեր կողմերը» (Ս. Աբրահամյան), «Այստեղ սեղանը բառը հանդիսանում է նախադասության ենթական»։ Բաղադրյալ ստորոգյալի այն ձևը գործածվում է երբեմն միօրինակությունից խուսափելու, նաև խոսքին որոշ հանդիսավորություն տալու համար։ Այս դեպքում ևս ավելի տարածված և հայերենին հարազատ ձևը է հանգույցով բաղադրյալ ստորոգյալի ձևն է. ինչպես՝ «Սեղանը բառը նախադասության ենթական է»։

Որևէ իրողություն, փաստ, երևույթ հաստատելու համար երբեմն կարող են գործածվել պարզ ստորոգյալով և բաղադրյալ

ստորոգյալով կազմված իրար համանիշ նախադասություններ։ Օրինակ՝ երբ խոսողը արձանագրում, հաստատում է առարկաների միջև եղած պատկանելության հարաբերությունները, նախադասությունը կարող է ունենալ հետևյալ համանիշ կառուցվածքները. 1) Ենթական այն առարկան է, որը պատկանելության հարաբերությամբ կապված է մեկ այլ առարկայի հետ, ստորոգյալը պարզ է և դրսևորված է պատկանել բայի ներկա ժամանակի բայաձևերով, նախադասությունը ունի հանգման խնդիր։ Վերջինս ցույց է տալիս այն առարկան, որին պատկանում է ենթակայով դրսևորված առարկան. օրինակ՝ Գիրքը պատկանում է Աշոտին: 2) Նախադասությունը ունենում է անվանական կառուցվածք, այսինքն՝ ստորոգյալը լինում է բաղադրյալ, որի ստորոգելիական վերադիրը փոխանուն սեռական է և ցույց է տալիս այն առարկան, որին պատկանում է ենթակայով դրսևորված իրը, առարկան։ Այսպես՝ Գիրքը Աշոտինն է: Բերենք այլ օրինակ՝ Վերջին խոսքը պատկանում է նրանց → Վերջին խոսքը նրանցն է:

Այս համանիշ նախադասությունները ունեն հետևյալ կառուցվածքը՝ ենթակա+պարզ ստորոգյալ+հանգման խնդիր → ենթակա+բաղադրյալ ստորոգյալ: Սրանք բացի կառուցվածքային տարբերությունից ունեն նաև ոճական և կիրառական տարբերություններ։ Պարզ ստորոգյալով նախադասությունը գրքային է՝ խոսակցական լեզվում քիչ գործածական, իսկ անվանական ստորոգյալով նախադասությունները ավելի սովորական են և հավասարապես գործածվում են գրավոր ու բանավոր խոսքում։ Առաջին կառուցվածքի նախադասությունները գործածվում են պատկանելության հարաբերությունները ավելի ընդգծելու համար։

Երբ վերը նկարագրված հարաբերությունները վերագրվում են անցյալին, ապա դարձյալ կարող են գործածվել համանիշ նախադասություններ, միայն այն տարբերությամբ, որ վերոհիշյալ բայերը դրվում են սահմանական եղանակի անցյալի անկատար ժամանակով։ Անցյալ ժամանակով է դրվում նաև բաղադրյալ ստորոգյալի ստորոգելիական հանգույցը։ Օրինակներ.

Այդ ձորերը, այդ հովիտները, այդ դաշտերը ներկայացնում էին մի-մի գավառ, *որ բաժանված էին բնական սահմաններով (Ր, 7, 169)։*	*Այդ ձորերը, այդ հովիտները, այդ դաշտերը* մի-մի գավառ էին...
Սենյակը, որտեղ նստած էր նա, ներկայացնում էր նրա ընդունարանը *(Ր, 7, 25)։*	*Սենյակը, որտեղ նստած էր նա,* նրա ընդունարանն էր:
Զայնը պատկանում էր *գլխիս մոտ արձանացած* պատկերին *(Շ, 4, 280)։*	*Զայնը գլխիս մոտ արձանացած* պատկերինն էր:
Իսկ այս երկու բոցաշտարակների մեջտեղը ներկայացնում էր *կատարյալ իրական* դժոխք *(Շ, 4, 11)։*	*Իսկ այս երկու բոցաշտարակների մեջտեղը կատարյալ իրական* դժոխք էր:

Ինչպես երևում է զուգահեռ շարքերի համեմատությունից, ժամանակակից հայերենի համար ավելի հարազատ և հանձնարարելի են երկրորդ շարքի կառուցվածքն ունեցող նախադասությունները։

Երբեմն բաղադրյալ ստորոգյալների է ստորոգելիական հանգույցին համանիշ գործածվում են կազմել *և* կայանալ *բայերը, որոնք ևս հնացած, գրքային բնույթ ունեն և այժմ սակավ են գործածվում. օրինակ՝ Աղա Գուլամյանցների վաճառականության գլխավոր տարրը* կազմում էր գինու առևտուրը *(Շ, 4, 39)։* → *Աղա Գուլամյանցների վաճառականության գլխավոր տարրը գինու* առևտուրն էր: Ինչո՞ւմն էր կայանում *նրա հմայքը (ԳՄ, ԵՍ, 347)* → ինչո՞ւմն էր (որն էր) *նրա հմայքը։ Այդ գրության մեջ նմանվում է նա մի բանտարկված հրեշտակի, որի հանցանքը հենց յուր* անմեղության մեջն էր կայանում *(Ր, 7, 290)* →

որի հանցանքը հենց յուր անմեղության մեջն էր (անմեղություն էր):

Ներկա ժամանակահատվածում կատարվող իրողություններ, վիճակներ նկարագրելիս խոսողը երբեմն բայի ներկա ժամանակաձևերի փոխարեն գործածում է ենթադրական եղանակի անցյալի ձևերը։ Վերջիններս հանդիպում են առավելապես երկխոսությունների ժամանակ, հատկապես խոսողի ցանկությունը, իղձը մեղմ ձևով դրսևորելու համար։ Այս կիրառություններում ենթադրական եղանակի անցյալ ժամանակաձևերը հանդես են գալիս որպես սահմանական եղանակի ներկա ժամանակի համանիշներ. օրինակ՝ Ես կցանկանայի, *որ դուք իմանայիք իմ տխուր կյանքի պատմությունը։ Խոսքեր չեմ գտնում գրելու (ՐԷՍԳ, 403)։* → Ես ցանկանում *եմ, որ դուք իմանաք իմ* տխուր կյանքի պատմությունը: Կխնդրեի, *որ անպայման գաս (ՍՁ, 3, 51)* → Խնդրում *եմ, որ անպայման գաս։ Առաջին հերթին* կխնդրեիք *պատմել Միսաք Մանուշյանի մասին («Հայրենիքի ձայն»)* → *Առաջին հերթին* խնդրում ենք *պատմել Միսաք Մանուշյանի մասին։ Շատ* կուզենայիր *գնալ, բայց տոմս հնարավոր չէ ձեռք բերել* → *Շատ* ես ուզում *գնալ, բայց տոմս հնարավոր չէ ձեռք բերել:*

Այս համանիշ ձևերը ևս ունեն ոճական ու իմաստային նուրբ տարբերություն։ Ներկա ժամանակի բայաձևերով պարզապես դրսևորվում է խոսողի՝ ներկա ժամանակահատվածում ունեցած իղձը, ցանկությունը, իսկ ենթադրական եղանակի անցյալ ժամանակի բայաձևերի գործածության դեպքում խոսողը դրսևորում է նաև իր սուբյեկտիվ վերաբերմունքը այդ ցանկության, իղձի վերաբերյալ՝ դրանց իրագործումը դիտելով որպես ոչ այնքան հնարավոր («Շատ կուզենայիր գնալ»), և կամ դրանք գործածվում են որպես քաղաքավարական ձևեր՝ խոսակցին այդ ցանկությունը, իղձը հաղորդելիս («Կխնդրեիք առաջին հերթին պատմել», «Կցանկանայիք *լսել Ձեր կարծիքը» և այլն)։*

Երբեմն խոսողը ոչ թե պարզապես հաղորդում է խոսելու պահին՝ ներկա ժամանակահատվածում կատարվող գործողություններ, իրողությունների մասին, այլ դրսևորում է իր կարծիքը, ենթադրությունը խոսելու պահին մեկ այլ վայրում կատարվող,

ընթացքի մեջ եղող գործողությունների, երևան եկող երևույթների մասին և այլն։ Այս իմաստը արտահայտող նախադասությունները կարող են ունենալ հետևյալ համանիշ կառուցվածքները.

1) Նախադասությունն ունենում է ներկա ժամանակի բայաձև (կամ որպես պարզ ստորոգյալ, կամ որպես բաղադրյալ ստորոգյալի ստորոգելիական հագույց), որի կողքին գործածվում է ենթադրություն, հավանականություն ցույց տվող եղանակավորող բառ՝ հավանաբար, ըստ երևույթին, երևի և այլն. օրինակ՝ Նա հիմա հավանաբար նստած գրում է: Աշոտը ևս հավանաբար հիմա մտածում է այդ մասին։ Ըստ երևույթին նա արդեն տանն է: Նա ևս երևի շատ ուրախ է այդ առթիվ։

2) Նախադասության ստորոգյալը դրսևորված է լինում բայի ենթադրական եղանակի ապառնի ժամանակով, որի մոտ արդեն եղանակավորող բառի առկայությունը պարտադիր չէ։ Օրինակ՝ Ով աշնանը եղել է Դիլիջանի անտառներում, նա կիմանա, թե ինչպիսի հմայքներով է մարդուս գայթակղեցնում ու իր ծոցը քաշում այդ երկրի բնությունը (ՎԱ, ԼՀ, 238)։ —Արդեն տանը կլինի,— կարծես չլսելով շտապեց ասել Սուսաննան որդու մասին (ՎԽ)։ Բոլորն էլ տաք հագուստի կարիք կունենան (ՍՋ, ԵԺ)։

Երբ նախադասության ստորոգյալը բաղադրյալ է, ենթադրություն ցույց տալու համար է հանգույցի փոխարեն հաճախ գործածվում է լինել բայի ենթադրական եղանակի ապառնի ժամանակը. օրինակ՝ Նա քսան տարեկան կլինի: Նա հիմա աշխատանքի վայրում կլինի: Ներկա ժամանակամիջոցում ենթադրվող դրություն, վիճակ ցույց տալու համար կարող են գործածվել նաև ենթադրական եղանակի երկրորդական բաղադրյալ ապառնիի հարակատար ժամանակաձևերը. օրինակ՝ Նա հիմա քնած կլինի: Նա դեռևս հուզված կլինի:

3) Նախադասության ստորոգյալը դրված է լինում ենթադրական եղանակի երկրորդական բաղադրյալ ապառնիի անկատար ժամանակով, որի մոտ գործածվում են եղանակավորող բառեր, ինչպես նաև ներկա ժամանակամիջոց նշող պարագաներ (այժմ, հիմա և այլն)։ Օրինակ՝ Նա հիմա գրելիս կլինի: Հավանաբար արդեն աշխատելիս կլինի: Նա հիմա հանգստանալիս կլինի: Եղա-

նակավորող բառերի առկայությունը այս դեպքում ևս պարտադիր չէ, որովհետև բայաձևը ինքնին այդ իմաստը դրսևորում է։

4) Ստորոգյալը դրվում է բայի հարկադրական եղանակի երկրորդական բաղադրյալ ապառնիի անկատար ժամանակով։ Այս դեպքում ընդգծվում է խոսողի համոզմունքը, ենթադրությունը խոսելու պահին տվյալ գործողության կատարման վերաբերյալ։ Հարկադրական եղանակով կարող է դրվել նաև որպես բաղադրյալ ստորոգյալի հանգույց հանդես եկող լինել բայը, որով ընդգծվում է խոսողի ենթադրությունը, համոզմունքը տվյալ երևույթի՝ խոսելու պահին անհրաժեշտաբար առկա լինելու վերաբերյալ. օրինակ՝ Նա հիմա տանը պիտի լինի: *Աշխենը հիմա* աշխատելիս պիտի լինի: *Կարծում եմ, որ նա հիմա* fնած պիտի լինի: *Այս դեպքում եղանակավորող բառեր սովորաբար չեն գործածվում, որովհետև հենց հարկադրական եղանակի բայաձևերի օգնությամբ ընդգծվում է խոսողի համոզմունքը տվյալ գործողության, երևույթի՝ ներկա ժամանակահատվածում երևան գալու, կատարվելու վերաբերյալ։ Երբեմն* պիտի *կամ* պետք *է եղանակիչների փոխարեն գործածվում է* պետք է, որ *եղանակավորող կապակցությունը, որով ավելի է ընդգծվում խոսողի համոզմունքը գործողության կատարման վերաբերյալ. ինչպես՝ Նա* պետք է, որ հիմա աշխատելիս լինի:

Պատկերը ավելի պարզ դարձնելու համար տանք այս համանիշներից երեք շարք. Նա հիմա հավանաբար գրում է → *Նա* հիմա (հավանաբար) գրելիս կլինի → *Նա* հիմա (հավանաբար) գրելիս պիտի լինի → *Նա* հիմա պետք է, որ գրելիս լինի: *Նա* երևի fնած է → *Նա* հիմա fնած կլինի → *Նա* հիմա fնած պիտի լինի → *Նա* հիմա պետք է, որ fնած լինի: *Նա* հիմա երևի տանն է → *Նա* հիմա տանը կլինի → *Նա* հիմա տանը պիտի լինի → *Նա* հիմա պետք է, որ տանը լինի:

Այս համանիշ նախադասությունների սխեման կլինի հետևյալը.

Ենթակա+եղանակավորող բառ+ժամանակի պարագա+բայի ներկա ժամանակով դրված ստորոգյալ → Ենթակա+(եղան. բառ)+ժամանակի պարագա+բայի ենթադրական եղանակի բաղադրյալ ժամանակով դրված ստորոգյալ → Ենթակա+(եղ. բ.)+

ժամանակի պարագա+բայի հարկադրական եղանակի բաղադրյալ ժամանակով դրված ստորոգյալ։

Ենթակա+եղ. բ.+ժամանակի պարագա+ներկա ժամանակով դրված հանգույց ունեցող բաղադրյալ ստորոգյալ → Ենթակա+(եղ. բ.)+ժամանակի պարագա+ենթադրական եղանակով դրված հանգույց ունեցող բաղադրյալ ստորոգյալ → Ենթակա+ժամանակի պարագա+հարկադրական եղանակով դրված հանգույց ունեցող կամ պետք է ոr կապակցությամբ բաղադրյալ ստորոգյալ։

Տեղ քիչ զբաղեցնելու, ինչպես նաև պատկերը ավելի պարզ դարձնելու համար սխեմայում նախադասության անդամները կարելի է նշանակել մեծատառ սկզբնատառերով՝ տարբեր քերականական կառուցվածք ունեցող անդամների կողքին մանր տառերով նշելով նրանց տարբերությունները. այսպես՝

Ե+եղ.բ.+ԺՊ+Ս$_{պ.}$ բ. ներկ. ժամ. → Ե+(եղ. բ)+ԺՊ+Ս$_{պ.}$ ենթ. եղ. բաղ. ժամ. → Ե+(եղ. բ.)+ԺՊ+Ս$_{պ.}$ հարկ. եղ. բաղ. ժամ.

Ե+եղ. բ.+ԺՊ+Ս$_{բաղ.}$ նահ → Ե+(եղ. բ.)+ԺՊ+Ս$_{բաղ.}$ եեհ → Ե+(եղ. բ.)+ԺՊ+Ս$_{բաղ.}$ հեհ

Սխեմայում նահ՝ նշանակում է ներկա ժամանակով դրված ստորոգելիական հանգույց, եեհ՝ ենթադրական եղանակով դրված ստորոգելիական հանգույց, հեհ՝ հարկադրական եղանակով դրված հանգույց։

Հայտնի է, որ ներկա ժամանակահատվածում առկա դրություն, վիճակ են ցույց տալիս նաև հարակատար դերբայով և էական բայի ներկա ժամանակով կազմված բաղադրյալ ստորոգյալները, ինչպես՝ Զառ Մանթաշի ծաղկոտ լանջին Պստիկ քողտիկդ է կանգնած (Իս., 2, 18)։ Կախարդված է աշխարհը, և բոլոր իրերը ճմայված են մի անտեսանելի վհուկի գավազանով, և հեքիաթացած է ամեն բան (Իս., 3, 81)։

Այս նույն իմաստը ժամանակակից հայերենում երբեմն դրսևորվում է նաև դրություն, վիճակ ցույց տվող բայերի սահմա-

նական եղանակի վաղակատար ժամանակի միջոցով՝ ստեղծելով նախորդներին համանիշ ձևեր։ Բերենք այս համանիշների զուգահեռ օրինակներ։

Զառ Մանթաշի ծաղկոտ լանջին։ Պստիկ քողտիկդ է կանգնած (Իս.)։	...Պստիկ քողտիկդ է կանգնել։
Եվ ահա ես ուրախ նստած եմ մեր սենյակում։	*Եվ ահա ես ուրախ նրստել եմ մեր սենյակում։*
Կախարդված է *աշխարհը, և բոլոր իրերը* հմայված են *մի անտեսանելի վհուկի դյութական գավազանով (Իս.)։*	Կախարդվել է *աշխարհը, և բոլոր իրերը* հմայվել են *մի անտեսանելի վհուկի դյութական գավազանով։*

Այս համանիշ ձևերը շատ են գործածվում հատկապես բնության երևույթներ, վիճակ, դրություն նկարագրելիս։

Երբ նկարագրվում են բնության մեջ կայուն վիճակում գտնվող աշխարհագրական երևույթներ, իրադրություններ, վայրեր և այլն, սահմանական եղանակի ներկա ժամանակին համանիշ կարող են գործածվել նաև վաղակատար ժամանակի ձևերը, ինչպես նաև երբեմն հարակատար դերբայով ու էական բայի ներկա ժամանակով բաղադրված բաղադրյալ ստորոգյալ. օրինակ՝ Լեռնաշղթայի ճյուղերից մեկը ջոկվում է մայր լեռնաշղթայից, սեպի պես խրվում է Արարատյան դաշտի սիրտը և դեմ է առնում Արաքսին (ՎԱ, ԼՀ)։ Ահա գյուղերում այստեղ և այնտեղ բարձրանում են *ամրոցներ, որոնք իրենց հպարտ աշտարակներով և ատամնավոր պարիսպներով* իշխում են *շրջակայքի վրա (Ր)։*

Այս նույն նկարագրությունները կարելի է կատարել նաև վաղակատար ժամանակով. ինչպես՝ Լեռնաշղթայի ճյուղերից մեկը ջոկվել է *մայր լեռնաշղթայից, սեպի պես* խրվել է *Արարատյան դաշտի սիրտը և* դեմ է առել *Արաքսին։ Ահա գյուղերում այստեղ և այնտեղ* բարձրացել են *ամրոցներ։*

Այս նախադասություններում ներկա ժամանակաձևերի գործածությունը խոսքը դարձնում է ավելի առարկայական, կենդանի, պատկերավոր։

Հարակատար դերբայով բաղադրյալ ստորոգյալի ձևերը նկարագրությունների ժամանակ ավելի համապատասխանում են վաղակատար ժամանակի ձևերին. օրինակ՝ Քնած է արդեն հովտի մեջ գյուղը, Մթնած ու լուռ է գյուղացու հյուղը (ՀԹ)։ Այս նախադասությունը կարելի է փոխարինել «Քնել է արդեն հովտի մեջ գյուղը, մթնել ու լուռ է գյուղացու հյուղը» նախադասությամբ, որովհետև երկու դեպքում էլ ստորոգյալները ցույց են տալիս դրություն, վիճակ։ Ներկա ժամանակի ձևերը այս նախադասություններում չի կարելի գործածել, որովհետև կփոխվեն վերջինիս ցույց տված ժամանակային ու վիճակային հարաբերությունները։ Քնում է, մթնում է ձևերը ցույց են տալիս ոչ թե վիճակ, դրություն, այլ գործողությունը ընթացքի մեջ։

Ներկա ժամանակի դրսևորման արժեք է ձեռք բերել որոշ բայերի անորոշ դերբայի տրական հոլովով և գալ բայի սահմանական եղանակի ներկա ժամանակի բայաձևերով բաղադրված բաղադրյալ ստորոգյալը։ Այս կապակցությունը ձեռք է բերել որոշ դարձվածային արժեք և համանիշ է այդ նույն բայի ներկա ժամանակաձևին. այսպես՝ գալիս է ապացուցելու → ապացուցում է, գալիս է հաստատելու → հաստատում է, գալիս է ժխտելու → ժխտում է: Այս համանիշ ձևերի տարբերությունը այն է, որ առաջինները ունեն հատուկ ոճական երանգավորում, խոսքին տալիս են որոշ հանդիսավորություն և այդ պատճառով գործածվում են հիմնականում հրապարակախոսության լեզվում, հռետորական խոսքի մեջ։ Առօրյա, սովորական խոսքում գործածվում են նրանց համանիշ պարզ ստորոգյալով նախադասությունները։ Բերենք օրինակներ։ Բայց շուտով մի ուրիշ լուր գալիս է մեզ տխրեցնելու (ՍՉ, եԺ, 157) → Բայց շուտով մի ուրիշ լուր տխրեցնում է մեզ։ Այդ փաստը գալիս է ապացուցելու, որ... → Այդ փաստը ապացուցում է, որ...։ Այդ երևույթը գալիս է մեկ անգամ ևս հիշեցնելու, որ մենք դեռևս անելիքներ շատ ունենք → Այդ երևույթը մեկ անգամ ևս հիշեցնում է, որ...։

Բերված նախադասություններից առաջիններում գալիս է բայաձևը կորցրել է իր նյութական իմաստը և գործածվում է որպես ոճական միջոց՝ անորոշ դերբայի տրական հոլովով դրված բայի ցույց տված գործողությունը ընդգծելու համար։ Միաժամանակ այն դիմային, թվային և ժամանակային իմաստ է հաղորդում տվյալ բային։

Որևէ գործողության ընթացքի մեջ լինելը ցույց տալու համար, բացի սահմանական եղանակի ներկա կամ անցյալի անկատար ժամանակներից, երբեմն կարող են գործածվել նաև բաղադրյալ ստորոգյալներ՝ բաղկացած բայարմատից կազմված գոյականի ներգոյական հոլովով և էական բայի ներկա կամ անցյալ ժամանակով. օրինակ՝ նա այսօր ամբողջ օրը կովի մեջ է → նա այսօր ամբողջ օրը կովում է: Քուրդ գյուղացու մեկը վաղ առավոտվանից աշխատանքի մեջ էր → Քուրդ գյուղացու մեկը վաղ առավոտից աշխատում էր: Այստեղ բաղադրյալ ստորոգյալի միջոցով ընդգծվում է գործողության տևականությունը, երկար ժամանակ ընթացքի մեջ լինելը. մի բան, որ պարզ ստորոգյալին հաղորդվում է միայն օժանդակ միջոցներով (առավոտից երեկո, ամբողջ օրը և այլն)։ Բացի այդ, բաղադրյալ ստորոգյալ գործածելիս խոսքը դառնում է ավելի պատկերավոր, արտահայտիչ։

Իրենց մեջ ներկա ժամանակահատվածն են ընդգրկում նաև ընդհանրական նշանակություն ունեցող նախադասությունները, այսինքն՝ այն նախադասությունները, որոնք գործածվում են ընդհանրապես, որպես սովորություն տեղի ունեցող գործողություններ, երևույթներ նկարագրելու, հանրահայտ ճշմարտություններ, ժողովրդական իմաստություններ հաղորդելու համար։ Այս դեպքում ևս նախադասությունների մեջ սովորաբար գործածվում է սահմանական եղանակի ներկա ժամանակը. օրինակ՝ Երկիրը պտտվում է արեգակի շուրջը։ Մարմինները տաքությունից լայնանում են: Ձմռանը հաջորդում է գարունը։ Ուրիշի աշխատածը քամին է տանում: Գիշերը լուսնի երկչոտ շողերը Հենց որ մտնում են էն խավար ձորը... Ոգի է առնում ամեն բան էնտեղ, Շնչում է, ապրում, և մութն է ահեղ (ՀԹ)։ Երևակայեցեք մութ, խավար գիշերներ, այն էլ նորանվաճ մի գյուղում, երբ ամեն տեղ վտանգ

Ես տեսնում և ամեն բոպե սպասում ես վտանգի, ու այդ բոպեին ահա բարձրանում է աղեկտուր մի ոռնոց (ՍՁ, ԵԺ, 2, 409)։

Բացի ներկա ժամանակից, այս նշանակությամբ կարող են գործածվել՝

ա) Սահմանական եղանակի անցյալ կատարյալ ժամանակը։ Անցյալ կատարյալ ժամանակի այս կիրառությանը հանդիպում ենք գերազանցապես ժողովրդական առածների, ասացվածքների մեջ. օրինակ՝ Սուտ ասողի տունը կրակ ընկավ, չհավատացին: Մինչև թուրը եկավ, լեզուն գլուխը կտրեց: Գելի գլխին ավետարան կարդացին, ասաց շուտ արեք, նախիրը գնաց: Գիժը գնաց հարսընքատուն, ասաց՝ ըստեղ լավ ա, քանց մեր տուն («Հայկական առածանի»)։

Անցյալ կատարյալ ժամանակը այս նշանակությամբ կիրառվում է նաև բարդ ստորադասական նախադասություններում՝ ներկա ժամանակի հարաբերակցությամբ. օրինակ՝ Իմ սիրտն ինչ որ վկայեց, կատարվում է (ՀՔ, ՄՏՁ, 439)։ Նա մի բան որ որոշեց, վերջնական է: Այս նախադասությունները համանիշ են «Իմ սիրտն ինչ որ վկայում է, կատարվում է» և «Նա մի բան որ որոշում է, վերջնական է» նախադասություններին։ Բերենք այլ օրինակներ։ Զմեռները մեզանում շատ վտանգավոր է մենակ ճանապարհորդելը, մանավանդ եթե մութն էլ վրա հասավ (ՀԹ, 1, 391)։ → Մանավանդ եթե մութն էլ վրա է հասնում: Զին գիլի հոտն առավ թե չէ, ականջները սրում է, փրոռացնում (ՀԹ, 1, 389) → Զին գիլի հոտն առնում է թե չէ, ականջները սրում է...:

բ) Սահմանական եղանակի երկրորդական բաղադրյալ ներկա ժամանակը։ Վերջինս այս իմաստով սովորաբար գործածվում է պարզ ներկա ժամանակի հարաբերակցությամբ՝ խոսելու պահը իր մեջ ներառնող մի երկարատև ժամանակահատվածում սովորաբար կրկնվող գործողություններ, եղելություններ նկարագրելու համար. օրինակ՝ Ինչքան գնում եմ, նա աշխատելիս է լինում: Երբ երկրորդական բաղադրյալ ժամանակի փոխարեն գործածում ենք սովորական ներկա ժամանակաձև՝ ստեղծելով վերը բերված նախադասությանը համանիշ նախադասություն, գործողության կատարման

երկարատևության իմաստը զգալիորեն թուլանում է։ Համեմատի՛ր վերևի նախադասությունը հետևյալի հետ՝ Ինչքան գնում եմ, նա աշխատում է:

գ) Ըղձական եղանակի ապառնի ժամանակը. օրինակ՝ Խեղճ աղքատի հոգին դուրս գա, քարից, հողից հաց ճամե, բեռով հացը հարուստին տա, հարուստն իշխե, վայելե: Խեղճ աղքատը դառը դատի, դատարկ նստի... է՜յ աշխարհ, էլ ինչո՞ւ ես քարը թողնում քարի վրա, քա՛ր աշխարհ (Իս.)։ Չէ՛, այսպես չի լինի... Վարենք մենք, հնձե Հասան բեկը։ Ժողվենք մենք, շարշարվենք մենք, «կոռի բեգյարի» դիմանանք մենք, Հասան բեկը հանգիստ՝ մեջքը բարձին տա, ու մեր քրտինքը ուտե, մեր կանանց ճաշե ու ելնե մեր ամեն բանը ծաղրե (ՎՓ, Ճգնավոր Եղո)։ Այս եղանակի գործածության դեպքում ոչ միայն սոսկ հաղորդվում են ընդհանրապես կրկնվող գործողություններ, եղելություններ, այլ նաև դրսևորվում է խոսողի դժգոհությունը, զայրույթը այդ գործողությունների կատարման վերաբերյալ։ Այդ վերաբերմունքը խոսքային համապատասխան միջավայրում և հատուկ հնչերանգով կարող է դրսևորվել նաև համանիշ ներկա ժամանակաձևերի գործածության դեպքում, սակայն ավելի թույլ։ Համեմատի՛ր վերևի նախադասությունները հետևյալների հետ՝ Խեղճ աղքատի հոգին դուրս է գալիս, Քարից հողից հաց է ճամում, բեռով հացը հարուստին է տալիս, հարուստն իշխում է վայելում: Խեղճ աղքատը դառը դատում է, դատարկ նստում... է՜յ աշխարհ։ Չէ՛, այսպես չի լինի... վարում ենք մենք, հնձում է Հասան բեկը։ Ժողովում ենք մենք, շարշարվում մենք... Հասան բեկը հանգիստ մեջքը բարձին է տալիս, ու մեր քրտինքը ուտում, մեր կանանց ճաշում ու ելնում մեր ամեն բանը ծաղրում:

դ) Ժողովրդական-խոսակցական լեզվում ընդհանրական ներկայի նշանակությամբ շատ ավելի հաճախ է հանդիպում ենթադրական եղանակի ապառնի ժամանակը։ Այսինքն՝ հաճախ սովորաբար կրկնվող գործողություններ, եղելություններ նկարագրելիս ներկա ժամանակաձևերի փոխարեն գործածվում են ենթադրական եղանակի ապառնու ձևերը։ Օրինակներ՝ Բայց նույնն է Թամարան, ուղիղ կնայի երեսիդ, մտածածը չի բաց ցնի և առանց կեղծիքի

նշույլի կասի *(ԵԵ)։ Լավ ընկեր չունեցող մարդը մենակ ու թույլ* կզգա *իրեն (ՀՔ, ՄՏՁ, 1, 296)։ Արյունը արյունով* չեն լվանա: *Ձուկը պոչից* չեն բռնի, *գլխից* կբռնեն *(ՎԱ, ԼՀ, 23)։ Գյուղում նրան կովարար մարդ էին համարում և գիտեին, որ* կպոռթկա, կալեկոծվի ու *մեկ էլ տեսար հանդարտվեց (ՀՔ, ՄՏՁ)։ Ասենք՝ այն գլխից ես չեմ հավանել նրան, ժամանակ-ժամանակ* ներս կընկնի, *չաչանակի պես* կխոսի, *լիրբ-լիրբ* կծիծաղի... *ոչ մեծ* կհարցնի, *ոչ պստիկ (ՆԴ, 3, 15)։ Այս նախադասությունները համանիշ են հետևյալներին՝... Ուղիղ* նայում է *երեսիդ, մտածածը* չի թաքցնում *և առանց կեղծիքի նշույլի* ասում է: *Լավ ընկեր չունեցող մարդը մենակ ու թույլ է* զգում իրեն: *Արյունը արյունով* չեն լվանում: *Ձուկը պոչից* չեն բռնում, *գլխից* են բռնում: ...*Գիտեին, որ* պոռթկում է, ալեկոծվում, *ու մեկ էլ* տեսնում ես՝ հանդարտվում է: ...*ժամանակ-ժամանակ* ներս է ընկնում, *չաչանակի պես* խոսում, *լիրբ-լիրբ* ծիծաղում, *ոչ մեծ է* հարցնում, *ոչ պստիկ։*

Ինչպես երևում է նախադասությունների համեմատությունից, ենթադրական եղանակի ժամանակաձևերը այս կիրառությամբ խոսքը դարձնում են ավելի դինամիկ, պատկերավոր։ Դրանով էլ բացատրվում է նրանց կիրառությունը խոսակցական լեզվում։

Երբեմն ներկա ժամանակի ժխտական ձևը ցույց է տալիս տվյալ գործողության, եղելության հատուկ չլինելը որևէ առարկայի, անձի։ Այս դեպքում ևս պարզ ստորոգյալի մոտ կարող են գործածվել ընդհանրապես, առհասարակ *բառերը, որոնց օգնությամբ ավելի է ճշտվում, կոնկրետանում ստորոգյալի արտահայտած իմաստը. օրինակ՝* Նա (ընդհանրապես) չի հոգնում, Սուրենը առհասարակ չի մրսում *և այլն։ Ժողովրդական-խոսակցական լեզվում այդ իմաստային հարաբերություններն արտահայտելու համար կարող են գործածվել բոլորովին այլ կառուցվածքի նախադասություններ. նախադասության ստորոգյալը լինում է կա բայի ժխտական ձևը՝* չկա, *ենթական՝ տվյալ գործողությունը ցույց տվող բայի անորոշ դերբայը, իսկ այն առարկան, որին վերագրվում է տվյալ գործողությունը և որը նախորդ տիպի նախադասությունների մեջ ենթակայով էր դրսևորվում ,այստեղ արտահայտվում է հանգման խնդրով. օրինակ՝* Նրան հոգնել չկա, Սուրենին մրսել

չկա և այլն։ Այս կառուցվածքի նախադասությունները ժողովրդական-խոսակցական լեզվից հաճախ թափանցում են գեղարվեստական գրականության լեզվի մեջ։

Անցյալում որևէ մեկին կամ որևէ առարկայի ընդհանրապես որևէ գործողություն որպես հատկանիշ հատուկ չլինելը ցույց տալու համար համապատասխանաբար գործածվում են տվյալ բայի սահմանական եղանակի անցյալի անկատար և կա բայի ժխտական ձևի անցյալի անկատար ձևերը. օրինակ՝ Նկարում էր ամեն ինչ. նրան հոգնել չկար (ԹԴՀ, 347) → Նկարում էր ամեն ինչ. նա (առհասարակ, երբեք) չէր հոգնում:

Անցյալ ժամանակի դրսևորումը համանիշ ձևերի օգնությամբ

Անցյալ ժամանակահատվածում, այսինքն՝ խոսելու պահից առաջ կատարված գործողություններ, եղելություններ, երևան եկած երևույթներ, իրողություններ նկարագրելու համար ժամանակակից հայերենում գործածվում են հիմնականում բայի անցյալ ժամանակի ձևերը։ Եթե ներկա ժամանակ դրսևորելու համար ժամանակակից հայերենը ունի մեկ հիմնական բայաձև՝ սահմանական եղանակի ներկա ժամանակի ձևերը, ապա անցյալ ժամանակ ցույց տալու համար ունի շատ ժամանակաձևեր. դրանք են՝ սահմանական եղանակի անցյալի անկատար, վաղակատար, անցյալի վաղակատար, անցյալի ապառնի, անցյալ կատարյալ ժամանակները, ըղձական, ենթադրական ու հարկադրական եղանակների անցյալ ժամանակները։ Անցյալ ժամանակաձևերի այսպիսի հարստությունը բխում է անցյալ ժամանակահատվածում կատարվող գործողությունների ժամանակային բազմազանությունից։ Գործողությունը կարող է անցյալում կատարվել-ավարտվել, անցյալում ընթացքի մեջ եղած լինել, նախորդել անցյալում կատարված մեկ այլ գործողության և այլն։ Ժամանակային այս բոլոր իմաստները դրսևորվում են բայի անցյալ ժամանակների օգնությամբ, որոնցից յուրաքանչյուրն ունի կիրառության հատուկ ոլորտ. այսպես՝ սահմանական եղանակի անցյալի անկատար ժամանակը ցույց է տա-

լիս անցյալում սկսված և ընթացքի մեջ եղած գործողություն, անցյալ կատարյալ ժամանակը՝ անցյալում կատարված ավարտված գործողություն և այլն։

Բայի անցյալ ժամանակաձևերը թեև ցույց են տալիս անցյալում կատարված գործողություններ, սակայն իրենց հիմնական կիրառություններով համանիշ չեն, իրար փոխարինել չեն կարող, որովհետև դրանցից յուրաքանչյուրը ունի իր ժամանակաիմաստային որոշակի առանձնահատկությունը։ Իհարկե, իրենց երկրորդական կիրառություններով այս ժամանակաձևերը կարող են հանդես գալ նաև որպես համանիշներ։

Խոսքը պատկերավոր, արտահայտիչ դարձնելու, անցյալում կատարված գործողությունների ժամանակային հարաբերությունը ավելի ճշգրտորեն տալու նպատակով երբեմն գործածվում են ոչ միայն բայի անցյալի ժամանակաձևերը, այլ նաև ներկա և ապառնի ժամանակաձևերը (իհարկե երկրորդական կիրառություններով)՝ հաճախ ստեղծելով անցյալում կատարված և նույն ընթացքն ունեցած գործողությունների նկարագրության համանիշ ձևեր, որոնցից յուրաքանչյուրը իր նրբերանգը, կիրառական ու ոճական առանձնահատկություններն ունի։ Այժմ տեսնենք, թե անցյալում կատարված գործողությունների, իրողությունների նկարագրության համար ժամանակակից հայերենում ինչպիսի համանիշ ձևեր կան։

ա) Անցյալում սկսված և մեկ անցյալ ժամանակակետի համեմատությամբ ընթացքի մեջ գտնվող գործողություններ, իրողություններ նկարագրելու համար ժամանակակից հայերենում գործածվում է հիմնականում բայի սահմանական եղանակի անցյալի անկատար ժամանակը. օրինակ՝ Արև մի կեսօր Կաքավաբերդի քարափով բարձրանում էին երեք ձիավոր։ Ոչ միայն զգեստից, այլև ձի նստելուց երևում էր, որ առաջին երկու ձիավորը քաղաքի մարդիկ են, երկրորդ ձիավորը նրանց ուղեկցում էր (ԱԲ)։ Տղաները կուզեկուզ և զգուշությամբ հետևում էին նրան։ Նրանցից ոչ հեռու, ժայռի ստորոտում մի երկար պոչ էր ուժգին խփվում գետնին, որից հազիվ նկատելի փոշի էր բարձրանում (ՎԱ, Սևանի ափին)։

Սակայն հաճախ խոսողը, անցյալում կատարված գործողու-

թյունները ավելի շոշափելի, պատկերավոր ներկայացնելու համար, նկարագրությունը տանում է ոչ թե անցյալ անկատար ժամանակով, այլ ներկա ժամանակով։ Դրանով կարծես խոսողը իրեն մտովի տեղափոխում է այն անցյալ ժամանակահատվածը, երբ կատարվում էին տվյալ գործողությունները, վերջիններիս մասին պատմելով որպես ականատես։ Այդպիսի ներկան քերականագիտության մեջ կոչվում է պատմական ներկա։

Այսպիսով՝ վերևի նկարագրությունը կարելի է կատարել նաև բայի ներկա ժամանակի ձևերով՝ ստեղծելով առաջիններին համանիշ նախադասություններ։ Այսպես՝ «Արև մի կեսօր Կաքավաբերդի քարափով բարձրանում են երեք ձիավոր։ Ոչ միայն զգեստից, այլև ձի նստելուց երևում է, որ առաջին երկու ձիավորը քաղաքի մարդիկ են։ Տղաները կուզեկուզ և զգուշությամբ հետևում են նրան»։ ...Այս կիրառությամբ ներկա ժամանակը հատկապես շատ է օգտագործվում հեքիաթների մեջ՝ վերջիններիս ավելի հավաստի, իրական տեսք տալու համար։

Անցյալում կատարված տևական, ընթացքի մեջ եղող գործողություններ նկարագրելու համար գործածվում է նաև սահմանական եղանակի երկրորդական բաղադրյալ ներկա ժամանակը, որը սովորաբար հարաբերակցում է ներկա ժամանակով դրսևորված անցյալին. օրինակ՝ Հերը անչափ սիրելիս է լինում աղջկան (ՀԹ)։ Երբ նա տուն է վերադառնում, աղջիկը դեռ աշխատելիս է լինում։ Այս նախադասությունները համանիշ են «Հերը անչափ սիրում էր աղջկան», «Երբ նա տուն վերադարձավ, աղջիկը դեռ աշխատում էր» նախադասություններին։

Ներկա ժամանակը իր երկրորդական կիրառություններում հանդես է գալիս ոչ միայն որպես անցյալի անկատարի, այլ նաև անցյալ կատարյալի համանիշ՝ ցույց տալով անցյալ ժամանակամիջոցում կատարված-ավարտված գործողություն։ Այս դեպքում ևս ներկա ժամանակի գործածությունը խոսքը դարձնում է ավելի կենդանի, արտահայտիչ, գործողության նկարագրությունը՝ ավելի շոշափելի։ Համեմատի՛ր հետևյալ համանիշ նախադասությունները. Երեկ գնացի և գիտե՞ս ինչ տեսա → Երեկ գնում եմ և գիտե՞ս ինչ եմ տեսնում։ Թագավորն ու թագուհին էնպես ուրա-

խանում են, *էնպես* ուրախանում են, *որ աշխարհքովը մին են լինում։ Աչքալուս* են գրում, *նամակը* տալիս են սուրհանդակին, ուղարկում են *(ՀԹ)* → *Թագավորն ու թագուհին էնպես* ուրախացան, *էնպես* ուրախացան, *որ* աշխարհիքովը մին եղան: *Աչքալույս* գրեցին, *նամակը* տվեցին *սուրհանդակին,* ուղարկեցին: *Վերջին անգամ* տեսնում եմ *նրանց Վանը թողնելիս (ԳՄ, ԵՍ, 37)* → *Վերջին անգամ* տեսա *նրանց Վանը թողնելիս։*

Անցյալում կատարված գործողություններ, դեպքեր նկարագրելիս հաճախ, խոսքը դինամիկ ու պատկերավոր դարձնելու համար, սահմանական եղանակի ներկա կամ անցյալ կատարյալ ժամանակների հետ գործածվում է նաև ըղձականի ապառնի ժամանակը, որը այս կիրառություններում համանիշ է առաջինին. օրինակ՝ Սկսում է աղի-աղի լաց լինել, էս լացի ժամանակ հանկարծ մինը ձեն է տալիս... Մտիկ տա *աղջիկը, ինչ* տեսնի *(ՀԹ, 2, 441)* → Մտիկ է տալիս *աղջիկը, ինչ* տեսնում: *Մոտենում ենք, ինչ* տեսնենք՝ *տները ոսկի, ծառերը ոսկի (ՀԹ, 2, 341)* → *Մոտենում ենք, ինչ* տեսնում → Մոտեցանք, *ինչ* տեսանք: *Հատկապես շատ է հանդիպում* տեսնել, նայել *բայերի ըղձականի այս կիրառությունը։*

Սահմանական եղանակի անցյալի անկատար ժամանակով նկարագրվում են նաև մի անցյալ ժամանակամիջոցում սովորաբար տեղի ունեցած, որպես սովորություն մշտապես կրկնված գործողություններ, եղելություններ. օրինակ՝ Երեկոները մենակ նստում էր *իրենց պատշգամբում, որի շուրջը* բացվում էր *պարտեզը հովասուն ծառերով և կարկաչուն շատրվաններով (Իս.)։ Էմման քիչ* էր ուտում, *քիչ* էր քնում, *համարյա ոչ մի գործ* չէր կատարում, *ամեն բանից* զզվում, ձանձրանում էր, *ամեն մի չնչին բանի համար* բարկանում էր *(ՆԴ)։*

Այս նույն ժամանակային իմաստը արտահայտելու համար ժողովրդական-խոսակցական լեզվում անցյալի անկատար ժամանակի փոխարեն հաճախ գործածվում է ենթադրական եղանակի անցյալ ժամանակը, որը այս կիրառություններում կորցնում է իր եղանակային արժեքը և հանդես է գալիս որպես սահմանական

եղանակի անցյալի անկատար ժամանակի համանիշ։ Օրինակ՝ Հող չուներ, բայց հարուստին չէր մոտենա, առանց հրավերի օգնության կգնար հողագործին (ԳԹ)։ Բաժին կտային, Վասիլիսան ամենալավ պատառը կպահեր իր տիկնիկի համար։ Իրիկունը, երբ ամենքը կպառկեին քնելու, նա իր նկուղում կփակվեր ու տիկնիկի հետ կխոսեր (ՀԹ)։ Այս նախադասությունները համանիշ են հետևյալներին՝ Հող չուներ, բայց հարուստին չէր մոտենում, առանց հրավերի օգնության էր գնում հողագործին։ Բաժին էին տալիս, Վասիլիսան ամենալավ պատառը պահում էր իր տիկնիկի համար։ Իրիկունը, երբ ամենքը պառկում էին քնելու, նա իր նկուղում փակվում էր ու տիկնիկի հետ խոսում: Գրական լեզվում գործածական ու հանձնարարելի են վերջին կառուցվածքի նախադասությունները։

Անցյալում սովորաբար կրկնված, կատարված գործողություններ նկարագրելիս երբեմն, անցյալի անկատար ժամանակաձևին զուգահեռ և նրան համանիշ, գործածվում է հարկադրական եղանակի անցյալ ժամանակը, որով ժամանակային հարաբերությունը ձեռք է բերում անհրաժեշտության, պարտադրականության իմաստային երանգ։ Օրինակ՝ Դեռ աքլորականչին հայրս արթնանում էր, վառում էր բուխարին... ու ճամփա ընկնում դեպի Դիլիջան՝ քար տաշելու և տներ կառուցելու։ Անասուններին ես պիտի կերտայի, տակները մաքրեի, ջրեի: Մինչև վերջացնում էի այդ բոլորը, մեր գյուղի դիմացի լեռան ձյունապատ բարձունքները ոսկեզօծվում էին արևի անդրանիկ շողերից (ՎԱ, ԼՀ, 83)։ Այստեղ հարկադրական եղանակի անցյալ ժամանակը գործածվել է անցյալի անկատար ժամանակի իմաստով՝ լրացուցիչ՝ գործողության պարտադրականության նրբերանգով։

Երբ խոսողը նկարագրում է անցյալում (կամ ներկայում) պարբերաբար կատարված գործողություններ, միաժամանակ դրսևորելով իր դժգոհությունը դրանց կատարման առթիվ, գործածվում է նաև հրամայական եղանակի եզակի թիվը. օրինակ՝ Պարապմունքները վերջանալուց հետո մինչև բարձրանում էինք լեռան լանջին ծվարած մեր գյուղը, ձմռան կարճ օրը վերջանում էր։ Դե արի անասունների համար ջուր բեր, գոմը մաքրիր,... դե-

զից խոտ բեր (ՎԱ, ԼՀ, 83) (Այս մասին տե՛ս «Պատմողական և հրամայական համանիշ նախադասություններ» գլուխը)։

Խոսակցական լեզվում, ինչպես նաև գեղարվեստական գրականության երկխոսությունների մեջ, անցյալի անկատար ժամանակը երբեմն գործածվում է անցյալի ապառնի ժամանակի նշանակությամբ, այսինքն՝ ցույց է տալիս անցյալում սպասված, մի անցյալ ժամանակի համար կատարվելիք, սակայն ներկա ժամանակակետի համար չկատարված գործողություն. օրինակ՝ Գլորվեցին, անցան դարձյալ մի քանի օրեր, և նա դեռ գնում էր Մարությանների տուն (Մ)։ Ումնի՞ց եք պախրա խլում,— որոտացի ես ու էն է՝ ոտը քաշում էի, Շաքար ամին թևիցս բռնեց (ՎԱ, ԼՀ, 42)։ Եթե մի քիչ ուշանայիր, գնում էինք: Եթե Արամը չլիներ, տանում էի: Սրանք համանիշ են «... Ոտը քաշելու էի...», «...Նա դեռ գնալու էր Մարությանների տուն», «Եթե մի քիչ ուշանայիր, գնալու էինք», «Եթե Արամը չլիներ, տանելու էի» նախադասություններին։ Այս նախադասությունների միջև կա իմաստային այն նուրբ տարբերությունը, որ անցյալի անկատար ժամանակի գործածության դեպքում շեշտվում է գործողության՝ անցյալում կատարված լինելու հնարավորությունը։

գ) Ինչպես հայտնի է, որոշակի անցյալում կատարված-ավարտված գործողություն ցույց տալու համար ժամանակակից հայերենում գործածվում է հիմնականում անցյալ կատարյալ ժամանակը. օրինակ՝ Լևոնը գլխավոր փողոցից ծռվեց դեպի ձախ։ Անկյունում նրա ականջին ընկավ երգը, տեսավ լուռ լսողների խումբը։ Նա գլուխը վեր բարձրացրեց ու զարմացավ (ԱԲ)։

Սակայն երբեմն, հատկապես ժողովրդական-խոսակցական լեզվում, երբ խոսողը ոչ միայն հաղորդում է որոշակի անցյալում կատարված-ավարտված գործողության մասին, այլ նաև դրսևորում իր սուբյեկտիվ վերաբերմունքը դրա նկատմամբ, հատկապես դժգոհությունը տվյալ գործողության որևէ ժամանակամիջոցում կամ որևէ անձնավորության կողմից կատարվելու կապակցությամբ, անցյալ կատարյալ ժամանակի փոխարեն գործածվում են սահմանական եղանակի անցյալի անկատար, անցյալի ապառնի և կամ հարկադրական եղանակի անցյալ ժամանակները. օրինակ՝

Ասես էլ մարդ չկար, քեզ էին ընտրում,— *նկատեց Արուսը, որին բնավ դուր չեկավ այդ պատմությունը (ՆՁՀ, 162)* → *Ասես էլ մարդ չկար, քեզ* էին ընտրելու → *Ասես էլ մարդ չկար, քեզ* պիտի ընտրեին → *Ասես էլ մարդ չկար, քեզ* ընտրեցին:

Սահմանական եղանակի անցյալի ապառնի և հարկադրական եղանակի անցյալ ժամանակի գործածության դեպքում նախադասությունը հաճախ ունենում է հարցական հնչերանգ, իսկ հարցական հնչերանգով արտասանվող ժամանակի պարագայի կամ ենթակայի մոտ դրվում է հենց *եղանակավորող բառը։ Այս միջոցներով ավելի է ընդգծվում խոսողի դժգոհությունը գործողության՝ տվյալ ժամանակամիջոցում կամ տվյալ անձնավորության կողմից կատարվելու կապակցությամբ. օրինակ՝ Այդ մասին* հենց դո՞ւ էիր *ասելու* (պիտի ասեիր): *Զարմանալի մարդ է։* Հենց երե՞կ էր գնալու (պիտի գնար): *Սրանց համանիշ անցյալ կատարյալով դրված ստորոգյալ ունեցող նախադասությունները դարձյալ ունենում են հարցական հնչերանգ, սակայն ավելանում է* ինչո՞ւ *հարցական դերանունը, իսկ* հենց *եղանակավորող բառը կարող է նաև չլինել. այսպես՝ Այդ մասին* ինչո՞ւ (հենց) *դու* ասացիր: *Զարմանալի մարդ է.* ինչո՞ւ (հենց) երեկ գնաց:

Մինչև *շաղկապով միացող ժամանակի պարագա երկրորդական նախադասություններում անցյալ կատարյալի փոխարեն երբեմն գործածվում է ենթադրական եղանակի անցյալ ժամանակը։ Վերջինս այս կիրառություններում ցույց է տալիս անցյալում կատարված-ավարտված գործողություն, որի կատարման ընթացքում կամ որից անմիջապես հետո կատարվել է մեկ այլ գործողություն ևս. օրինակ՝ Մինչև վիրավորներին* կիջեցնեին *մեքենայից, նա վերադարձավ ու հրամայեց (ՀՔ, ՄՏՁ)։ Մինչև որ դռները* կբացվեին, *մինչև որ աղմուկ և շարժում* կառաջանար, *խոսրևը փոդոց էր մտել (ՎՓ, 530)։ Մինչև պառավ տանտիրուհին հանգամանորեն* կպատմեր, *թե գործերը Հաննիբալում, ոչինչ, վատ չեն գնում..., ավելի մթնեց (ԻԻ, ԵՊ, ՄԱ, 189)։ Այս նախադասությունները համանիշ են «Մինչև վիրավորներին* իջեցրին *մեքենայից...», «Մինչև որ դռները* բացվեցին, *մինչև որ աղմուկ և շարժում* առաջացավ...», «*Մինչև պառավ տանտիրուհին հանգամանորեն* պատմեց...» *նախադասություններին։*

Անցյալ կատարյալ ժամանակի դրական ձևերով նկարագրվում են անցյալում կատարված-ավարտված գործողություններ, եղելություններ, իսկ ժխտական ձևերով՝ անցյալում չկատարված գործողություններ, եղելություններ։ Սա ընդհանուր օրինաչափություն է։ Սակայն երբեմն ժամանակային հաջորդականության հարաբերություն դրսևորող և մինչև շաղկապով միացած բարդ ստորադասական նախադասություններում անցյալ կատարյալ ժամանակի ժխտական ձևերը գործածվում են կատարված գործողություն ցույց տալու համար. օրինակ՝ «Մինչև չգնացի, չհանգստացա», «Մինչև չտեսա, չհամոզվեցի» նախադասություններում ընդգծված ժխտական բայաձևերը ցույց են տալիս անցյալում կատարված-ավարտված գործողություն և համանիշ են նույն բայերի դրական ձևերին։ Այս նախադասություններին համանիշ դրական բայաձևերով կազմավորված նախադասությունները կլինեն՝ «Գնացի և հանգստացա», «Տեսա և համոզվեցի», կամ՝ «Հանգստացա գնալուց հետո», «Համոզվեցի տեսնելուց հետո»: Ինչպես երևում է բերված օրինակներից, բայի սահմանական եղանակի անցյալ կատարյալ ժամանակի դրական ձևերը գործածելիս՝ փոխվում է ամբողջ նախադասության կառուցվածքը. բարդ ստորադասական նախադասությունը վերածվում է բարդ համադասականի և կամ դերբայական դարձվածով պարզ նախադասության։ Այդ նույն իմաստը կարելի է արտահայտել նաև նույն հարաբերությունները դրսևորող և բայի դրական ձևերով կազմավորված բարդ ստորադասական նախադասությամբ, միայն այս դեպքում փոխվում է բաղադրիչների շարադասությունը և կապակցության միջոցը. այսպես՝ Հանգստացա այն բանից հետո, երբ գնացի: Համոզվեցի միայն այն ժամանակ, երբ տեսա:

Ինչպես ասվել է «Դրական և ժխտական կառուցվածքի համանիշ նախադասություններ» գլխում, բայի անցյալ կատարյալ ժամանակի ժխտական ձևերը ժողովրդական-խոսակցական լեզվում, բացականչականին մոտեցող հատուկ հնչերանգի օգնությամբ, ցույց են տալիս կատարված գործողություն նաև որ շաղկապով միացած և ժամանակային անմիջական հաջորդականության հարաբերություն արտահայտող ժամանակի պարագա երկրորդական նախադա-

սության մեջ։ Այս նախադասությունները համանիշ են հենց որ, երբ, նաև որ շաղկապներով միացած և անցյալ կատարյալի դրական ձևերով ստորոգյալ ունեցող երկրորդական նախադասություններին, որոնք ունեն սովորական պատմողական հնչերանգ և զուրկ են առաջինների հուզաարտահայտչական երանգավորումից։ Համեմատի՛ր հետևյալ համանիշ նախադասությունները. Որ ցույց չտվեցի՞, բոլորը հիացմունքից քարացան → Հենց որ (երբ, որ) ցույց տվեցի, բոլորը հիացմունքից քարացան։

Բարդ ստորադասական նախադասություններում, հատկապես պայմանի հարաբերության առկայության դեպքում, անցյալում կատարված-ավարտված գործողություն կարող է դրսևորվել ըղձական և ենթադրական եղանակների անցյալ ժամանակների բայաձևերով, որոնք այս կիրառություններում համանիշ են սահմանական եղանակի անցյալ կատարյալ ժամանակի դրական ձևերին։ Դրանց համապատասխան՝ նույն բայերի դրական ձևերը ցույց են տալիս անցյալում չկատարված գործողություն և համանիշ են սահմանական եղանակի անցյալ կատարյալ ժամանակի ժխտական ձևերին։ Բերենք օրինակներ. Եթե չգնայի, չէի իմանա: Եթե չտեսնեիր, չէիր հավատա: Եթե գնայի, կիմանայի: Եթե տեսնեիր, կհավատայիր: Այս նախադասություններից ժխտականները ցույց են տալիս անցյալում կատարված գործողություններ, իսկ դրականները՝ անցյալում չկատարված գործողություններ։ Սրանք համանիշ են սահմանական եղանակի անցյալ կատարյալ ժամանակով ձևավորված հետևյալ նախադասություններին՝ Իմացա, որովհետև գնացի: Հավատացի, որովհետև տեսա: Չիմացա, որովհետև չգնացի: Չհավատացի, որովհետև չտեսա: Բայի եղանակի և ժամանակի փոփոխությունը նախադասության մեջ առաջացնում է հետևյալ կառուցվածքային փոփոխությունը. առաջին շարքի բայերի ժխտական ձևերին երկրորդ շարքում համապատասխանում են դրական ձևեր, իսկ դրական ձևերին երկրորդ շարքում համապատասխանում են ժխտական ձևեր (չգնայի-գնացի, չէի իմանա-իմացա, չտեսնեիր-տեսար, չէիր հավատա-հավատացիր, գնայի-չգնացի, կիմանայի-չիմացա, տեսնեիր-չտեսար, կհավատայիր-չհավատացիր)։ Բարդ նախադասության բաղադրիչների միջև եղած

միևնույն պատճառահետևանքային հարաբերությունները առաջին դեպքում քերականորեն արտահայտվել են պայմանի կապակցությամբ, շեշտվել է մի գործողության՝ մյուսի կատարման համար պայման հանդիսանալը (երկրորդական նախադասությունը պայմանի է), երկրորդ դեպքում արտահայտվել են պատճառային կապակցությամբ (երկրորդական նախադասությունը պատճառի պարագա է), շեշտվել է մի գործողության՝ մյուսի կատարման համար պատճառ հանդիսանալը։

Հաղորդման նպատակից և ընդհանուր կոնտեքստից ելնելով՝ ըղձական և ենթադրական եղանակների անցյալ ժամանակի ձևերը կարող են համապատասխանել նաև սահմանական եղանակի վաղակատար ժամանակի ձևերին։ Այս դեպքում նրանք ցույց են տալիս ոչ թե անցյալի որևէ որոշակի կոնկրետ ժամանակում կատարված կամ չկատարված գործողություններ, այլ ընդհանրապես անցյալում կատարված կամ չկատարված գործողություններ. օրինակ՝ Եթե գնայի, կիմանայի → Չեմ իմացել, որովհետև չեմ գնացել: Եթե չտեսնեի, չէի հավատա → հավատացել եմ, որովհետև տեսել եմ:

Սակայն վաղակատար ժամանակաձևերին ավելի համապատասխանում են ըղձական և ենթադրական եղանակների երկրորդական բաղադրյալ անցյալի հարակատար ժամանակաձևերը՝ դարձյալ դրական ձև–ժխտական ձև զուգադրությամբ։ Դա բացատրվում է նրանով, որ վաղակատար ժամանակը ևս, երկրորդական բաղադրյալ ժամանակների նման, ունի որոշակի տևականության նշանակություն, մի բան, որ բացակայում է անցյալ կատարյալ ժամանակաձևերի մեջ. օրինակ՝ «Եթե դասդ սովորած լինեիր, լավ կպատասխանեիր», «Եթե նրան տեսած չլինեի, չէի ասի» նախադասությունները համապատասխանում են «Լավ չպատասխանեցիր, որովհետև դասդ չես սովորել (չէիր սովորել»), «Ասել եմ, որովհետև տեսել եմ նրան»։ Այստեղ չես սովորել և տեսել եմ ձևերի փոխարեն չի կարելի գործածել չսովորեցիր և չտեսա անցյալ կատարյալի ձևերը, որովհետև դրանով կփոխվի ժամանակային հարաբերությունների բնույթը։ Նույն ձևով՝ «Եթե տեսնեիր, ասած

կլինեիր» նախադասությանը համապատասխանում է «Չես ասել, որովհետև չես տեսել»:

Ժողովրդական-խոսակցական լեզվում, ինչպես նաև գեղարվեստական գրականության մեջ, սահմանական եղանակի վաղակատար, ինչպես նաև անցյալի վաղակատար ժամանակներով արտահայտված ստորոգյալներին համանիշ հաճախ գործածվում են նաև բաղադրյալ ստորոգյալներ՝ կազմված համապատասխան բայի հարակատար դերբայից և կա բայի ներկա կամ անցյալ ժամանակաձևերից։ Համանիշների այս շարքը երևան է գալիս հատկապես ժխտական և հարցական կառուցվածքի նախադասություններում. օրինակ՝ Դու այդպիսի հետաքրքիր բան երբևէ լսե՞լ ես → Դու այդպիսի հետաքրքիր բան երբևէ լսած կա՞ս: Ես այդպիսի բան կյանքումս չէի տեսել → Ես այդպիսի բան կյանքումս տեսած չկայի: Նա դեռևս ինձնից բան չի խնդրել → Նա դեռևս ինձնից բան խնդրած չկա: Այս երկու համանիշ ձևերի նրբերանգային տարբերությունն այն է, որ բաղադրյալ ստորոգյալի գործածության դեպքում ընդգծվում է գործողության՝ անցյալի որևէ կոնկրետ ժամանակին չվերաբերելը, ինչպես նաև գործողության որոշ տևականությունը։

Վաղակատար ժամանակով դրսևորված ստորոգյալին համանիշ երբեմն գործածվում է նաև համապատասխան բայի հարակատար դերբայով և ունենալ բայի ներկա ժամանակաձևերով բաղադրված բաղադրյալ ստորոգյալ։ Այս դեպքում ընդգծվում է գործողության կամ գործողության հետևանքի հարատևումը մինչև ներկա ժամանակակետը. օրինակ՝ Ես այդ մասին գրել եմ → Ես այդ մասին գրած ունեմ: Նա այդ գիրքը պահել է → Նա այդ գիրքը պահած ունի:

Երբ անցյալում կատարված գործողություններ, եղելություններ նկարագրելու համար որպես ստորոգյալներ գործածվում են սահմանական եղանակի բայաձևերը, ապա, եթե նախադասության մեջ չկան հատուկ եղանակավորող բառեր, դրանք ներկայացվում են օբյեկտիվորեն, առանց խոսողի սուբյեկտիվ վերաբերմունքի դրսևորման։ Սահմանական եղանակի անցյալի տարբեր ժամանա-

կաձևերի գործածությունը այս դեպքում կապված է գործողության ընթացքի կերպային տարբեր վիճակների արտահայտման հետ և հիմնականում համանիշ կիրառություն չի առաջացնում։ Այլ է պատկերը ըղձական, ենթադրական և հարկադրական եղանակների անցյալ ժամանակների կիրառության դեպքում։ Սրանք միաժամանակ դրսևորում են և՛ խոսողի սուբյեկտիվ վերաբերմունքը հաղորդված գործողության կամ եղելության վերաբերյալ, և՛ գործողության կատարման անցյալ ժամանակը։ Այդ պատճառով այս ձևերը համապատասխան խոսքային միջավայրում, քերականական, մասամբ նաև բառային այլ միջոցների օգնությամբ կարող են հանդես գալ որպես սահմանական եղանակի անցյալ ժամանակաձևերի, ինչպես նաև իրար համանիշներ։ Այսպես՝

1. Ըղձական եղանակի անցյալ ժամանակի դրական ձևերը հիմնականում ցույց են տալիս անցյալում չկատարված, բայց խոսողի համար ցանկալի գործողություն, իսկ ժխտական ձևերը՝ անցյալում կատարված, բայց խոսողի համար ոչ ցանկալի գործողություն, այսինքն՝ ցույց են տալիս նաև խոսողի սուբյեկտիվ վերաբերմունքը՝ ափսոսանքը գործողության կատարման կամ չկատարման համար։ Այդ իմաստի դրսևորմանը հաճախ օժանդակում է **երանի** եղանակավորող բառի առկայությունը. օրինակ՝ *Ջուր* **դառնայիր** *մորդ փորում, Հասո,* **երանի չմտնեիր** *այն աշխարհը, որ լի է աղաներով։* **Երանի չտեսնեիր** *արևի փայլը, որ քեզ այրեց, խորովեց։*

Այս նախադասությունները կարող են ունենալ սահմանական եղանակի անցյալ կատարյալ կամ վաղակատար ժամանակների բայաձևերով ստորոգյալ ունեցող համանիշներ, որոնց միջև կան հետևյալ տարբերությունները. ըղձական եղանակի դրական բայաձևերին համապատասխանում են սահմանական եղանակի ժխտական բայաձևերը և հակառակը՝ ժխտական բայաձևերին համապատասխանում են սահմանականի դրական բայաձևերը։ Մյուս տարբերությունն այն է, որ այստեղ գործածվում են ոչ թե իղձ, ցանկություն ցույց տվող եղանակավորող բառեր, այլ ափսոսանք ցույց տվող եղանակավորող բառ, որի առկայությունը պարտադիր է խոսողի սուբյեկտիվ վերաբերմունքը դրսևորելու համար (առաջին

դեպքում միայն բայաձևը բավական է այդ վերաբերմունքի արտահայտման համար)։ Այսպես՝ Ջուր դառնայիր մորդ փորում Հասո... → Ափսոս (իզուր) ջուր չդարձար մորդ փորում...։ Երանի չգնայի → Ափսոս (իզուր) գնացի: Երանի չասեի → Ափսոս որ ասացի:

Սահմանական եղանակի վաղակատար ժամանակին ավելի համապատասխանում են ըղձական եղանակի երկրորդական բաղադրյալ անցյալի հարակատար ժամանակի ձևերը. ինչպես՝ Երանի գնացած լինեի → Ափսոս չեմ գնացել: Երանի նա էլ եկած լիներ → Ափսոս որ նա էլ չի եկել: Երանի տեսած չլինեի → Ափսոս տեսնել եմ: Ինչպես երևում է բերված համանիշ նախադասությունների համեմատությունից, ըղձական եղանակի անցյալի ձևերի գործածության դեպքում խոսողի սուբյեկտիվ վերաբերմունքը ավելի է ընդգծվում։ Սրանք ավելի սովորական և տարածված են այդ իմաստը դրսևորելու համար, քան սահմանական եղանակի համապատասխան ձևերը եղանակավորող բառերի հետ։

Խոսողի սուբյեկտիվ վերաբերմունքը զգալի թուլանում է, սակայն որոշ չափով առկա է նաև այս բայաձևերի՝ պայմանի երկրորդական նախադասություններում գործածվելու դեպքում (օրինակ՝ «Եթե չասեիր, գլխի չէր ընկնի»)։

Պայմանի երկրորդական նախադասություններում երբեմն գործածվում է սահմանական եղանակի անցյալի վաղակատար ժամանակը, որով ընդգծվում է տվյալ չկատարված պայմանի իրագործման դեպքում անցյալում տեղի ունենալիք մի այլ գործողության, իրողության անխուսափելիությունը։ Այս պայմանի երկրորդական նախադասությունները համանիշ են ըղձականի անցյալով կազմված նախադասություններին։ Օրինակ՝ Նայեք, է՞։ Մի քայլ այս կողմ էր ընկել, վերջ (ԲՀ, ՍՉ, 59) → Մի քայլ այս կողմ ընկներ, վերջ։ Ես մինչև այժմ վաղուց արդեն մեռած կլինեի, եթե քո սերը, քեզ կրկին տեսնելու հույսս քաջություն չէին ներշնչել ինձ (ՆԴ, 1, 361) → Քաջություն չներշնչեին ինձ։ Որ բռնել էի..., էս բոլոր ջարդված տնկիները նրա գլխի պիտի ջարդեի (ՆՉ Հ) → Որ բռնեի...

Անցյալի վաղակատար ժամանակի այս կիրառությունը հատուկ է հատկապես ժողովրդական-խոսակցական լեզվին։

Սահմանական եղանակի անցյալի վաղակատար ժամանակը խոսքային համապատասխան միջավայրում (մեծ մասամբ բացականչական նախադասություններում) կարող է դրսևորել նաև խոսողի ափսոսանքը ցանկալի, բայց չկատարված գործողության վերաբերյալ։ Այս դեպքում ևս այն համանիշ է լինում ըղձական եղանակի անցյալ ժամանակին. օրինակ՝ —Ա՜յ թե մի թվանք էր եղել, հա՜...,— ափսոսանքով ասաց քեռի Հարությը (ԱՇ, ԱՍԱ, 93) → Ա՜յ թե մի թվանք լիներ, հա՜։ Անցյալի վաղակատարի այս կիրառությունը ևս հատուկ է ժողովրդական-խոսակցական լեզվին։

Երբեմն ըղձականի անցյալը ներ, ներիք է, բավական է շաղկապական բառերով միացած երկրորդական նախադասություններում, սահմանական եղանակի անցյալի անկատար ժամանակի հարաբերակցությամբ, ցույց է տալիս նաև անցյալում կրկնվող գործողություններ։ Այս դեպքում այն կորցնում է սուբյեկտիվ վերաբերմունք դրսևորելու հատկությունը և լրիվ հավասարարժեք է դառնում սահմանական եղանակի անցյալի անկատար ժամանակին։ Այս կիրառությունը հատուկ է հատկապես ժողովրդական-խոսակցական լեզվին. օրինակ՝ Բաց, դուրան տեղ էր. Հերիք էր գլուխներս բարձրացնեիք՝ իրար տեսնում էինք (ՍՁ, 2, 514)։ Գործից հետո, ամեն իրիկուն ես սովորություն ունեի շվու ածել։ Հենց որ Ակոբ աղան գնար ներ, ես կսկսեի[1] իմ շվուն (ՍՁ, 1, 152)։ Բավական էր հակառակորդը մի փոքր սխալ թույլ տար, նա անմիջապես կարողանում էր օգտվել դրանից։ Բերված նախադասությունները համանիշ են հետևյալներին՝ «Հենց որ գլուխներս բարձրացնում էինք, իրար տեսնում էինք», «Հենց որ Ակոբ աղան գնում, ներում էր, ես սկսում էի իմ շվուն», «Հենց որ հակառակորդը մի փոքր սխալ էր թույլ տալիս, նա անմիջապես կարողանում էր օգտվել դրանից»։ Սահմանական եղանակի անցյալի անկատարի

---

[1] Այստեղ կսկսեի ձևը ոչ թե ենթադրական եղանակի անցյալի ձև է, այլ սահմանական եղանակի անցյալի անկատարի բարբառային ձև (սկսում էի)։

մոտ հնարավոր չէ որպես կապակցության միջոց գործածել բավական է, հերիք է շաղկապական կապակցությունները, այդ պատճառով դրանց փոխարեն (կամ դրանց համապատասխան) գործածվում է հենց (nr) շաղկապը (տե՛ս օրինակները)։

Ըղձական եղանակի անցյալը կրկնվող գործողություն ցույց տվող սահմանականի անցյալի անկատարի իմաստով և վերջինիս համանիշ է գործածվում նաև հետևյալ կառուցվածքի ժխտական նախադասություններում. «Օր չէր լինի, որ չգար», «Գիշեր չէր լինում, որ տագնապ չլիներ», «Գիրք չկար, որ չկարդար» և այլն։ Այս նախադասությունները, չնայած ժխտական կառուցվածքին, ունեն հաստատական բնույթ և համանիշ են դրական կառուցվածք ունեցող հետևյալ նախադասություններին՝ «Ամեն օր գալիս էր», «Ամեն գիշեր տագնապ էր լինում», «Բոլոր գրքերը կարդում էր» և այլն։ Կրկնակի ժխտում պարունակող նախադասություններում ավելի է ընդգծվում որևէ տեղի, ժամանակի, օբյեկտի և այլնի հետ կապված գործողության պարբերական կատարումը և վերջիններիս ամբողջական ընդգրկումը։

Երբ նույն կառուցվածքի ժխտական նախադասության մեջ ըղձականի անցյալի ժխտական ձևի փոխարեն գործածվում են երկրորդական բաղադրյալ անցյալի հարակատարի ժխտական ձևերը, նախադասությունը դադարում է անցյալում կրկնվող գործողություն ցույց տալուց և պարզապես մատնանշում է անցյալում կատարված և դարձյալ ամբողջական ընդգրկում ունեցող գործողություն։ Այս դեպքում այն համապատասխանում է սահմանական եղանակի անցյալի վաղակատար ժամանակի դրական ձևերին. օրինակ՝ «Գիրք չկար, որ կարդացած չլիներ», «Տեղ չկար, որ գնացած չլիներ», «Քաղաք չկար, որ տեսած չլիներ»։ Այս նախադասությունները համանիշ են դրական կառուցվածք ունեցող հետևյալ նախադասություններին և դրանց նման ունեն հաստատական բնույթ. «Բոլոր գրքերը կարդացել էր», «Ամեն տեղ գնացել էր», «Բոլոր քաղաքները տեսել էր»։

2. Ենթադրական եղանակի անցյալ ժամանակի ձևերը, ըղձականի նույն ժամանակի ձևերի նման, հիմնականում ցույց են տալիս անցյալում կատարված (եթե ժխտական են), կամ չկատարված

(եթե դրական են) գործողություններ։ Սակայն, ի տարբերություն ըղձական եղանակի ձևերի, սրանք արտահայտում են ոչ թե խոսողի ցանկությունը, իղձը, ափսոսանքը գործողության կատարման կամ չկատարման վերաբերյալ, այլ ենթադրությունը՝ համապատասխան պայմանի առկայության պայմաններում անցյալ ժամանակում գործողության կատարման կամ չկատարման հնարավորության վերաբերյալ։ Օրինակ՝ Ես մի հարվածով կջախջախեի այն ձեռքը, որ կմոտենար իմ տոհմական անարատ անունը արատավորելու։ Ես այդ կարող էի անել (ՄԳՄ)։ Կլինեի հարգի մի մարդ, նույնիսկ եթե գլուխս այն ժամ դատարկ լիներ հազար անգամ (ՀԹ)։ Չէիր ձանձրանա դու գիտությունից, չէիր ձանձրանա սիրուց ու կյանքից, թե ունենայիր թշնամիներ մեծ (ԵՉ)։ Գործողությունների կատարման կամ չկատարման համար անհրաժեշտ պայմանը տրվում է կամ հենց նույն նախադասության մեջ (պայմանի երկրորդական նախադասությամբ) և կամ կոնտեքստում՝ նախորդող նախադասություններով։ Այս բայաձևերից դրականները կարող են համապատասխանել սահմանական եղանակի վաղակատար ժամանակի ժխտական ձևերին, ժխտականները՝ վաղակատարի դրական ձևերին (կջախջախեի—չեմ ջախջախել, չէի գնագնացել եմ և այլն)։ Վերը բերված նախադասությունների՝ սահմանական եղանակի բայաձևերով կազմված համանիշները կլինեն. «Ես մի հարվածով չեմ ջախջախել այն ձեռքը, որ մոտեցել է իմ տոհմական անարատ անունը արատավորելու», «Հարգի մարդ չեմ եղել...», «Դու ձանձրացել ես գիտությունից, ձանձրացել ես սիրուց ու կյանքից, որովհետև չունես (չես ունեցել) մեծ թշնամիներ»։ Այս նախադասությունների միջև կա կառուցվածքային այն տարբերությունը, որ պայմանի երկրորդական նախադասությունը, եթե այդպիսին կա, վեր է ածվում պատճառի կամ հիմունքի երկրորդական նախադասության, այսինքն՝ հիմնավորվում է տվյալ գործողության՝ անցյալում կատարվելը կամ չկատարվելը։

Որոշ կիրառություններում ենթադրական եղանակի անցյալ ժամանակը կորցնում է իր եղանակային արժեքը և վերածվում է անցյալում կատարված-ավարտված գործողություններ նկարագրելու միջոցի (առանց սուբյեկտիվ վերաբերմունք դրսևորելու)՝ հա-

մանիշ լինելով կա՛մ պարբերաբար կրկնվող գործողություն ցույց տվող անցյալի անկատար ժամանակին և կամ ժամանակային հաջորդականություն ցույց տվող անցյալ կատարյալ ժամանակին (այս մասին տե՛ս էջ 150 և 152)։

Բացականչական հատուկ հնչերանգ ունեցող մի շարք նախադասություններում ենթադրական եղանակի անցյալ ժամանակի ժխտական ձևերը հանդես են գալիս որպես համանիշ դրական ձևերին՝ ցույց տալով անցյալում ենթադրվող, հավանական, բայց չկատարված գործողություն. օրինակ՝ Եթե Մարգարիտի դուրս վազելուց հետո գրիչը կարողանար տեսնել նրա հայացքը, կամ թեկուզ լսել նրա հեռացող ոտնաձայնը, ինչպիսի՞ հուզմունքներ չէր կարդա աղջկա այրվող դեմքին (ՍԳԱ, 547)։ Այս նախադասությունը համանիշ է «...Ինչպիսի՞ հուզմունքներ կկարդար աղջկա այրվող դեմքին» դրական կառուցվածք ունեցող նախադասությանը։ Այս համանիշ նախադասությունները ունեն նրբերանգային այն տարբերությունը, որ ժխտական կառուցվածքի դեպքում հաղորդվածի հուզաարտահայտչական երանգավորումը ավելի ուժեղ է։

Ենթադրական եղանակի երկրորդական բաղադրյալ հարակատար ժամանակը (գնացած կլինի) երբեմն ցույց է տալիս խոսողի ենթադրությունը, կարծիքը որևէ գործողության, եղելության՝ անցյալ ժամանակամիջոցում կատարված-ավարտված լինելու վերաբերյալ. օրինակ՝ Ռշտունյաց նախարարը լրտեսներ ուղարկած կլինի (ԴԴվ)։ Պատերազմը քուշանների դեմ կատաղեցրած կլինի նրան (Ն. տ.)։ Նա արդեն գնացած կլինի: Այս ձևերին կարող են համապատասխանել սահմանական եղանակի վաղակատար ժամանակի ձևերը՝ ենթադրություն, հավանականություն ցույց տվող որևէ եղանակավորող բառի հետ (հավանաբար, ըստ երևույթին, երևի և այլն)։

Վերևի նախադասություններին համանիշ կարող են լինել հետևյալները. Ռշտունյաց նախարարը հավանաբար լրտեսներ է ուղարկել: Պատերազմը քուշանների դեմ ամենայն հավանակությամբ (հավանաբար) կատաղեցրել է նրան։ Նա երևի արդեն գնացել է: Ինչպես երևում է բերված օրինակներից, այն, ինչ առաջին

նախադասության մեջ հնարավոր է եղել արտահայտել միայն բայաձևով՝ ենթադրական եղանակի երկրորդական բաղադրյալ ժամանակով, երկրորդ դեպքում տրվել է նկարագրության միջոցով, որտեղ սահմանական եղանակի վաղակատար ժամանակով արտահայտվել է անցյալում կատարված գործողության գաղափարը, իսկ եղանակավորող բառի օգնությամբ՝ խոսողի սուբյեկտիվ վերաբերմունքը այդ գործողության նկատմամբ։ Իհարկե, եղանակավորող բառեր երբեմն գործածվում են նաև ենթադրական եղանակի բայաձևերի առկայության դեպքում, սակայն նրանք այս դեպքում միայն ընդգծում, ավելի են շեշտում բայաձևով արտահայտված վերաբերմունքը (հմմտ. Նա արդեն գնացած կլինի—Նա երևի արդեն գնացած կլինի)։ Եղանակավորող բառի հետ այդ նույն իմաստը կարող է արտահայտել նաև ըղձական եղանակի երկրորդական բաղադրյալ հարակատար ժամանակը, սակայն այս դեպքում ավելի ընդգծվում է գործողության թեականությունը, հավաստի չլինելը. օրինակ՝ «Նա երևի արդեն գնացած լինի»։ Այս նույն բայաձևերի հետ գուցե եղանակավորող բառով և հատուկ հնչերանգի օգնությամբ ենթադրության հետ մեկտեղ ընդգծվում է նաև խոսողի կողմից՝ գործողության կատարված լինելը ցանկալի համարվելը. օրինակ՝ Նա այդ մասին գուցե իմացել է → Նա այդ մասին գուցե իմացած լինի → Նա այդ մասին գուցե իմացած կլինի (Վերջին դեպքում, իհարկե, ավելի ընդգծվում է ենթադրությունը)։

Պայմանի բարդ ստորադասական նախադասություններում հաճախ գործածվում են նաև ենթադրական եղանակի երկրորդական բաղադրյալ անցյալի հարակատար ժամանակի ձևերը, որոնք ևս ցույց են տալիս խոսողի համոզմունքը որևէ չկատարված գործողության՝ համապատասխան պայմանի առկայության դեպքում անցյալ ժամանակում կատարվելու հնարավորության վերաբերյալ. օրինակ՝ Եթե չհիվանդանայի, այդ աշխատանքը վաղուց ավարտած կլինեի։ Եթե ամեն կրակոցից մարդ սպանվեր, հիմա աշխարհում մարդիկ մնացած չէին լինի։ Այս իմաստով ժողովրդական-խոսակցական լեզվում երբեմն գործածվում է նաև սահմանական եղանակի անցյալի վաղակատար ժամանակը, որի դրական ձևերը ևս այս

դեպքում ցույց են տալիս չկատարված, իսկ ժխտական ձևերը՝ կատարված գործողություն. այսպես՝ եթե չհիվանդանայի, այս աշխատանքը վաղուց ավարտել էի: Եթե ամեն կրակոցից մարդ սպանվեր, հիմա աշխարհում մարդիկ չէին մնացել (ՀՔ, ՄՏՁ, 2, 43)։ Անցյալի վաղակատար ժամանակի գործածության դեպքում ավելի է ընդգծվում գործողության կատարման կամ չկատարման հավանական, հնարավոր լինելը (այն դիտվում է որպես կարծես արդեն կատարված կամ չկատարված)։ Առաջին օրինակում պայմանի երկրորդական նախադասության մեջ գործածված ըղձական եղանակի անցյալ ժամանակի ժխտական բայաձևը (չհիվանդանայի) ցույց է տալիս անցյալում կատարված մի գործողություն, որը պատճառ է հանդիսացել գլխավոր նախադասության գործողության չկատարման համար (բարդ նախադասությամբ ընդգծվում է այն միտքը, որ այդ գործողության չկատարման դեպքում կկատարվեր գլխավոր նախադասության գործողությունը)։ Երկրորդ օրինակում պայմանի երկրորդական նախադասության ըղձական եղանակի անցյալ ժամանակի դրական բայաձևը (սպանվեր) ցույց է տալիս անցյալում չկատարված գործողություն, որի հետևանքով առկա է, տեղի է ունեցել գլխավոր նախադասության գործողությունը։ Վերոբերյալ նախադասությունները համանիշ են սահմանական եղանակի բայաձևերով կազմավորված պատճառային հարաբերություններ դրսևորող հետևյալ բարդ ստորադասական նախադասություններին՝ «Այս աշխատանքը չեմ ավարտել, որովհետև հիվանդացել էի», «Հիմա աշխարհում մարդիկ մնացել են, որովհետև ամեն կրակոցից մարդ չի սպանվել», որտեղ նախորդ գլխավոր նախադասությունների ենթադրական եղանակի երկրորդական բաղադրյալ անցյալի հարակատար և սահմանական եղանակի անցյալի վաղակատար դրական ժամանակաձևերին համապատասխանում են սահմանական եղանակի վաղակատար ժամանակի ժխտական ձևերը (ցույց է տրվում չկատարված գործողություն), իսկ ժխտական ձևերին՝ վաղակատար ժամանակի դրական ձևերը։ Պայմանի երկրորդական նախադասությունները վեր են ածվել պատճառի երկրորդական նախադասությունների, որտեղ ըղձական եղանակի անցյալ ժամանակի ժխտական ձևին համա-

պատասխանում է սահմանական եղանակի անցյալի վաղակատար ժամանակը, իսկ դրական ձևին՝ վաղակատար ժամանակի ժխտական ձևը։

Ինչպես երևաց, այս նախադասություններով ևս նկարագրվում են անցյալ ժամանակահատվածում կատարված կամ չկատարված գործողություններ։

3. Հարկադրական եղանակի անցյալ ժամանակի ձևերը ևս հիմնականում ցույց են տալիս անցյալում կատարված (եթե ժխտական են), կամ չկատարված (եթե դրական են) գործողություններ, միաժամանակ դրսևորելով խոսողի վերաբերմունքը դրանց նկատմամբ։ Այդ վերաբերմունքը այս դեպքում այն է, որ խոսողը տվյալ գործողությունների կատարումը կամ չկատարումը անցյալում համարում էր անհրաժեշտություն, որոշ չափով պարտադիր, նախատեսված, որը տեղի չի ունեցել միայն որոշ հանգամանքների բերումով։ Հարկադրական եղանակի այս իմաստով գործածությանը հանդիպում ենք հատկապես պայմանի բարդ ստորադասական նախադասություններում և հակադրական հարաբերությամբ կապակցված բարդ համադասական նախադասություններում։ Վերջին դեպքում հակադրական հարաբերությամբ կապված երկրորդ նախադասության ստորոգյալը դրվում է սահմանական եղանակի անցյալ կատարյալ ժամանակով։ Օրինակներ՝ Ես պիտի գնայի, եթե տոմս ճարեի: Ես պիտի գնայի, բայց տոմս չճարեցի: Ճիշտ է ասում, չպիտի հայտնեիր:

Այս ժամանակային ձևերը շատ կիրառություններում հանդես են գալիս որպես սահմանական եղանակի անցյալի ապառնու համանիշներ՝ արտահայտելով հիմնականում նույն ժամանակային հարաբերությունը՝ եղանակային շատ թույլ արտահայտված տարբերությամբ։ Ըստ որում դրական ձևերը համապատասխանում են դրական ձևերին, ժխտական ձևերը՝ ժխտականներին։ Այսպես, վերոբերյալ նախադասությունները համանիշ են նույն կառուցվածքն ունեցող և միայն բայ-ստորոգյալի եղանակային ձևով տարբերվող հետևյալ նախադասություններին. Ես գնալու էի, եթե տոմս ճարեի։ Ես գնալու էի, բայց տոմս չճարեցի։ Ճիշտ է ասում, չէիր հայտնելու: Ժամանակային այս նույն հարաբերությունը կա-

րելի է դրսևորել նաև սահմանական եղանակի անցյալ կատարյալ (երբեմն նաև վաղակատար) ժամանակի միջոցով, սակայն այս դեպքում փոխվում է և՛ ամբողջ նախադասության կառուցվածքը, և՛ բայի ձևը՝ հարկադրականի անցյալի դրական ձևին համապատասխանում է սահմանականի անցյալ կատարյալի ժխտական ձևը, իսկ ժխտական ձևին՝ դրականը։ Եթե նախադասությունը դրսևորում է պայմանային հարաբերություններ, վերջիններս փոխվում են պատճառայինի։ Պայմանի երկրորդական նախադասության բայ-ստորոգյալի՝ ըղձականի անցյալ ժամանակը ևս փոխվում է սահմանական եղանակի անցյալ կատարյալի։ Իսկ եթե նախադասությունը բարդ համադասական է՝ ներհակական հարաբերությամբ, այն վեր է ածվում պատճառային հարաբերությամբ բարդ ստորադասական նախադասության. օրինակ՝ Ես պիտի գնայի, *եթե տոմս ճարեի* → *Ես* չգնացի, *որովհետև տոմս* չճարեցի: *Ես պիտի գնայի,* բայց տոմս չճարեցի → *Ես չգնացի,* որովհետև տոմս չճարեցի: *Ինչպես երևում է բերված օրինակներից, տարբեր քերականական կառուցվածք ունեցող այս նախադասություններով դրսևորվել են առարկաների միջև գոյություն ունեցող պատճառա-ժամանակային միևնույն հարաբերությունները։ Տարբեր են միայն խոսողի վերաբերմունքի դրսևորման աստիճանները հաղորդածի նկատմամբ, որով և պայմանավորված են հիշյալ նախադասությունների կառուցվածքային-քերականական տարբերությունները։*

Հարկադրական եղանակի անցյալի ձևերը երբեմն հատուկ հնչերանգի օգնությամբ և խոսքային համապատասխան միջավայրում դրսևորում են խոսողի դժգոհությունը տրված գործողության՝ անցյալ որոշակի ժամանակահատվածում կատարման (եթե բայը ժխտական է) կամ չկատարման (եթե դրական է) վերաբերյալ. օրինակ՝ «Ճիշտ է ասում, չպիտի վերցնեիր», *«Ինչքան էլ ստիպեր,* չպիտի գնար», *«Որ այդքան ստիպել է,* պիտի գնար», *«Է՛հ,* չպիտի ասեի»: *Այս նախադասությունները կարող են համանիշ լինել սահմանական եղանակի վաղակատար (նաև անցյալ կատարյալ) ժամանակով կազմված նախադասությունների, որոնց մեջ բայի մոտ անպայման գործածվում է* իզուր *եղանակավորող բառը։ Վերջինիս միջոցով էլ հենց դրսևորվում է խոսողի վերաբերմունքը հաղորդ-*

վածի նկատմամբ. այսպես՝ «Ճիշտ է ասում, իզուր ես վերցրել», «Ինչքան էլ ստիպել է, իզուր ես գնացել», «Որ այդքան ստիպել է, իզուր չի գնացել», «Էհ, իզուր ասացի (իզուր եմ ասել)»: Այս նույն իմաստը կարելի է արտահայտել նաև միադիմի միակազմ նախադասությամբ, որը ձևավորվում է պետք էր կամ պետք չէր եղանակավորող կապակցությամբ և համապատասխան բայի անորոշ դերբայով։ Սակայն այս դեպքում նախադասությունը ձեռք է բերում ընդհանուր-անորոշ նշանակություն, մթագնում է դիմային որոշակիությունը (վերջինս հայտնի է դառնում միայն կոնտեքստից)։ Այսպես՝ «Ճիշտ է ասում, պետք չէր վերցնել», «Ինչքան էլ ստիպեր, պետք չէր գնալ», «Որ այդքան ստիպել է, պետք էր գնալ», «Է՛հ, պետք չէր ասել»։

Երբ խոսողը արտահայտում է իր կարծիքը անցյալում որևէ գործողության կատարման կամ չկատարման վերաբերյալ, այսինքն՝ երբ նկարագրվում է այնպիսի գործողություն, որի կատարման մասին թեև հավաստի տեղեկություններ չկան, սակայն, ըստ խոսողի կարծիքի, այն պետք է անհրաժեշտաբար կատարված լինի, գործածվում է հարկադրական եղանակի երկրորդական բաղադրյալ հարակատար ժամանակը. օրինակ՝ Նա արդեն պիտի գնացած լինի: Ժամը 10-ն է. Աշոտը արդեն պիտի ճնած լինի: Գործողության կատարման անցյալին վերաբերելը այս դեպքում տրվում է հատուկ ժամանակի մակբայի միջոցով։ Այլապես այն կարող է վերաբերել և՛ անցյալին, և՛ ապառնիին («Վաղը նա պիտի գնացած լինի»)։ Այս նույն իմաստն արտահայտելու համար կարող է գործածվել նաև ըղձական եղանակի երկրորդական բաղադրյալ հարակատար ժամանակը պետք է որ եղանակավորող կապակցության հետ (վերջինս համարժեք է պիտի եղանակիչին). օրինակ՝ «Նա պետք է որ գնացած լինի»: «Պետք է որ արդեն ճնած լինի»: Այս ձևով գործողության կատարված լինելու հավանականությունը ավելի է ընդգծվում։ Նույն իմաստը կարելի է արտահայտել նաև սահմանական եղանակի վաղակատար ժամանակով՝ միայն համապատասխան եղանակավորող բառի գործածմամբ. օրինակ՝ «Նա անշուշտ արդեն գնացել է»: Հաճախ այս երկու կառուցվածքի նախադասությունները գործածվում են միա-

սին՝ ավելի ընդգծելու համար գործողության կատարված լինելու հավաստիությունը (ըստ խոսողի). այսպես՝ «Նա անշուշտ արդեն գնացել է, արդեն գնացած պիտի լինի»:

Երբ խոսողը նկարագրում է մի այնպիսի գործողություն, որը, ըստ իր կարծիքի, մի անցյալ ժամանակամիջոցում արդեն կատարված-ավարտված պիտի լիներ, սակայն դեռևս չի կատարվել և կամ խոսողին հայտնի չէ դրա կատարման մասին, գործածվում է հարկադրական եղանակի երկրորդական բաղադրյալ անցյալի հարակատար ժամանակը։ Առաջին դեպքում (երբ գործողությունը չի կատարվել) այդ նույն իմաստը հատուկ շեշտող հնչերանգի օգնությամբ կարելի է արտահայտել նաև սահմանական եղանակի վաղակատար ժամանակով։ Օրինակ՝ Նա պիտի արդեն գնացած լիներ → Նա դեռ չի՛ գնացել: Նա այս ժամին պիտի բնած լիներ → Նա դեռ չի՛ բնել: Երկրորդ դեպքում ընդգծվում է նաև խոսողի դժգոհությունը, զարմանքը գործողության կատարված չլինելու առթիվ։

Անցյալ ժամանակահատվածին վերաբերող հատկանիշ, դրություն, վիճակ նկարագրելու համար գործածվում են բաղադրյալ ստորոգյալներ՝ անցյալ ժամանակով դրված ստորոգելիական հանգույցով. օրինակ՝ Արդար և իմաստուն դատավոր էր Ուշինարան։ Մաքուր էին նրա բոլոր խորհուրդները (Իս.)։ Այս կառուցվածքի նախադասություններ են գործածվում այն դեպքում, երբ խոսողը տվյալ հատկանիշները, երևույթները դիտում է որպես օբյեկտիվ ռեալություն։ Սակայն հաճախ խոսողը հաղորդում է այնպիսի իրողություններ ու հատկանիշներ, որոնց մասին հավաստի տեղեկություն չունի, խոսում է միայն ենթադրաբար, հայտնում է իր կարծիքը դրանց առկայության մասին։ Այդ դեպքում գործածվում են տարբեր կառուցվածքի նախադասություններ։ Այսպես, երբ հաղորդվում է որևէ առարկայի, իրի մոտավոր թվական արժեքի մասին, կարող է գործածվել էր հանգույցով ու թվական ստորոգելիական վերադրով բաղադրյալ ստորոգյալ, որի մոտ գործածվում են մոտ, մոտավորապես, ճավանաբար եղանակավորող բառերը և կամ որպես ստորոգելիական հանգույց գործածվում է լինել բայի ենթադրական եղանակի անցյալ ժամանակը։ Եղանակավորող բա-

ռեր կարող են գործածվել նաև այս դեպքում։ Օրինակ՝ Հարսը կլիներ մոտ քսան-քսաներկու տարեկան *(ՆԴ, 3, 7)* → *Հարսը* մոտ քսան-քսաներկու տարեկան էր → *Հարսը* կլիներ քսան-քսաներկու տարեկան: *Այնտեղ հավաքվածները* երեի հինգ-վեց հոգի էին → *Այնտեղ հավաքվածները* հինգ-վեց հոգի կլիներին:

Երբ նկարագրվում են ոչ հավաստի, բայց ըստ խոսողի անցյալում անհրաժեշտաբար, հավանաբար երևան եկած հատկանիշներ, երևույթներ, որպես հանգույց գործածվում է կամ էական բայի անցյալ ժամանակը՝ համապատասխան եղանակավորող բառերի հետ, կամ լինել (երբեմն նաև ունենալ) բայի հարկադրական եղանակի անցյալ ժամանակը, ինչպես նաև երկրորդական բաղադրյալ հարակատար ժամանակը։ Այս դեպքում ևս պիտի *եղանակիչի փոխարեն հաճախ գործածվում է* պետք է որ *եղանակավորող կապակցությունը։ Օրինակ՝ Այնտեղ* ամենայն հավանականությամբ (հավանաբար, անշուշտ) *շատ* շոգ էր → *Այնտեղ շատ* շոգ պիտի (պետք է որ) լիներ → *Այնտեղ շատ* շոգ պիտի եղած լիներ: Աշուն պիտի եղած լիներ *և օրամուտ։ Մենք նստել էինք բուլվարում (ԳՄ, ԵՍ, 355)* → Կարծեմ աշուն էր *և օրամոտ։* Պետք է որ (պիտի) շատ անհաջող արտաքին ունենայի *(ՎԱ, ԼՀ, 82)* → Հավանաբար շատ անհաջող արտաքին ունեի:

Ապառնի ժամանակի դրսևորումը համանիշ ձևերի օգնությամբ

Խոսելու պահին հաջորդելիք, մի ապառնի ժամանակամիջոցում կատարվելիք, տեղի ունենալիք գործողություն, եղելություն, իրողություն նկարագրելու համար ժամանակակից հայերենն ունի բայի հատուկ ժամանակաձևեր։ Դրանք են՝սահմանական եղանակի ապառնի, ըղձական, ենթադրական, հարկադրական եղանակների ապառնի ժամանակաձևերը, ինչպես նաև հրամայական եղանակի բայաձևերը, որոնք հանդես են գալիս որպես պարզ ստորոգյալներ (գրելու եմ, գրեմ, կգրեմ, պիտի գրեմ, գրիր): *Երբ նկարագրվում են ապառնի ժամանակահատվածում երևան գալիք,*

սպասվող հատկանիշներ, դրություններ, վիճակներ, որպես բաղադրյալ ստորոգյալի ստորոգելիական հանգույց էական բայի փոխարեն գործածվում են լինել բայի ապառնի ժամանակաձևերը։ Որպես հանգույց հանդես եկող մյուս վերացական բայերը ևս գործածվում են ապառնի ժամանակով։

Վերը թվարկված եղանակների ապառնի ժամանակաձևերը իրենց արտահայտած ժամանակային հարաբերությունների բնույթով նույնն են, այսինքն՝ դրսևորում են խոսելու պահից հետո սպասվող, ապառնի ժամանակամիջոցում կատարվելիք գործողություն կամ եղելություն։ Նրանց միջև եղած իմաստային տարբերությունը եղանակային է. յուրաքանչյուրը դրսևորում է խոսողի տարբեր վերաբերմունքը հաղորդված գործողության նկատմամբ։ Մի դեպքում այդ գործողությունը ներկայացվում է որպես հաստատ կատարվելիք, մի դեպքում դրսևորվում է խոսողի համոզմունքը, ենթադրությունը գործողության կատարման վերաբերյալ, մի այլ դեպքում՝ ցանկությունը այդ գործողությունը կատարված տեսնելու, հրամանը՝ գործողությունը կատարելու և այլն։ Հաղորդակցման պրոցեսում իրենց բազմազան կիրառություններում այս ժամանակաձևերը հաճախ դրվելով նման խոսքային իրադրության մեջ՝ հանդես են գալիս որպես համանիշներ՝ նույն ժամանակի (ապառնի ժամանակի) հետ միասին դրսևորելով նաև խոսողի նույն կամ նման վերաբերմունքը հաղորդվածի նկատմամբ։

Ապառնի ժամանակահատվածում ևս, անցյալի նման, գործողությունները, իրողությունները երևույթները գտնվում են բազմազան ժամանակային հարաբերությունների միջև, որոնց նկատմամբ խոսողը կարող է դրսևորել խիստ տարբեր վերաբերմունքներ։ Այդ բոլորը արտահայտելու համար միայն հիշյալ ժամանակաձևերը հաճախ չեն բավարարում։ Այդ պատճառով երբեմն ապառնի ժամանակի իմաստ դրսևորելու համար գործածվում են նաև ներկա ու անցյալ ժամանակաձևերը իրենց երկրորդական կիրառություններով, ինչպես նաև քերականական ու բառական այլ միջոցներ, որոնք հատուկ իմաստային և ոճական նրբերանգ են մտցնում հաղորդվածի մեջ։ Սրանք ևս հաճախ կարող են հանդես գալ որպես

համանիշներ։ Քննենք ապառնի ժամանակ ցույց տվող համանիշ շարքերը։

1. Ապառնի ժամանակն ունի այն առանձնահատկությունը, որ ցույց տալով դեռևս չկատարված, սպասվող գործողություն կամ եղելություն, ավելի շատ է կապված խոսողի սուբյեկտիվ վերաբերմունքի հետ, քան մյուս ժամանակները։ Այդ է պատճառը, որ սահմանական եղանակի ապառնի ժամանակի բայաձևերը քիչ կիրառություն ունեն։ Վերջիններս գործածվում են այն դեպքում, երբ հաղորդվող գործողությունը, եղելությունը դիտվում են իբրև ստույգ կատարվելիք, օբյեկտիվ ռեալություն։ Օրինակ՝ Ես բոլորի հետ հուզված եմ ու երջանիկ, որ մեր ազգային ուրախությունը կիսելու են երգիչներ, որոնք վաղուց արժանացել են... («Հայրենիքի ձայն»)։ Շուտով սկսվելու են ամառային արձակուրդները։

Շատ հաճախ այս նույն իմաստն արտահայտելու համար գործածվում են ենթադրական ու հարկադրական եղանակների ապառնի ժամանակները, որոնք այս կիրառություններում գրեթե կորցրել են իրենց եղանակային հատկանիշները. այսպես՝ Շուտով սկսվելու են (պիտի սկսվեն–կսկսվեն) ամառային արձակուրդները։ Գարնան և ամռան ամիսներին հատուկ միջոցառումներ կմշակվեն (մշակվելու են, պիտի մշակվեն) բնակչության սպասարկման գործը ավելի բարձրացնելու համար (Մամուլ)։ Այս տարի ավտոտնտեսությունները կհամալրվեն (համալրվելու են, պիտի համալրվեն) նոր, հարմարավետ մեքենաներով (Մամուլ)։ Իհարկե հիշյալ բայաձևերից յուրաքանչյուրը հաղորդվածին տալիս է որոշ նրբերանգ։ Հենց այդ պատճառով էլ այս ձևերը գործածվում են։ Եթե այս երեք ժամանակաձևերն էլ արտահայտեին լրիվ նույն իմաստը, լեզուն տվյալ կիրառությունում կպահեր դրանցից միայն մեկը։ Համեմատաբար իրար մոտ են սահմանական եղանակի և հարկադրականի ապառնիները, որոնք երկուսն են ցույց են տալիս ապագայում կատարվելիք և ստույգ համարվող, որպես օբյեկտիվ ռեալություն ներկայացվող գործողություններ, իսկ ենթադրական ապառնին գործածելիս որոշ չափով ընդգծվում է խոսողի համոզմունքը (սուբյեկտիվ վերաբերմունք) գործողության կատարման վերաբերյալ։

2. Երբ խոսողը հաղորդում է իր կարծիքով հաստատապես կատարվելիք գործողություն, սահմանական եղանակի ապառնի ժամանակի փոխարեն կարող են գործածվել նաև ներկա ժամանակի ձևերը, որոնց միջոցով ավելի է ընդգծվում գործողության հաստատորեն կատարվելու միտքը։ Խոսողը կարծեք գործողությունը համարում է արդեն ընթացքի մեջ։ Ներկա ժամանակի այս կիրառությամբ հանդես են գալիս հատկապես շարժում ցույց տվող բայերը։ Բերենք օրինակներ։ —Մոսկվա եմ գնում, մայրի՛կ,— բացատրեց նա հրճվանքով։— Մի շաբաթ հետո մեկնում եմ (ՆՁՀ, 266)։ —Տղանե՛ր,— ասում է մայորը,— գնում ենք հարձակման (ԲՀ, ՍՁ, 179)։ —Ի՞նչ կա, Վոլոդյա։— Գնում ենք։— Ո՞ւր։— Առաջավոր գիծ (Ն. տ., 176)։ Գիտե՞ս, որ աշնանը Դիլիջանում գիմնազիա է բացվում,— հարցրեց նա (ՎԱ, ԼՀ, 96)։ Այս կառուցվածքի նախադասությունները գործածվում են հատկապես ժողովրդական-խոսակցական լեզվում ու գեղարվեստական գրականության երկխոսությունների մեջ և ավելի պատկերավոր, արտահայտիչ են դարձնում խոսքը։ Սրանք համանիշ են հետևյալ նախադասություններին՝ Մոսկվա եմ գնալու (պիտի գնամ)...: Մի շաբաթ հետո մեկնելու եմ (պիտի մեկնեմ):— Տղանե՛ր,— ասում է մայորը,— գնալու ենք (պիտի գնանք) հարձակման։— Ի՞նչ կա, Վոլոդյա։— Գնալու ենք (պիտի գնանք): ...Գիմնազիա է բացվելու:

Երբ խոսողը ապագայում կատարվելիք գործողությունը ներկայացնում է որպես որոշում, անառարկելի, սահմանական և հարկադրական եղանակների ապառնի ժամանակների փոխարեն ոճական նկատառումներով երբեմն գործածվում է նաև ներկա ժամանակը։ Այս դեպքում ևս շեշտվում է գործողության կատարման հաստատ, անխուսափելի լինելը։ Օրինակ՝ Մայրս նորից է բարկանում, նորից է լալիս... Միևնույն է, վերջացած բան է. ես ռուսաց դպրոց չեմ գնում (ՍՁ, ԵԺ, 3, 92)։ Մենք մի ժողով արինք ու որոշեցինք, թե՝ լոռեցիներս չենք կռվում մեր հարևան թուրքերի հետ (ՀԹ, 1, 371)։ Այս նախադասությունները համանիշ են հետևյալներին՝ Ես ռուսաց դպրոց չեմ գնալու (չպիտի գնամ): Լոռեցիներս չենք կռվելու (չպիտի կռվենք) մեր հարևան թուրքերի հետ։

3. Ներկային անմիջապես հաջորդող ապառնի ժամանակ ցույց

տալու համար լեզվում գործածվում են զանազան միջոցներ։ Այսպես, այդ իմաստով խոսակցական լեզվում և երկխոսությունների մեջ գործածվում են սահմանական եղանակի ներկա կամ անցյալ թատարյալ ժամանակները։ Առաջին դեպքում խոսողը խոսելու պահից անմիջապես հետո սկսվելիք գործողությունը դիտում է որպես արդեն ընթացքի մեջ եղող, իսկ երկրորդ դեպքում՝ որպես արդեն կատարված-ավարտված։ Օրինակ՝—Շո՛ւտ արեք, գնում ենք,— կանչեց Աշոտը։— Գնացինք: Քայլում ենք դեպի դուռը (ԲՀ, ՍՁ, 170)։— Շո՛ւտ արեք, ուշացանք, գնացին:

Այս իմաստը սահմանական եղանակի ապառնի, ենթադրականի կամ հարկադրականի ապառնի ժամանակների միջոցով դրսևորելու համար անհրաժեշտ է լինում գործածել համապատասխան ժամանակի պարագաներ. ինչպես՝—Շո՛ւտ արեք, արդեն (շուտով) գնալու ենք (պիտի գնանք):— Շո՛ւտ արեք, կուշանանք, կգնան: Սակայն այս դեպքում, ինչպես երևում է նաև օրինակից, խոսքը զրկվում է դինամիկությունից, արտահայտչականությունից։

Սահմանական եղանակի անցյալ կատարյալ ժամանակի հոգնակի առաջին դեմքը այս կիրառությամբ ունի հորդորի նշանակություն՝ համատեղ որևէ գործողություն կատարելու վերաբերյալ։

Ժամանակակից հայերենում խոսքի պահին անմիջապես հաջորդելիք գործողություն, եղելություն նկարագրելու համար գործածվում են ոչ միայն բայի ժամանակային ձևերը, այլ նաև տվյալ բայի անորոշ դերբայի սեռական հոլովի և վրա կապի միջոցով կազմված հատուկ բաղադրյալ ստորոգյալներ, որոնց հանգույցը էական բայի ներկա ժամանակի ձևերն են (վերջացնելու վրա եմ, սկսելու վրա են և այլն). օրինակ՝ Վտանգը հասնելու վրա է (Ր, 7, 128)։ Ջուրը եռալու վրա է: Գործը վերջացնելու վրա ենք: Այս իմաստն արտահայտող համանիշների շարքը կլինի՝ Վտանգը հասնելու վրա է → Վտանգը շուտով կհասնի → Վտանգը հասնում է (հասավ): Գործը վերջացնելու վրա ենք → Գործը շուտով կվերջացնենք → Գործը վերջացնում ենք (վերջացրինք):

Երբ այս բաղադրյալ ստորոգյալներում որպես հանգույց գործածվում են էական բայի անցյալ ժամանակաձևերը, ցույց է տրվում անցյալում մեկ այլ գործողության, եղելության համեմատու-

թյամբ անմիջապես կատարվելիք գործողություն. օրինակ՝ Անձրևն այժմ մաղում էր միայն և, ըստ երևույթին, կտրվելու վրա էր (ՆԴ, 3, 155)։ Այս կազմության բաղադրյալ ստորոգյալը համանիշ է լինում բայի հարկադրական եղանակի անցյալ ժամանակին, կամ սահմանական եղանակի անցյալի ապառնի ժամանակին. այսպես՝ Անձրևն այժմ մաղում էր միայն և, ըստ երևույթին, շուտով պիտի կտրվեր → շուտով կտրվելու էր:

4. Ըղձական եղանակի ապառնի ժամանակի միջոցով տրվում է խոսողի իղձը, ցանկությունը ապագայում կատարվելիք գործողության վերաբերյալ։ Ինչպես՝ Նորից գարուն է, արտերը ելնեմ, Եղնիկների հետ հովի պես սուրամ, Արծիվների հետ երգով սավառնեմ, Սիրտս երկնքի սրտի հետ բանամ (ՀՇ)։ Ապրելու կեան էլ պատվով մեռնելն է։ Ա՜խ, երանի թե ես այնպես մեռնեմ, որ դու ինձ սգաս (ՊՍ)։

Երբեմն այդ իմաստը դրսևորվում է նաև նկարագրական եղանակով՝ բայական բաղադրյալ ստորոգյալի միջոցով։ Վերջինս կազմված է լինում ուզենալ, ցանկանալ եղանակավորող բայերի սահմանական եղանակի ներկա ժամանակով և տվյալ բայի անորոշ դերբայով։ Այսպիսով՝ վերը բերված նախադասությունների համանիշ ձևերը կլինեն՝ Նորից գարուն է։ Ուզում եմ արտերը ելնել, Եղնիկների հետ հովի պես սուրալ, Արծիվների հետ երգով սավառնել, Սիրտս երկնքի սրտի հետ բանալ: ...Ես ուզում եմ այնպես մեռնել, որ դու ինձ սգաս։

Այս համանիշ նախադասությունները ունեն կիրառության տարբեր ոլորտներ։ Առաջինները (ըղձական եղանակի բայաձևերով կազմվածները) ավելի հուզա-արտահայտչական բնույթ ունեն, այդ պատճառով շատ են գործածվում բանաստեղծական լեզվում։ Երկրորդները ավելի առօրյա, սովորական ոճին են պատկանում։

Երբեմն ապագայում կատարվելիք գործողության վերաբերյալ իղձ, ցանկություն են արտահայտում նաև ըղձական եղանակի անցյալ ժամանակի ձևերը, որոնք այս կիրառություններում համանիշ են ապառնի ժամանակի ձևերին, տարբերվում են նրանցից միայն ցանկության, իղձի դրսևորման ուժգնությամբ և մեկ լրացուցիչ նրբերանգով՝ խոսողը այս ձևերով արտահայտում է նաև

թը կարծիքը տվյալ՝ խիստ ցանկալի գործողությունների կատարման դժվար իրագործելի լինելու, համարյա անհնարինության վերաբերյալ։ Օրինակ՝ Ես հովիկ լինեի, դու նազուկ ցարասի. Գգվեի կարոտով վարսերդ սնդուսի (Իս.)։ Լինեի չոքան սարերում հեռու, Գայիր, անցնեիր վրանիս մոտով (ՎՏ)։ Այս իմաստը նկարագրական եղանակով արտահայտելիս ուզել, ցանկանալ բայերը դրվում են ոչ թե ներկա, այլ ենթադրական եղանակի անցյալ ժամանակով. օրինակ՝ Ես կուզեի հովիկ լինել, դու նազուկ ցարասի. Կուզեի գգվել կարոտով վարսերդ սնդուսի։ Կուզեի լինել չոքան սարերում...։

Ըղձական եղանակի ապառնի կամ անցյալի ապառնի ժամանակաձևերով կազմված պարզ ստորոգյալները համապատասխան բաղադրյալ ստորոգյալով համանիշ կարող են ունենալ միայն առաջին դեմքով գործածվելու դեպքում (տե՛ս օրինակները)։ Երբ ըղձական եղանակի բայաձևով դրսևորվում է խոսողի իղձը, ցանկությունը որևէ մեկի կողմից մի գործողության կատարվելու վերաբերյալ՝ դրան համանիշ կարող են հանդես գալ ուզել բայի առաջին դեմքով կազմված գլխավոր նախադասություն և նրան լրացնող ուղիղ խնդիր երկրորդական նախադասություն պարունակող բարդ ստորադասական նախադասություններ. օրինակ՝ Երանի այսօր գա—Ուզում եմ, որ այսօր գա: Երանի չգնար—Շատ կուզեի, որ չգնար:

5. Հաճախ ըղձական եղանակի ապառնի ժամանակաձևը, կիրառվելով պայմանի (երբեմն նաև ժամանակի) երկրորդական նախադասություններում, ցույց է տալիս ենթադրվող մի այնպիսի գործողություն, որով պայմանավորված է մեկ այլ գործողության կատարումը։ Այս կիրառությունում տվյալ բայաձևի՝ իղձ, ցանկություն դրսևորելու եղանակային իմաստը որոշ չափով մթագնում է, ավելի ընդգծվում է գործողության կատարման հավանական, թեական լինելը, մեկ այլ գործողության համար պայման հանդիսանալը։ Գլխավոր նախադասության մեջ վերջինիս համապատասխանում է հիմնականում ենթադրական եղանակի ապառնի ժամանակը, երբեմն նույն նշանակությամբ նաև սահմանականի և հարկադրականի ապառնի ժամանակները, կամ հրամայական եղանա-

կի բայաձևերը, եթե հորդորվում է համապատասխան պայմանի իրագործումից հետո որևէ գործողություն կատարել. օրինակ՝ Թե տիրես, մեծ շահ, դու նրա սրտին, Թաթուլն էլ անզոր կրնկնի ոտքիդ տակ (ՀԹ)։ Եթե նրան ճանդիպես, իմ կողմից բարևներ ճաղորդիր: Եթե տեսնեմ, անպայման պիտի ասեմ (ասելու եմ)։

Սակայն ոճական նկատառումներով և հաղորդման նպատակից ելնելով՝ խոսքի պահից հետո կատարվելիք և պայման հանդիսացող գործողություն նկարագրելու համար հաճախ գործածվում են սահմանական եղանակի որոշ անցյալ բայաձևեր։ Վերջիններս այս կիրառություններում կորցնում են իրենց եղանակային և ժամանակային հիմնական արժեքները և համանիշ դառնում ըղձականի ապառնուն։ Այսպես, հաճախ պայմանի երկրորդական նախադասություններում գործածվում է սահմանական եղանակի անցյալ կատարյալ ժամանակը, որով պայման հանդիսացող նախադասությունը խոսողի կողմից դիտվում է որպես անպայման, հաստատ կատարվելիք. օրինակ՝ Եթե ստացա քո համաձայնությունը, անմիջապես կմեկնեմ (ՆԴ, 3, 360)։ Մի էքսկավատոր թե ճարեցինք, գործներս աջ կգնա (ԱՍեկ., ԳՀՏ, 190)։ Իսկ եթե կարողացա՞վ,— տարակուսանքով հարցրեց Վասակը (Ն. տ., 315)։ Բավական է, որ նա մի անգամ իր ձեռքերի մեջ առավ կոլխոզը։ Նա այլևս նրան բաց չի թողնի (ՆՀՀ, 293)։ Որ քեզ ճանաչեցին, կբանտարկեն (ԳՍԹ, 2, 409)։ Իսկ եթե տեղից վեր կացավ հանկարծ, գլուխը մեխած մահակը ձեռքն՝ Ձեն արավ, կանչեց զալում շներին... էնժամ կիմանաս, թե ընչի համար... (ՀԹ, 2 ,15)։ Այս նախադասությունները համանիշ են հետևյալներին՝ Եթե ստանամ քո համաձայնությունը..., Մի էքսկավատոր թե ճարենք..., Իսկ եթե կարողանա՞..., Բավական է, որ մի անգամ իր ձեռքերի մեջ առնի..., Որ քեզ ճանաչեն..., Եթե տեղից վեր կենա հիմա..., ձեն անի, կանչի զալում շներին...։

Անցյալ կատարյալ ժամանակի այս կիրառությունը հատկապես շատ տարածված է պայմանի երկրորդական նախադասությունների անշաղկապ կապակցության ժամանակ. ինչպես՝ Մի լավ բան ընկավ ձեռքը, ծոցում կթաքցնի (ՆՀ, ՊՊՆ, 41) → Մի լավ բան ընկնի ձեռքը..., Նա ուզեց՝ կլինի, չուզեց՝ չէ (ԳՌշ., Մ, 265) → Նա ուզի՝ կլինի, չուզի՝ չէ։ Աշխարհը գութանի վրա է

հիմնված. ողջ մնացինք, գութանը մեզ հարկավոր է ու հարկավոր, մեռանք՝ ով որ տանի, կարելի է աշխատանքի սեր զարթնի մեջը (Իս., 3, 22) → Եթե ողջ մնանք, գութանը մեզ հարկավոր է ու հարկավոր, եթե մեռնենք...: Մշուշը ցրվեց, հնարավոր չի լինի գլուխ բարձրացնել (ԲՀ, ՍՉ, 219) → Հենց որ մշուշը ցրվի, հնարավոր չի լինի գլուխ բարձրացնել։

Պայման հանդիսացող գործողություններ նկարագրելու համար ժողովրդական-խոսակցական լեզվում հաճախ ըղձական եղանակի ապառնի ժամանակի փոխարեն գործածվում է նաև սահմանական եղանակի վաղակատար ժամանակը։ Վերջինս ևս այս կիրառություններում կորցնում է իր եղանակա-ժամանակային հիմնական իմաստը և ձեռք բերում ապառնի ժամանակի իմաստ՝ ցույց տալով խոսքի պահից հետո սպասվող և մեկ այլ գործողության կատարման համար պայման հանդիսացող գործողություն։ Այս ժամանակի գործածմամբ խոսողը ավելի է ընդգծում պայման հանդիսացող գործողության կատարման դեպքում մեկ այլ գործողության իրագործման անխուսափելիությունը. այդ պատճառով վերջինս մեծ մասամբ դրսևորվում է սահմանական եղանակի ապառնի ժամանակով։ Օրինակ՝ Որ ձեռքս է ընկել, դիակը փռելու եմ (ԱՍեկ., ԳՉՏ, 4)։ Բայց լավ իմանաս, լեռների արքա, որ օրը որ քեզ ժառանգ է տվել, էն օր կմեռնեք՝ քու կինն էլ, դու էլ (ՀԹ, 2, 98)։ Որ տեսել եմ, ի՛նչ է, սևը տալու եմ:

Այս նախադասությունները գործածվում են հատկապես սպառնալիք դրսևորելու համար։ Սրանց համանիշ ըղձական եղանակով արտահայտված պայմանի նախադասություններում վերջին իմաստը զգալի թուլանում է (վերևի նախադասությունները համեմատի՛ր հետևյալների հետ՝ «Որ ձեռքս ընկնի, դիակը կփռեմ», «Որ տեսնեմ, սևը կտամ»)։

Երբ արվում է ընդհանուր դատողություն ապագայում կատարվելիք մի գործողությունից հետո մեկ այլ գործողության կատարման հնարավորության մասին, պայմանի երկրորդական նախադասության մեջ ըղձական եղանակի ապառնի ժամանակի փոխարեն կարող են գործածվել հրամայական եղանակի բայաձևերը։ Օրինակ՝ Գնա մինչև հին Բաբելոն, ելամների աշխարհը..., ամեն տեղ

կտեսնես այս բիբլիական կավը (ԱԲ, 238)։ Ամառն ինչքան կարաս կա Այգեձորում... իսկ հիմա՝ նոյեմբերին շրջի՛ր գյուղը՝ ոչ մի կարասի չես հանդիպի (ՎԱ, 29)։ Հրամայական եղանակի այս կիրառությանը հանդիպում ենք միայն պայմանի նախադասությունների անշաղկապ կապակցության ժամանակ։ Այս նախադասությունները համանիշ են շաղկապով միացած և ըղձական եղանակի ապառնի ժամանակով դրված ստորոգյալ ունեցող հետևյալ նախադասություններին՝ «Եթե գնաս մինչև հին Բաբելոն...», «Իսկ հիմա՝ նոյեմբերին, եթե շրջես գյուղը...»:

Ինչպես սահմանական եղանակի անցյալ կատարյալ և վաղակատար ժամանակների, այնպես էլ հրամայական եղանակի բայաձևերի այս կիրառությունը հատուկ է հատկապես ժողովրդական-խոսակցական և գեղարվեստական գրականության լեզվին։ Այն խոսքին տալիս է դինամիկություն, արտահայտչականություն։ Այդ է պատճառը, որ վերջին ժամանակներս այս կառուցվածքի նախադասություններ սկսել են գործածվել նաև հրապարակախոսության լեզվում։

Պայմանի երկրորդական նախադասություններում համանիշ կիրառությամբ հանդես են գալիս նաև ըղձական եղանակի ապառնի և երկրորդական բաղադրյալ ապառնի ժամանակները, որոնցից երկրորդի գործածությամբ ընդգծվում է պայման հանդիսացող գործողության, իրողության հավանականությունը։ Օրինակ՝ Եթե փորձելու լինենք ասիական գործներին ԱՄՆ-ի միջամտությունը դիտել իրավաբանական տեսակետից, իսկույն պարզ կդառնա... (ԵԵ) → Եթե փորձենք: Եթե դատելու լինենք... → Եթե դատենք...:

6. Հայտնի է, որ ենթադրական եղանակի ապառնի ժամանակի բայաձևերը հիմնականում դրսևորում են խոսողի հաստատ համոզմունքը, ենթադրությունը, ինչպես նաև վճիռը, հաստատ նպատակադրումը խոսքի պահից հետո կատարվելիք գործողության վերաբերյալ. ինչպես՝ Քեզ կօգնեն, և կհասկանաս: Հավատա՝ կօգնեն (ՊՍ)։ Այս բոպեիս կերթամ, ուր որ լինի՝ կգտնեմ ու կբերեմ (ՎՓ, 59)։ Իզուր ես սպասում. նա այսօր չի գա, կգա վաղը։ Ենթակային այս իմաստը հատկապես ուժեղ է դրսևորվում բայի ժխտական ձևե-

ում, որոնք ցույց են տալիս խոսողի հաստատ համոզմունքը, վճիռը տվյալ գործողության՝ խոսքի պահից հետո, մի ապառնի ժամանակամիջոցում չիրագործվելու վերաբերյալ։ Օրինակ՝ Ես գիտեմ. դու չես գնա և չես ասի։ Կխորտակեմ կամարները երկնային, Ես չեմ թողնի, Ես չեմ թողնի դու մեռնիս (Իս.)։

Որևէ գործողության չկատարվելու վերաբերյալ խոսողի հաստատ համոզմունքը արտահայտելու համար ժամանակակից հայերենում, բացի ենթադրական եղանակի ապառնի ժամանակի ժխտական ձևերից, գործածվում են նաև բաղադրյալ ստորոգյալներ՝ կազմված տվյալ բայի ենթակայական դերբայի որոշյալ առումով և էական բայի ներկայի ժխտական ժամանակաձևերով. օրինակ՝ Նա ավազի վրա հիմք դնողը չէ (ՔԹՀ, 56)։ Նա իր ձեռքով աքլոր մորթողը չի,— ասաց Սիմոնը (ՎԱ, ԼՀ, 55)։ Գործարանի կոլեկտիվը խոսքը գետին գցողը չէ (ԲԵ)։ Ես գիտեմ՝ դու նամակ գրողը չես։ Նրանք այսօր եկողը չեն։ Այս նախադասությունները համանիշ են հետևյալներին. Նա ավազի վրա հիմք չի դնի։ Նա իր ձեռքով աքլոր չի մորթի։ Կոլեկտիվը խոսքը գետին չի գցի։ Ես գիտեմ՝ դու նամակ չես գրի։ Նրանք այսօր չեն գա։

Ինչպես երևում է բերված համանիշ նախադասությունների համեմատությունից, բաղադրյալ ստորոգյալի գործածության դեպքում մի կողմից ավելի է ընդգծվում խոսողի սուբյեկտիվ վերաբերմունքը՝ հաստատ համոզմունքը գործողության չկատարման վերաբերյալ, մյուս կողմից տվյալ գործողությունը չկատարելը դիտվում է որպես սուբյեկտի հատկանիշը։

Ենթադրական եղանակի ապառնի ժամանակը ցույց է տալիս նաև մի ապառնի ժամանակամիջոցում կատարվելիք այնպիսի գործողություն կամ եղելություն, որի իրագործումը, ըստ խոսողի, կախված է մեկ այլ գործողության կատարումից, պայմանավորված է վերջինով. օրինակ՝ Թե տիրես, մեծ շահ, դու նրա սրտին, Թաթուլն էլ անզոր կընկնի ոտքիդ տակ (ՀԹ)։ Այս իմաստն արտահայտելու համար ժամանակակից հայերենում կարող են գործածվել նաև սահմանական և հարկադրական եղանակների ապառնի ժամանակները, որոնցից յուրաքանչյուրը նախադասությանը տալիս է որոշ իմաստային նրբերանգ։ Սահմանականի ապառնու գործածու-

թյան դեպքում գործողության կատարումը դիտվում է որպես օբյեկտիվ ռեալություն, հարկադրական ապառնու գործածության դեպքում՝ իբրև անհրաժեշտություն. օրինակ՝ Ես կգնամ, եթե միայն տոմս ճարեմ → Ես գնալու եմ, եթե միայն տոմս ճարեմ → Ես պիտի գնամ, եթե միայն տոմս ճարեմ։ Անհրաժեշտ պայմանի իրագործումից հետո տվյալ գործողության կատարման հավաստիությունը ընդգծելու համար երբեմն ենթադրական եղանակի ապառնի ժամանակի փոխարեն գործածվում է հարակատար դերբայով ու էական բայի ներկա ժամանակով կազմված բաղադրյալ ստորոգյալ։ Օրինակ՝ Եթե նրա ասածները ճիշտ լինեն, կորած ես: Հարկավոր է թեմի մի գյուղում եկեղեցի կառուցանել, եթե ոչ, գյուղական համայնքը կորած է (Շ, 4, 98)։ Եթե ամեն ինչ ժամանակին չհասցնենք, իմացիր գործը տանուլ է տրված: Այս նախադասությունները համանիշ են «Եթե նրա ասածները ճիշտ լինեն, կկորչես», «...Գյուղական համայնքը կկորչի» և «...Գործը տանուլ կտրվի» նախադասություններին։

Երբեմն գործողության կատարման հավանականությունը, հնարավոր լինելը ընդգծելու համար ենթադրական ապառնի ժամանակի փոխարեն գործածվում է բաղադրյալ բայական ստորոգյալ՝ կազմված կարող է բայով և տվյալ բայի անորոշ դերբայով. այսպես՝ Եթե չգնամ, կնեղանա → Եթե չգնամ, կարող է նեղանալ: Քար վերցնեն խփեն, տիկին Բերսաբեն կարող է վիրավորվել, շների վրա ուշադրություն չդարձնեն, կարող են պատռել մեկն ու մեկի շալվարը (ՆՋ, ՊՊՆ, 79) → Տիկին Բերսաբեն կվիրավորվի..., կպատռեն մեկն ու մեկի շալվարը։ Ենթադրական եղանակն օգտագործելու դեպքում այդ իմաստն ընդգծելու համար կարող են գործածվել հավանաբար կամ երևի եղանակավորող բառերը (Հավանաբար (երևի) կվիրավորվի, հավանաբար կպատռեն):

7. Ապառնի ժամանակ են ցույց տալիս նաև հրամայական եղանակի բայաձևերը, որոնց հիմնական կիրառությունը որևէ գործողություն կատարելու վերաբերյալ հրաման, հորդոր, պահանջ, առաջարկ, խնդիրք դրսևորելն է։ Այս իմաստն արտահայտող մյուս քերականական միջոցների մասին տե՛ս «Հրամայական և պատմողական համանիշ նախադասություններ» գլուխը։

8. Ապառնի ժամանակամիջոցում անհրաժեշտաբար կատարվելիք գործողություն ցույց տալու համար սովորաբար գործածվում են հարկադրական եղանակի ապառնի ժամանակի բայաձևերը, ինչպես՝ Նրանք, որ պիտի գան, որ պիտի շրջեն լճերի ափին, այգիներում պերճ, որ պիտի ապրեն գալիք օրերում և ապրեն չքեղ, որ պիտի շնչեն միայն վարդերի բույրը թովչական (ՍԿ)։

Սակայն այս իմաստն արտահայտելու համար ժամանակակից հայերենը չի սահմանափակվում միայն հարկադրականի ապառնու ձևերով։ Երբ արվում է ընդհանուր դատողություն որևէ գործողության կատարման անհրաժեշտության մասին՝ առանց ընդգծելու գործողություն կատարող անձը, գործածվում է հիմնականում բայական բաղադրյալ ստորոգյալ՝ կազմված պետք է, անհրաժեշտ է եղանակավորող կապակցություններից և անորոշ դերբայից։ Այս դեպքում գործողություն կատարողը հայտնի է դառնում կամ կոնտեքստից և կամ ընդհանուր-անորոշ է։ Երբ գործողություն կատարողը կոնտեքստից հայտնի է, ապա այս բաղադրյալ ստորոգյալը հանդես է գալիս որպես համանիշ հարկադրականի ապառնի ժամանակով դրսևորված պարզ ստորոգյալին. ինչպես՝ Ի՞նչ եք կարծում. չգնա՞նք։— Իմ կարծիքով պետք է գնալ (անհրաժեշտ է գնալ)։ Այստեղ պետք է գնալ ստորոգյալը կարելի է փոխարինել պիտի գնանք ստորոգյալով։ Այս երկու ձևերի միջև կա այն տարբերությունը, որ առաջին դեպքում անհրաժեշտության գաղափարը ավելի է ընդգծվում, իսկ գործողություն կատարողը հասկացվում է նախորդ նախադասությունից։ Երկրորդ դեպքում երկու իմաստն էլ տրվում են բայաձևի միջոցով։

Ընդհանուր-անորոշ նշանակությամբ գործողության կատարման անհրաժեշտությունը կարող է դրսևորվել նաև հրամայական եղանակի բայաձևերով, որոնք այս կիրառություններում կորցնում են իրենց եղանակային և դիմային իմաստները և ցույց տալիս ապառնի ժամանակամիջոցում կատարվելիք հնարավոր և անհրաժեշտ համարվող գործողություն՝ առանց այն վերագրելու որևէ կոնկրետ անձնավորության։ Օրինակ՝— Ինչպե՞ս թե որտեղից։ Մեր սարերում ի՞նչն է շատ՝ խոտը։ Սայլդ լծիր, գշիր, բարձիր ու բեր,— ասում է կոլտնտեսականը, ապա ավելացնում,— շնորհքով

մարդու տեղ է, կարո՞ղ ես՝ արա (ՍՀ)։ Այստեղ ընդգծված նախադասությունը համանիշ է «Միայն պետք է սայլը լծել, քշել, բարձել ու բերել» նախադասությանը (երկուսն էլ միակազմ են)։

Նույն իմաստով երբեմն գործածվում է նաև ըղձական եղանակի ապառնի ժամանակի եզակի երկրորդ դեմքը, որը նույնպես այս կիրառությունում կորցրել է իր դիմային, մասամբ նաև եղանակային իմաստը և ցույց է տալիս անհրաժեշտ, նպատակահարմար համարվող գործողություն. օրինակ՝ Նա ի՞նչ ռանչպար է եղել որ,— խոնչաց Գրիգորը,— նրան ուղարկես սար՝ ոչխարի գոմերը մաքրի (ՆՁՀ, 24)։ Այս նախադասությունը համանիշ է հետևյալին՝ «...Նրան միայն պետք է ուղարկել սար՝ ոչխարի գոմերը մաքրի» կամ՝ «Նրան կարելի է միայն ուղարկել սար՝ ոչխարի գոմերը մաքրի»։

Հարկադրական եղանակի ապառնի ժամանակը հաճախ ցույց է տալիս ոչ միայն անհրաժեշտաբար, հարկադրաբար կատարվելիք գործողություն, այլ նաև խոսողի կամ գործողության սուբյեկտի վճիռը, որոշումը, մտադրությունը որևէ գործողություն խոսքի պահից հետո անպայման, հաստատ կատարելու վերաբերյալ։ Այս դեպքում այն հանդես է գալիս որպես համանիշ ենթադրական եղանակի ապառնի ժամանակի, սահմանական եղանակի ներկա և ապառնի ժամանակների նույն իմաստով կիրառություններին. օրինակ՝ Վճռված է. վաղը պիտի գնամ→ վաղը գնալու եմ →վաղը գնում եմ → վաղը կգնամ: Ինչպես երևում է բերված օրինակներից, իմաստով իրար ավելի մոտ են հարկադրական ու սահմանական եղանակների բայաձևերը։ Ենթադրական եղանակի բայաձևում եղանակային իմաստը ավելի ուժեղ է ընդգծվում, քան նախորդների մոտ։

Սրանք են ապառնի ժամանակի դրսևորման հիմնական համանիշ շարքերը ժամանակակից հայերենում։

* * *

Ստորոգյալի դրսևորման հետ կապված համանիշության մասին խոսելիս անհրաժեշտ է կանգ առնել նաև հետևյալ կառուցվածքների վրա։

ա) Հաճախ տեղային հարաբերությունն ընդգծելու, որևէ իրի, անձնավորության որևէ վայրում գտնվելը նկարագրելու համար գործածվում են կա՛մ պարզ ստորոգյալ՝ ներգոյական, ինչպես նաև տրական հոլովներով դրված տեղի պարագաների հետ (որպես ստորոգյալ հանդես է գալիս գտնվել *բայը) և կամ բաղադրյալ ստորոգյալ, որի ստորոգելիական վերադիրը այդ նույն տեղի պարագան է, իսկ հանգույցը՝ էական բայը. օրինակ՝ Դպրոցը գյուղի* ծայրին էր, բլրակի վրա *(ԱԲ, 119)* → *Դպրոցը* գտնվում էր գյուղի ծայրին, բլրակի վրա: *Արամը այժմ* գտնվում է Մոսկվայում → *Նա այժմ* Մոսկվայում է: *Անցնում եմ մի չորս-հինգ տուն՝ նորից մեր* տան առաջ *եմ (ՍՁ, ԵԺ, 3, 9)*→ *Անցնում եմ մի չորս-հինգ տուն՝ նորից* գտնվում եմ մեր տան առաջ: *Այդ* թղթերի թվում գտնվում էր *և այն նամակը, որ Որմիզդուխտը հանձնեց Սամվելին (Ր, 7, 142)* → Այդ թղթերի թվում էր *և այն նամակը...։ Մյուս օրը Ողական ամրոցը* գտնվում էր *արտակարգ* ուրախության մեջ *(Ր, 7, 87)*→ *Մյուս օրը Ողական ամրոցը արտակարգ* ուրախության մեջ էր:

Այս ձևերից պարզ ստորոգյալով կազմվածները ավելի գրքային են, ժողովրդական-խոսակցական լեզվում համեմատաբար քիչ են գործածվում, իսկ երկրորդները տարածված են և՛ խոսակցական լեզվում, և՛ գեղարվեստական ու գիտական գրականության մեջ. դա բխում է վերջինիս հակիրճությունից։

բ) Սուբյեկտի՝ որևէ հոգեկան հատկությամբ օժտված լինելը, մտադրություն, կարծիք ունենալը նկարագրելու համար ևս կարող են գործածվել համանիշ նախադասություններ։ Մի դեպքում նախադասության ստորոգյալը լինում է պարզ՝ արտահայտված ունենալ *բայով, վերջինս ունենում է ուղիղ խնդիր, որով դրսևորվում է այն հատկությունը, կարծիքը և այլն, որով օժտված է, որն ունի ենթական։ Մյուս դեպքում ստորոգյալը բաղադրյալ է, որի վերադիրը հենց այդ հատկությունը, կարծիքը և այլն ցույց տվող բառն է՝ գրված տրական հոլովով (երբեմն նաև բացառական), հանգույցը դարձյալ էական բայն է։ Երբ նկարագրվում է սուբյեկտի՝ որևէ հատկանիշով օժտված լինելը, ստորոգելիական վերադիրը կարող*

է լինել այդ հատկանիշը ցույց տվող բառը սեռական հոլովով՝ տեր կապական բառի հետ։ Բերենք այդ համանիշների շարքը։

Մատիտը կարմիր գույնի է։	*Մատիտը* կարմիր գույն ունի։
Նա լավ բնավորության տեր է։	*Նա* լավ բնավորություն ունի։
Մի ժամանակ նա այն մտայնությանն էր, *թե ինքը հավանաբար կարող է իր ամուսնության մասին ոչինչ չասել (ԹԴՀ, 298)։*	*Մի ժամանակ նա* այն մտայնությունն ուներ, *թե ինքը...*
Ես այն կարծիքին էի, *թե ոչ մի արտաքին հանգամանք այնպես շուտ չի գրավիլ կնոջ բարեկամությունն ու մտերմությունը (Մ, 2, 356)։*	*Ես* այն կարծիքն ունեի...
Նա այն կարծիքին է, *որ Գարասը չպետք է հակառակեր չարին (ՍՁ, եժ, 3, 370)։*	*Նա* այն կարծիքն ունի...
Նա իշխանական ծագումից չէր, բայց թագավորական տան բազմամյա և հավատարիմ ծառայողներից մինն էր (Մ, 3)։	*Նա իշխանական ծագում* չուներ...

Որևէ գործողության կատարման անհրաժեշտությունը, նպատակահարմարությունը և կամ խոսողի կողմից դրա կատարման անիրագործելի, ոչ նպատակահարմար համարելը ընդգծելու հա-

մար կարող են գործածվել հետևյալ համանիշ ստորոգյալները. ա) պետք է, հարկավոր է կամ պետք չէ, անհնար է, հնարավոր չէ եղանակավորող կապակցություններով և տվյալ գործողությունը ցույց տվող բայի անորոշ դերբայով կազմված բաղադրյալ ստորոգյալ. օրինակ՝ Այդ բոլորը հնարավոր չէ պատմել. պետք է անձամբ տեսնել: բ) Նույն բայի ապառնի դերբայով և օժանդակ բայի դրական կամ ժխտական ձևերով կազմված ստորոգյալ։ Այս ստորոգյալի դրական ձևերը շատ տարածված են արևմտահայերենում, արևելահայերենում գրեթե չեն հանդիպում, սակայն ժխտական ձևերը երբեմն գործածվում են նաև արևելահայերենում. օրինակ՝ Այդ բոլորը պատմելու չէ, պետք է անձամբ տեսնել։ Զլսեց էլ և պատասխան չտվեց... Հիմա լսելու չէ, տանել-տանելու է... Եվ թուրքը շարունակեց վազել (ԲՎ)։ գ) Հաճախ այդ իմաստն արտահայտելու համար որպես բաղադրյալ ստորոգյալի վերադիր գործածվում է տվյալ բայի անորոշ դերբայի սեռական հոլովը բան գոյականի հետ. ինչպես՝ Տեսնելու բան էր, թե նրանք ինչպես էին վազում։ Այսպիսով՝ այս համանիշների շարքը կլինի՝ Պետք էր տեսնել → տեսնելու էր → տեսնելու բան էր, Հնարավոր չէ պատմել → պատմելու չէ → պատմելու բան չէ:

ՍՏՈՐՈԳՅԱԼԻ ԹՎԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՀԱՄԱՆԻՇՈՒԹՅՈՒՆԸ

Ինչպես հայտնի է, երկկազմ նախադասություններում ստորոգյալին հատուկ է նաև թվի կարգը։ Իրացնելով ստորոգումը, հատկանիշը վերագրելով առարկային, ստորոգյալը միաժամանակ իր ձևով ցույց է տալիս գործողություն կատարողի, որևէ դրության մեջ եղողի թիվը, այսինքն՝ այն իր թվով համաձայնում է ենթակային։ Այսպես՝ «Աբու-Լալա Մահարին... տասնյակ տարիներ ապրեց խալիֆաների հոյակապ քաղաքում» նախադասության մեջ ստորոգյալը (ապրեց) դրված է եզակի թվով, որովհետև գործողություն կատարողը՝ ենթական մեկն է, ունի եզակի թիվ։ Կամ՝ «Ուսանողները շաբաթօրյակի ժամանակ տնկեցին հազար ծառ» նախադասության ստորոգյալը (տնկեցին) դրված է հոգնակի

թվով, որովհետև գործողություն կատարողը մեկից ավելի է, այսինքն՝ ենթական ունի հոգնակի թիվ։ Սա ընդհանուր կանոն է ժամանակակից հայերենի համար։ Սակայն բայ-ստորոգյալի հոգնակի ձևերը որոշ կիրառություններում արտահայտում են եզակի թվի իմաստ՝ դառնալով համանիշ եզակի ձևերին։ Այսպես՝

1. Ժամանակակից հայերենում (և ոչ միայն ժամանակակից հայերենում) բայ-ստորոգյալի երկրորդ դեմքի հոգնակի թվի ձևերը հաճախ գործածվում են որպես խոսակցին դիմելու քաղաքավարական ձևեր։ Այս դեպքում նրանք արտահայտում են եզակի թվի իմաստ և համանիշ են դառնում նույն բայերի երկրորդ դեմքի եզակի թվի բայաձևերին։ Բերենք օրինակներ։ —Հանեցե՛ք վերարկուն, բժիշկ,— ասաց բարեկամս (ԴԴ)։ —Դուք ինչո՞ւ մնացիք, մայրիկ (ԲՀ, ՍՉ, 159)։ Ես լուռ քայլում եմ դեպի դուռը։— Մի բաժակ կաթ խմեիք,— կարծես ստիպված ասում է կինը (Ն. տ., 157)։

Բերված օրինակներում ընդգծված հոգնակի բայաձևերը գործածված են եզակի թվի իմաստով և համանիշ են հանիր, մնացիր, խմեիր ձևերին։ Թեև այս ձևերը տվյալ կիրառություններում լրիվ նույն իմաստն են արտահայտում, սակայն մենք դրանք նույնանիշ չենք համարում, որովհետև ունեն ոճական և կիրառական տարբերություններ։ Հոգնակի ձևերի գործածությունը ընդգծում է խոսողի և խոսակցի պաշտոնական հարաբերությունները, խոսքին տալիս է պաշտոնականություն։ Սրանք գործածվում են նաև որպես քաղաքավարական ձևեր մեծահասակներին, ոչ մտերիմ մարդկանց դիմելու համար։ Այնինչ եզակի թվի բայաձևերը ավելի հատուկ են մտերմական ոճին, խոսքը զրկում են պաշտոնականությունից (հմմտ. Մի բաժակ կաթ խմեիք— Մի բաժակ կաթ խմեիր): Այս կիրառություններում հոգնակի բայաձևերի մոտ հաճախ դրվում է եզակի կոչական, որով ընդգծվում է վերջիններիս եզակի իմաստը։ Այս նախադասությունների մյուս առանձնահատկությունն այն է, որ հաճախ ունենում են անձնական դերանվան երկրորդ դեմքի հոգնակի թվով արտահայտված ենթակա, որը ևս գործածվում է եզակի թվի իմաստով. օրինակ՝—Շնորհակալություն, բժի՛շկ, դուք փրկեցիք իմ տղայի կյանքը։ Դուք փրկեցիք

ձևը այստեղ համանիշ է դու փրկեցիր ձևին և նրանից տարբերվում է միայն ոճական ու կիրառական առումով։

2. Գիտական-հրապարակախոսական լեզվում, հեղինակային խոսքում երբեմն եզակի թվի իմաստ են ունենում նաև հոգնակի առաջին դեմքով դրված բայ-ստորոգյալները, որոնք այս կիրառություններում համանիշ են եզակի առաջին դեմքի բայաձևերին. օրինակ՝ «Մենք աշխատել ենք շարադրել կառուցվածքային լեզվաբանության հիմնական դրույթները» (Է. Աղայան), կամ՝ «Մենք խոսեցինք ստորոգման ձևավորման տարբեր միջոցների մասին» (Ս. Աբրահամյան)։ Ինչպես երևում է օրինակներից, այստեղ ևս հաճախ ստորոգյալի մոտ դրվում է հոգնակի առաջին դեմքի անձնական դերանվամբ ենթակա, որը սակայն նույնպես ունի եզակի առաջին դեմքի նշանակություն։ Վերոբերյալ ձևերը համանիշ են Ես աշխատել եմ, Ես խոսեցի ձևերին։ Այս ձևերի տարբերությունը ևս միայն ոճական է։

3. Հոգնակի և եզակի թվերը կարող են գործածվել նաև ընդհանրական նշանակությամբ՝ ընդհանուր դատողություններ, եզրակացություններ անելիս և կամ բոլորի կողմից ընդունված ճշմարտություններ հաղորդելիս։ Այս կիրառություններում ստորոգյալները որոշակի թիվ ցույց չեն տալիս և գործածվում են հիմնականում հավաքական-ընդհանրական նշանակությամբ ենթակաների հետ։ Եզակի և հոգնակի թվի համանիշությունը այս դեպքում ևս դրսևորվում է ոչ միայն ստորոգյալի, այլ նաև ենթակայի մեջ։ Մի դեպքում ենթական և ստորոգյալը դրվում են եզակի թվով, մյուս դեպքում երկուսն էլ գործածվում են հոգնակի թվով։ Այս երկու ձևերի տարբերությունն այն է, որ եզակի թվի գործածման դեպքում հավաքականությունը ավելի է ընդգծվում։ Օրինակ՝ Մարդը մահկանացու է → Մարդիկ մահկանացու են: Մեղաղը պինդ մարմին է → Մեղաղները պինդ մարմիններ են: Շունը մարդու հավատարիմ բարեկամն է → Շները մարդկանց հավատարիմ բարեկամներն են: Ուռենին աճում է *ջրերի ափին* → Ուռենիները աճում են *ջրերի ափին*։ Սառնամանիքը շարունակվեց *մինչև* մարտ → Սառնամանիքները շարունակվեցին *մինչև մարտ*։

Սկսվեց *ամառային* արձակուրդը → Սկսվեցին *ամառային* արձակուրդները:

4. Հայտնի է, որ ժամանակակից հայերենում ենթական և ստորոգյալը թվով համաձայնվում են։ Սակայն երբեմն նկատվում են շեղումներ այս ընդհանուր կանոնից, որի ժամանակ ևս առաջանում են ստորոգյալի եզակի և հոգնակի թվերի համանիշ կիրառության դեպքեր։ Թվենք դրանցից ամենատարածվածները։

ա) Հավաքական գոյականներով արտահայտված ենթակաների մոտ երբեմն ստորոգյալը գործածվում է ոչ թե եզակի թվով, որն օրինաչափական է, այլ հոգնակի թվով՝ համաձայնելով ենթակային ըստ բովանդակության։ Այս երևույթը կոչվում է բակառություն[1]*։ Օրինակներ.* Բնակիչների մեծ մասը բաղկացած էին *հայերից (Ր)։* Գալարվում էին կծիկն *իժերի (Իս.)։ Համաձայնության այս ձևը հատուկ է ավելի ժողովրդական-խոսակցական լեզվին և հանձնարարելի չէ։ Գրական լեզվի համար ճիշտ և օրինաչափական է համարվում քերականական եզակի թիվ ունեցող հավաքական գոյականների հետ ևս ստորոգյալի եզակի թվի գործածությունը։ Այսպես՝* Բնակիչների մեծ մասը բաղկացած էր *հայերից,* Գալարվում էր կծիկն *իժերի։*

բ) Երբեմն եզակի թվով դրված ենթական ունենում է այնպիսի որոշիչներ և հատկացուցիչներ, որոնք նրան իմաստով հոգնակի են դարձնում։ Այդպիսին են հատկապես թվական որոշիչ ունեցող ենթակաները։ Վերջիններիս մոտ ստորոգյալը կարող է դրվել և՛ եզակի, և՛ հոգնակի թվով՝ ստեղծելով համանիշ ձևեր. օրինակ՝ Ուր դրված էր *երկու երկաթե* մահճակալ *(ԸՀՍԳ, 954)* → *Ուր* դրված էին *երկու երկաթե մահճակալ։ Մրրիկի հետևանքով* սպանվել է *երեսունհինգ և վիրավորվել յոթ հարյուր մարդ (ՍՀ)։* → Սպանվել են *երեսունհինգ և վիրավորվել յոթ հարյուր մարդ։ Շրջանում* գործում է *հինգ խմբակ (ՍՀ)* → *Շրջանում* գործում են *հինգ խմբակ։*

Նկատելի է, որ եզակի ստորոգյալի գործածության դեպքում

---

[1] *Տե՛ս Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965, էջ 497, Վ. Առաքելյան, Հայերենի շարահյուսություն, հատոր 1, 1958, էջ 189—190։*

ենթական իր լրացումների հետ դիտվում է որպես մեկ ամբողջություն, նրա՝ իմաստով հոգնակի լինելը մղվում է երկրորդ պլան։ Իսկ երբ ստորոգյալը դրվում է հոգնակի թվով, ընդգծվում է ենթակայի՝ իմաստով հոգնակի լինելը։

Հոգնակիությունը շեշտելու համար հաճախ թվական որոշիչ ունեցող ենթական դրվում է ոչ թե եզակի թվով, այլ հոգնակի։ Այսպիսով՝ թվական նույնպիսի հարաբերություններ արտահայտելու համար գործածվում են երեք տիպի համանիշ նախադասություններ՝ Ուր դրված էր երեք մահճակալ → Ուր դրված էին երեք մահճակալ →Ուր դրված էին երեք մահճակալներ։

Լեզվական փաստերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ թվային այսպիսի համանիշություն կարող է երևան գալ հիմնականում կրավորական սեռի բայերի, դրություն, վիճակ ցույց տվող չեզոք սեռի բայերի մոտ և հատկապես այն դեպքում, երբ ենթական իր ցույց տվող գոյական է կամ վերցված է իրի առումով։ Երբ թվական որոշիչ ունեցող ենթական ցույց է տալիս անձ, իսկ ստորոգյալը ներգործական սեռի բայ է, կամ շարժում ցույց տվող չեզոք սեռի բայ, ապա վերջիններս միշտ դրվում են հոգնակի թվով, իսկ ենթական կարող է լինել և՛ եզակի, և՛ հոգնակի։ Այս դեպքում ստորոգյալի եզակի թվով գործածությունը բացառված է. օրինակ՝ Երեք ուսանողուհի գնում էին *ինստիտուտ (ԳՍԹ, 1, 39)*։ → Երեք ուսանողուհիներ գնում էին *ինստիտուտ*։ Հինգ աշակերտ ստացան «լավ» գնահատական → Հինգ աշակերտներ ստացան «լավ» գնահատական։

գ) Երբ նախադասության ենթական արտահայտված է լինում փոխանվանաբար գործածված քանակական թվականով (երկուսից բարձր), նրա մոտ ևս ստորոգյալը ունենում է դրսևորման երկու ձև՝ գործածվում է և՛ եզակի, և՛ հոգնակի թվով։ Վերջիններս հանդես են գալիս որպես համանիշներ և ունեն հետևյալ նուրբ տարբերությունը. ստորոգյալի՝ եզակի թվով գործածվելու դեպքում ենթական դիտվում է իբրև հավաքական մի ամբողջություն, իսկ հոգնակի ստորոգյալի առկայության դեպքում շեշտվում է ենթակայի՝ իմաստով հոգնակի լինելը, առանձին միավորներից կազմված լինելը։ Բերենք օրինակներ՝ Աշակերտներից վեցը ստա-

ցավ «հինգ» գնահատական → Վեցը ստացան հինգ գնահատական։ Դրանցից հինգը կարմիր գույնի էր: → Հինգը կարմիր գույնի էին:

Այս դեպքում ևս եզակի թվի գործածությանը հանդիպում ենք հիմնականում այն ժամանակ, երբ ստորոգյալը վիճակ, դրություն ցույց տվող չեզոք բայ է, կամ բաղադրյալ։ Ավելի հաճախ գոյականաբար գործածված թվական ենթակայի մոտ ստորոգյալը դրվում է հոգնակի թվով։

դ) Երբ նախադասության ենթական դրված է լինում հոգնակի թվով, սակայն ցույց է տալիս մեկ ամբողջություն (հատկապես մարմնի մասերի), նրա մոտ ստորոգյալը կարող է դրվել նաև եզակի թվով, որը համանիշ է դառնում հոգնակի թվով դրված ստորոգյալին։ Օրինակ՝ Ոտքերս կդինջանա *սար ու քոլ չափելուց (ԱԲ, 9)։* Աչքերս ցավեց: Ոտքերս հոգնեց *շատ քայլելուց։ Սակայն եզակի թվի այս կիրառությունը հատուկ է առավելապես ժողովրդական-խոսակցական լեզվին։ Գրական լեզվում օրինաչափական և հանձնարարելի է այս դեպքերում ստորոգյալի հոգնակի թվով գործածությունը* (Աչքերս ցավեցին: Ոտքերս հոգնեցին):

ե) Երբեմն ստորոգյալի եզակի և հոգնակի թվերի համանիշության ենք հանդիպում նաև բազմակի ենթակա ունեցող նախադասություններում։ Սովորաբար բազմակի ենթակա ունեցող նախադասություններում ստորոգյալը դրվում է հոգնակի թվով։ Սակայն խոսակցական լեզվում, երբեմն նաև գեղարվեստական գրականության մեջ հանդիպում են նաև եզակի թվով ստորոգյալի գործածության դեպքեր։ Այսպես՝ երբ բազմակի ենթակաները բաժանված են լինում իրարից անջատող շաղկապներով (ոչ... ոչ, կամ... կամ, և'... և'), *իսկ ստորոգյալը ունենում է առաջադաս շարադասություն, այն կարող է դրվել և' եզակի, և' հոգնակի թվով։ Առաջին դեպքում շեշտվում է ստորոգյալի՝ ենթականերից յուրաքանչյուրին առանձին վերաբերելը, երկրորդ դեպքում ենթակաները վերցվում են իրենց ամբողջության մեջ։ Օրինակ՝* Բախտավոր չի եղել *ո՛չ իմ մանկությունը և ո՛չ էլ պատանեկությունը (Շ, 8, 13)* → *Բախտավոր* չեն եղել *ո՛չ իմ մանկությունը և ոչ էլ պատանեկու-*

թյունը։ Հաճելի է թե՛ նվագը, թե՛ երգը (ԸՀՍԳ, 997) → Հաճելի են թե՛ նվագը, թե՛ երգը։

Առաջադաս ստորոգյալը կարող է դրվել եզակի թվով նաև այն դեպքում, երբ նրան հաջորդող բազմակի ենթակաները սոսկ թվարկում են. օրինակ՝ Շուրջս լի էր կապույտ համասփյուռ, երիցուկ, շահոքրամ (ՎՓ, 401) → Շուրջս լի էին կապույտ համասփյուռ, երիցուկ, շահոքրամ: Վասակի ականջներին չէր հասնում ծղրիդների գիշերերգը, հովի շվշվոցը և մի ուրիշ գալիֆի ձայն (ԴԴվ, 417) → Վասակի ականջներին չէին հասնում ծղրիդների գիշերերգը, հովի շվշվոցը և մի ուրիշ գալիֆի ձայն: Սրանք են ստորոգյալի թվի, ինչպես նաև ստորոգյալի ու ենթակայի թվային համաձայնության հետ կապված համանիշության հիմնական դեպքերը։

2. ԵՆԹԱԿԱՅԻ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՆԻՇ ՁԵՎԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Հայտնի է, որ ժամանակակից հայերենում քերականական ենթական ունի դրսևորման մեկ հիմնական ձև, այն է՝ ուղղական հոլովը. օրինակ՝ Քամին հալածում է մառախուղի թանձր քուլաները։ Նրանք խրտնած ոչխարի պես փախչում են ձորերով։ Մառախուղի փեշերից ցցվում են պղնձագույն ժայռերի կոնուսները... (ԱԲ, 1, 175)։

Ենթակային առնչվող շարահյուսական համանիշներ երևան են գալիս կապված նախադասության շարադասության և տրամաբանական շեշտի փոփոխության հետ։ Ժամանակակից հայերենի շարադասության կանոններին համապատասխան՝ ենթական սովորաբար դրվում է ստորոգյալից առաջ։ Սակայն շատ հաճախ, ինչպես գեղարվեստական գրականության, այնպես էլ ժողովրդական-խոսակցական լեզվում ենթական, հաղորդման նպատակներից ելնելով, փոխում է իր տեղը՝ դրվելով ստորոգյալից և նրա լրացումներից հետո։ Այսպիսի շարադասությունը մի կողմից խոսքին տալիս է գեղարվեստական շունչ, մյուս կողմից ավելի

շեշտում է ստորոգյալն իր լրացումների հետ։ Օրինակ՝ «Լուսանում է։ Լեռան ետևից ելնում է արևը, մամուռից պոկվում են անձրևի կաթիլները... Տերբասաձև բարձրանում են ժայռերը՝ մեկը մյուսից խոժոռ և ահռելի (ԱԲ, 1, 175)։ Բերված օրինակում ընդգծված ենթակաները ունեն ետադաս՝ շրջուն շարադասություն։ Այս նախադասությունները համանիշ են սովորական շարադասությամբ ենթակա ունեցող հետևյալ նախադասություններին. «Լուսանում է. արևը ելնում է լեռան ետևից, անձրևի կաթիլները մամուռից պոկվում են... Ժայռերը՝ մեկը մյուսից խոժոռ և ահռելի, տերբասաձև բարձրանում են»[1]։

Երբ անհրաժեշտ է լինում առանձնապես շեշտել ենթական, փոխվում է նախադասության հնչերանգը. տրամաբանական շեշտը դրվում է ենթակայի վրա։ Դրանով ստեղծվում է սովորական հնչերանգ ունեցող նախադասությանը համանիշ նախադասություն։ Այս դեպքում, երբ նախադասության ստորոգյալը կազմությամբ բաղադրյալ է և ունի օժանդակ բայ կամ ստորոգելիական հանգույց, վերջիններս փոխում են իրենց տեղը և դրվում ենթակայից անմիջապես հետո։ Ենթակայից անմիջապես հետո է դրվում նաև պարզ ստորոգյալը։ Բերենք օրինակներ։ Մե՛նք ենք կառուցում Երևանը, մե՛նք ենք նրա աննախընթաց հաջողությունների հեղինակները։ Մե՛նք ենք կերտում նրա գեղեցիկ վաղը (ԵԵ)։ Աշո՛տը լուծեց այդ խնդիրը։ Այս նախադասությունները համանիշ են սովորական հնչերանգ ունեցող հետևյալ նախադասություններին. Մենք կառուցում ենք Երևանը, մենք նրա աննախընթաց հաջողությունների հեղինակներն ենք։ Մենք կերտում ենք նրա գեղեցիկ վաղը։ Աշոտը լուծեց այդ խնդիրը։

Այստեղ կարելի է խոսել նաև զեղչված ենթակայով նախադասությունների մասին, որոնք հանդես են գալիս որպես լրիվ նախադասությունների համանիշ։ Ենթական, ինչպես ասվել է, զեղչվում է երկու դեպքում. ա) Երբ ստորոգյալը առաջին կամ

---

[1] Այս նախադասությունները համանիշ են և ոչ նույնանիշ, որովհետև շարադասության փոփոխության հետ փոխվում է նաև նախադասության տրամաբանական շեշտը։

երկրորդ դեմքի բայ է, և գործողություն կատարողը կամ մի բան եղողը առանց ենթակայի, միայն ստորոգյալի ձևով հասկացվում է։ Այսպես՝ Օտար երկնքի կամարների տակ երազիս տեսա մի չքնաղ աղջիկ (ՎՏ, 39)։ Այստեղ գործողություն կատարողը (ես) հասկացվում է հենց ստորոգյալի (տեսա) ձևից։ բ) Երբ գործողություն կատարողը կամ մի բան եղողը թեև երրորդ դեմքի է, սակայն նախորդ նախադասություններից հայտնի է, հասկացվում է, օրինակ՝ Դիլան դային վեր կացավ, ետ քաշեց հնձանի դուռը, երկաթե փակն ամրացրեց մինչև մյուս գարուն։ Ապա կռացավ, դժվարությամբ շալակեց չորացած ոստերի և ցողունների կապը և հոգնած ոտքերը ծերունու հուշիկ քայլերով փոխեց դեպի այգու դուռը (ԱԲ, 1, 291)։ Բերված նախադասություններից երկրորդում ենթական զեղչված է, սակայն հասկացվում է նախորդ նախադասությունից (Դիլան դային)։ Եթե մենք վերականգնենք զեղչված ենթակաները, կստանանք բերված նախադասություններին համանիշ լրիվ կազմով նախադասություններ։

Ժամանակակից հայերենում ենթական երբեմն դրսևորվում է նաև մասնական բացառական հոլովով։ Վերջինս ցույց է տալիս առարկայի մասնակի ընդգրկումը և գործածվում է մեծ մասամբ կրավորական չեզոք բայերի կամ դրություն ցույց տվող մի շարք չեզոք բայերով արտահայտված ստորոգյալի հետ։ Օրինակ՝ Այդ գրքից վաճառվում է կենտրոնական գրախանութում։ Այդ կտորից շատ կա։ Նրա ստեղծագործություններից հանդիպում են գրական հանդեսներում։ Սրանց համանիշ ուղղական հոլովով դրված ենթակաները չունեն այդ մասնականության իմաստը և ցույց են տալիս տվյալ տեսակի առարկաները ամբողջությամբ վերցված (օրինակ՝ Այդ գիրքը վաճառվում է կենտրոնական գրախանութում, Նրա ստեղծագործությունները հանդիպում են գրական հանդեսներում)։

Հետաքրքրական է այն երևույթը, որ ենթական դրվում է մասնական բացառականով միայն այն դեպքում, երբ ունի որոշիչ կամ հատկացուցիչ, ցույց է տալիս կոնտեքստից հայտնի առարկա և ունենում է հավաքական նշանակություն՝ անկախ այն բանից,

եզակի թե հոգնակի թվով է գործածված (տե՛ս վերևի օրինակները)։

Մանրություն.— Կա (կան) բայի մոտ դրված մասնական բացառականով դրված ենթական հնարավոր չէ փոխարինել ուղղական հոլովով, երբ այն (բայը) ունի չափի-քանակի պարագա. այսպես՝ «Այդ գրքից շատ կա» նախադասությունը չի կարելի փոխակերպել «Այդ գիրքը շատ կա» նախադասության։ Կամ՝ «Այդ անունից ֆիչ կա» չի կարելի փոխակերպել «Այդ անունը ֆիչ կա» նախադասության։

Պրոֆ. Ս. Աբրահամյանը առաջինը հայ քերականագիտության մեջ դիտելով ենթակայի՝ նաև բացառական հոլովով դրվելու երևույթը՝ այդպիսի ենթական կոչել է մասնական ենթակա[1]։

Ժողովրդական-խոսակցական լեզվում տարածված է նաև ունենալ բայի մոտ դրված տրական հոլովով ենթակայի գործածությունը[2], որը բանավոր խոսքից երբեմն մուտք է գործում նաև գեղարվեստական գրականության, հատկապես երկխոսությունների մեջ։ Օրինակ՝ Զենով Օհանին ուներ մի շար կին (ՀԹ, 2, 100)։ Ոչով չունեմ աղա, քյասիբ մարդուն բարեկամ, ազգական կունենա՞ (ԸՀՍԳ, 149)։ Հովհաննես, ֆեզ նամակ ունես (ՀԹ, 5, 167)։ Մեկին մեր գյուղում մի թիզ հող ունի (ՀԹ,2)։

Գրական լեզվի համար հանձնարարելի և ավելի ճիշտ են համարվում ուղղական հոլովով դրված ենթակաները, ինչպես՝ Զենով Օհանը ուներ մի շար կին։ Քյասիբ մարդը բարեկամ, ազգական կունենա՞: Հովհաննես, դու նամակ ունես: Մեկը մեր գյուղում մի թիզ հող ունի։ Տրական հոլովով դրված ենթական ունի այն առանձնահատկությունը, որ իր մեջ համատեղում է ենթակայի և մասամբ հանգման խնդրի հարաբերություն, մի բան, որ չկա ուղղականով դրված ենթակայի մեջ։ Այսպես՝ Ինձ ունեմ—նշանակում է՝ Ես ինձ համար ունեմ, Նրան ունի—Նա իր համար ունի և այլն։

Մեծ հայագետ Մ. Աբեղյանը նկատելով այս կառուցվածքի

---

[1] Տե՛ս Ս. Աբրահամյան, ժամանակակից հայերենի շարահյուսության մի քանի հարցեր, 1962, էջ 16։

[2] Տրական հոլովով ենթակայի գործածությունը հատուկ էր նաև գրաբարին։

նախադասությունները, գտնում է, որ «ժողովրդական լեզվի մեջ ունիմ բայի ենթական հաճախ դրվում է իբրև ստացական տրական խնդիր»[1]։ Պրոֆ. Վ. Առաքելյանը ևս իր «Հայերենի շարահյուսություն» արժեքավոր աշխատության մեջ այս կառուցվածքների տրական հոլովով անդամը համարում է ստացման անուղղակի խնդիր[2]։ Մեր կարծիքով այստեղ տրական հոլովով դրված է ոչ թե խնդիրը, այլ ենթական։ Դրա լավագույն ապացույցն այն է, որ վերջինս թվով և դեմքով համաձայնում է ստորոգյալին (ինձ ունեմ, նրան ունի, մեզ ունենք և այլն), մյուս ապացույցն այն է, որ տրական հոլովը այստեղ հեշտությամբ կարելի է փոխարինել ուղղական հոլովով (Ես ունեմ, Դու ունես, Նա ունի), մի բան, որ հնարավոր չէ կատարել տրական հոլովով դրված խնդիրների նկատմամբ՝ առանց իմաստային և կառուցվածքային փոփոխությունների։

Հետաքրքրական է այն երևույթը, որ հաճախ բայի հարկադրական եղանակի ձևերով դրսևորված ստորոգյալին համանիշ գործածվում է պետք է եղանակավորող կապակցությամբ և անորոշ դերբայով ձևավորված բաղադրյալ ստորոգյալ, որի մոտ ենթական դրվում է ոչ թե ուղղական, այլ տրական հոլովով։ Վերջինս համանիշ է նախորդ կառուցվածքի ուղղականով դրված ենթակային։ Օրինակ՝ Բայց ինձ պետք է նախ իմ հյուրի հանգստության մասին հոգալ (Ր, 7, 326) → Բայց ես պետք է նախ իմ հյուրի հանգստության մասին հոգամ։ Նրան պետք է անմիջապես հեռանալ → Նա պետք է (պիտի) անմիջապես հեռանա։ Բերված համանիշները ունեն իմաստային այն նուրբ տարբերությունը, որ առաջին դեպքում ավելի է ընդգծվում գործողության՝ ենթակայի կողմից կատարման անհրաժեշտությունը։

Այստեղ անհրաժեշտ է խոսել նաև կողմնակի ենթակայի և նրա դրսևորման քերականական միջոցների մասին։ Նախադասության մեջ հաճախ հաղորդվում է ոչ միայն մեկ գործողության

---

[1] Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, 1965, Երևան, էջ 436։

[2] Վ. Առաքելյան, Հայերենի շարահյուսություն, հատոր 1, 1958, Երևան, էջ 301։

մասին, այլ մի շարք գործողությունների մասին, որոնք իրար նկատմամբ ունենում են բազմազան հարաբերություններ։ Երբ այդ գործողությունների հարաբերությունը ներկայացվում է բարդ նախադասության ձևով, ապա նրանցից յուրաքանչյուրը ունենում է պարզ նախադասությանը հատուկ կառուցվածք՝ իր ենթակայով, լրացումներով և այլն (օրինակ՝ Ես իմացա, որ նա այսօր գալիս է)։ Սակայն հաճախ հիմնական գործողությանը հարակից գործողությունները նախադասության մեջ հանդես են գալիս դերբայական դարձվածի ձևով, այսինքն՝ հարակից գործողությունը չի տրվում դիմավոր բայի միջոցով, այլ բայի անդեմ ձևով, որը իր հետ բերում է նախադասության կառուցվածքային յուրահատուկ առանձնահատկություններ։ Այդ առանձնահատկություններից ամենաակնառուն հարակից, լրացում հանդիսացող գործողություն կատարողի, մի բան լինողի, այսինքն՝ ենթակայի քերականական դրսևորման ձևն է։ Ինչպես հայտնի է, դերբայական դարձվածի ենթական քերականագիտության մեջ կոչվում է կողմնակի ենթակա, որովհետև ցույց է տալիս ոչ թե նախադասության բուն, հիմնական գործողություն կատարողը, այլ հարակից գործողություն կատարողը։ Եթե նախադասության բուն ենթական ժամանակակից հայերենում դրսևորվում է ուղղական հոլովով, ապա այդպես չէ կողմնակի ենթական։ Այն ունի արտահայտության մի շարք ձևեր, որոնք հաճախ հանդես են գալիս միանման կազմություններում՝ ստեղծելով կողմնակի ենթակայի արտահայտության համանիշ ձևեր։ Այս դեպքում ավելի ճիշտ կլինի խոսել նույնանիշության մասին, որովհետև կողմնակի ենթակայի արտահայտության համար տարբեր քերականական միջոցների գործածումը նրբերանգային և ոճական որևէ տարբերություն չի առաջացնում։

Երբ դերբայական դարձվածի ենթական անձ է ցույց տալիս, այդ դեպքում ընդունված է այն դնել սեռական հոլովով։ Սակայն հաճախ են հանդիպում դեպքեր, երբ նախադասության բուն ենթակայի նմանակությամբ ուղղական հոլովով է դրվում նաև կողմնակի ենթական, սակայն այդ կառուցվածքները անհարթ են և ոչ հանձնարարելի։ Անձ ցույց տվող կողմնակի ենթակաների ուղղական հոլովով կիրառությունների ավելի հաճախ հանդիպում ենք XIX դարի

վերջերի և XX դարի սկզբների գրականության մեջ։ Օրինակ՝ Կատերինա Կարլովնան մյուս սենյակ անցնելուց հետո, Պյոտր Ստեփանիչի դեմքն ավելի փոխվեց (Շ, 4, 100)։ Էս հարևանը վարելու ժամանակ խոփը մի տեղ դեմ է ընկնում, դուրս է գալի մի կարաս, մեջը լիքը ոսկի (ՀԹ, 1, 447)։ Որդին ամսորվելուց հետո նա միառժամանակ ասածուց երես էր դարձրել (Շ, 4, 231)։ Այս նախադասություններին նույնանիշ և այժմ հանձնարարելի ձևերն են՝ Կատերինա Կարլովնայի մյուս սենյակ անցնելուց հետո Պյոտր Ստեփանիչի դեմքն ավելի փոխվեց։ Էս հարևանի վարելու ժամանակ խոփը մի տեղ դեմ է ընկնում...։ Որդու ամսորվելուց հետո նա միառժամանակ ասածուց երես էր դարձրել։

Սակայն երբ դերբայը կրավորական սեռի է, կամ վիճակ, դրություն ցույց տվող շեղոք սեռի բայ, իսկ կողմնակի ենթական ցույց է տալիս իր, վերջինս հավասարապես կարող է գործածվել ուղղական և սեռական հոլովներով, որոնք այս կիրառություններում նույնպես նույնանիշ են. օրինակ՝ Կամենում էր գիտենալ, թե որքան ժամանակ էր մնացել մինչև լույսի բացվելը (Ր, 7, 18) → մինչև լույսը բացվելը: Անձրևը գալուց հետո օդը մաքրվեց → Անձրևի գալուց հետո օդը մաքրվեց։ Դա բոլորովին կապ չունի ապակին ջարդվելու հետ → Դա բոլորովին կապ չունի ապակու ջարդվելու հետ: Իհարկե, ոչ բոլոր դեպքերում է, որ հնարավոր է կողմնակի ենթական արտահայտել սեռական կամ ուղղական նույնանիշ ձևերով։ Ավելի հաճախ ժամանակակից հայերենում կողմնակի ենթական արտահայտվում է սեռական հոլովով։ Այստեղ չի խոսվում այն երևույթի մասին, որ դերբայական դարձվածին համանիշ համապատասխան երկրորդական նախադասության մեջ կողմնակի ենթակային համապատասխանում է ուղղական հոլովով դրված բուն ենթական (Նրա գնալու մասին մենք իմացանք ուշ → Որ նա գնացել է, մենք իմացանք ուշ)։

Երբ կողմնակի ենթական վերաբերում է զուգընթացական[1] դերբայի կամ ժամանակի պարագայի պաշտոն կատարող այլ

---

[1] Զուգընթացական ենք կոչում անկատար դերբայի II ձևը՝ գրելիս, կարդալիս, խոսելիս և այլն։

դերբայի և ցույց է տալիս նախադասության հիմնական գործողությանը զուգընթաց տեղի ունեցող այլ գործողության կատարողը, այն ունենում է երկակի դեր. մի կողմից հանդիսանում է զուգընթաց կատարվող գործողության ենթական, մյուս կողմից՝ գլխավոր գործողության համար որևէ լրացում (հիմնականում խնդիր)։ Այս դեպքում այն դրվում է ոչ թե սեռական հոլովով, այլ գլխավոր գործողության պահանջած հոլովով. օրինակ՝ Ես տեսա նրան վազելիս: Ես մոտեցա նրան աշխատելու ժամանակ: Բերված օրինակներից առաջինում զուգընթաց տեղի ունեցող գործողության ենթական գլխավոր նախադասության համար ուղիղ խնդիր է, երկրորդ նախադասության մեջ՝ հանգման խնդիր։ Այդ է պատճառը, որ այս դերբայները իրենց համանիշ երկրորդական նախադասությամբ փոխարինելիս այդ լրացումները մնում են գլխավոր նախադասության մեջ, իսկ երկրորդական նախադասության ենթական, որը փոստորեն դրսևորված է այդ նույն անդամով, կեղշվում է։ Այսպես՝ Ես տեսա նրան, երբ վազում էր: Ես մոտեցա նրան, երբ աշխատում էր: Դա հետևանք է այն բանի, որ նրան վազելու ժամանակ կամ նրան աշխատելիս ձևերը հանդես չեն գալիս որպես մեկ բառակապակցություն՝ դերբայական դարձված։ Ճիշտ է, նրան ձևով արտահայտվում է նաև դերբայով տրված գործողության կատարողը, բայց այն դերբայի անմիջական լրացումը չէ։ Հատկանշական է այն երևույթը, որ զուգընթացական դերբայը սեռական հոլովով կողմնակի ենթակա չի ընդունում. հնարավոր չէ ասել նրա վազելիս, նրա գրելիս և այլն։

Սեռականով կողմնակի ենթակա հնարավոր չէ գործածել նաև ենթակայական դերբայի մոտ։ Հետաքրքրական է այն երևույթը, որ ենթակայական դերբայով տրված գործողության կատարողը հենց վերջինիս լրացյալն է, այսինքն՝ այն անդամը, որին այն լրացնում է, այսպես՝ սովորող տղա, գրող աշակերտ, խաղացող երեխա ձևերը համանիշ են Տղա, որ սովորում է, Աշակերտ, որ գրում է, Երեխա, որ խաղում է ձևերին։ Այստեղ ևս այդ լրացյալը նախադասության մեջ կատարում է երկակի դեր՝ հանդիսանում է հիմնական նախադասության որևէ անդամը, միաժամանակ ցույց է տալիս դերբայի գործողություն կատարողը. օրինակ՝ Ես մոտեցա

սովորող տղային: Խաղացող երեխայից գնդակը վերցրին։ Այստեղ ևս այդ անդամը դրվում է նախադասության մեջ կատարած պաշտոնի պահանջած հոլովով։

Առանձնահատուկ է հարակատար դերբայով տրված գործողության կատարողի դրսևորումը նախադասության մեջ։ Երբ բայը ներգործական է, վերջինս կարող է լինել ինչպես կողմնակի ենթակա՝ սեռական հոլովով, այնպես էլ նախադասության այլ անդամ, որը հանդիսանում է տվյալ դերբայի լրացյալը. այսպես՝ Նրա գրած նամակը ստացա → Ստացա նամակը, որ գրել էր նա: Նամակը գրած տղան այստեղ էր → Այստեղ էր տղան, որ գրել էր նամակը: Երբ հարակատար դերբայը կրավորական սեռի է, սեռականով կողմնակի ենթակա չի կարող ընդունել։ Նրա կողմնակի ենթական ևս հենց իր լրացյալն է, որը նախադասության մեջ դրվում է իր հիմնական պաշտոնի պահանջած հոլովով. օրինակ՝ Ստացված նամակի բովանդակությունը հայտնի դարձավ բոլորին։ Ստացված նամակը հուզեց բոլորին։ Ստացված նամակից իմացանք։ Բերված նախադասությունները համանիշ են հետևյալներին՝ Հայտնի դարձավ բոլորին այն նամակի բովանդակությունը, որ ստացվեց: Նամակը, որ ստացվեց, հուզեց բոլորին։ Նամակից, որ ստացվեց, իմացանք։

Ենթակայի դրսևորման համանիշ ձևեր են նաև դերբայական դարձվածով և երկրորդական նախադասությամբ արտահայտված ենթականները, ինչպես՝ Իմացողը եկավ → Նա, ով իմացավ, եկավ։ Կհաղթի արագ վազողը → Կհաղթի նա, ով արագ է վազում։ Ամառանոց գնացածները վերադարձան → Նրանք, որոնք ամառանոց էին գնացել, վերադարձան։

Հայտնի է, որ գործողություն կատարողը քերականորեն կարող է վերացարկվել և՛ որպես նախադասության ենթակա՝ ներգործական կառուցվածքի նախադասություններում, և՛ որպես ներգործող խնդիր՝ կրավորական կառուցվածքի նախադասություններում։ Հետևաբար՝ ներգործական կառուցվածքի նախադասության ենթական համանիշ է համապատասխան կրավորական կառուցվածքի նախադասության ներգործող խնդրին։ Նույն ձևով՝ կրավորական կառուցվածքի նախադասության ենթական, որը ցույց է տալիս

գործողության օբյեկտը, համանիշ է համապատասխան ներգործական նախադասության ուղիղ խնդրին (այս մասին տե՛ս «Ներգործական և կրավորական կառուցվածքի համանիշ նախադասություններ» գլուխը)։

3. ԳՈՅԱԿԱՆԱԿԱՆ ԱՆԴԱՄԻ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՀԱՄԱՆԻՇՆԵՐ

ՈՐՈՇԻՉ-ՈՐՈՇՅԱԼԻ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՆԻՇ ՁԵՎԵՐԸ

Հայտնի է, որ որոշիչը ցույց է տալիս նախադասության՝ գոյականով արտահայտված որևէ անդամի որակական, քանակական, հարաբերական և այլ հատկանիշներ։ Որոշիչն ունի դրսևորման բազմազան ձևեր, որոնցից յուրաքանչյուրը որոշիչ-որոշյալի հարաբերությանը տալիս է ուրույն իմաստ. այսպես, որակական ածականը որոշչի պաշտոնով ցույց է տալիս որոշյալի որակական հատկանիշը, թվականը՝ թվային հատկանիշը, դերբայը՝ գործողության հետ կապված հատկանիշ և այլն։ Որոշիչը կարող է լինել պարզ՝ կազմված մեկ բառից, կարող է լինել որևէ բառակապակցություն, դերբայական դարձված և այլն։

Շատ հաճախ որոշիչ—որոշյալի նույնիմաստ հարաբերությունը դրսևորելու համար ևս ժամանակակից հայերենում գործածվում են տարբեր քերականական միջոցներ, որոնք ստեղծում են որոշիչների համանիշ շարքեր։ Բերենք ժամանակակից հայերենում դրանցից ամենատարածվածները։

1. Երբ որոշիչը բնորոշում է առարկան նրա ինչից պատրաստված լինելը ցույց տալու միջոցով, այն դրսևորվում է հիմնականում հետևյալ համանիշ ձևերով.

ա) Հարաբերական ածականով. օրինակ՝ արծաթե (արծաթյա) գդալ, երկաթե (երկաթյա) կողպեք, փայտե (փայտյա) սեղան, քաթանե շոր և այլն։

բ) Այն գոյականի բացառական հոլովով, որից բաղադրված է հարաբերական ածականը. օրինակ՝ Արծաթից գդալ, երկաթից

կողպեք, փայտից սեղան, քարանից շոր և այլն։ Բացառական հոլովի հետ հաճախ հանդես են գալիս կամ հասկացվում են շինած, պատրաստած և այլն դերբայներ, ինչպես՝ արծաթից պատրաստած գդալ, քարանից կարած շոր, քարից շինած (կառուցած) տուն և այլն։

Այս երկու ձևերը հանդես են գալիս որպես համանիշներ և ունեն իմաստային, ոճական այն նույնը տարբերությունը, որ առաջին դեպքում (հարաբերական ածականի) առարկայի ինչ նյութից պատրաստված, կազմված լինելը դիտվում է որպես նրա անբաժան, մշտական, բնորոշ հատկանիշը, իսկ երկրորդ դեպքում խոսողի նպատակն է լինում ընդգծել այն, թե ինչ նյութից, ինչից է պատրաստված, կազմված տվյալ առարկան՝ չդիտելով այն իբրև մշտական, բնորոշ հատկանիշ։

գ) Երբեմն այդ նույն հարաբերությունն արտահայտելու համար գործածվում է նաև համապատասխան գոյականի սեռական հոլովը, որի ժամանակ, սակայն, որևէ նյութից պատրաստված լինելու իմաստը զգալիորեն թուլանում է։ Մի բան, որ բխում է սեռական հոլովի իմաստից (նրանում շատ ուժեղ է և գերիշխում է վերաբերության իմաստը)։ Այսպես՝ արծաթի գդալ, փայտի սեղան և այլն։

Ծանոթություն.— Սեռական հոլովի որոշչային կիրառության հետևանքով կատարվել է գոյականի սեռական հոլով>ածական խոսքի մասային անցումը։ Այժմ արծաթի ձևը այս կիրառություններում համարվում է ոչ թե գոյականի սեռական հոլով, այլ ածական։ Միաժամանակ պետք է նշել, որ որոշչի այս իմաստն արտահայտելու ամենատարածված ձևերը ժամանակակից հայերենում հարաբերական ածականի յա կամ ե ածանցով կազմված ձևերն են։ Արծաթի և նման կազմությունները այս իմաստով հանդիպում են սակավ։

Այսպիսով՝ որոշիչ-որոշյալի վերը տրված հարաբերության դրսևորման համանիշ ձևերը կլինեն՝ արծաթե գդալ → արծաթից (պատրաստած) գդալ → արծաթի գդալ։

Համանիշների այս շարքն ունի հետևյալ կառուցվածքը՝ հարաբերական ածական + գոյական → գոյականի բացառական հոլով + գոյական → գոյականի սեռական հոլով + գոյական։ Եթե խոսքի մասերը նշանակենք մեծատառ սկզբնատառերով՝ կողքին

մանր տառերով գրելով նրանց քերականական առանձնահատկությունները, կստանանք որոշիչ—որոշյալի տվյալ հարաբերությունն արտահայտող համանիշ շարքի հետևյալ սխեման՝

Ահաբ.+Գ → Գբաց. հ.+Գ → Գսեռ. հ.+Գ

2. Երբ որոշիչը ցույց է տալիս որոշյալի՝ մի որևէ հատկանիշ կամ որևէ բաղկացուցիչ մաս որոշակի չափով ունենալը, ապա այն կարող է արտահայտվել՝

ա) Տվյալ հատկանիշի կամ բաղկացուցիչ մասի անունը հանդիսացող գոյականի գործիական հոլովով և նրան լրացնող, այդ հատկանիշը կամ մասը բնորոշող որոշիչով՝ դրսևորված ածականով կամ այլ խոսքի մասով. օրինակ՝ բարձր որակով աշխատանք, մեծ (խոնարհած) գլխով երեխա, սև աչքերով աղջիկ և այլն։ Բերենք բնագրային օրինակներ։ Վերջապես եկավ քահանան. նոր-նոր աղվամազը դուրս եկած մի նորընծա, մեջքին խիստ հուպ տված փայլուն փարաջայով և փայփուկ կաստորի նոր գլխարկով (ՆԴ, 3, 19)։ Արսենը ցույց էր տալիս նրան բամբակի արտերը բաց-մանուշակագույն ծաղիկներով (ՀՔ, ՄՏՁ, 1, 19)։ Այդ մարդը մոտ երեսուն-երեսուներկու տարեկան մի գինվորական էր, մարմնեղ, ամուր ուսերով, հստակ, լուսավոր դեմքով, կապույտ աչքերով (Ն. ա., 2, 21)։ Սա վաթսունն անց մի մարդ էր, բարձրահասակ, բայց նիհար մարմնով, նեղ ու երկար դեմքով, խոր ընկած աչքերով, դուրս ցցված այտոսկրերով (Մ, 5, 77)։

բ) Տվյալ գոյականի ուղղական հոլովով և նրան լրացնող, ածականով կամ այլ խոսքի մասով դրսևորված որոշիչով, որը այս դեպքում գրվում է գոյականից հետո. օրինակ՝ Մարմինը նիհար, դեմքը նեղ ու երկար, աչքերը խոր ընկած մարդ, աչքերը մեծ աղջիկ, որակը բարձր աշխատանք։ Մենք մի աչքաբաց ու համարձակ ընկեր ունենինք՝ անունը Գևորգ (ՎԱ, ԼՀ, 85)։

գ) Այդ գոյականի սեռական հոլովով և դարձյալ նրան լրացնող ածականով. օրինակ՝ բարձր որակի աշխատանք, կարմիր գույնի գլխարկ և այլն։ Ինչպես երևում է բերված օրինակներից, այս իմաստային հարաբերությունն արտահայտելու համար սեռական

հոլովաձևով դրվում են միայն հատկանիշի անուն հանդիսացող գոյականները։ Իսկ եթե առարկան բնորոշող բառը նրա բաղկացուցիչ մասի կամ նրան վերաբերող մեկ այլ առարկայի անուն է, որի որևէ հատկանիշը ընդգծելով բնորոշվում է տվյալ առարկան (մեծ գլխով երեխա, նիհար մարմնով տղա, սև աչքերով աղջիկ և այլն), ապա սեռական հոլովաձևը չի գործածվում։ Հնարավոր չէ ասել մեծ գլխի, երկար դեմքի մարդ կամ սև աչքերի աղջիկ։ Դա հետևանք է այն բանի, որ այս դեպքում լրացման և լրացյալի հարաբերությունը վեր է ածվում, ըմբռնվում է որպես հատկացուցիչ-հատկացյալի հարաբերություն։

դ) Ունեցող դերբայով կազմված դերբայական դարձվածով, որտեղ այդ գոյականը հանդես է գալիս որպես կողմնակի ուղիղ խնդիր. այսպես՝ բարձր որակ ունեցող աշխատանք, լավ համ ունեցող հաշ, մեծ գլուխ ունեցող երեխա, սև աչքեր ունեցող աղջիկ և այլն։

ե) Բաղադրյալ ածականների միջոցով, որոնց բաղադրիչների միջև առկա է վերը նշված հարաբերությունը. այսպես՝ բարձրորակ աշխատանք, բարեսիրտ մարդ, մեծագլուխ երեխա, սևաչյա աղջիկ, խաղցրահամ ջուր և այլն։

Վերջին երկու դեպքում որոշիչ-որոշյալի միջև եղած այդ հարաբերությունն արտահայտելու համար օգտագործվել են ոչ միայն քերականական միջոցներ, ինչպես առաջին երկու դեպքում է, այլ նաև բառական միջոցներ. մի դեպքում ավելացել է ունեցող բառը, որի մոտ փոխվել է նաև որոշիչ գոյականի քերականական դերը (այն վեր է ածվել կողմնակի ուղիղ խնդրի), մյուս դեպքում կատարվել է բառաբարդում, ըստ որում բարդ բառի բաղադրիչների միջև եղած շարահյուսական հարաբերությունը դարձյալ որոշիչ-որոշյալի հարաբերություն է, ինչպես վերևի դեպքերում։ Այսպիսով, այս համանիշ շարքը կլինի՝ բարձր որակով աշխատանք → բարձր որակի աշխատանք → բարձր որակ ունեցող աշխատանք → բարձրորակ աշխատանք։ Եթե փորձենք համանիշների այս շարքը արտահայտել սխեմայով, կստանանք.

$$(Ա+Գ_{գործ.})+Գ \rightarrow (Գ_{ուղղ.}+Ա)+Գ \rightarrow (Ա+Գ_{սեռ.})+Գ \rightarrow (Ա+ \\ +Գ_{հայց.}+\text{ունեցող})+Գ \rightarrow Ա_{բաղ.}+Գ$$

Փակագծերը սխեմայում ցույց են տալիս, որ այդ կապակցությունները հանդես են գալիս որպես նախադասության մեկ անդամ։

Բերված համանիշները տարբերվում են իրարից ոճական առումով, կիրառության ծավալով և նախադասության մեջ ունեցած իրենց դիրքով՝ շարադասությամբ։ Այսպես՝ գործիականով ձևերը սովորաբար ունենում են ետադաս շարադասություն, այսինքն՝ դրվում են որոշյալից հետո (տե՛ս համապատասխան օրինակները), սեռականով ձևերը ունեն կիրառության ավելի նեղ ոլորտ և լինում են սովորաբար առաջադաս, դերբայական դարձվածի ձևերը ունեն գրքային բնույթ, գեղարվեստական գրականության և հատկապես ժողովրդական-խոսակցական լեզվում քիչ են գործածվում, ունենում են բացառապես առաջադաս շարադասություն (դրվում են որոշյալից առաջ)։ Բաղադրյալ ածականի ձևերը ևս ավելի հատուկ են գրավոր խոսքին, սակայն, ի տարբերություն նախորդի, մեծ կիրառություն ունեն նաև գեղարվեստական գրականության լեզվում։ Սրանք ևս լինում են գերազանցապես առաջադաս։

Երբ որոշյալը անձ է ցույց տալիս, իսկ որոշիչը՝ նրա որևէ հոգեկան հատկանիշով օժտված լինելը, վերջինս արտահայտվում է. 1) ունեցող դերբայով կազմավորված դերբայական դարձվածով։ Հատկանիշ ցույց տվող բառը լինում է վերջինիս ուղիղ խնդիրը։ 2) Տեր գերադաս անդամն ունեցող բառակապակցությամբ։ Հատկանիշ ցույց տվող բառը այստեղ դրվում է սեռական հոլովով՝ տեր բառի պահանջով։ 3) Հատկանիշ ցույց տվող բառի գործիական հոլովով։ Օրինակ՝ Բարձր ճաշակ ունեցող մարդ → բարձր ճաշակի տեր մարդ → բարձր ճաշակով մարդ։ Բնագրային օրինակ՝ Սամվելի մայրը այնքան նուրբ զգացմունքներ ունեցող կին չէր (Ր, 7, 94) → Նուրբ զգացմունքների տեր կին չէր → Նուրբ զգացմունքներով կին չէր։

3. Երբ առարկան որոշվում է ոչ թե իրեն բնորոշ որևէ հատկանիշ նկարագրելու միջոցով, այլ իր և մեկ այլ առարկայի միջև եղած տարածական հարաբերության նկարագրությամբ, այսինքն՝ երբ ընդգծվում, ցույց է տրվում այն տեղը, որտեղ գտնվում է տվյալ առարկան՝ դրանով որոշելով, սահմանազատելով վերջինս այլ առարկաներից, որոշիչ-որոշյալի միջև եղած քերականական

հարաբերությունը արտահայտվում է հետևյալ համանիշ միջոցներով։

ա) Որոշիչը արտահայտվում է այդ տեղը ցույց տվող բառով և դրություն, վիճակ ցույց տվող որևէ բայի ենթակայական կամ հարակատար դերբայներով կազմված բառակապակցությամբ՝ դերբայական դարձվածով, որտեղ տեղ ցույց տվող բառը հանդես է գալիս կողմնակի տեղի պարագայի պաշտոնով. օրինակ՝ սեղանի վրա գտնվող գիրք, առվի ափին եղած նստարան, Գուրգենի մոտ եղած (գտնվող) գիրք, ծառի տակ կանգնած մարդ և այլն։ Տեղ ցույց տվող գոյականը իր հերթին կարող է ունենալ լրացումներ, սակայն դա չի ազդում տվյալ որոշչի բնույթի վրա. օրինակ՝ փոքր սեղանի վրա գտնվող գիրք, մեծ առվի ափին եղած նստարան և այլն։

բ) Տեղ ցույց տվող գոյականը դրվում է սեռական հոլովով, ըստ որում այն ունենում է որևէ հատկացուցիչ, ինչպես՝ առվի ափի նստարանը: Հաճախ սեռական հոլովով են դրվում տարածական հարաբերություն ցույց տվող և դերբայական դարձվածի մեջ կապական բառի պաշտոն կատարող գոյականները՝ վրա, մեջ, տակ, մոտ և այլն։ Տեղ ցույց տվող բառը հանդիսանում է վերջիններիս հատկացուցիչը, իսկ երկուսը միասին կատարում են որոշչի պաշտոն. օրինակ՝ սեղանի վրայի գիրքը, Գուրգենի մոտի մատիտը, ծառի տակի խոտը և այլն։ Ահա բնագրային օրինակ՝ Գետի այն կողմը, նեղ հովտի վրայի փոքրիկ քաղաքում վառվում են լույսերը (Սխ, ԿՇ, 33)։

գ) Ինչպես հայտնի է, ժամանակակից հայերենում կապերը հիմնականում գործածվում են խնդրային և պարագայական հարաբերություններ դրսևորելու համար։ Սակայն վերջերս լեզվում սկսել է տարածվել նաև եռադաս որոշչի կապակցությունը որոշյալի հետ տարածական հարաբերություններ արտահայտող կապերով կամ տրական ու ներգոյական հոլովներով (վերջիններս նույնպես հիմնականում կիրառվում են բայերի հետ). օրինակ՝ տունը նանապարհի վրա, մարդը ծովափին, երկրաշարժ Իրանում և այլն։ Այս տիպի բառակապակցությունները հատկապես շատ են հանդիպում վերնագրերում, ինչպես նաև թարգմանական գրական-

նության մեջ։ Այս եռադաս որոշիչները իրենց արտահայտած իմաստով մոտենում են որոշիչ երկրորդական՝ նախադասություններին և որոշչի պաշտոն կատարող դերբայական դարձվածներին։ Այսպես՝ Տունը, որ գտնվում է ճանապարհի վրա → ճանապարհի վրա գտնվող *տունը* → ճանապարհի վրայի *տունը* → *տունը* ճանապարհի վրա, *Մարդը* որ կանգնած է ծովափին → ծովափին կանգնած *մարդը* → ծովափի *մարդը* → *մարդը* ծովափին։

Այս բառակապակցություններում թեև բացակայում է բայով արտահայտված անդամը, սակայն այն մտքով հասկացվում է, և եռադաս որոշիչները ոչ թե անմիջաբար լրացնում են որոշյալին, այլ փաստորեն այդ բացակա, բայց մտքով հասկացվող բային։ Բերենք բնագրային օրինակներ՝ Հիշվում էին բնակավայրեր՝ *հյուսիսում, արևմուտքում, հարավում, որոնց կարծես երբեք չպիտի մոտենային թշնամու հրոսակները (ՀՔ, ՄՏՁ, 1, 5)։ Լսվում էին հատուկենտ կրակոցներ և մեկ-մեկ էլ ավտոմատների հերթազարկեր ու անիվների շխկշխկոցը՝* խճապատ ճանապարհների վրա *(Ն. տ., 469)։ Սրանց համանիշ ձևերը կլինեն՝* Հյուսիսում, հարավում, արևմուտքում գտնվող բնավայրեր → Հյուսիսի, հարավի, արևմուտքի բնակավայրեր → Բնակավայրեր, որ գտնվում են հյուսիսում, հարավում, արևմուտքում։ Խճապատ ճանապարհների վրայի անիվների շխկշխկոցը → Խճապատ ճանապարհների վրայով անցնող անիվների շխկշխկոցը → Շխկշխկոցը անիվների, որ անցնում էին խճապատ ճանապարհների վրայով։

Վերոհիշյալ հարաբերություններն արտահայտող համանիշ բառակապակցությունների սխեման կարելի է ներկայացնել հետևյալ ձևով՝

(Գտր. հ. + Դ) + Գ → (Գսեռ. հ. + կապ + Դ) + Գ → (Գսեռ. հ. + Գտ. սեռ հ.) + Գ → Գ + Գտր. ներգ. հ → Գ + (Գսեռ հ. + կապ)

Դ-ն սխեմայում նշանակում է դերբայ, Գտ. սեռ. հ.-ը՝ տարածական հարաբերություն ցույց տվող գոյականի սեռական հոլով (վրայի, մոտի, տակի, միջի *և այլն)։ Փակագծերը դարձյալ*

ցույց են տալիս, որ տվյալ բառակապակցությունները հանդես են գալիս որպես նախադասության մեկ անդամ։

4. Երբեմն որոշիչ-որոշյալի հարաբերությամբ բնորոշվում է առարկան՝ նրա որևէ հատկանիշ չունենալը, որևէ բանից զուրկ լինելը նկարագրելու միջոցով։ Այս դեպքում ևս որոշիչը կարող է դրսևորվել երեք համանիշ ձևերով։ Դրանք են՝

ա) Տվյալ հատկանիշը, առարկան անվանող գոյականի սեռական հոլովով՝ առանց կապի հետ. օրինակ՝ առանց գլխարկի տղա, առանց ծալքերի կտոր, առանց տանիքի տուն, առանց կրակի օջախ և այլն։ Ահա բնագրային օրինակ՝ Կանաչ ծառի տակ նստած մնաց գուսանը՝ կրծքին գրկած սազը՝ առանց լարի (Իս., Ակ, 38)։

բ) Ունենալ բայի ենթակայական դերբայի ժխտական ձևով, որի համար տվյալ գոյականը հանդիսանում է ուղիղ խնդիր. այսպես՝ գլխարկ չունեցող տղա, ծալքեր չունեցող կտոր, տանիք չունեցող տուն, կրակ չունեցող օջախ և այլն։

գ) Նույն գոյականով և ան- ժխտական նախածանցով բաղադրված ածականով. այսպես՝ անգլխարկ տղա, անծալք կտոր, անտանիք տուն, անկրակ օջախ, անընկեր մարդ, անգլուխ ձիավոր և այլն։ Այս համանիշ շարքի սխեման կլինի՝

(առանց + Գսեռ հ.) + Գ → (Գհայց. հ. + չունեցող) + Գ → Աբաղ. + Գ

Այս ձևերից յուրաքանչյուրն ունի կիրառության հատուկ ոլորտ։ Առաջին ձևը (կապով ձևը) գրքային է, բանավոր լեզվում հանդիպում է սակավ, այն էլ հաճախ առանց կապի հետ դրվում է ոչ թե գոյականի սեռական հոլովը, այլ հայցականը (առանց գլխարկ, առանց տանիք և այլն). մի բան, որ գրական լեզվում հանձնարարելի չէ։ Ժողովրդական-խոսակցական լեզվում ավելի տարածված է երրորդ ձևը։

5. Երբ գոյականը որոշվում է նրան վերագրելով մեկ այլ գոյականի հատուկ որևէ հատկանիշ, որպես համանիշ կարող են հանդես գալ կամ տվյալ գոյականի սեռական հոլովը և կամ նույն գոյականից -ային (-ական) ածանցով բաղադրված ածական։ Այդ երկու ձևերը տվյալ կիրառություններում համանիշ են։ Օրինակ՝

դաշտի *ծաղիկ* → դաշտային *ծաղիկ*, ամառվա *շոգ* → ամառային *շոգ*, սենյակի *բույս* → սենյակային *բույս և այլն։*

Բերենք օրինակ նախադասության մեջ՝ Նրա սուլոցը խուլ ելևէջներով տարածվեց գիշերվա լռության մեջ *(ՍՍՇ, 6)։ → Նրա սուլոցը խուլ ելևէջներով տարածվեց* գիշերային լռության մեջ։ *Սկսվեցին* գարնան հորդ անձրևները → *Սկսվեցին* գարնանային հորդ անձրևները։

Այս նույն հարաբերությունը կարելի է արտահայտել նաև նկարագրական եղանակով, ինչպես՝ ամռանը հատուկ շոգ, գիշերվան հատուկ լռություն, սենյակում աճող բույս, գարնանը հատուկ անձրև *և այլն։ Ահա այս համանիշների սխեման՝*

Գսեռ. հ.+Գ → Ա+Գ → (Գտար. հ.+հատուկ)+Գ

Այս կառուցվածքներում համանիշ են գոյականի սեռական հոլովն ու ածականը, միաժամանակ նաև բառակապակցությունները, այսինքն՝ այս դեպքում գործ ունենք և՛ ձևաբանական, և՛ շարահյուսական համանիշների հետ։

Երբեմն որպես համանիշ որոշիչներ հանդես են գալիս գոյականի ուղղական և սեռական հոլովները, հազվագեպ նաև ուղղական հոլովը և նրանից -ական *ածանցով բաղադրված ածականը. օրինակ՝* Սգի կամ տոնական *օրերին ինչ-որ օտար մարդիկ գալիս են և կողովներով վարդեր ու ծաղիկներ տանում (ԳՄ, 525)* → Սուգ *կամ* տոն *օրերին ինչ-որ օտար մարդիկ գալիս են...։*

Շարահյուսական համանիշներ են ստեղծվում նաև որոշիչ-որոշյալի շարադասության շրջումով։ Ժամանակակից հայերենում որոշիչը, որպես կանոն, ունենում է առաջադաս շարադասություն, այսինքն՝ դրվում է որոշյալից առաջ։ Դա վերաբերում է հատկապես պարզ որոշիչներին։ Սակայն հաճախ հաղորդման նպատակից ելնելով, ոճական նկատառումներով կամ պարզապես ամբողջ նախադասության կառուցվածքի թելադրանքով որոշիչը փոխում է իր սովորական տեղը, դրվում է որոշյալից հետո՝ ստեղծելով սովորական շարադասություն ունեցող որոշչին համանիշ։

Երբ որոշյալն ունի միայն մեկ որոշիչ, ապա շրջուն շարադասության դեպքում փոխվում է հիմնականում նախադասության

տրամաբանական շեշտը. խոսողը նպատակադրվում է շեշտել առարկայի՝ տվյալ հատկանիշն ունենալը և կամ խոսքին բանաստեղծականություն հաղորդել։ Այդ իսկ պատճառով շրջուն շարադասությամբ ետադաս պարզ որոշիչները հատկապես շատ են կիրառվում չափածո ստեղծագործությունների մեջ։ Բերենք օրինակներ։ Թեկուզ բնության գույները բոլոր հրաշքով առնես քո ծով կտավին, Նորից չես հասնի բնությանը խոր (ՀՇ, 238)։ Որսկանը ժայռին գարկեց մի եղնիկ, Զորը գլորվեց իմ եղնիկը խեղճ (Ն. տ., 237)։ Եվ արցունքներ դառնաղի ահա ընկնում են մեկ-մեկ Քո ձեռքերի վրա ծեր, մա՜յր իմ անուշ ու անգին... (ԵՁ, ԸԵ, 32)։ Օրինակներում ընդգծված բառակապակցությունները համանիշ են հետևյալներին՝ բոլոր գույները, խոր բնությանը, խեղճ եղնիկը, դառնաղի արցունքներ, ծեր ձեռքերի վրա, իմ անուշ ու անգին մայր, որոնք ունեն սովորական շարադասություն։

Ինչպես ցույց է տալիս ուսումնասիրությունը, շրջուն շարադասությամբ շատ են գործածվում հատկապես նկարագրական որոշիչները, երբ որոշչի պաշտոնով հանդես են գալիս ամբողջական բառակապակցություններ (դերբայական դարձված, բացառական, գործիական հոլովներով բառակապակցություններ), որոնցից բացի որոշյալը ունի նաև այլ պարզ որոշիչներ կամ հատկացուցիչ լրացում։ Իհարկե, հիշյալ բառակապակցությունները կարող են գործածվել նաև առաջադաս շարադասությամբ, սակայն այդ դեպքում խոսքը դառնում է երկարաշունչ և պակաս արտահայտիչ։ Բերենք այդ համանիշների զուգահեռ օրինակներ։

Մյուսը վաղաժամ ծերացած մի երիտասարդ էր՝ աշխարհի հանույքներից հոգնած դեմքով (Շ, 4, 79)։	Մյուսը վաղաժամ ծերացած, աշխարհի հանույքներից հոգնած դեմքով մի երիտասարդ էր:
Պատի տակ դրված է երկարավուն սեղան՝ իրարից հեռու, մաշված տախտակներով (ԲՀ, ՍՁ, 151)։	Պատի տակ դրված է երկարավուն, իրարից հեռու, մաշված տախտակներով սեղան:

Վերջապես եկավ քահանան — նոր-նոր աղվամազը դուրս եկած մի նորընծա, մեջքին խիստ հուպ տված փայլուն փարաջայով և փափուկ կաստորի նոր գլխարկով *(ՆԴ, 3, 19)։*	*Վերջապես եկավ քահանան — նոր-նոր աղվամազը դուրս եկած,* մեջքին խիստ հուպ տված փայլուն փարաջայով և փափուկ կաստորի նոր գլխարկով մի նորընծա:
Այդ մարդը մոտ երեսուն-երեսուներկու տարեկան մի գինվորական էր, մարմնեղ, ամուր ուսերով, հստակ լուսավոր դեմքով, կապույտ աչքերով *(ՀՔ, ՄՏՁ, 2, 21)։*	*Այդ մարդը մոտ երեսուն-երեսուներկու տարեկան,* մարմնեղ, ամուր ուսերով, հստակ, լուսավոր դեմքով, կապույտ աչքերով մի գինվորական էր:
Բոլոր անցյալ տարիները՝ լի փոքր ու մեծ դեպքերով, *գալիս անցնում էին նրա հիշողության միջով (ՀՔ, ՄՏՁ, 1, 8)։*	Փոքր ու մեծ դեպքերով լի բոլոր անցյալ տարիները *գալիս անցնում էին նրա հիշողության միջով։*

Ցավալուն որոշիչները ավելի հաճախ ետադաս են գործածվում հատուկ շեշտելու, տրոհելու համար, այդ պատճառով անջատվում են որոշյալից և նախադասության մյուս անդամներից բութով կամ ստորակետով[1]։ Ետադաս գործածվելու դեպքում որոշիչը երբեմն շփոթվում է ձևի պարագայի հետ. հատկապես այն ժամանակ, երբ արտահայտված է լինում որակական ածականով կամ հարակատար դերբայով (մեծ մասամբ դերբայական դարձվածով), և նրան անմիջապես հաջորդում է ստորոգյալը։ Ետադաս որոշչի և ձևի պարագայի տարբերակման համար որոշիչ նշանակություն ունի արտասանական դադարը։ Ետադաս որոշիչը բաժանվում է ստորոգյալից, ինչպես նաև որոշյալից հատուկ դադարով,

---

[1] *Տրոհվող որոշիչների մասին մանրամասն տե՛ս* Վ. Առաքելյան, *Հայերենի շարահյուսություն, հատոր 1, 1959, Երևան, էջ 413։*

որը գրավոր արտահայտվում է ստորակետի կամ բութի միջոցով (ետադաս որոշիչը անջատվում է նախադասության մյուս անդամներից ստորակետներով, որոշյալից՝ նաև բութով)։ Իսկ ձևի պարագայի և ստորոգյալի միջև այդպիսի դադար չկա. օրինակ՝ Աղջիկը, ձեռքին ծաղիկ բռնած, մոտեցավ դռանը։ Տղան, հպարտ և ուրախ, վազեց դեպի դուռը։ Կամուրջների եզրերին կանգնած զինվոր աղջիկները, ձեռքներին փոքրիկ դրոշակներ, ուղղություն էին տալիս շարժմանը (ՀՔ, ՄՏՁ, 1, 410)։ Այստեղ ընդգծված բառակապակցությունները ետադաս որոշիչներ են և անջատված են նախադասության մյուս անդամներից ստորակետներով (արտասանական հատուկ դադարով)։ Եթե վերացնենք այդ դադարը, կփոխվի նախադասության անդամների միջև եղած շարահյուսական հարաբերությունների բնույթը, և վերոբերյալ բառակապակցությունները կընկալվեն որպես ձևի պարագաներ։ Համեմատի՛ր վերևի նախադասությունները հետևյալների հետ՝ Աղջիկը ձեռքին ծաղիկ բռնած մոտեցավ դռանը։ Տղան հպարտ ու ուրախ վազեց դեպի դուռը։

Բազմակի որոշիչները կարող են ունենալ համանիշների մեկ այլ շարք ևս՝ կապված նրանց կապակցության եղանակի հետ։ Հայտնի է, որ բազմակի որոշիչները կապվում են իրար հետ կա՛մ առանց շաղկապի, կա՛մ շաղկապի միջոցով։ Տարբեր համադասական շաղկապների կիրառությունը, որպես բազմակի որոշիչների կապակցության միջոց, կախված է վերջիններիս՝ իրար նկատմամբ ունեցած հարաբերության բնույթից[1]։ Ավելի հաճախ, երբ բազմակի որոշիչները երկուսից ավելի են, առաջինները հաջորդում են իրար առանց կապակցական բառի, անջատվելով ստորակետներով, իսկ վերջինը միանում է նրանց որևէ շաղկապով (մեծ մասամբ և կամ ու), որով միաժամանակ ամփոփվում է որոշիչների շարքը. օրինակ՝ «Մեզ մոտեցավ բարձրահասակ, թիկնեղ և սևաչյա մի երիտասարդ»։ Սակայն երբեմն խոսողը նպատակադրվում է առանձնապես ընդգծել այդ որոշիչներից յուրաքանչյուրը։ Այդ դեպքում վերջիններս կարող են տրոհվել՝ դրվելով որոշյալից հետո և միանալ տրոհող շաղկապներով՝ և՛... և՛, թե՛... թե՛, երբեմն նաև ու...

---

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 421—427։

ու: *Սրանք հանդես են գալիս և՛ որպես իրար համանիշ, և համանիշ սովորական ձևով կապակցված որոշիչների։ Այսպես՝ «Ես սիրեցի փողոցներիդ հեռուն* թե լուրջ, թե գրավիչ» *(ԵՉ, ԸԵ, 216) նախադասությունը, համանիշ է հետևյալներին՝ Ես սիրեցի փողոցներիդ* հեռուն և՛ լուրջ, և՛ գրավիչ → *Ես սիրեցի փողոցներիդ* հեռուն լուրջ և գրավիչ → *Ես սիրեցի փողոցներիդ* լուրջ, գրավիչ հեռուն → *Ես սիրեցի փողոցներիդ* հեռուն լուրջ, գրավիչ:

Երբեմն ծավալուն որոշիչը ցույց է տալիս որոշյալի որևէ քանակական կամ որակական հատկությունը՝ համեմատելով մեկ այլ առարկայի նույն հատկության հետ։ Այս դեպքում այն արտահայտվում է նմանություն, զուգադրություն ցույց տվող կապով և նրա խնդիրը հանդիսացող համեմատվող գոյականով, որը կամ անմիջապես լրացնում է որոշյալին, կամ որոշյալի հատկանիշը ցույց տվող ածականի՝ վերջինիս հետ կազմելով բաղադրյալ որոշիչ. օրինակ՝ Ձիևարի նման հասակ, սաթի նման սև աչքեր, Աստղիկի նման աղջիկ, նրա նման ուժեղ մարդ *և այլն։ Ահա բնագրային օրինակ՝ Մոտ երեսուն տարեկան մի երիտասարդ էր* նա, բարձրահասակ՝ անտառում բուսած եղևնու նման և եղևնու նման նկուն *(Իս., ԱԷ, 53)։ Այս դեպքում համանիշ որոշիչներ ստեղծվում են համանիշ կապերի գործածությամբ, նաև շարադասության փոփոխությամբ. օրինակ՝* սաթի նման *սև աչքեր* → սաթի պես *սև աչքեր* → Ինչպես սաթ *սև աչքեր* → աչքերը սև՝ սաթի նման, *կամ՝* բարձրահասակ՝ անտառում բուսած եղևնու նման → բարձրահասակ՝ անտառում բուսած եղևնու պես → բարձրահասակ՝ ինչպես անտառում բուսած եղևնի → անտառում բուսած եղևնու նման բարձրահասակ *և այլն։*

Ահա բնագրային օրինակ՝ Կաքավաբերդի բարձունքի միակ ծաղիկը ալպիական մանուշակն է, ցողունը կաքավի ոտքի պես կարմիր, *ծաղիկը ծիրանի գույն (ԱԲ, 189)։* → *Ցողունը* կարմիր, ինչպես կաքավի ոտքը → Կաքավի ոտքի նման կարմիր: *Այս օրինակում «Ծաղիկը* ծիրանի գույն» *բառակապակցության* ծիրանի գույն *նախադասությունը որոշիչ հանդես կարող է գործածվել այժմ ավելի տարածված* ծիրանի գույնի *ձևը։*

Երբ որոշյալը հոգնակի է, իսկ որոշիչը ցույց է տալիս նրա

տարբեր ձևերով հանդես գալը, բազմազանությունը և այլն, այն կարող է ունենալ մի քանի համանիշ ձևեր։ Դրանցից են՝ ա) գոյականի կրկնությամբ կազմված որոշիչներ. օրինակ՝ տեսակ-տեսակ գրքեր, փունջ-փունջ ծաղիկներ, շարք-շարք աշակերտներ, խումբ-խումբ մարդիկ: Այս որոշիչներին համանիշ հանդես են գալիս նույն գոյականների հոգնակի գործիականի ձևերը, ինչպես՝ խմբերով մարդիկ, շարքերով աշակերտներ, փնջերով ծաղիկներ: Երբ կրկնվող գոյականը հատկանիշի անվանում է, նրան համանիշ կարող է լինել նաև տարբեր ածականը տվյալ գոյականի եզակի կամ հոգնակի սեռականի հետ. Ինչպես՝ տարբեր տեսակի գրքեր, տարբեր տեսակների մրգեր և այլն։ Այս ձևով ավելի է ընդգծվում հոգնակի որոշյալի միավորների տարբեր հատկանիշներ ունենալը։ Համեմատի՛ր նաև՝ գույն-գույն ծաղիկներ-տարբեր գույնի (գույների) ծաղիկներ:

Երբ որոշիչը դրսևորված է լինում քանակական թվականով և ցույց է տալիս որոշյալի քանակական հատկանիշը, որոշյալը երկու և բարձր թվականների մոտ կարող է դրվել և՛ եզակի, և՛ հոգնակի թվով՝ ստեղծելով համանիշ ձևեր. օրինակ՝ հինգ աշակերտ—հինգ աշակերտներ, երկու որբ—երկու որբեր և այլն։ Ընդհանրապես քանակական թվականի որոշյալի եզակի կամ հոգնակի թվով գործածելը կախված է մի շարք հանգամանքներից՝ գոյական որոշյալի բնույթից, հոլովից, հաղորդման նպատակից և այլն։ Այսպես՝ չափ, գին, քանակ ցույց տվող որոշյալները թվականների մոտ միշտ դրվում են եզակի թվով. օրինակ՝ հարյուր տարի, հինգ օր, վեց կիլոգրամ, իր ցույց տվող գոյական-որոշյալները ևս հիմնականում դրվում են եզակի թվով, երբ գործածվում են ուղիղ ձևով (վեց աթոռ, հինգ սեղան), բայց երբ գործածվում են թեք հոլովներով, կարող են դրվել և՛ եզակի, և՛ հոգնակի, ինչպես՝ վեց աթոռից-վեց աթոռներից, երեք բաժակից - երեք բաժակներից և այլն։ Անձ ցույց տվող որոշյալները թվականների մոտ կարող են հավասարապես գործածվել եզակի և հոգնակի թվերով։ Եզակի և հոգնակի թվերի համանիշ գործածությունը թվական որոշիչների մոտ ունի այն նուրբ տարբերությունը միայն, որ առաջին դեպքում տվյալ առարկաները վերցվում են իբրև մեկ ամբողջություն,

հավաքական արժեք ունեն (երկու աշակերտ, վեց մատիտ), իսկ երկրորդ դեպքում ընդգծվում է տվյալ առարկայի հոգնակիությունը (երկու աշակերտներ, վեց մատիտներից):

Որոշիչ-որոշյալի հարաբերության արտահայտման համանիշ քերականական ձևերի մասին խոսելիս անհրաժեշտ է կանգ առնել նաև այն դեպքերի վրա, երբ համանիշության մի եզրում շարահյուսական միավոր է՝ բառակապակցություն, մյուս եզրում ձևաբանական միավոր է՝ բառաձև։ Հաճախ կրկնությունից խուսափելու համար, երբ որոշվող բառը նախորդ նախադասության կամ տվյալ նախադասության առաջին մասում գործածված է, նրա որևէ հատկանիշը ցույց տալու համար որոշիչ-որոշյալի կապակցության փոխարեն գործածվում է միայն տվյալ հատկանիշը ցույց տվող բառը՝ փոխանվանական կիրառությամբ, որը հնարավորություն է տալիս միայն բառաձևով արտահայտել որոշիչ-որոշյալի այդ նույն հարաբերությունը։ Այսպես՝ Արամը ունի շատ մատիտներ: Դրանցից կարմիրը կորավ։ Ներս մտան մի խումբ աշակերտներ, որոնցից առաջինը աղջիկ էր։ Այդ գրքերից սեղանին դրվածը իմն է։ Բերված օրինակներում կարմիրը, առաջինը, դրվածը ձևերը համանիշ են կարմիր մատիտը, առաջին աշակերտը, դրված գիրքը բառակապակցություններին։

Համանիշների նույնպիսի շարքի ենք հանդիպում նաև այս, սույն դերանուններով արտահայտված որոշչի և u ցուցական հոդի կիրառության ժամանակ, ինչպես՝ օրերս → այս օրերին, ամսույս → այս (սույն) ամսի և այլն։

Այսպիսի համանիշները կարելի է կոչել շարահյուսական-ձևաբանական համանիշներ:

ՀԱՏԿԱՑՈՒՑԻՉ-ՀԱՏԿԱՑՅԱԼԻ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՆԻՇ ՁԵՎԵՐԸ

Ժամանակակից հայերենում հատկացուցիչը ունի իր քերականական ձևավորման միակ և կայուն ձևը, այն է՝ գոյականի, դերանվան կամ գոյականաբար գործածված այլ բառի սեռական հոլովը։

Հատկացուցիչ—հատկացյալ հարաբերության համանիշ ձևեր երևան են գալիս միայն կապված նրանց շարադասության փոփոխության հետ։ Հատկացուցիչը ևս, որոշչի նման, որպես կանոն դրվում է հատկացյալից առաջ, իսկ եթե հատկացյալը ունի որոշիչ լրացումներ, նրանցից էլ առաջ։ Ինչպես՝ Գրքի մի քանի էջերը պոկված են։ Աշոտի գիրքը սեղանի վրա է։ Ահա բահերի կույտը, հիմնվող գյուղի տնակները, խաղաղության մեջ ծաղկող սալորենիները... («Գրական թերթ») և այլն։ Սակայն այս դեպքում ևս հանախ, հաղորդման նպատակից ելնելով, ինչպես նաև նախադասության կառուցվածքի թելադրանքով, հատկացուցիչը փոխում է իր տեղը՝ դրվելով հատկացյալից հետո և ստեղծելով սովորական շարադասությանը համանիշ ձևեր։ Հատկացուցիչի շրջուն շարադասություն շատ է հանդիպում գեղարվեստական գրականության մեջ, հատկապես բանաստեղծական լեզվում. օրինակ՝ Օ՜, գիտեցիր, իմ հոգին էլ կցավի Անմխիթար մորմոքումից քո ցավի (ՎՏ, 32)։ Լեռնե՜ր... բարձր ու կանաչ լեռնե՜ր, դուք հայրենիքն ու գանը զով գետյուռների, անուշաբույր ծաղիկների, սուրբ ցողերի ու շաղերի (ՀԹ, 1, 297)։ Նրանք աշխատում էին ժամանակի ընթացքում ստեղծել տարբական հնարավորություններ՝ նույնպես գյուղից հեռանալու (ՄԱվ, 11)։ Դուրեկան էր ջերմությունը զարնան արևի (ԱԲ, 39)։

Բերված նախադասությունները համանիշ են հակացուցիչ-հատկացյալի սովորական շարադասություն ունեցող հետևյալ նախադասություններին՝ Օ՜, գիտեցիր իմ հոգին էլ կցավի քո ցավի անմխիթար մորմոքումից։ Լեռներ... դուք զով գետյուռների, անուշաբույր ծաղիկների, սուրբ ցողերի ու շաղերի հայրենիքն ու գանը։ ...Գյուղից հեռանալու տարբական հնարավորությունները։ Դուրեկան էր զարնան արևի ջերմությունը։ Ինչպես երևում է օրինակների համեմատությունից, սովորական շարադասության դեպքում խոսքը որոշ չափով զրկվում է բանաստեղծականությունից, պակասում է արտահայտչականությունը։

Հետաքրքրական է այն երևույթը, որ երբեմն առարկայի և նրա հատկանիշի միջև եղած միևնույն հարաբերությունը բերականորեն դրսևորվում է և՛ որոշիչ—որոշյալի հարաբերությամբ, և՛ հատկացուցիչ—հատկացյալի հարաբերությամբ, միայն այն տար-

բերությամբ, որ փոխվում է լրացում—լրացյալի տեղը։ Առաջին կապակցության որոշիչը երկրորդ կապակցության մեջ վեր է ածվում հատկացյալի (իհարկե, գործածվելով գոյականաբար), իսկ որոշյալը դառնում է նրա հատկացուցիչը՝ դրվելով սեռական հոլովով։ Այս երկու ձևերը հանդես են գալիս որպես շարահյուսական համանիշներ, որովհետև դրսևորում են առարկայի և հատկանիշի միջև եղած լրիվ նույն հարաբերությունները. օրինակ՝ լավ կանաչի–կանաչու լավը, մեծ խնձոր–խնձորի մեծը, մի մարդ–մարդու մեկը և այլն։ Այս համանիշներից երկրորդը գործածվում է առարկայի՝ ավյալ հատկանիշն ունենալը շեշտելու համար և հատուկ է հատկապես ժողովրդական-խոսակցական լեզվին։ Բերենք բնագրային օրինակ՝ Քուրդ գյուղացու մեկը վաղ առավոտից աշխատանքի մեջ էր (Իս. 3, 349)։ Այս նախադասության համանիշը կլինի՝ «Մի քուրդ գյուղացի վաղ առավոտից աշխատանքի մեջ էր»։

Հետաքրքրական է այն երևույթը, որ երբ հատկացուցիչ—հատկացյալի միջև առկա է լինում մասի—ամբողջի հարաբերություն, երբեմն սեռական հոլովով դրված հատկացուցչի փոխարեն գործածվում է բացառական հոլով, որով վերջինս վեր է ածվում անջատման խնդրի՝ արտահայտելով, սակայն, դարձյալ նույն՝ մասի—ամբողջի հարաբերությունը։ Այս երկու ձևերի միջև կա իմաստային այն նուրբ տարբերությունը, որ առաջին դեպքում ընդգծվում է մասի և ամբողջի միջև եղած պատկանելության, վերաբերության հարաբերությունը, երկրորդ դեպքում՝ ամբողջից մասի անջատման հարաբերությունը։ Ահա այս համանիշ կառուցվածքների զուգահեռ օրինակներ.

Ահմեդը ուշքի եկավ, նայեց տեսավ ուղտերի մեկը չկա (Իս., 3, 346)։	Ահմեդը ուշքի եկավ, նայեց տեսավ ուղտերից մեկը չկա։
Հյուրերի յուրաքանչյուրի հետևում կանգնած էր մի-մի ծաղկապսակ պատանի (Ր, 7, 110)։	Հյուրերից յուրաքանչյուրի հետևում կանգնած էր մի-մի ծաղկապսակ պատանի։

Հիշելով իր կյանքի զվարթ դրվագները, ուրախ ծիծաղում էր։	*Հիշելով զվարթ դրվագներ իր կյանքից, ուրախ ծիծաղում էր (Իս., 3, 373)։*

Իմաստային այս հարաբերությունն արտահայտելու համար այժմ ավելի տարածված և սովորական է բացառական հոլովի գործածությունը։ Սեռական հոլովի այս կիրառությանը հանդիպում ենք առավելապես XIX դարի վերջերի և XX դարի սկզբների գրականության մեջ, նաև ժողովրդական-խոսակցական լեզվում։

Հատկացուցիչ—հատկացյալի հարաբերություն են արտահայտում նաև ստացական հոդ ունեցող գոյականները և փոխանուն սեռականները, որոնք հանդիսանում են համապատասխան բառակապակցությունների համանիշներ։ Այս դեպքում ևս, ինչպես որոշիչ—որոշյալի հարաբերության՝ փոխանունների միջոցով դրսևորվելու դեպքում էր, համանիշության մի եզրում ունենք ձևաբանական միավոր՝ բառաձև, մյուս եզրում՝ շարահյուսական միավոր՝ բառակապակցություն. այսպես՝ մատիտս → իմ մատիտը, գրիչդ → քո գրիչը, գիրքը → նրա գիրքը, Աշոտինը → Աշոտի գիրքը, գրիչը, գլխարկը *և այլն,* Արամինը → Արամի տետրը, գրածը, մատիտը և այլն, իմը → իմ ծաղիկը, անունը *և այլն։ Հատկացուցիչ—հատկացյալի հարաբերություն արտահայտող բառակապակցության փոխարեն փոխանուն սեռականներ են գործածվում այն դեպքում, երբ հատկացյալը խոսքից հայտնի է։ Ավելորդ կրկնությունը այս դեպքում ևս խոսքը դարձնում է երկարաշունչ, ոչ գեղեցիկ։ Համեմ. հետևյալ նախադասությունները.* Շարադրություններից ամենահաջող շարադրությունը Աշոտի շարադրությունն էր → Շարադրություններից ամենահաջողը Աշոտինն էր։ *Այս* գրքերից *մեկը* իմ գիրքն է, *մյուսը* Աշխենի գիրքն է → *Այս* գրքերից *մեկը* իմն է, *մյուսը՝* Աշխենինը։

ԲԱՑԱՀԱՅՏԻՉ—ԲԱՑԱՀԱՅՏՅԱԼԻ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՀԱՄԱՆԻՇ ՁԵՎԵՐԸ

Նախադասության՝ գոյականով կամ գոյականաբար գործածված այլ խոսքի մասով արտահայտված անդամի մյուս լրացումը,

ինչպես հայտնի է, բացահայտիչն է։ Ի տարբերություն որոշչի և հատկացուցչի, բացահայտիչը միշտ դրվում է բացահայտյալից հետո և թվով, հոլովով, հոդառությամբ համաձայնում է վերջինին՝ հատուկ արտաբերությամբ անջատվելով նրանից։ Գրավոր լեզվում բացահայտիչը անջատվում է բացահայտյալից բութով։ Սա բացահայտիչ—բացահայտյալի հարաբերության քերականական դրսևորման ընդհանուր օրինաչափություն է, որից շեղումներ սովորաբար չեն լինում։ Խոսքը այստեղ չի վերաբերում մասնական բացահայտիչին, որն ունի քերականական դրսևորման այլ առանձնահատկություններ։ Այսպիսով, բուն բացահայտիչի շարադասության և քերականական համաձայնության հետ կապված շարահյուսական համանիշ ձևեր ժամանակակից հայերենում չեն նկատվում։

Քանի որ գոյականը կարող է հանդես գալ նախադասության տարբեր (գրեթե բոլոր) անդամների պաշտոնով, հետևաբար բացահայտիչը ևս կարող է լինել նախադասության տարբեր անդամների լրացում, համապատասխանաբար դրվելով տարբեր հոլովներով, նաև հոլովական կապակցություններով (կապերով)։ Այն իր հերթին կարող է ունենալ (հաճախ ունենում է) նաև լրացումներ, որոնց հետ միասին հանդես է գալիս որպես նախադասության մեկ անդամ։ Օրինակ՝ Ամենից առաջ եկավ հաշվապահը՝ բարձրահասակ, կուրծքը ներս ընկած, փիչ կուզլիկ, քառասունի մոտ մի տղամարդ (ՆՁՀ, 23)։ Ճարտարապետությունը՝ աշխարհիս հնագույն մասնագիտություններից մեկը, զարգանում ու փոփոխվում է ժամանակի հետ (ՍԱ)։

Այսպիսի լայն կիրառության ընթացքում հանդիպում են դեպքեր, երբ ոճական նկատառումներով, բարեհնչունության պահանջով նկատվում են զեղչման հետ կապված համանիշ ձևեր նաև բացահայտիչ—բացահայտյալի հարաբերության արտահայտման համար։ Այսպես, երբ բացահայտյալը կապով արտահայտված անդամ է, բնականաբար կապ պիտի ունենա նաև բացահայտիչը։ Այս դեպքում, հաճախ, կրկնությունից խուսափելու համար բացահայտյալի մոտ դրված կապը զեղչվում է՝ ստեղծելով համանիշ կապով արտահայտված ձևի համար։ Օրինակ՝ Չի կարելի կանգ չառնել բոլոր ճարտարապետներին հուզող մի հարցի՝ շինարարա-

կան աշխատանքների ու շինանյութերի որակի հարցի վրա *(ՍԼ)։ ...Ինչ որ պատահեց իր աղջիկներից* մեկի՝ Սոնայի հետ *(Ր, 2, 257)։ Նա այսօր գնացել էր իր դպրոցական* դասընկերուհու՝ Անահիտի մոտ: *Սրանց լրիվ ձևերը կլինեն՝ ...Ճարտարապետներին հուզող* մի հարցի վրա՝ ...որակի հարցի վրա: ...Իր աղջիկներից մեկի հետ՝ Սոնայի հետ: ...Իր դպրոցական դասընկերուհու մոտ՝ Անահիտի մոտ: *Ինչպես երևում է նաև օրինակներից, կապի կրկնությամբ ձևերը ժամանակակից հայերենի համար սովորական չեն և գործածվում են միայն բացահայտիչ—բացահայտյալից յուրաքանչյուրը հատկապես շեշտելու համար։*

Երբ կապը առաջադիր է, այն սովորաբար դրվում է միայն բացահայտյալից առաջ։ Օրինակ՝ Առանց իր եղբոր՝ Աշոտի, *Արամը ոչ մի տեղ չէր գնում։ Մենք ուղղություն վերցրինք* դեպի Երևան՝ մեր գեղեցիկ մայրաքաղաքը: *Վերջին դեպքում սովորական է նաև կապի կրկնությունը բացահայտիչից առաջ* (...Դեպի Երևան՝ դեպի մեր գեղեցիկ մայրաքաղաքը):

Երբեմն բացահայտիչը նույն բացահայտյալն է՝ բազմակի որոշիչներով, ինչպես նաև հատկացուցիչներով, որոնց օգնությամբ հենց բացահայտվում է տվյալ առարկան, երևույթը և այլն։ Այս դեպքում ոճական նկատառումներով, կրկնությունից խուսափելու համար, բացահայտիչը հաճախ գեղչվում է, և նրա դերը կատարում են միայն վերջինիս որոշիչները կամ հատկացուցիչները։ Օրինակ՝ Գետի մյուս ափին, բավական հեռվում ավերակներ էին՝ պարիսպների, պալատների, վանքերի *(ՍԳ)։ Լուսամուտի ապակու մեջ դարձյալ լույսեր էին՝* փողոցի, մեր սենյակի, աստղերի *(ՍԳ)։ Օ՜հ, ի՜նչ սիրուն են այս մանր քարերը, ի՜նչ սիրուն գույներ ունեն՝* կարմիր, կապույտ, կանաչ, ոսկե *(Իս., 3, 228)։ Պատահում են նաև ծաղիկներ՝* դեղին, բաց կապույտ *(ՍԳ)։ Բերված օրինակներում բուն բացահայտիչները՝* ավերակներ, լույսեր, գույներ, ծաղիկներ, *գեղչված են։ Սրանց համանիշ և լրիվ ձևերն են՝* ...Ավերակներ էին՝ պարիսպների, պալատների, վանքերի ավերակներ: ...Լույսեր էին՝ փողոցի, մեր սենյակի, աստղերի լույսեր: ...Ի՜նչ սիրուն գույներ ունեն՝ կարմիր, կապույտ, կանաչ, ոսկե գույներ: Պատահում են նաև ծաղիկներ՝ դեղին, բաց կապույտ ծաղիկներ:

Ինչպես երևում է նաև բերված օրինակների համեմատությունից, լրիվ ձևերը անհարթ են և այդ պատճառով ավելի քիչ գործածական։ Դրանք հանդիպում են հատկապես այն դեպքերում, երբ անհրաժեշտ է լինում ընդգծել, շեշտել բացահայտյալը։

Երբ բացահայտիչը նույն բացահայտյալն է՝ լրացումներով, երբեմն նրա փոխարեն հանդես են գալիս նրա գոյականաբար գործածված որոշիչը կամ հատկացուցիչը՝ ստեղծելով դարձյալ համանիշ ձևեր լրիվ բացահայտիչի համար։ Օրինակ՝ ես հավանեցի մյուս նկարը՝ Աշոտինը → Աշոտի նկարը։ *Տուր ինձ այն մատիտը՝* կարմիրը → կարմիր մատիտը։ *...Ավելի գորավոր սեր՝* հայրականը (Շ, 4, 41) → հայրական սերը։

Հաճախ որպես բացահայտիչ հանդես են գալիս ամբողջական բառակապակցություններ, կապերով արտահայտություններ։ Այս դեպքում նրանց կապը բացահայտյալի հետ իրացվում է նաև այն է, այսինքն *մեկնական բառերով, որով ավելի է ընդգծվում լրացման բացահայտող բնույթը։ Երբեմն այս կապակցական բառերով են միանում նաև պարզ բացահայտիչները։ Կապակցության այս եղանակը ավելի հատուկ է գիտական լեզվին։ Բերենք օրինակներ։ Պարզ հարտարապետական ձևերը պահանջում են շինանյութերի ու շինարարական աշխատանքների* հատկապես բարձր որակ, այն է՝ հստակ անկյուններ, իդեալական ողորկ մակերեսներ, խնամքով մշակված ճակատներ *(ՍԱ)։ Իզուր կվատնեք ձեր թանկագին* հարստությունը, այն է՝ երիտասարդական հասակի աննման եռանդն ու կորովը *(Մ, 2, 63)։ Վերմակի վրա կիսաբաց ընկած է նրա օրագիրը,* նրա՝ այսինքն՝ Աստղիկի *(ՍԳ)։ Շարքային* ընթերցողները, այսինքն՝ ոչ մասնագետները, *չեն նկատի այդ։ Ես սիրով ընդունեցի* բարեկամիս առաջարկը, այն է՝ ուսուցիչ լինել այդ հեռու գյուղում։

Բերված օրինակների համանիշները կլինեն՝ ...Հատկապես բարձր որակ՝ հստակ անկյուններ, իդեալական ողորկ մակերեսներ, խնամքով մշակված ճակատներ։ ...Ձեր թանկագին հարստությունը՝ երիտասարդական հասակի աննման եռանդն ու կորովը։ ...Նրա՝ Աստղիկի։ Շարքային ընթերցողները՝ ոչ մասնագետները...։ *Ես*

սիրով ընդունեցի ընկերոջս առաջարկը՝ ուսուցիչ լինել այդ հեռու գյուղում *(ԱԲ, 118)։*

Երբեմն որպես կապակցության օժանդակ միջոց հանդես են գալիս այդ, այս *ցուցական դերանունները, որոնք ընդգծում, շեշտում են բացահայտիչի բովանդակությունը. օրինակ՝ Ես չէի մեղադրում* նրան՝ այդ հանգիստ, տաք ձեռքերով մարդուն *(ՍԳ)։ Թող չբանա* կյանքը՝ այդ անագորույն կոիվը կյանքի համար *(Իս., 3, 214)։ Սրանք համանիշ են «Ես չէի մեղադրում* նրան՝ հանգիստ, տաք ձեռքերով մարդուն» և «*Թող չբանա* կյանքը՝ անագորույն կոիվը կյանքի համար» *նախադասություններին։*

Բերված բոլոր դեպքերում բացահայտիչը լրացնում, բացահայտում է բացահայտյալի ամբողջ բովանդակությունը, ունի բացահայտյալի բովանդակության լրիվ ընդգրկում։ Սակայն կան դեպքեր, երբ բացահայտիչը լրացնում, բացահայտում է լրացյալը միայն մեկ կողմով, մասնակի կերպով։ Այդպիսի բացահայտիչը հայ քերականագիտության մեջ կոչվում է մասնական բացահայտիչ։

Մասնական բացահայտիչները միանում են բացահայտյալին որպես, ինչպես, իբրև *կապերով և ունեն համեմատաբար ազատ շարադասություն, այսինքն՝ կարող են դրվել բացահայտյալից և՛ առաջ, և՛ հետո՝ ստեղծելով բացահայտիչ—բացահայտյալի կապակցության համանիշ ձևեր։ Համանիշ են նաև* ինչպես, որպես, իբրև *կապերով միացած բացահայտիչները։ Ըստ որում* ինչպես-ը, *որպես բացահայտչի կապակցության միջոց, լեզվի ներկա շրջանում հնացած է։ Բերենք օրինակներ։* Աշոտը, որպես խմբի ղեկավարը և գյուղում սրտոտ տղայի համբավ հանած պատանի, *պարտավոր էր... (ՎԱ, ՀԳ, 282)* → Որպես (իբրև) խմբի ղեկավարը և գյուղում սրտոտ տղայի համբավ հանած պատանի, *Աշոտը պարտավոր էր...։* Որպես ուսուցիչ, նա *հարգված է բոլորի կողմից* →Նա, որպես (իբրև) ուսուցիչ, *հարգված է բոլորի կողմից* → Իբրև ուսուցիչ նա *հարգված է բոլորի կողմից։* Նրանից, որպես լավ մասնագետից, *պահանջվում է ավելի շատ*→ Նրանից, իբրև լավ մասնագետից, *պահանջվում է ավելի շատ* → Իբրև (որպես) լավ մասնագետ, նրանից *պահանջվում է ավելի շատ։*

Առաջադաս գործածվելու դեպքում մասնական բացահայտիչը երբեմն հոլովով չի համաձայնում բացահայտյալի հետ, այլ դրվում է ուղիղ ձևով (տե՛ս վերջին օրինակը)։ Իհարկե, օրինաչափականը և ճիշտը այն է, որ նախադաս գործածվելու դեպքում ևս մասնական բացահայտիչը հոլովով համաձայնի բացահայտյալին։

4. ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԲԱՅԱԿԱՆ ԱՆԴԱՄԻ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՆԻՇ ՁԵՎԵՐԸ

Յուրաքանչյուր գործողություն, իրողություն կատարվում, երևան է գալիս որոշ առարկաների հարաբերությամբ, որոշակի հանգամանքների առկայության պայմաններում։ Գործողության հետ կապված առարկաներն ու հանգամանքները քերականորեն դրսևորվում են բայական լրացումների՝ խնդիրների ու պարագաների միջոցով։

Խնդիրները ցույց են տալիս գործողության և նրան առնչվող առարկաների հարաբերությունը։ Նրանք դրվում են կա՛մ բայի սեռի պահանջով (ուղիղ խնդիր, ներգործող խնդիր և միջնորդական խնդիր), կա՛մ բայիմաստի պահանջով (հանգման, մատուցման, անջատման, վերաբերության, միջոցի, սահմանափակման, բացառման խնդիրներ)։

Պարագաները ցույց են տալիս գործողության և նրա հետ կապված տարբեր հանգամանքների հարաբերությունը, այն է՝ տեղը, ժամանակը, ձևը, պատճառը, հիմունքը, նպատակը, պայմանը և այլն։

Խնդիրների կապը բայի հետ քերականորեն իրացվում է գոյականների կամ իբրև այդպիսին վերցված այլ խոսքի մասերի թեք հոլովների և կապական արտահայտությունների միջոցով։

Պարագաները ունեն դրսևորման ավելի լայն ընդգրկում։ Նրանք արտահայտվում են ինչպես մակբայների, մակբայաբար գործածված ածականների, այնպես էլ գոյականների, գոյականա-

բար գործածված այլ խոսքի մասերի թեք հոլովների ու կապերի միջոցով։

Իրենց բազմազան կիրառություններում քերականական միևնույն ձևը՝ կապակցությունը հաճախ գործածվում է խնդրային և պարագայական տարբեր հարաբերություններ արտահայտելու համար՝ ստեղծելով համանուն ձևեր։ Այսպես՝ բայ+գոյականի հայցական հոլով կապակցությամբ կարելի է դրսևորել ուղիղ խնդրային, տարածական, ժամանակային հարաբերություններ (վերցնել գիրքը, գնալ տուն, գնալ գիշերը), բայ+գոյականի բացառական հոլով կապակցությամբ կարելի է դրսևորել անջատման խնդրի, ներգործող խնդրի, պատճառի, տեղի և ժամանակի պարագաների հարաբերություններ (վերցնել Գրիգորից, հիվանդանալ մրսելուց, հեռանալ քաղաքից, աշխատել երեկվանից և այլն), բայ+գոյականի գործիական հոլով կապակցությամբ կարելի է արտահայտել միջոցի խնդրի, ձևի, տեղի, ժամանակի հարաբերություններ (կտրել դանակով, շրջել մեքենայով, գալ վագլով, անցնել քաղաքով, գնալ գիշերով և այլն)։ Իհարկե, այս կապակցություններից յուրաքանչյուրը բառական կոնկրետ միջավայրում դրսևորում է մեկ հիմնական իմաստ (այլապես կառաջանար խառնաշփոթություն). օրինակ՝ հայցական հոլովը ներգործական սեռի բայերի մոտ անպայման առաջին հերթին արտահայտում է ուղիղ խնդրային հարաբերություն (ջարդել մատիտը, կարդալ գիրքը, ուտել հացը), շարժում ցույց տվող բայերի մոտ՝ տեղ կամ ժամանակ (գնալ տուն, մեկնել Մոսկվա, գալ գիշերը և այլն), չեզոք սեռի բայերի մոտ հայցական հոլովով խնդիր (ոչ պարագա) չի կարող դրվել և այլն։

Լեզվում նկատվում է հակառակ երևույթը ևս։ Հաճախ խնդրային կամ պարագայական միևնույն հարաբերությունն արտահայտելու համար գործածվում են տարբեր քերականական միջոցներ, որոնցից յուրաքանչյուրը իր ոճական, կիրառական կամ իմաստային նրբերանգն է հաղորդում կապակցությանը։ Սրանք հենց խնդրային ու պարագայական հարաբերությունների դրսևորման

շարահյուսական համանիշ ձևերն են։ Քննենք դրանցից յուրաքանչյուրը առանձին-առանձին[1]։

ԽՆԴԻՐՆԵՐ

ԲԱՅԻ ՍԵՌԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԽՆԴՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ԱՐՏԱՀԱՅՏՄԱՆ ՀԱՄԱՆԻՇ ՁԵՎԵՐԸ

Բայի սեռի հետ կապված են երեք տեսակի խնդիրներ՝ ուղիղ խնդիրը, ներգործող խնդիրը և միջնորդական խնդիրը։ Վերջինս դրվում է պատճառական սեռի պահանջով և ունի արտահայտման միայն մեկ քերականական ձև՝ տրական հոլովը։ Այդ պատճառով այն դուրս է մեր ուսումնասիրության ոլորտից[2]։

Ուղիղ խնդիր

Ուղիղ խնդիրը դրվում է անցողական բայերի մոտ և ցույց է տալիս այն առարկան, որը հանդիսանում է գործողության անմիջական օբյեկտը։ Հայտնի է, որ ուղիղ խնդիրը ունի դրսևորման հատուկ և կայուն ձև, այն է՝ գոյականի, դերանվան, կամ գոյականորեն գործածված այլ խոսքի մասի հայցական հոլովը, որը անձ ցույց տալու դեպքում նման է տրականին, իսկ իր ցույց տալու դեպքում՝ ուղղականին։ Քերականական դրսևորման այլ ձև ուղիղ խնդիրը չունի։ Բացառություն են կազմում ժողովրդական-խոսակցական լեզվում տարածված և այնտեղից մասամբ գեղարվեստական լեզվին անցած մասնական բացառականով դրված ուղիղ խնդրի ձևերը, որոնք ցույց են տալիս նյութի, օբյեկտի մասնակի ընդգրկում. օրինակ՝ Այգ հացից կերա,

---

[1] Խնդիրների և պարագաների իմաստային առանձնահատկությունների մասին մանրամասն տե՛ս Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965, Վ. Առաքելյան, Հայերենի շարահյուսություն, Երևան, 1958։

[2] Միջնորդական խնդրի մասին տե՛ս Ա. Աբրահամյան, Բայը ժամանակակից հայերենում, Գիրք 1, Երևան, 1962, էջ 555—556։

ջրից խմել եմ, Այդ գրքից վաճառում են, Այդ կտորից գնեցի և այլն։

Երբեմն այս կիրառություններում բացառական հոլովը կորցնում է իր մասնականության իմաստը և հանդես գալիս որպես հայցական հոլովի համանիշ, վերջինից տարբերվելով միայն որոշ անջատականության նրբերանգով։ Օրինակ՝ Ափսո՞ս, որ պաշեցի քո ճակատից (ՀԹ, 1, 311) → Ափսո՞ս, որ պաշեցի քո ճակատը։ Նա գտավ, որ մենք պետք է պարապենք գլխավորաբար մաթեմատիկայից (ԳՄ, ԵՍ, 315) → Մենք պետք է պարապենք գլխավորաբար մաթեմատիկա։ Ես պատիվ եմ տալիս ուզում եմ զեկուցել, իսկ նա բռնում է իմ ձեռքից (ԲՀ, ՍՉ, 165) → Իսկ նա բռնում է իմ ձեռքը։ Գիշերները երբեմն նա վեր էր կենում իր անկյունից և բերանով բռնում, քաշում Գալուստի կնոջ վերմակից (ՎԱ, ԼՀ, 266) → ...բռնում, քաշում Գալուստի կնոջ վերմակը։ Միմյանց ձեռքից բռնելով կազմում են բոլորակ շղթա (Ր, 9, 79) → Միմյանց ձեռքը բռնելով...։ Բացառական հոլովի այս կիրառությունը (ոչ մասնական իմաստով) հատուկ է բարբառներին ու ժողովրդական-խոսակցական լեզվին և գրական լեզվի համար հանձնարարելի չէ։

Ուղիղ խնդրի առկայության դեպքում համանիշներ առաջանում են հիմնականում այն ժամանակ, երբ անձ ցույց տվող գոյականը վերցվում է իրի առումով, կամ հակառակը՝ իր ցույց տվող գոյականը վերցվում է անձի առումով։ Առաջին դեպքում ուղիղ խնդիրը տրականի փոխարեն դրվում է ուղղականի ձևով, իսկ երկրորդ դեպքում նույն ուղիղ խնդիրը ուղղականի փոխարեն դրվում է տրականի ձևով։

Անձ ցույց տվող գոյականը կարող է դրվել ուղիղ ձևով, այսինքն՝ գործածվել իրի առումով գերազանցապես այն դեպքերում, երբ անորոշ է, իսկ իր ցույց տվող գոյականները գործածվում են անձի առումով մեծ մասամբ բանաստեղծական խոսքում, երբ ոճական նկատառումներով կատարվում է բնության երևույթների, իրերի անձնավորում։

Բերենք ուղիղ խնդրի այս կիրառությունների բնագրային օրինակներ։ Ճամփու տակի աղբյուրի մոտ տեսավ մի սպիտակ չու-

խավոր մարդ *(ՀԹ, 1, 281)* → Տեսավ մի մարդու: *Մի պահ անցած* բերին մի ծերունի մարդ, *որ բնակվում էր գերեզմանոցի ծայրին (Իս., 3, 323)* → Բերին մի ծերունի մարդու: *Այստեղ կապիտանը,* անցորդներ *և լուսամուտներից նայող* քաղաքացիներ տեսնելով... *(ՍՁ, ԵԺ, 3, 511)* → Անցորդների *և լուսամուտներից նայող* քաղաքացիների *տեսնելով...: Հասոն* քարերին *էր դողացնում...* գեփյուռին *դղրացնում (ՎՓ, ԸԵ, 225): Ես քեզ սիրում եմ, այնքան եմ սիրում, որքան* չի սիրում *թիթեռը* նռազին, *սոխակը* վարդին, *աշխարհն* արևին *և բույսը՝* հողին *(Ն. տ., 226):*

Ներգործական կառուցվածքի նախադասությունների ուղիղ խնդրին համանիշ է համապատասխան կրավորական կառուցվածք ունեցող նախադասությունների ենթական, որը նույնպես ցույց է տալիս այն առարկան, որին անցնում, որը կրում է գործողությունը (այս մասին մանրամասն տե՛ս «Ներգործական ու կրավորական նախադասություններ» գլուխը): Համեմատի՛ր Ես եմ գրել նամակը → Նամակը գրվել է իմ կողմից: *Կամ՝* Այս գրքից վանաում են կենտրոնական գրախանութում → Այս գրքից վանաովում է կենտրոնական գրախանութում:

Ուղիղ խնդրի դրսևորման նույնանիշ ձևերի ենք հանդիպում դերբայական դարձվածի մեջ: Երբ ուղիղ խնդիրը անձ ցույց տվող գոյական է, այն բոլոր դեպքերում դրվում է հայցական հոլովով (և՛ դերբայի, և՛ բայի խոնարհված ձևի լրացնելիս), սակայն երբ իր ցույց տվող գոյական է և լրացնում է դերբայի, այսինքն՝ նախադասության մեջ հանդես է գալիս որպես կողմնակի ուղիղ խնդիր, այն կարող է դրվել նաև սեռական հոլովով: Համա. ...Ինձ շատ խրատներ տվեցին իմ ապագա կյանքի *խելոքությամբ և խոհեմությամբ* վարելու *մասին (Շ, 4, 22)* → *...Իմ ապագա* կյանքը *խելոքությամբ* վարվելու *մասին: Այդ* գիրքը կարդալը *տևեց մեկ շաբաթ* → *Այդ* գրքի կարդալը *տևեց մեկ շաբաթ:* Տունը կառուցելը *ձգձգվում է* → Տան կառուցելը *ձգձգվում է: Երբ այդ լրացումը դրվում է ներգործական սեռի բայերից կազմված գոյականների մոտ, այն վեր է ածվում հատկացուցչի, ինչպես՝* տան կառուցումը, գրքի ընթերցումը *և այլն:*

Այստեղ անհրաժեշտ է խոսել բայի սեռի հետ կապված

խնդրառության մեջ նկատվող մի երևույթի մասին։ Դա այն է, որ որոշ թվով չեզոք սեռի բայեր նույնպես պահանջում են կրող առարկա, որը սակայն նրանց մոտ սովորաբար դրվում է ոչ թե հայցական, այլ տրական հոլովով։ Այդ բայերի գործողության բնույթը հիմք է հանդիսացել, որ քերականական նմանակությամբ նրանց մի մասն ընդունի ոչ միայն տրական հոլովով խնդիր, այլև դրան զուգահեռ՝ հայցական հոլովով խնդիր, որոնք այս դեպքում ևս հանդես են գալիս որպես նույնանիշներ։ Եվ քանի որ լեզուն լրիվ նույն իմաստն արտահայտելու համար զուգահեռ ձևեր չի սիրում, նրանցից մեկը (տվյալ դեպքում հայցական հոլովը) աստիճանաբար դուրս է մղում մյուսին, որն ի վերջո հանդեցնում է նաև չեզոք սեռ > ներգործական սեռ *անցման։ Այդպիսին են* հսկել, կարոտել, գրոհել, ունկնդրել, սպասարկել, ծափահարել, տիրապետել *և այլ բայեր*[1]։ *Օրինակներ՝* Հսկել եմ *արթուն ես Ձեր* գործերին՝ *(ՀԹ), սակայն՝* հսկել այգին (ՍՁ), Երբն էր հսկում *(ԵՁ),* Հսկում էր շրջակայքը *(ՎԱ), կամ՝ Կարոտում էի իմ հայրենի* ծուխին, *մեր սրբազան ցորեն* հացին *(Իս.), բայց՝ Այնքան կարոտել էի մեր հայրենի* լեռները, դաշտերն *ու* ջրերը *(ՎՓ)։ Մուրացանը* տիրապետում էր գրաբարին *(Իս., 3, 370), բայց՝* Տիրապետում է մայրենի լեզուն *(Բ),* տիրապետել իր մասնագիտությունը, տիրապետել վարպետների ծրագիրը (մամուլ), Սպասել մի բան → սպասել մի բանի *և այլն։ Նույն ձևով XIX դարի վերջերի և XX դարի սկզբների գրականության մեջ տրականով խնդիր ենք հանդիպում նաև* ներել, շանթել, դրժել *բայերի մոտ, որոնք այժմ պահանջում են բացառապես հայցականով խնդիր. օրինակ՝ «Ձեմ կարող* ներել *քո* ամբաստանություններին *(Բ, 7, 85)։ Այդ խոսքերը կայծակի նման* շանթում էին *իշխանի* սրտին *(Բ, 7, 293)։ Գուցե տեղական հանգամանքներն ստիպեն, հակառակ յուր կամքին,* դրժել *յուր* ուխտին *(Մ, 5, 66)։ Այժմ այս նախադասությունների կառուցվածքը կլինի՝ Ձեմ կարող* ներել *քո* ամբաստանությունները։ *Այդ խոսքերը կայծակի նման* շանթում էին *իշխանի* սիրտը։ ...Դրժել *յուր* ուխտը։

[1] *Այս մասին մանրամասն տե՛ս* Ա. Աբրահամյան, *Բայը ժամանակակից հայերենում, գիրք 1, 1962, էջ 681—702։*

Ներգործող խնդիր

Բայի սեռի հետ է կապված նաև ներգործող խնդիրը։ Վերջինս դրվում է հիմնականում կրավորական սեռի պահանջով և ցույց է տալիս այն առարկան, որը կատարում է գործողությունը, որի գործողությունն անցնում է քերականական ենթակային։ Այլ կերպ ասած՝ ներգործող) խնդրի միջոցով կրավորական կառուցվածք ունեցող նախադասություններում արտահայտվում է գործողության տրամաբանական սուբյեկտը։ Այսպես՝ Եվ զորքը հանձնեցիր ստրկահաճ քո Զոպպերին, որ ջախջախվի Արա ուրարտացուց *(ՆՁ, ԱԳ, 52)։ ...Որոնք* հարգվել են *մեր արժանավոր* նախարարներից *և որոնք* պիտի հարգվեն *նրանց* հետնորդներից *(Մ, 4, 193)։*

Ներգործող խնդիր կարող է դրվել նաև մի շարք չեզոք բայերի մոտ՝ ցույց տալով այն երևույթը, իրողությունը, որը պատճառ է հանդիսացել գլխավոր նախադասության գործողության կատարման համար։ Այս բնույթի ներգործող խնդիրները հայ քերականագիտության մեջ կոչվում են պասիվ ներգործության անուղղակի խնդիր[1]*. օրինակ՝ Ես* թուլացա հիվանդությունից, Քո հաջությամբ ուրախացան *բոլորը։ Այն, որ հիշյալ նախադասություններում գործ ունենք ներգործող խնդրի հետ, հեշտությամբ կարելի է ցույց տալ նրանով, որ պասիվ կառուցվածք ունեցող այս նախադասությունները կարելի է վերածել համանիշ ներգործական կառուցվածք ունեցող նախադասությունների, որտեղ այդ խնդիրները դառնում են ենթակա՝ դրված պատճառական սեռի բայի մոտ, իսկ ենթական վեր է ածվում ուղիղ խնդրի։ Այսպես՝* Հիվանդությունը թուլացրեց ինձ, Քո հաջությունը ուրախացրեց բոլորին *(Այս մասին մանրամասն տե՛ս «Ներգործական և կրավորական կառուցվածքի համանիշ նախադասություններ» գլուխը)։*

Ներգործող խնդիրն ունի քերականական դրսևորման մի շարք միջոցներ, որոնք հանդես են գալիս որպես համանիշ ձևեր, քանի որ, ինչպես ասվեց, արտահայտում են նույն հարաբերությունը,

---

[1] *Տե՛ս* Վ. Առաքելյան, *Հայերենի շարահյուսություն, Երևան, 1959, էջ 314։*

այն է՝ ցույց են տալիս գործողության տրամաբանական սուբյեկտը։ Դրանք են՝

1. Գոյականի կամ գոյականաբար գործածված բառի բացառական հոլովը. օրինակ՝ Վասակը սպանված էր Պարսից Շապուհ թագավորից (Ր, 7, 50)։ Նա շատ սիրված ու գնահատված էր Խազարի արհեստավորներից (Իս., 3, 379)։

Այս հոլովով են դրվում նաև պասիվ ներգործության խնդիրները, որոնք ունենում են պատճառի պարագայի իմաստային երանգ. օրինակ՝ Անտառը դրմբում է նրա ձայնից (ՍՁ, ԵԺ, 161)։ Բայց հարստությունից չգոռոզացավ Սայիդը (ՀԹ, 2, 415). Մինչև առավոտ գուսանների հերոսական տաղերից և պարոնների տրոփյունից թնդում էին ընդարձակ սրահները։

2. Գոյականի գործիական հոլովով։ Երբ այս հոլովով արտահայտվում են իր ցույց տվող առարկաներ, ներգործող խնդիրն ունենում է միջոցի խնդրի իմաստային երանգ։ Օրինակ՝ Քիչ հետո ես շրջապատվեցի հասակավոր որբ-որբուհիներով, կառավարչուհիներով և բժշկով (ԳՄ, ԵՍ, 122)։ Բանվորների բազմությամբ լցվեց այս փողոցը։ Նրանց դեմքերից կարծես մի չար ձեռքով ջնջվել էր բնորոշ շարժումը, աշխուժությունը։

3. Հազվադեպ՝ նաև տրական հոլովով. օրինակ՝ Թռվված, կախարդված, տարված էն երգին՝ Վերացավ թռավ իմ վշտոտ հոգին (ՀԹ, 2, 81)։ Ինչպես իզուր խաբվել ես դու Սուտ խոսքերին չար աղվեսի (ՀԹ, 1, 310)։ Մինչև այսօր բյուր մեզ նմանները զոհվել են թշնամու սրին (Մ, 3, 326)։

Տրական հոլովի գործածությունը այս իմաստով անհարթ է և հատուկ չէ գրական լեզվին։ Այստեղ խնդրի՝ տրամաբանական սուբյեկտ լինելու իմաստը զգալի թուլանում է, որոշ չափով իրեն զգացնել է տալիս հանգման գաղափարը (դա տրական հոլովի առանձնահատկությունն է)։ Այդ պատճառով ներգործող խնդիրը ավելի հաճախ արտահայտվում է բացառական (մեծ մասամբ) և գործիական հոլովներով։

4. Գոյականի սեռական հոլովի և ձեռքով (ձեռքից), միջոցով կապերի օգնությամբ. ըստ որում ձեռքով կապը միշտ գործածվում է անձ ցույց տվող գոյականների հետ, իսկ միջոցով-ը՝ և՛ անձ

ցույց տվող, և՛ իր ցույց տվող գոյականների հետ. օրինակ՝ Իմ որդին սպանվեց մեր կառավարության զինվորների ձեռքով (Իս., 188)։

Ահա ներգործող խնդրի դրսևորման շարահյուսական համանիշների սխեման՝

Բ+Գբաց. → Բ+Գգործ. → Բ+(Գսեռ. հ.+կապ (ձեռքով, միջոցով), հազվադեպ նաև՝ Բ+Գտրակ. հ.

Այս բոլոր կապակցությունները դրսևորելով միևնույն հարաբերությունը՝ կրավորական սեռի կամ պասիվ գործողության չեզոք սեռի բայի ու գործողության սուբյեկտի հարաբերություն, ունեն կիրառության հատուկ ոլորտներ, և միշտ չէ, որ հնարավոր է նրանցից մեկը փոխարինել մյուսով։ Այսպես՝ տրական հոլովով ներգործող խնդիրը գրեթե միշտ հնարավոր է փոխարինել համանիշ բացառական հոլովի կամ գործիական հոլովի ձևով՝ առաջացնելով միայն իմաստային նուրբ տարբերություն՝ կապված այդ հոլովների հիմնական իմաստների հետ. օրինակ՝ ...Իզուր խաբվել ես դու սուտ խոսքերին չար աղվեսի → սուտ խոսքերից չար աղվեսի → սուտ խոսքերով չար աղվեսի։ Թողված, կախարդված, տարված էն երգին → էն երգից → էն երգով: Այնինչ բացառական հոլովը ոչ բոլոր դեպքում է հնարավոր փոխարինել գործիական հոլովով, առավել ևս՝ տրական հոլովով։ Այդպիսին են հատկապես զգացում, հույզ, հոգեկան վիճակ՝ գործողություն արտահայտող կրավորական բայերի մոտ դրված ներգործող խնդիրները. օրինակ՝ սիրվել մեկից, մեկի կողմից, բայց ոչ երբեք մեկով, խաբվել մեկից, մեկի կողմից, բայց ոչ մեկով, ճարգվել մեկից, մեկի կողմից, բայց ոչ մեկով և այլն։

Նույն ձևով՝ գործիական հոլովով դրված ներգործող խնդիրը ոչ միշտ է հնարավոր փոխակերպել բացառական հոլովի. այսպես՝ խրախուսվել մի բանով, մեկով հնարավոր է փոխակերպել խրախուսվել մի բանից, մեկից կապակցության, բայց տարվել մեկով, մի բանով կապակցության փոխարեն հնարավոր չէ գործածել տարվել մեկից, մի բանից (այսպիսի փոխակերպության ժամանակ փոխվում է և՛ բայիմաստը, և՛ նախադասության անդամների հա-

բաբերության բնույթը)։ Նույն ձևով՝ երբ բացառական հոլովով դրված ներգործող խնդիրը անձ է ցույց տալիս, այն կարելի է փոխակերպել նույն գոյականի և ձեռ*ից (*ձեռ*ով) կամ* կողմ*ից կապերի կապակցության. օրինակ՝ սպանվել* մեկ*ից → մեկի* կող*մից→ մեկի* ձեռ*ով,* խաբ*վել* մեկ*ից → մեկի* կող*մից։ Բայց երբ ներգործող խնդիրը իր ցույց տվող գոյական է, չի կարող փոխակերպվել կապական արտահայտության։* Վնասվել հարվածից *կապակցությունը հնարավոր չէ փոխակերպել* վնասվել հարվածի կողմից *կամ* հարվածի ձեռ*ով արտահայտությունների։*

ԲԱՅԻՄԱՍՏԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԽՆԴՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ԱՐՏԱՀԱՅՏՄԱՆ ՀԱՄԱՆԻՇ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՁԵՎԵՐԸ

Ի տարբերություն բայի սեռի պահանջով դրվող խնդիրների, բայիմաստի պահանջով խնդիրներ կարող են դրվել բոլոր բայերի մոտ՝ անկախ նրանց սեռից։ Իհարկե, կան բայեր, որոնց իմաստի պահանջով կարող են դրվել մի կարգի խնդիրներ, իսկ այլ բայերի խումբ, դարձյալ ըստ բայիմաստի առանձնահատկությունների, կարող է ընդունել այլ կարգի խնդիրներ։ Ասենք՝ հեռանալ, անջատվել *բայերը չեն կարող ունենալ հանգման խնդիր, այլ ընդունում են անջատման խնդիր, կամ՝* նայել, հանձնել *բայերը կարող են ունենալ հանգման խնդիր (բայց ոչ անջատման) և այլն։*

Իրենց արտահայտած իմաստային հարաբերությունների բնույթով բայիմաստի պահանջով դրված խնդիրները խիստ բազմազան են. նրանք կարող են ցույց տալ հանգում, մատուցում, անջատում, միջոց, բաղկացություն, սահմանափակում, վերաբերում և այլն։ Չափազանցություն չի լինի ասել, որ յուրաքանչյուր բայի մոտ դրված խնդիրը՝ կապված բայիմաստի հետ՝ ունի իր յուրահատուկ իմաստը, ցույց է տալիս յուրահատուկ հարաբերություն։ Այդ բոլոր խնդիրները ըստ իրենց ընդհանուր իմաստի և դրսևորման հիմնական քերականական միջոցների խմբավորվում են հետևյալ տեսակների մեջ՝ հանգման, մատուցման, վերաբերության, անջատման, միջոցի, սահմանափակման, փոխադարձ գործողության։ Այստեղ ևս շատ հաճախ միևնույն խնդրային հարա-

բերությունը արտահայտելու համար գործածվում են տարբեր քերականական միջոցներ, որոնցից յուրաքանչյուրը որոշ նրբերանգ, ոճական առանձնահատկություն է մտցնում հարաբերության մեջ, այսինքն՝ այստեղ ևս հանդիպում ենք շարահյուսական համանիշների։ Քննենք յուրաքանչյուր տեսակի խնդրային հարաբերության ոլորտում երևան եկող համանիշությունը առանձին-առանձին։

Հանգման խնդրի արտահայտության համանիշ ձևերը

Իմաստային փոխհարաբերությունների բազմազանությամբ հատկապես աչքի է ընկնում հանգման խնդիրը, որը իր հիմնական իմաստի՝ հանգման հետ դրսևորում է բազմաթիվ իմաստային երանգներ, ըստ այդմ բաժանվելով տարբեր ենթատեսակների։ Հանգման հարաբերության դրսևորման հիմնական ձևը տրական հոլովն է, սակայն այդ հարաբերության արտահայտման համար գործածվում են նաև այլ քերականական միջոցներ, որոնք հաճախ հանդես են գալիս որպես համանիշներ։

1. Երբ հանգման խնդիրը ցույց է տալիս այն առարկան, որին ուղղվում-հանգում է գործողությունը, այն բացի տրական հոլովից կարող է արտահայտվել նաև սեռական հոլովով՝ վրա կապի հետ։ Այս ձևը, սակայն, ավելի տարածված է խոսակցական (բանավոր) լեզվում։ Գրավոր լեզվում այն հանդիպում է մեծ մասամբ երկախոսությունների մեջ և հանդես է գալիս որպես տրական հոլովով արտահայտված հանգման խնդրի համանիշ։ Բերենք օրինակներ։

Առավոտյան ես և Բիլին նստում ենք բարձր բլրին և նայում ենք ամառանոցի վրա *(ԳՄ, ԵՍ, 108)։*	*Առավոտյան ես և Բիլին նստում ենք բարձր բլրին և* նայում ենք ամառանոցին:
Նայում էր շնորհալի երիտասարդի վրա *և հիանում էր (Ր, 7, 472)։*	*Նայում էր շնորհալի* երիտասարդին *և հիանում էր։*

Խորթ մերն ու իր աղջիկները նախանձում են նրա գեղեցկության վրա *(ՀԹ, 2, 381)։*	*Խորթ մերն ու իր աղջիկները* նախանձում են նրա գեղեցկությանը։
Յուրաքանչյուր նախարար հսկում էր այն սահմանների վրա, *որ մոտ էր յուր իշխանության երկրին (Ր, 7, 173)։*	*Յուրաքանչյուր նախարար* հսկում էր այն սահմաններին, *որ մոտ էր յուր իշխանության երկրին։*
Ոստանիկն ընկերոջ անկեղծության վրա *չէր կասկածում։*	*Ոստանիկն ընկերոջ* անկեղծությանը չէր կասկածում *(ԳՍԹ, 2, 393)։*
Անցնում էր հարուստ խանութների, վաճառատունների առաջով, կողմնակի ակնարկ նետելով *հսկա ապակիների հետև ցուցադրված* ապրանքների վրա *(Իս., 3, 231)։*	*Անցնում էր... կողմնակի* ակնարկ նետելով *հսկա ապակիների հետև ցուցադրված* ապրանքներին։
Սամվելը ուշադրություն չէր դարձնում մոր արտասուքի վրա *(Ր, 7, 100)։*	*Սամվելը ուշադրություն չէր դարձնում* մոր արտասուքին։

Ինչպես երևում է օրինակների համեմատությունից, հանգման խնդրի այս զուգահեռ ձևերը ավելի ճիշտ կլինի համարել նույնանիշներ, որովհետև սրանք իմաստային կամ ոճական նրբերանգային տարբերություններ չունեն։

Ծանոթություն.— Ինչպես ասվել է, հսկել *բայի մոտ այժմ հաճախ խնդիրը դրվում է նաև հայցական հոլովով, այնպես որ* հսկել սահմանների վրա, հսկել սահմաններին *ձևերի կողքին գործածվում է նաև* հսկել սահմանները *ձևը։*

Նույնանիշների նույնպիսի շարքի ենք հանդիպում նաև ազդել, ներգործել և նման իմաստ ունեցող մի շարք բայերի մոտ, որոնց հետ, սակայն, ավելի սովորական է վրա կապով հանգման խնդիրը։ Վերջինս իր խնդրային հարաբերության բնույթով խիստ մոտենում է ուղիղ խնդրին։ Դա է հավանաբար պատճառը, որ այն երբեմն, հատկապես անձ ցույց տալու դեպքում, գրվում է նաև տրական հոլովով. օրինակ՝ Եվ այդ վիշտն այնպես է ազդում մեզ, որ միառժամանակ ոչինչ չենք գտնում ասելու (ՍՁ, ԵԺ, 3, 164)։ Այս նախադասության համանիշ և ավելի սովորական ձևը կլինի՝ Եվ այդ վիշտն այնպես է ազդում մեզ վրա...

Սիրահարվել, կասկածել բայերի մոտ ևս հանգման խնդիրը գրվում է երկու նույնանիշ ձևերով՝ տրական հոլովով և սեռական հոլովով՝ վրա կապի հետ։ Վերջին ձևը ավելի տարածված է ժողովրդական-խոսակցական լեզվում, իսկ առաջինը գրքային է. օրինակ՝ Մոսեսը սիրահարված էր մի աղջկա վրա (Իս., 3, 225) → Մոսեսը սիրահարված էր մի աղջկա։ Կասկածել մեկի վրա → կասկածել մեկին և այլն։ Երբեմն կասկածել բայի մոտ որպես նույնանիշներ կարող են գործածվել նաև վրա և մեջ կապերով ձևավորված հանգման խնդիրներ, երբ վերջիններս ցույց են տալիս իր. այսպես՝ Իր հաջողության մեջ նա համարյա չէր կասկածում (ԳՍԹ, 2, 135) → Իր հաջողության վրա նա համարյա չէր կասկածում։

2. Հանգման խնդրի և բայ-ստորոգյալի միջև կարող է առկա լինել նաև որոշ տեղային հարաբերության իմաստային երանգ, երբ ցույց է տրվում այն տեղը, որին հանգում է գործողությունը։ Տեղային հարաբերությունը ընդգծելու դեպքում, որպես տրական հոլովով արտահայտված հանգման խնդրի համանիշ, կարող է գործածվել դեպի կապով հայցական հոլովը։ Այսպես՝

Ակնոցով վարժուհին ուղղվում է տեղում, ուղղում է պենսնեն և դառնում ինձ (ՍՁ, ԵԺ, 3, 86)։	Ակնոցով վարժուհին ուղղվում է տեղում, ուղղում է պենսնեն և դառնում դեպի ինձ։

Իսկ Անժիկը ձեռքը մեկնել էր մոռի կանաչ տերևներին, *որոնք փարթամորեն փռվել էին մատուռի կտուրի վրա (ԱԲ, 65)։*	*Իսկ Անժիկը ձեռքը* մեկնել էր դեպի մոռի կանաչ տերևները...
Եվ մեծ որդին հանեց գրպանից մի բուռ հացահատիկ և պարզելով հորը՝ *ասաց...*	*Եվ մեծ որդին հանեց գրպանից մի բուռ հացահատիկ և* պարզելով դեպի հայրը՝ *ասաց... (Իս., 3, 345)։*
Նայում էր *յուր շուրջը տիրող* մռայլին, *որ լուսավորված էր լուսնի աղոտ լույսով։*	Նայում էր դեպի *յուր շուրջը տիրող* մռայլը, որ *լուսավորված էր լուսնի աղոտ լույսով։*
...Որոնք անթարթ ուղղված էին լուսնին *(Մ, 3, 312)։*	*...Որոնք անթարթ ուղղված էին* դեպի լուսինը:
...Որոնց մի կողմի պաշգամբները ծովին էին նայում *(ԳՍԹ, 2, 394)։*	*... Որոնց մի կողմի պատշգամբները* դեպի ծովն էին նայում:
Երբ շրջում էինք գյուղերում, բոլոր գյուղացիք ճանաչում էին Օհաննեսին և խորին հարգանքով վերաբերվում նրան:	*Երբ շրջում էինք գյուղերում, բոլոր գյուղացիք ճանաչում էին Օհաննեսին և խորին հարգանքով* վերաբերվում դեպի նա *(Իս., 3, 367)։*
...Ձեր ամեն մի փորած նավթահորը մի քայլ է ցանկալի կյանքին *(ՆՁ, ԸՆ, 113)։*	*...Ձեր ամեն մի փորած նավթահորը մի քայլ է* դեպի ցանկալի կյանքը:

Ինչպես երևում է բերված օրինակներից, այս երկու համանիշ ձևերը ունեն իմաստային այն նուրբ տարբերությունը, որ առաջին դեպքում (տրական հոլովով արտահայտված խնդրի առկայության դեպքում) գործողությունը անմիջապես հանգում է տվյալ առարկային (նայել մի բանի, աչքերը հառել մեկին և այլն), իսկ երկրորդ դեպքում (դեպի կապի գործածության դեպքում) հանդման գաղափարը որոշ չափով թուլանում է, ավելի զգալի է դառնում գործողության՝ դեպի որևէ առարկա ուղղված լինելու գաղափարը, որի հանգմամբ վերջանալը չի ընդգծվում (տե՛ս վերևի օրինակները)։

Հանգման խնդրային հարաբերության դրսևորման վերաբերյալ համանիշ քերականական ձևերի սխեման կարելի է տալ հետևյալ ձևով՝

Բ + Գտր. հ. → Բ + (Գսեռ. հ. + վրա)
Բ + Գտր. հ. → Բ + (դեպի + Գհայց.հ.)

3. Տրական հոլովով դրված հանգման խնդրին երբեմն որպես համանիշ հանդես է գալիս սեռական հոլովը հետ կապի հետ։ Սրանք նախորդների համեմատությամբ ունեն այն առանձնահատկությունը, որ եթե վերը նկարագրված հանգման խնդիրները կապված են շարժում, ուղղվածություն ցույց տվող բայերի հետ (նայել, մոտենալ, հասնել և այլն), ապա այս խնդիրները կապված են վիճակ, դրություն ցույց տվող բայ-ստորոգյալների հետ։ Բերենք օրինակներ։

Նա ծանոթ էր այդ անտառապատ լեռներին, *գիտեր նրանց դժվարին անցքերն ու շավիղները։*	*Նա ծանոթ էր այդ անտառապատ* լեռների հետ, *գիտեր նրանց դժվարին անցքերն ու շավիղները (Ր, 7, 19)։*
Թանձր ու սև ծուխը դուրս գալով, ոլոր-մոլոր պտույտներով միանում էր *բոցի լայնաշրջան* աշտարակին:	*Թանձր ու սև ծուխը դուրս գալով, ոլոր-մոլոր պտույտներով* միանում էր *բոցի լայնաշրջան* աշտարակի հետ *(Շ, 4, 11)։*

Բայց մեր ուղևորը ծանոթ էր նրա ծանծաղուտներին:	*Բայց մեր ուղևորը ծանոթ էր նրա* ծանծաղուտների հետ *(Բ, 7, 18)։*
Նա գիտեր բոլոր նժույգների անունները, ծագումը, տարիքը և ծանոթ էր յուրաքանչյուրի բնավորության:	*Նա գիտեր բոլոր նժույգների անունները, ծագումը, տարիքը և ծանոթ էր յուրաքանչյուրի* բնավորության հետ *(Բ, 7, 66)։*

Նույնպիսի համանիշ հանգման խնդիրներ են հանդիպում նաև համեմատության, զուգադրության իմաստ ունեցող մի շարք բայերի մոտ, ինչպես՝ Մարդը այնտեղից հանեց վրան հասցեագրած մի թերթիկ, նայեց, համեմատեց *պատի վրա եղած* հասցեի հետ *(ՄԱվ) →Համեմատեց պատի վրա եղած* հասցեին:

Ահա այս համանիշների սխեման՝

Բ+Գտր. հ. → Բ+(Գսեռ. հ.+հետ)

Սակայն հետ *կապով խնդիրը սովորաբար ցույց է տալիս փոխադարձ գործողություն։ Այդ պատճառով նրա այս կիրառությունը հանձնարարելի չէ, և ինչպես երևում է նաև բերված օրինակներից, տարածված էր ավելի XIX դարի վերջերի և XX դարի սկզբների գրականության լեզվում։ Այն մասամբ գործածվում է նաև այժմ ժողովրդական-խոսակցական լեզվում։ Բացառություն է կազմում* պատահել *(տեղի ունենալ) բայը, որի մոտ հանգման խնդիրը կարող է հավասարապես գործածվել և՛ տրական հոլովով, և՛* հետ *կապով. օրինակ՝ Ես ուզում եմ միայն հիշել, թե ինչ* պատահեց ինձ հետ *սրանից մի քանի տարի առաջ (ԳՄ, ԵՍ, 522) → ...Թե ինչ* պատահեց ինձ *սրանից մի քանի տարի առաջ։*

4. Հոգեկան մերձեցում, հանդում ցույց տվող մի շարք բայերի մոտ (կառչել, կպչել *և այլն) հանգման խնդիրը կարող է հավասարապես դրվել իրար հակադիր* տրական *և* բացառական *հոլովներով՝ դրսևորելով, սակայն, նույն հարաբերությունը. օրինակ՝* կառչել մեկին–մեկից, կառչել այդ մտքին–այդ մտքից, կպչել մեկին–կպչել մեկից *և այլն։ Այսինքն՝ հանգման հարաբերություն արտա-*

հայտելու համար գործածվում են հետևյալ քերականական կառուցվածքները՝ Բ + Գտր. հ. → Բ + Գբաց.։

Հետաքրքրական է այն երևույթը, որ երբ այս նույն բայերը ցույց են տալիս ֆիզիկական հանդում, մերձեցում, հանգման հարաբերությունը վերածվում է տեղի պարագայական հարաբերության. օրինակ՝ Կպչել աթոռին → աթոռից, կառչել սեղանին → սեղանից:

Հանգման խնդիրը այդ նույն համանիշ ձևերը ունի նաև կարոտ լինել, կարոտ մնալ *բայերի մոտ. ինչպես՝* կարոտ լինել մեկին → մեկից, կարոտ մնալ մի բանի → մի բանից: *Բնագրային օրինակ՝ Խնդ եղնիկ...* կարոտ՝ *իր սիրած գուրգուրող* անտառներից *և զանգակ* աղբյուրներից... *Հիմա տանջվում տառապում է մեզ մոտ (Իս., 3, 159)։ Այստեղ բացառական հոլովը կարելի է փոխարինել տրականով՝ առանց փոփոխություն մտցնելու հանգման հարաբերության ընդհանուր բնույթի մեջ։ Այսպես՝* ...Կարոտ անտառներին, աղբյուրներին: *Իհարկե, վերջին դեպքում հանգման գաղափարը ավելի ընդգծվում է, իսկ առաջին դեպքում հանգման հարաբերությունը ունենում է անջատականության որոշ իմաստային երանգ՝ կապված բացառական հոլովի իմաստային առանձնահատկության հետ։*

Հարցնել, խնդրել *բայերի մոտ ևս հանգման խնդիրը երբեմն, հատկապես բանավոր խոսքում, տրական հոլովին զուգահեռ դրվում է նաև բացառական հոլովով։ Վերջին դեպքում հանգման խնդիրը դարձյալ ձեռք է բերում անջատման իմաստային երանգ. այսպես՝* հարցնել մեկին → հարցնել մեկից, խնդրել նրան → խնդրել նրանից:

5. Երբ հանգման խնդիրը ցույց է տալիս այն առարկան, որի օգտին կամ վնասին կատարվում է որևէ գործողություն, այն սովորաբար դրվում է տրական հոլովով (շահի տրական). օրինակ՝ Ելնում է մեկին *իր երազն ու սեր (ՀԹ, 2, 53)։ Բայց քնքշությունդ երբեք* քեզ առաջնորդ չկարգես *(ԵՁ, ԸԵ, 180)։ Անչափ հաճելի էր դա Արգամ Վարդունուն (ՀՔ, ՄՏՁ, 1, 43)։ Երբ դրսից մեկը մի բան*

էր ստանում՝ ծխախոտ, շաքար, միրգ՝ իսկույն սիրով բաժին էր հանում ուրիշներին (Իս., 3, 189)։

Սակայն հաճախ այդ իմաստային հարաբերությունն արտահայտելու համար գործածվում է նաև համար կապը սեռական հոլովի հետ՝ ստեղծելով հանգման խնդրի այս իմաստային հարաբերությունն արտահայտելու՝ տրական հոլովին համանիշ ձև. օրինակ՝ բերել մեկին → բերել մեկի համար, կյանքը զոհել մեկին → մեկի համար, գիրք գնել մեկին → մեկի համար, ինչպես նաև՝ ելնում է մեկի համար..., Բայց քնքշությունդ երբեք ինձ համար առաջնորդ չկարգես։ Անչափ հաճելի էր դա Արգամ Վարդունու համար: Մի անգամ իմ բարեկամ մի որսորդ մեր հանդի անտառում սարերից մի եղնիկ նվեր բերեց երեխաներիս համար (Իս., 3, 275)։ Տասներկուերորդ ամսին է. բոլորը նոր տարվա տոների համար են պատրաստվում (Իս., 3, 328)։ Ինչպես երևում է բերված համանիշների համեմատությունից, համար կապի գործածության դեպքում հանգման հարաբերությունը ձեռք է բերում նպատակի իմաստային երանգ (այդ երանգը թույլ արտահայտված կա նաև տրական հոլովի այս կիրառության մեջ)։

Այս կառուցվածքի համանիշ հանգման խնդիրներ են դրվում նաև մի շարք բաղադրյալ ստորոգյալների, ինչպես նաև որոշ բայանունների մոտ (հատուկ լինել, բնորոշ լինել, հասկանալի լինել, օգտակարություն, հասկանալիություն, վնասակարություն և այլն). օրինակ՝ Նա վաղուց կորցրել էր երիտասարդության... այն մթնոլորտը, որը այնքան բնորոշ է տասնութից քսաներկու տարեկան աղջիկների համար (ԹԴՀ, 234) → ...Որը այնքան բնորոշ է աղջիկներին: Թշվառացած արարածների ողբալի դրությունը կարող է հասկանալի լինել ամենի համար (Շ, 4, 195) → ...կարող է հասկանալի լինել ամենին: Նա հպարտանում էր, ղգալով յուր օգտակարությունը թե մարդուն և թե կենդանիներին (Շ, 4, 192) → ...օգտակարությունը թե մարդու և թե կենդանիների համար:

Ահա այս համանիշների սխեման՝

Բ+Գտր. հ. → Բ+(Գսեռ. հ.+համար)

6. Հանգման խնդիրը սահմանափակ թվով բայերի մոտ (ասդիպել, ծանոթանալ, բարեկամանալ և այլն) կարող է ունենալ փոխադարձ գործողության և փոխադարձ կապի իմաստ։ Այս դեպքում այն ունենում է քերականական դրսևորման երկու համանիշ ձև՝ գոյականի տրական հոլովը և սեռական հոլովը հետ կապի հետ. օրինակ՝ հանդիպել մեկին → հանդիպել մեկի հետ, ծանոթանալ մեկին → ծանոթանալ մեկի հետ, բարեկամանալ մեկին → բարեկամանալ մեկի հետ *և այլն։ Այս դեպքում խնդիրը, ինչպես նաև ենթական, անձ ցույց տվող գոյականներ են, որով և պայմանավորված է փոխադարձ գործողության գաղափարը։ Այս խնդրային հարաբերության համանիշ ձևերի սխեման կլինի՝*

Բ+Գտր. հ. → Բ+ (Գսեռ. հ.+հետ)

Հետաքրքրական է այն երևույթը, որ փոխադարձ գործողություն ցույց տվող բայերի մոտ ենթական և փոխադարձ գործողության հանգման խնդիրը կարող են փոխել իրենց տեղերը՝ ստեղծելով համանիշ նախադասություններ, որոնք տարբերվում են իրարից կառուցվածքով և տրամաբանական շեշտով։ Օրինակ՝

Ես թերթը վերցնում եմ ու վազում տուն՝ Տիգրանին ցույց տալու... Պատշգամբում ինձ պատահում է Անահիտը *(ՍՁ, եժ, 3, 467)։*	...Պատշգամբում ես պատահում եմ Անահիտին:
Ես բարեկամացա նրա հետ (նրան):	Նա բարեկամացավ ինձ հետ (ինձ):
Ճանապարհին Աշոտը հանդիպեց իր ընկերներին *(ընկերների հետ)։*	*Ճանապարհին* Աշոտին հանդիպեցին իր ընկերները:

Բերված համանիշ նախադասությունների առաջին շարքի ենթակաները երկրորդ շարքի նախադասությունների մեջ վեր են ածվել հանգման խնդիրների, իսկ հանգման խնդիրները՝ ենթա-

կանների։ Դրա հետ կապված համապատասխանաբար փոխվել են նաև բայ-ստորոգյալների դեմքերը և թվերը (տե՛ս օրինակները)։

7. Հանգման խնդիր պետք է համարել նաև մաքառել, պայքարել, կռվել *և այլ բայերի բայիմաստի պահանջով դրված* դեմ *կապով խնդիրները, ինչպես՝* պատերազմել մեկի դեմ, մաքառել թշնամիների դեմ *և այլն։ Խնդրային այս հարաբերության դրսևորման համար երբեմն* դեմ *կապի փոխարեն գործածվում է նրան հականիշ* հետ *կապը՝ ստեղծելով հանգման խնդրի համանիշ ձևերի մի շարք։ Այսպես՝ Ընդհակառակը, նրանք խիստ անխնա կերպով* էին մաքառում *քեզ* հետ *(Ր, 7, 494)։ Նա յուր ամբողջ կյանքը անցկացրեց* պատերազմելով թշնամիների հետ *(Ր, 7, 54)։ Այս նախադասությունների համանիշ և ավելի սովորական ձևերը կլինեն՝ ...Նրանք խիստ անխնա կերպով* էին մաքառում *ո՛ն* դեմ։ *Նա յուր ամբողջ կյանքը անցկացրեց* պատերազմելով թշնամիների դեմ։ *Այս համանիշ կառուցվածքները ունեն իմաստային այն նուրբ տարբերությունը, որ* հետ *կապի գործածության ժամանակ խնդիրը ձեռք է բերում փոխադարձ գործողության իմաստային երանգ, որը բացակայում է* դեմ *կապով ձևավորված խնդրի դեպքում (համեմատի՛ր* կռվել մեկի դեմ *և* կռվել մեկի հետ *ձևերը)։*

Վերաբերության խնդրի արտահայտության համանիշ ձևերը

Ասացական, մտածական, իմացական բայերը ունեն այն առանձնահատկությունը, որ պահանջում են մի խնդիր, որով դրսևորվում է այն առարկան, նյութը, երևույթը, որի մասին մի բան ասվում, պատմվում, հաղորդվում է։ Քերականագիտության մեջ այդ խնդիրը համարվում է վերաբերության անուղղակի խնդիր։ Վերջինս դրսևորվում է քերականական տարբեր միջոցներով։ Դրանք են՝

1. Սեռական հոլովի և մասին *կապի օգնությամբ. օրինակ՝ Խումբը տաքացած խոսում էր ու վիճաբանում* հանքերի, գործարանների, նավթի *և ուրիշ այսպիսի հետաքրքրական* նյութերի մասին *(Շ, 4, 90)։ Հարցրեց Թիֆլիսի գրական, հասարակական* կյանքի մասին, նորությունների մասին *(Իս., 3, 356)։ Նրա* աք-

սորման մասին հակասական պատմություններ կային (ԱԲ, 133)։ Զրուցում էին ինստիտուտի սովորական գործերի մասին (ԳՍԹ, 1, 36)։ Վահանը հաճախ գրում էր ինձ Մոսկվայից։ Հայտնում էր իր ծրագրերի, իր գրածների և գրելիքների մասին (Իս., 3, 392)։

Սա վերաբերության խնդրի ամենատարածված ձևն է։

2. Բացառական հոլովով։ Այս դեպքում ընդգծվում է այն հանգամանքը, որ ասվում, պատմվում է ոչ թե ամբողջ երևույթի մասին, օբյեկտ հանդիսացող իրողությունը, երևույթը ընդգրկվում է ոչ թե ամբողջությամբ, այլ միայն մասամբ. օրինակ՝ Եվ ապա սկսվում էին ավելի համեղ զրույցներ—մեր նանապարհորդություններից, մանկությունից սիրուց, արկածներից (Իս., 3, 189)։ Լուրջ, փորձված մարդ էր, բավական աշխարհ տեսած, պատմում էր Իրանից ու Թուրանից, Թավրիզից ու Ամրղանդից (Իս., 3, 250)։ Խոսում էին մանկության քաղցր օրերից (Իս., 3, 269)։ Փայտերը մեկ-մեկ գցում էր կրակի մեջ և պատմություններ անում շանի ժամանակից, անցած, գնացած օրերից, որսից և անտառից (ԱԲ, 119)։ Երբ պատմում էր այդ ժամանակներից, շատերը վերհիշում էին պատվերներ... (ԱԲ, 243)։ Նրանք պատմում էին իրենց դասերից, ընկերներից, ուսուցիչներից, ես՝ իմ կարդացած գրքերից և տպարանի անցուդարձից (ՍՀ, ԵԺ, 3, 347)։ Ու երբ քաջությունից, խելքից, հանճարից մոտը խոսք են գցում, ծիծաղում է... (ՀԹ, 2, 505)։

3. Գիտական և հրապարակախոսական գրականության մեջ այս նույն իմաստով ավելի հաճախ կիրառվում է սեռական հոլովը՝ վերաբերյալ կամ շուրջը կապական բառերի հետ. օրինակ՝ Այդ հարցի վերաբերյալ խոսեցին երեք հոգի։ Թեմայի շուրջը եղավ մտքերի աշխույժ փոխանակություն։

4. Ժողովրդական-խոսակցական լեզվում և բարբառներում հաճախ այդ իմաստն արտահայտելու համար գործածվում է վրա կապը սեռական հոլովի հետ, որը երբեմն անցնում է նաև գեղարվեստական գրականության մեջ, սակայն հանձնարարելի չէ։ Այսպես՝ Իսկ գիլի սրատեսության վրա էսպես մի զրույց կա ժողովրդի մեջ (ՀԹ, 1, 395)։ Նա աշխատում էր խոսել ավելի հեռավոր առարկաների վրա (Ր, 7, 100)։ Մտածում էր իրեն տան վրա, էն օրերի

վրա, *երբ ազատ խաղում էր հանդերում (ՀԹ, 1, 324)։ Անցյալ օրը քույր Աննայից հեռանալով՝ բավական մտածում էի* իմ տեսած ու լսածների վրա *(Մ, 2, 355)։*

Վերը նկարագրված ձևերը արտահայտում են նույն քերականական՝ վերաբերական հարաբերությունները և այդ պատճառով համանիշ են իրար, սակայն դրանցից յուրաքանչյուրը ունի ոճական և կիրառական իր առանձնահատկությունները, այդ պատճառով միշտ չէ, որ հնարավոր է դրանցից մեկը փոխարինել մյուսով։ Այսպես, եթե բացառական հոլովով դրված վերաբերության խնդիրը գրեթե միշտ կարելի է փոխարինել մասին *կապի խնդրով, ապա նույնը չի կարելի ասել* վերաբերյալ *կապական բառով խնդրի մասին. օրինակ՝ Պատմում են* իրենց դասերից, ուսուցիչներից → *Պատմում են* իրենց դասերի, ընկերների, ուսուցիչների մասին, *բայց ոչ՝ Պատմում են* դասերի, ընկերների, ուսուցիչների վերաբերյալ: *Նույն ձևով՝ Մոքերի փոխանակություն* հարցերի շուրջը, հարցերի վերաբերյալ, *բայց ոչ՝* հարցերից *և այլն։*

Ասացական բայերի մոտ դրված վերաբերության խնդիրը չի կարելի համանիշ համարել նույն բայերի մոտ դրված ուղիղ խնդրին, թեև սրանք իմաստով մոտ են։ Եթե վերաբերության խնդրի միջոցով որևէ բանի մասին պատմվում, ասվում, հաղորդվում է մասնակիորեն, ապա ուղիղ խնդրի դեպքում այն նույն երևույթը, իրողությունը դիտվում է որպես գործողության անմիջական օբյեկտ և վերցվում է ամբողջությամբ։ Այսինքն՝ այս դեպքում մենք գործ ունենք ստորոգյալի և լրացման տարբեր որակի հարաբերությունների հետ։ Այսպես՝ Մեկ-մեկ պատմել հայրիկի իմաստուն զրույցները, սրամիտ խոսքերն *ու* կատակները և հուշերը՝ *մեծ զրության նյութ է (Իս., 3, 375)։ Ամբոցում արդեն* գիտեին սպարապետի վերադարձը *Տիգրանից (Ր, 7, 61)։ Ճաշից հետո, երբ Տիգրանին* պատմում են Գարասի փախուստը, *նա հիանում է նրա խիզախության վրա (ՍՉ, ԵԺ, 3, 451)։ Նա գնաց գրասենյակ, հեռախոսով կապվեց շրջանային միլիցիայի պետի հետ և* դեպքը հայտնելով՝ *պահանջեց (Սխ, ԿՇ, 119)։ Ես պիտի* պատմեմ *իմ հովվական օրերից* մի օր, *մի* գիշերվա կյանք *(Իս., 3, 223)։*

...Ընդհատեց Արտաշը, որ ոգևորված պատմում էր իրենց կրած դժվարությունները (ԱԲ, 187)։

Բերված նախադասություններում ստորոգյալի և ընդգծված լրացումների միջև առկա են ուղիղ խնդրային՝ օբյեկտային հարաբերություններ, այսինքն՝ այստեղ մենք գործ ունենք ստորոգյալի և լրացման միջև եղած քերականորեն բոլորովին այլ որակի հարաբերության հետ, քան նախորդ դեպքերում, երբ մասնակի օբյեկտ հանդիսացող երևույթի և գործողության հարաբերությունը քերականորեն դրսևորվում էր բացառական հոլովով և կամ մասին, վերաբերյալ, շուրջը, կապակցությամբ, առթիվ կապերով։

Եթե ասացական բայը նշանակենք Բ տառով, իսկ նրա հետ վերաբերական հարաբերությամբ կապված գոյականը կամ գոյականաբար գործածված բառը Գ տառով, ապա վերաբերության խնդրի դրսևորման համանիշ քերականական ձևերը կարելի է պատկերել հետևյալ սխեմայի միջոցով.

Բ + Գ$_{բաց.}$ հ. → Բ + (Գ$_{սեռ.}$ հ. + մասին) → Բ + (Գ$_{սեռ.}$ հ. + վերաբերյալ) → Բ + (Գ$_{սեռ.}$ հ. + շուրջը), խոսակցական լեզվի համար նաև՝ Բ + (Գ$_{սեռ.}$ հ. + վրա)

Այս սխեմայի մեջ կարելի է տեղադրել ասացական բայերի մեծ մասը համապատասխան գոյականի հետ՝ ստանալով վերաբերության հարաբերությամբ կապված շարահյուսական համանիշների շարք, ըստ որում բայը կարող է գործածվել և՛ խոնարհված ձևով՝ կազմելով նախադասություն, և՛ անդեմ ձևով՝ կազմելով բառակապակցություն։ Այսպես՝

խոսել (խոսեց) գրքից	պատմել (պատմեց) դեպքից
խոսել գրքի մասին	պատմել դեպքի մասին
խոսել գրքի վերաբերյալ	պատմել դեպքի վերաբերյալ
խոսել գրքի շուրջը	
խոսել գրքի վրա (խոսկցկ.)	

Ինչպես երևում է օրինակներից, համանիշ շարքի առաջին երեք քերականական ձևերը ընդհանրական են։ Այսպիսի խնդրառություն կարող է ունենալ ասացական բայերի մեծ մասը, իսկ վերջին երկու ձևերը ավելի նեղ կիրառություն ունեն։ Շուրջ կապը *կարող է գործածվել այն ասացական բայերի մոտ, որոնք ցույց են տալիս փոխադարձ կատարվող գործողություն (երբ գործողությունը տեղի է ունենում մի քանիսի կողմից), ինչպես՝* խոսել, զրուցել, մտքեր փոխանակել, արտահայտվել *և այլն։ Իսկ* վրա *կապի այս կիրառությունը, ինչպես ասվեց, խոսակցական է և գրական լեզվում չի հանձնարարվում։*

Գանգատվել, բողոքել *բայերի մոտ վերաբերության խնդիրը դրսևորվում է հիմնականում երկու համանիշ ձևերով՝ գոյականի բացառական հոլովով և սեռական հոլովով՝* վրա *կամ* դեմ *կապերի հետ. օրինակ՝ Հայրն անդադար* գանգատվում էր աղքատության վրա *(Շ, 4, 139)* → գանգատվում էր աղքատությունից: *Գիմնազիստը* գանգատվում էր յուր ընկերների վրա *(ՀԹ, 337)* → Գանգատվում էր յուր ընկերներից: *Նա չէր բողոքում բռնության դեմ (Ր, 4, 337)* → *Նա չէր բողոքում* բռնությունից: *Նա չէր բողոքում այդ* բանի դեմ → *Նա չէր բողոքում* այդ բանից:

Երբեմն վերաբերության խնդիրը ձևավորվում է վերաբերյալ, կապակցությամբ *կապերին համանիշ* առթիվ *կապով։ Այս ձևը ևս հիմնականում գրքային է և հանդիպում է առավելապես մամուլի, հրապարակախոսության լեզվում։ Օրինակ՝ Քննարկված* հարցի առթիվ (→ վերաբերյալ) *ակտիվի ժողովը ընդունեց ծավալուն որոշում (ՍՀ)։ Վերջերս իմ ծննդյան* հիսնամյակի առթիվ (→ կապակցությամբ) *եղած շնորհավորանքների ժամանակ ես համոզվեցի, որ գործն արդեն շատ է հասունացած (ՀԹ, 4, 417)։ Քաղաք* գալու առթիվ (→ կապակցությամբ) *նա հագել էր տոնական իր միակ զգեստը (ԱԲ, 665)։*

Վերաբերության խնդիր են դրվում նաև մի շարք հոգեկան, զգացական գործունեություն նշանակող բայերի մոտ (վերաբերել, հոգալ, անաչառ լինել, զիջող լինել, սեր տածել և այլն)։ Այդ խնդիրների հարաբերությունը բայի հետ իրացվում է դեպի,

նկատմամբ (վերաբերմամբ) կապերի *օգնությամբ, որոնցից առաջինը պահանջում է հայցական հոլովով խնդիր, իսկ երկրորդը՝ սեռական հոլովով։ Կապակցության այս երկու ձևերը հանդես են գալիս որպես համանիշներ։ Բերենք օրինակներ։ Միշտ անաչառ է եղել այդ սուրը թե՛* դեպի օտարները *և թե* դեպի *յուր* հարազատները *(Ր, 7, 148)։ Ամենքը* դեպի ինձ *սիրով ու հարգանքով էին վերաբերվում (Շ, 4, 20)։ Երջանիկ ես դու, հայր Ջիովաննի, որ Գարիբալդիի բազեներից ես և պարտքդ կատարել ես* դեպի հայրենիքդ *(Իս., 3, 187)։*

Բերված նախադասությունները համանիշ են հետևյալներին՝ Միշտ անաչառ է եղել այդ սուրը թե օտարների նկատմամբ (վերաբերմամբ) *և թե յուր* հարազատների նկատմամբ (վերաբերմամբ): *Ամենքը* իմ նկատմամբ (վերաբերմամբ) *սիրով ու հարգանքով էին վերաբերվում։ Պարտքդ կատարել ես* հայրենիքիդ նկատմամբ (վերաբերմամբ):

Վերաբերվել *բայի մոտ խնդիրը կարող է դրվել նաև* հետ *կապով (լավ վերաբերվել* մեկի հետ → դեպի մեկը → մեկի նկատմամբ):

Գրավոր խոսքում այդ հարաբերությունը կարող է դրսևորվել նաև առ *դրաբարյան կապի օգնությամբ. ինչպես՝ ...Այն զգացմունքը, որ* առ քեզ *եմ տածում (Մ, 4, 194)* → Դեպի քեզ *տածած զգացմունքը* → քո նկատմամբ *տածած զգացմունքը։*

Այս համանիշների սխեման կլինի՝

Բ + (դեպի + Գհայց.) → Բ + (Գսեռ. + նկատմամբ (վերաբերմամբ) → Բ + (առ + Գհայց.)

Երբեմն այդ նույն իմաստն արտահայտելու համար գործածվում է նաև հանդեպ *կապը հայցական հոլովի (եթե առաջադիր է) կամ սեռական հոլովի (եթե վերջադիր է) հետ. օրինակ՝ Նա... կամաց-կամաց սկսեց ճշտել իր դիրքը* հանդեպ Կուշոյի *բերած* բարիքները *(ԳՄ, ԵՍ, 99)* → Կուշոյի *բերած* բարիքների հանդեպ → բարիքների նկատմամբ → դեպի բարիքները: *Կապակցության այս ձևը նույնպես գործածվում է հիմնականում գրավոր խոսքում։*

Միջոցի խնդրի արտահայտության համանիշ ձևերը

Միջոցի խնդիրը ժամանակակից հայերենում արտահայտվում է հիմնականում գոյականի, գոյականաբար գործածված բառի կամ դերանվան գործիական հոլովով։ Միայն երբեմն, տվյալ առարկայի, երևույթի՝ գործողության կատարման համար միջոց ծառայելը ընդգծելու նպատակով կարող է գործածվել նաև սեռական հոլովը՝ միջոցով *կապի հետ, որը համանիշ է առաջին ձևին։ Օրինակ՝ Ամեն անգամ երկար* պարանների միջոցով *նավի ներքնահարկից հակերը դուրս քաշելու ժամանակ նրանց հաստ բրդյա շալով գոտևորված մեջքերը թեքվում են (Շ, 4, 86)։* → *Երկար* պարաններով *նավի ներքնահարկից հակերը դուրս քաշելու ժամանակ...։ Գիտելիքները կարելի է ամրապնդել* կրկնելու միջոցով → կրկնելով: *Բարեխիղճ* աշխատանքի միջոցով *կարելի է մեծ արդյունքների հասնել* → Բարեխիղճ աշխատանքով *կարելի է մեծ արդյունքների հասնել։*

Միջոցի խնդիրը կարող է արտահայտվել նկարագրված համանիշ ձևերով միայն իր ցույց տալու դեպքում (տե՛ս վերևի օրինակները)։ Անձ ցույց տվող միջոցի խնդիրը դրվում է միայն սեռական հոլովով՝ միջոցով *կապի հետ, ինչպես՝ Այդ գիրքը ես ձեռք եմ բերել* նրա միջոցով: *Միայն երբեմն, հատկապես առաքման նշանակություն ունեցող բայերի մոտ, անձ ցույց տվող միջոցի խնդիրը կարող է ձևավորվել* ձեռքով, *երբեմն նաև* հետ *կապերով, որոնք այս կիրառություններում համանիշ են* միջոցով *կապին։ Այսպես՝ Մյուս օրը առավոտյան* մի անծանոթ կնոջ ձեռքով *ստանում եմ մի նամակ (Բ, 1, 336)* → Մի անծանոթ կնոջ միջոցով: *Նախարարը յուր* հավատարիմի ձեռքով *գաղտնի ինձ հայտնեց (Մ, 5, 194)* → յուր հավատարիմի միջոցով: *Նա գիրքը ուղարկել է* Արամի միջոցով → Արամի հետ:

Այսպիսով՝ միջոցի խնդրի արտահայտության համանիշ ձևերի սխեման կլինի՝

Իր ցույց տալու դեպքում՝ Բ + Գ$_{գործ.հ.}$ → Բ + (Գ$_{սեռ.հ.}$ + միջոցով),

Անձ ցույց տալու դեպքում՝ Բ+(Գսեռ.հ.+միջոցով) → Բ+(Գսեռ.հ.+ձեռքով) → Բ + (Գսեռ.հ.+հետ)։

Վերջինս, ինչպես ասվեց, ունի սահմանափակ կիրառություն։

Սահմանափակման խնդրի արտահայտության համանիշ ձևերը

Հայտնի է, որ սահմանափակման խնդիրը սահմանափակում, մասնավորում է բայ-ստորոգյալի ցույց տված գործողությունը տվյալ առարկայի սահմաններում և կամ որևէ հատկանիշի դրսևորումը դարձյալ տվյալ առարկայի սահմաններում։ Ժամանակակից հայերենում սահմանափակման խնդիրը ունի արտահայտության հետևյալ համանիշ ձևերը.

1. Գոյականի կամ գոյականաբար գործածված բառի բացառական հոլովը և նույն բառի ներգոյական հոլովը։ Ավելի հաճախ ներգոյական հոլովի փոխարեն գործածվում է սեռական հոլովը՝ մեջ *կապի հետ. օրինակ՝ Աշոտը* ուժեղ է թվաբանությունից → ուժեղ է թվաբանության մեջ: *Այդ մրցումներում նա* վազքից *առաջին տեղը* գրավեց → վազքի մեջ *առաջին տեղը* գրավեց: Վազելում (վազելու մեջ) *նա իր մրցակիցը չունի* → Վազելուց *նա իր մրցակիցը չունի։ Բացառական հոլովի գործածության դեպքում սահմանափակման խնդիրը ունենում է անջատման որոշ իմաստային երանգ։*

Խոսակցական լեզվում այս ձևերին համանիշ կարող է գործածվել նաև սեռական հոլովը կողմից *կապական բառի հետ. ինչպես՝ նա* կարդալու մեջ (կարդալում) *լավ է* → կարդալուց *լավ է* → կարդալու կողմից լավ է: *Իսկ գրավոր լեզվում այդ նույն իմաստով երբեմն գործածվում է* տեսակետից *կապական բառը սեռական հոլովի հետ. օրինակ՝ Նա* կարդալու տեսակետից *լավ է։ Համանիշների այս շարքի սխեման կլինի՝*

Բ+Գբաց. հ. → Բ+Գներ. հ. → Բ+(Գսեռ.հ.+մեջ) → Բ+(Գսեռ.հ.+կողմից) → Բ+(Գսեռ.հ.+տեսակետից)

2. Գոյականի կամ գոյականաբար գործածված բառի սեռական հոլովը ուղղությամբ և գծով կապական բառերի հետ։ Այս ձևերը ավելի տարածված են մամուլի և հրապարակախոսության լեզվում։ Օրինակներ՝ Կոմերիտմիության կոմիտեները զգալի աշխատանք են տանում կոմերիտականների և երիտասարդության կրթության ուղղությամբ (ԵԵ)→ կրթության գծով: Տնտեսությունը շատ անելիքներ ունի անասունների գլխաքանակի պահպանման գծով (ԵԵ)→ պահպանման ուղղությամբ: Այստեղ սահմանափակման խնդրի համանիշ ձևեր առաջացել են համանիշ կապական բառերի գործածման հետևանքով։ Ահա այս համանիշների սխեման՝

Բ+(Գսեռ. հ.+ուղղությամբ) → Բ+(Գսեռ. հ.+գծով)

Անջատման և բացառման խնդիրներ

Անջատման խնդիրը ժամանակակից հայերենում արտահայտվում է մեկ ձևով. այն է՝ գոյականի, գոյականաբար գործածվող բառի կամ դերանվան բացառական հոլովով։ Անջատման քերականական հարաբերության դրսևորման համանիշ ձևեր ժամանակակից հայերենում չկան։ Այստեղ անհրաժեշտ է խոսել միայն հետևյալ դեպքերի մասին.

1. Ճիշտ այնպես, ինչպես կախել, կառչել բայերի մոտ հանգման խնդիրը երբեմն դրվում է բացառական հոլովով, ստեղծելով տրականով դրված հանգման խնդրին համանիշ ձև, այդ նույն ձևով օտարանալ բայի պահանջով դրված անջատման խնդիրը հաճախ բացառական հոլովին զուգահեռ դրվում է տրական հոլովով՝ ստեղծելով անջատման խնդրի համանիշ ձևեր. օրինակ՝ Իր բացակայության հինգ-վեց ամիսների ընթացքում նա բավական օտարացել էր մեզանից (ՎԱ, ԼՀ, 75) → օտարացել էր մեզ: Ես չէի ուզում օտարանալ այդքան գրավիչ և այդքան հաճելի աղջկանից (Վ. Վաղարշյան) → օտարանալ...աղջկան: Նա կորցրել էր միակ որդուն, օտարացել ֆրանսուհի կնոջը (ԳԹ)→ օտարացել ֆրանսուհի կնոջից:

2. Երբ անջատման խնդիրը դրված է լինում անորոշ դերբայի

բացառական հոլովով, ապա երբեմն նրան համանիշ գործածվում է անորոշ դերբայի ուղիղ ձևը՝ ստեղծելով առաջինին համանիշ ձև։ Այս դեպքում անջատման իմաստը զգալիորեն թուլանում է, և անորոշ դերբայը բայի դիմավոր ձևի հետ միասին փաստորեն կատարում է նախադասության մեկ անդամի՝ բաղադրյալ ստորոգյալի պաշտոն՝ իհարկե դրսևորելով նույն իմաստային հարաբերությունները։ Ահա այս համանիշների զուգահեռ օրինակներ. Խուսափում էր ամուսնու կողքին կանգնելուց *(ՎԱ, ԼՀ, 62)* → Խուսափում էր *ամուսնու կողքին* կանգնել: *Նա հրաժարվեց* կարդալուց → *Նա* հրաժարվեց կարդալ: *Սրանք դադարել են անկախ ձևեր* գիտակցվելուց→ *Դադարել են անկախ ձևեր* գիտակցվել:

Իմաստով անջատման խնդրին է մոտենում նաև բացառման խնդիրը, որը ձևավորվում է բացի *կապով՝ բացառական կամ հայցական հոլովների հետ։ Խոսակցական լեզվում* բացի *կապի փոխարեն երբեմն գործածվում է* զատ *կապը՝ ստեղծելով բացառման խնդրի համանիշ ձև։ Օրինակներ՝* Բացի նյութապես նպաստելը՝ *նա օգնում էր ժողովրդին նաև բարոյապես (Մ, 5, 204)* → նյութապես նպաստելուց բացի → նյութապես նպաստելուց զատ: Նրանից բացի *բոլորին ճանաչում եմ*→ Նրանից զատ բոլորին *ճանաչում եմ։* Չքնաղ լինելուց զատ, *ուներ մի ինչ-որ գերբնական գրավչություն (Մ, 4, 328)* →Չքնաղ լինելուց բացի → բացի չքնաղ լինելը:

Երբեմն բացառման հարաբերություն է արտահայտում նաև չհաշված (չհաշվելով) *կապական բառը, որը այս կիրառություններում համանիշ է* բացի *կապին։ Այսպես՝* Արամին չհաշված՝ բոլորը ներկա էին → Բացի Արամից *բոլորը ներկա էին* → Արամից զատ *բոլորը ներկա էին։ Ահա վրա հասան այն ժամերը, երբ փողոցում,* չհաշված նրանց, *որոնք շտապում են տուն, մնացել են նրա հավատարիմ երկրպագուները (ԱԲ, 224)*→ բացի նրանցից: *Նրանց թիվը անցնում էր 10000-ից,* չհաշվելով Ղազախի և Շամշադինի թուրքերին *(Ր, 10, 352)* → Բացի Ղազախիի և Շամշադինի թուրքերից:

Այս համանիշների սխեման կլինի՝

$$(\text{բացի} + \text{Գբաց. հ.}) + \text{Բ} \rightarrow (\text{Գբաց. հ.} + \text{զատ}) + \text{Բ} \rightarrow$$
$$(\text{չհաշված} + \text{Գհայց. հ.}) + \text{Բ}$$

ԺԱՄԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄԸ ՀԱՄԱՆԻՇ ՁԵՎԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ

Ինչպես հայտնի է, ժամանակի պարագան ցույց է տալիս այն ժամանակամիջոցը, որի ընթացքում կատարվում, սկսվում կամ ավարտվում է գործողությունը։ Ժամանակային տարբեր հարաբերությունները արտահայտվում են քերականական տարբեր միջոցներով։ Սակայն շատ հաճախ ժամանակային նույն հարաբերությունն արտահայտելու համար ևս կարող են օգտագործվել տարբեր քերականական միջոցներ, որոնք հիմնականում արտահայտելով ժամանակային նույն հարաբերությունները, որոշ ոճական կամ իմաստային նրբերանգ են մտցնում և դրանով էլ հենց վերածվում համանիշ ձևերի։ Անհրաժեշտ է նշել, որ ինչպես բոլոր պարագաները, այնպես էլ ժամանակի պարագան, համանիշ ձևերով կարող է դրսևորվել միայն այն դեպքում, երբ արտահայտված է գոյականով կամ դերբայով։ Մակբայներով արտահայտված պարագաները շարահյուսորեն համանիշ ձևեր չեն ունենում, քանի որ նրանք միանում են ստորոգյալին, կամ բայով արտահայտված այլ լրացյալի ուղիղ ձևով, առանց թեքվելու[1]։

Գոյականները ժամանակի պարագա կարող են դառնալ կա՛մ որոշ հոլովների, կա՛մ կապերի միջոցով։ Այստեղ է, որ հնարավորություն է ստեղծվում, ելնելով հաղորդման նպատակից և ոճական նկատառումներով, ժամանակային նույն հարաբերություններն արտահայտել տարբեր հոլովների կամ կապերի օգնությամբ. այսինքն՝ հանդես են գալիս շարահյուսական համանիշ հանդիսացող կապակցություններ։ Համանիշ ձևեր կարող են ունենալ նաև դերբայով արտահայտված ժամանակի պարագաները։

Այժմ տեսնենք, թե ինչ համանիշ ձևերով կարող են դրսևորվել ժամանակային տարբեր հարաբերությունները։

---

[1] Այստեղ նկատի չեն առնվում բառա-ձևաբանական համանիշների գործածության դեպքերը, ինչպես՝ արագորեն–արագությամբ, մեղմորեն–մեղմ–մեղմությամբ և այլն։

1. Երբ ժամանակի պարագան ցույց է տալիս այն ժամանակամիջոցը, որի ընթացքում կատարվում է նախադասության մեջ նկարագրված գործողությունը կամ եղելությունը, այն դրվում է՝

ա) Ժամանակ ցույց տվող գոյականի ներգոյական հոլովով[1]։ Օրինակներ՝ Այդպիսի դժվարին rոպեներում նրան օգնության էր հասնում յուր սովորական թերահավատությունը (Ր, 7, 48)։ Նա այդ orերում մի քանի լավ ծառայություններ արեց ինձ (Ր, 7, 164)։ Իր կյանքի վերջին orերում մի բանավեճով էր բռնված (Իս., 3, 358)։ Ես էլ ծերության orերում իր ջրերն ընկած կապրեմ, ոտքերս կդինջանա սար ու քոլ չափելուց (ԱԲ, 9)։ Նրան ակոսում է մի փոքրիկ գետակ, որը սակայն ահարկու և անանցանելի է դառնում գարնան վերջերում (Մ, 2, 328)։

բ) Նույն բառերի տրական հոլովով։ Օրինակ՝ Նույն ակընթարթին հողը նրա ոտքի տակ փլվում է (ԽՀ, ՈՒՄ, 327)։ Իսկ ես ամեն քայլափոխի մտածում եմ շարունակ (ՍՋ, ԵԺ, 3, 440)։ Մթնաձորի ծերունի անտառապահը մի գարունքի տեսել է վարազի կմախքը (ԱԲ, 4)։ Մենք տեղ հասանք կեսգիշերին։

Անհրաժեշտ է նշել, որ ներգոյական հոլովի կիրառությունը այս նշանակությամբ տարածված էր ավելի XIX դարի վերջերի և XX դարի սկզբների գրականության մեջ։ Վերջին շրջանում այս նշանակությամբ ավելի հաճախ գործածվում է տրական հոլովը։ Այս ձևերը իմաստային և ոճական տարբերություն չունեն, այդ պատճառով ավելի ճիշտ կլինի համարել նույնանիշ ձևեր։ Հենց այդ հանգամանքն է պատճառը, որ այդ ձևերից առաջինը՝ ներգոյական հոլովը աստիճանաբար դուրս է գալիս գործածությունից։

Այժմ ավելի ընդունելի և հանձնարարելի պետք է համարել, այդպիսի դժվարին rոպեներին, այդ orերին, իր կյանքի վերջին, գարնան վերջերին և այլ ձևերը։

Երբեմն տրական հոլովի փոխարեն կիրառվում է նաև ժամանակ ցույց տվող գոյականի հայցական հոլովը։ Օրինակ՝ Նրա հայրն

---

[1] Ժամանակ ցույց տվող բառերը որպես ժամանակի պարագա հանդես են գալիս որևէ որոշիչի հետ. բացառություն են կազմում միայն տարվա ամիսներն ու եղանակները ցույց տվող բառերը։ Տե՛ս բերված օրինակները։

ու մայրը ձմեռը մեռել են սովից (ՍԽ, ԿՇ, 33)։ Աղջիկները թեև այդ սուգի օրերը հոր տունն էին եկել, բայց կարճ ժամանակից հետո պիտի վերադառնային իրենց տները (Իս., 3, 265)։ Իմ նոր եկած տարիները ես այստեղ յոթ օր շարունակ հարսանիք եմ տեսել (Մ, 2, 443)։ Ամառը լեռներում գեղեցիկ օրեր անցկացնելուց հետո շոգ քաղաք վերադառնալը տխուր էր (ԹԴՀ, 232)։

գ) Ժամանակային այս հարաբերությունն արտահայտելու համար հաճախ գործածվում է գոյականի սեռական հոլովը ընթացքում կամ ընթացքին կապական բառերի հետ, ըստ որում ընթացքին ձևը այս կիրառությամբ արդեն հնացել է։ Այժմ ավելի գործածական և ճիշտ է համարվում ընթացքում ձևը։ Բերենք օրինակներ՝ Թափառումներիս ընթացքին հյուր եղա Վահանենց ընտանիքի մոտ (Իս., 3, 390)։ Մի վայրկյան նկատեցի, որ ընթերցման ընթացքին նա քանի գնում, ավելի և ավելի մռայլվում էր (Իս., 3, 215)։ Ռեակցիան դառնացրեց նրա սիրտը, բայց չկոտրեց հավատը լավագույն ապագայի հանդեպ՝ սնուցած իր ողջ կյանքի ընթացքին (Իս.)։ Ապրած հիսունհինգ տարիներում նա այնքան չի հոգնել, որքան ահա այս մի տարվա ընթացքում (ԳՄ, ԵՍ, 530)։ Իմ թափառ կյանքի ընթացքին, իմ հասուն տարիներին շատ քաղաքներում եմ եղել ես (ԸԷՍԳ, 405)։

Հաճախ այս նույն նշանակությունն արտահայտելու համար գործածվում են միջոցին կամ ժամանակ կապական բառերը. օրինակ՝ Այդ միջոցին (այդ ժամանակ) ներս մտավ սենեկապանի սպասուհին (ՄԳՄ, 15)։ Ճաշի միջոցին (ճաշի ժամանակ), ինչպես և հետո, նա մի վայրկյան հանգիստ չէր մնում (Շ, 4, 326)։ Նրանց զրույցի միջոցին (զրույցի ժամանակ), ներս է մտնում Օբերը (ՍՋ, ԵԺ, 3, 195)։

Իհարկե, այս կապերից (ժամանակ, ընթացքում, միջոցին) յուրաքանչյուրը ժամանակային հարաբերություն արտահայտող կապակցությանը տալիս է իմաստային նրբերանգ։ Առաջին դեպքում (ժամանակ կապական բառի գործածության դեպքում) խոսվում է ընդհարապես գործողության կատարման ժամանակի մասին, մյուս դեպքերում ընդգծվում է գործողության՝ տվյալ ժամանակամիջոցում կատարվելը։ Անհրաժեշտ է նշել, որ միջոցին կա-

պական բառի գործածությունը այս իմաստով արդեն հնացել է, այժմ սակավ է հանդիպում և գրական լեզվի համար հանձնարարելի չէ։

Երբ այս իմաստային հարաբերությունն արտահայտող ժամանակի պարագան ժամանակ ցույց տվող գոյական չէ, այն միանում է ստորոգյալին մեծ մասամբ վերոհիշյալ կապական բառերով։ Տրական հոլովի կիրառությունը այս դեպքում արհեստական է և քիչ է հանդիպում։ Այսպես՝ Դաշտում նրա բացակայության՝ մարդիկ շինել էին իրենց բնակարանները (ՀԹ, 2, 331)։ Պատերազմին, քո հայրենասեր բուրժուա անգլիացիները, ֆրանսիացի դաշնակիցները զենք չէին ծախում իրենց թշնամի Գերմանիայի վրա (Իս., 3, 245)։ Այս տարվա արձակուրդներին ես... հորս օգնում եմ դաշտային աշխատանքների մեջ (ՍՁ, եժ, 3, 16)։ Հետագա հանդիպումներին սիրտ արեցի, հայտնեցի (Իս., 3, 362)։ Այժմ ավելի գործածական են բացակայության ժամանակ (ընթացում), պատերազմի ժամանակ (ընթացում), հանդիպումների ժամանակ (ընթացում) և այլն։

Ժամանակային վերոհիշյալ հարաբերությունը դրսևորող քերականական համանիշ կապակցությունները կարելի է ներկայացնել հետևյալ սխեմայով.

Բ + Գներգ.հ. → Բ + Գտրակ. հ. → Բ + Գհայց. հ. → Բ + (Գսեռ. հ. + + ընթացքում (ընթացքին) → Բ + (Գսեռ.հ. + ժամանակ) → Բ + (Գսեռ.հ. + միջոցին)

2. Երբ գործողության կատարման ժամանակը որոշվում է նրա հետ զուգընթացաբար կատարվող մի այլ գործողություն մատնանշելու օգնությամբ, ժամանակի պարագան արտահայտվում է՝

ա) Դերբայական դարձվածով, որի հիմնական անդամը՝ դերբայը կարող է դրվել զուգընթացական դերբայով (գրելիս, կարդալիս) կամ անորոշ դերբայի սեռական հոլովով՝ ժամանակ, ընթացում կապական բառերի հետ՝ գրելու, կարդալու ժամանակ (ընթացում): Օրինակներ՝

Վարելու ժամանակ *խոփը մի տեղ դեմ է ընկնում (ՀԹ, 1, 447)։*	Վարելիս *խոփը մի տեղ դեմ է ընկնում։*
Վերջին խոսքերն արտասանելու ժամանակ (ընթացքում)...	*Վերջին խոսքերն* արտասանելիս *ծերունու ձայնը աստիճանաբար փոխվում էր (Շ, 4, 14)։*
Եղբայրը նրան Հայաստան ճանապարհ դնելու ժամանակ՝ *դրեց նրա հետ իբրև օժիտ... (Ր, 7, 91)։*	*Եղբայրը նրան Հայաստան* ճանապարհ դնելիս՝ *դրեց նրա հետ իբրև օժիտ...*
Տարոնով անցնելու միջոցին (ժամանակ) *նրանք մեր ամրոցում հյուր կլինեն (Ր, 7, 92)։*	*Տարոնով* անցնելիս *նրանք մեր ամրոցում հյուր կլինեն։*

բ) Բայանունով՝ դարձյալ ժամանակ, ընթացքում, միջոցին *կապական բառերի հետ. օրինակ՝ Գիշերային հարձակման* խոովության միջոցին (ընթացքում, ժամանակ) *տիկինը կորավ (Ր, 7, 264)։ Քննարկման* ժամանակ (ընթացքում) *շատ թերություններ նշվեցին։*

գ) Ժամանակի պարագա երկրորդական նախադասություններով, որոնք թեև հանդիսանում են առաջին երկու ձևերի շարահյուսական համանիշները, սակայն այստեղ չեն ուսումնասիրվում, քանի որ դուրս են պարզ նախադասության սահմաններից։

Պարզ նախադասության սահմաններում այս ժամանակային հարաբերության դրսևորման քերականական համանիշ ձևերի սխեման կլինի՝

Բ + Դզուգընթ. → Բ + (Դանոթ. սեռ. հ. + ժամանակ (միջոցով) →
Բ + (Դսեռ. հ. + ժամանակ (միջոցին))

Դերբայով դրսևորված ժամանակի պարագան սովորաբար ունենում է լրացումներ, սակայն դա չի ազդում սխեմայի կառուց-

վածքի վրա, որովհետև այդ լրացումները չեն փոխում ժամանակային հարաբերությունների բնույթը (տե՛ս վերևի օրինակները)։

3. Երբ ժամանակի պարագան ցույց է տալիս այն ժամանակամիջոցը, որի հետո կատարվում է ենթակայի գործողությունը, տեղի է ունենում որևէ եղելություն, կամ հանդես է գալիս որևէ երևույթ, այն կարող է դրսևորվել հետևյալ համանիշ ձևերով՝ ա) ժամանակ ցույց տվող գոյականի բացառական հոլովով, բ) նույն հոլովով կամ հայցական հոլովով՝ հետո կապի հետ։ Վերջին դեպքում ավելի է ընդգծվում գործողության՝ ժամանակի պարագայի ցույց տված ժամանակամիջոցից հետո կատարվելը։ Բերենք օրինակներ՝

Քսան տարեից *զինվորը վերադարձավ և բերեց սարքված շրջանակը (ԸԷՍԳ, 319)։*	Քսան տարեից (տարե) հետո *զինվորը վերադարձավ...*
Մի տասը տարեից կառքը կանգ առավ Բագամյանի բնակարանի առաջ (ՆԴ, 3, 183)։	Մի տասը տարեից (տարե) հետո *կառքը կանգ առավ...*
Մի ժամից *երկու ընկերները բարձրանում էին Մարությանների տան սանդուղքով (ՆԴ, 3, 388)։*	Մի ժամից (ժամ) հետո *երկու ընկերները բարձրանում էին...*
Ընդամենը կես ժամից ինստիտուտը շրջապատվեց...	*Ընդամենը կես ժամից* (կես ժամ) հետո *ինստիտուտը շրջապատվեց զինված ոստիկաններով (ԳՍԹ, 1, 10)։*
Մոտ քսան տարեից *Ոստանիկը եկավ այդտեղ։*	*Մոտ* քսան տարե (տարեից) հետո *Ոստանիկը եկավ այդտեղ (ԳՍԹ, 2, 388)։*

Այս ձևերը ունեն այն նրբերանգային տարբերությունը, որ առաջին դեպքում (բացառական հոլովի կիրառության ժամանակ) ժամանակի պարագան ունենում է որոշ սահմանափակման, ինչպես նաև չափի իմաստային երանգ, ցույց է տալիս այն ժամանակի քանակը, որից հետո կատարվում է գործողությունը։ Իսկ երկրորդ դեպքում հետո *կապի միջոցով ընդգծվում է գործողության՝ տվյալ ժամանակամիջոցին հաջորդելու հանգամանքը։ Այդ իմաստն ավելի է ընդգծվում, երբ գործածվում է* անցնել *բայի հարակատար դերբայը* (անցած) *կամ* հետո *կապով անորոշը՝ ժամանակ ցույց տվող գոյականի ուղղական հոլովի հետ։ Վերջինս հանդես է գալիս որպես դերբայական դարձվածի կողմնակի ենթակա. օրինակ՝ Առաջին նամակն ստացավ միայն* ինն ամիս անցած (անցնելուց հետո) *(Շ, 4, 228)։* Մի շաբաթ անցած (անցնելուց հետո) *Սանթուրյանը եկավ ինձ մոտ և խնդրեց նրա խաչեղբայրը լինել (Շ, 4, 363)։*

Այս ձևերը տարբերվում են նաև իրենց կիրառության ծավալով։ Եթե բացառական հոլովով ժամանակի պարագա կարող են լինել միայն ժամանակ ցույց տվող գոյականները (հինգ ժամից, երկու օրից, մեկ տարուց *և այլն), ապա* հետո *կապով (կամ* անցած, անցնելուց հետո *ձևերով) ժամանակի պարագա կարող են լինել ո՛չ միայն ժամանակ ցույց տվող բառերը, այլ նաև այլ գոյականներ (մեծ մասամբ որևէ երևույթ կամ գործողություն ցույց տվող) և անորոշ դերբայը. այսպես՝* Հանդեսից հետո գնացինք, Ճաշից հետո հանգստացա, *Նրա* գնալուց հետո այդ մասին չխոսեցինք *և այլն։*

Ժամանակային այս հարաբերությունը կարելի է տալ հետևյալ սխեմաներով՝

Բ + Գբաց. հ. → Բ + (Գբաց. հ. + հետո) → Բ + (Գհայց. հ. + հետո) →
Բ + (Գուղղ. հ. + անցած) → Բ + (Գուղղ. հ. + անցնելուց հետո)

5. Երբ գործողության կատարման ժամանակը ցույց է տրվում նրան անմիջապես նախորդած գործողության կամ եղելության միջոցով, ժամանակի պարագան դրվում է կամ տվյալ բայի անորոշ դերբայի տրական հոլովով՝ պես *կապի հետ, կամ նույն դեր-*

բայի բացառականով՝ հետո կապի և հենց, անմիջապես, իսկույն մակբայների հետ. ըստ որում հենց-ը դրվում է դերբայից առաջ, իսկ անմիջապես-ը և իսկույն-ը՝ դերբայից հետո։ Բերենք օրինակներ. Բայց մթնելուն պես մելամաղձությունը տիրեց ինձ (Շ, 4, 156)։ Քեռի Ոստանիկի անունը լսելուն պես Այծեմիկի աչքերում արցունք շողաց (ԳՍԹ, 2, 371)։ Մերունի Արբակը հենց ճաշը վերջանալուց հետո իսկույն աննկատելի կերպով հեռացավ (Ր, 7, 114)։

Երբեմն, հատկապես խոսակցական լեզվում, այդ իմաստային հարաբերությունն արտահայտելու համար գործածվում է հետ կապը, որի ցույց տված ժամանակային հաջորդականության հարաբերությունը ընդհուպ մոտենում է միաժամանակությանը։ Օրինակ՝ Գարնան բացվելուն հետ երևացին առաջին ծիծեռնակները → Գարնան բացվելուն պես → Գարնան բացվելուց անմիջապես հետո։ Ինչպես երևում է նաև բերված օրինակից, պես, ինչպես նաև հետ կապերի գործածության ժամանակ խոսքը ավելի կենդանի է, արտահայտիչ, իսկ հետո կապը՝ մակբայների հետ խոսքին տալիս է գրքայնություն։

Երբ ժամանակի պարագան ցույց է տալիս նախադասության գործողությանը անմիջապես նախորդած որևէ երևույթ կամ իրողություն, այն կարող է արտահայտվել հետևյալ համանիշ ձևերով. 1) այդ երևույթը, իրողությունը ցույց տվող բառի (գոյականի) տրական հոլովով, 2) նույն բառի բացառական հոլովով՝ հետո կապի հետ և 3) սեռական հոլովով՝ վրա կապի հետ։ Վերջին դեպքում ժամանակային անմիջական հաջորդականության նշանակությունը ավելի է ընդգծվում։ Օրինակներ՝ Երրորդ թխկոցին, վերջապես, դռան ետև ոտնաձայն է լսվում (ՍԳԱ, 105) → Երրորդ թխկոցից հետո → Երրորդ թխկոցի վրա։ Բոլորը պարտավոր էին աշխատանքի տեղում լինել ժամացույցի առաջին զարկին (ԹԴՀ, 515) → Առաջին զարկի վրա → առաջին զարկից անմիջապես հետո։ Թեյ է պատրաստում, որ պիտի խմեն ընթրիքի վրա (ՍԳԱ, 70) → ընթրիքից հետո։

Այս ժամանակային հարաբերության արտահայտության համանիշ ձևերի սխեման հետևյալն է.

(Դան. տբ. հ.+պես)+Բ → (Դան. բաց. հ.+հետո)+Բ →
(Դան. տբ. հ. +հետ)+Բ
Դտբ. հ.+Բ → (Դանհ. հ.+վրա)+Բ → (Դբաց. հ.+հետո) +Բ

Այս ձևերում կարող են գործածվել միայն իրողություն, եղելություն ցույց տվող կամ գործողության անուն հանդիսացող գոյականները (տե՛ս վերևի օրինակները)։

6. Երբ նախադասության մեջ նկարագրված գործողության կամ եղելության ժամանակը ցույց է տրվում նրանից հետո կատարված որևէ գործողության միջոցով, ժամանակի պարագան կարող է դրսևորվել հետևյալ համանիշ ձևերով. ա) այդ գործողությունը ցույց տվող բայի անորոշ դերբայի բացառական հոլովով՝ առաջ կապի հետ, բ) այդ նույն անորոշ դերբայի հայցական հոլովով՝ նախքան կապի հետ։ Այս երկու ձևերի տարբերությունը միայն ոճական է։ Առաջինը ավելի լայն կիրառության ոլորտ ունի, խիստ տարածված է նաև խոսակցական լեզվում, իսկ երկրորդը ավելի գրքային է։ Ահա օրինակներ՝

Նա չհանգստացավ։ Նախքան ետ դառնալը՝ երկու ափերը խողովակաձև դրեց բերանին ու գոռաց դեպի ձորը (ԱՍեկ., 252)։	Նա չհանգստացավ։ Ետ դառնալուց առաջ երկու ափերը խողովակաձև դրեց բերանին։
Բայց նախքան պատերազմ սկսելը նրան հարկավոր էր մի ամուր նեցուկ (Ր, 7, 177)։	Բայց պատերազմ սկսելուց առաջ նրան հարկավոր էր մի ամուր նեցուկ։
Պարսիկ զորքերը օրհասական տագնապի մեջ մարտնչում էին... որ նախքան մեռնելը գոնե մի քանիսին իրենց հետ տանեին։	Պարսիկ զորքերը օրհասական տագնապի մեջ մարտնչում էին... որ մեռնելուց առաջ գոնե մի քանիսին իրենց հետ տանեին (Ր, 7, 301)։

Երբ հավաքվում էին աշակերտները, նախքան դասերն սկսելը կանգնում էինք դպրոցի ընդարձակ բակում (ԳՄ, ԵՍ, 102)։	Երբ հավաքվում էին աշակերտները, դասերն սկսելուց առաջ կանգնում էինք դպրոցի ընդարձակ բակում։

Այս նույն իմաստն արտահայտելու համար հաճախ գործածվում է մինչև կապը, որով ընդգծվում է ժամանակի պարագայի՝ սահմանափակման իմաստային երանգ ունենալը, այսինքն՝ տրվում է այն ժամանակամիջոցը, մինչև որը կատարվում է գործողությունը։ Այսպես՝ Մինչև ետ դառնալը՝ երկու ափերը խողովակաձև դրեց բերանին։ Մինչև պատերազմ սկսելը նրան հարկավոր էր մի ամուր նեցուկ։ Մինչև մեռնելը գոնե մի քանիսին իրենց հետ տաներին։ Մինչև դասերն սկսելը կանգնում էինք դպրոցի ընդարձակ բակում։

Ահա այս համանիշների սխեման՝

(նախքան + Դան. հայց. հ.) + Բ → (Դան. բաց. հ. + առաջ) + Բ → (մինչև + Դան. հայց. հ.) + Բ

Ծանոթություն.— Բերված սխեմաներում գերադաս անդամը Բ (բայ) տառով նշանակելը համապատասխանում է բառակապակցություններին, որովհետև այդ դեպքում գերադաս անդամը միշտ արտահայտված է լինում բայով։ Սակայն նախադասությունների մեջ, երբ գերադաս անդամը ստորոգյալ է, վերջինս կարող է լինել և՛ պարզ՝ արտահայտված բայի խոնարհված ձևերով, և՛ բաղադրյալ։ Այդ իսկ պատճառով գերադաս անդամը Բ տառով նշանակելը պետք է հասկանալ լայն առումով՝ և՛ բայ, և՛ ստորոգյալ (պարզ կամ բաղադրյալ)։

7. Երբ ժամանակի պարագան ցույց է տալիս այն ժամանակը, մինչև որը կատարվում է գործողությունը կամ երևան է գալիս տվյալ երևույթը, այն ունենում է սահմանափակման իմաստային երանգ և ձևավորվում է ժամանակ ցույց տվող բառի հայցական հոլովով՝ մինչև կապի հետ։ Պաշտոնական գրությունների, արձանագրությունների լեզվում մինչև կապի փոխարեն հաճախ գործածվում է գրաբարյան առ նախդիրը՝ ստեղծելով առաջինին համանիշ ժամանակի պարագա. մի ձև, որը մի կողմից օժանդակում է խոսքին պաշտոնականություն տալուն, մյուս կողմից ավելի

որոշակի է նշում ժամանակը։ Ահա այս համանիշների զուգահեռ օրինակներ. Առ մեկը հունիսի *պլանները կատարվել են 90 տոկոսով* → Մինչև հունիսի մեկը *պլանները կատարվել են 90 տոկոսով։* Առ մեկը հունվարի *գործարանը թողարկել է 50 դաշնամուր (ԵԵ)* → Մինչև հունվարի մեկը *գործարանը թողարկել է 50 դաշնամուր։*

8. Հաճախ խոսողի նպատակն է լինում ընդգծել այն կոնկրետ ժամանակամիջոցը, որի ընթացքում կատարվել, կատարվում կամ պիտի կատարվի գործողությունը։ Ժամանակի պարագան այս դեպքում ևս ունենում է սահմանափակման իմաստային երանգ և արտահայտվում է հետևյալ համանիշ ձևերով. ա) ժամանակ ցույց տվող բառի ներգոյական, երբեմն նաև բացառական հոլովով, բ) նույն բառի սեռական հոլովով՝ ընթացքում *(երբեմն նաև մեջ) կապի հետ։ Օրինակ՝*

Իր աշխատանքը նա ավարտեց հինգ օրում (օրից):	*Իր աշխատանքը նա ավարտեց* հինգ օրվա ընթացքում (մեջ):
Արամը շարադրությունը գրեց մեկ ժամում (ժամից):	*Արամը շարադրությունը գրեց* մեկ ժամվա ընթացքում (մեջ):
Կարճ ժամանակում (ժամանակից) *մենք այնպես նրա հետ մտերմացանք...*	Կարճ ժամանակի մեջ (ընթացքում) *մենք այնպես նրա հետ մտերմացանք... (Իս. 3, 214)։*
Չէ, երկու տարում *ահագին փոփոխություն է եղել իմ հայրենի քաղաքում։*	*Չէ,* երկու տարվա մեջ (ընթացքում) *ահագին փոփոխություն է եղել իմ հայրենի քաղաքում (ՍՉ, ԵԺ, 3, 430)։*

Այս ժամանակի պարագաները ունեն չափի պարագայի իմաստային երանգ (ընդգծում են գործողության կատարման ժամանակի չափը՝ տևողությունը)։

ժամանակային այս հարաբերության դրսևորման համանիշ ձևերի սխեման հետևյալն է.

Բ + Գներգ. հ. → Բ + (Գսեռ. հ. + ընթացքում) →
Բ + (Գսեռ. հ. + մեջ) → Բ + Գբաց. հ.

9. Երբեմն ժամանակի պարագան ցույց է տալիս այն ժամանակամիջոցը, որից սկսվում և շարունակվում, ընթացքի մեջ է գտնվում գործողությունը։ Այս դեպքում այն կարող է արտահայտվել երեք համանիշ ձևերով՝ ա) ժամանակ ցույց տվող գոյականի բացառական հոլովով, բ) նույն հոլովով՝ ի վեր *կապի հետ և գ) նույն հոլովով՝* սկսած *դերբայի հետ, որը այս կիրառություններում ձեռք է բերել կապական արժեք։ Օրինակ՝* Հին ժամանակներից ի վեր *Դսեղը պարծեցել է յուր քաջերով (ՀԹ, 1, 301)* → հին ժամանակներից սկսած → հին ժամանակներից: Անհիշելի ժամանակներից *մարդիկ ապրում են Հյումբաթի ձորում (ԱԲ, 250)* → անհիշելի ժամանակներից ի վեր → անհիշելի ժամանակներից սկսած: *Այո,* այդ օրից ի վեր *ես անհամբեր եմ դարձել (ՍԳՄ, 107)* → այդ օրից → այդ օրից սկսած: *Այս համանիշների սխեման կլինի՝*

Գբաց. հ. + Բ → (Գբաց. հ. + ի վեր) + Բ → (Գբաց. հ. + սկսած) + Բ

Երբեմն ի վեր *կապով ձևավորված ժամանակի պարագան ցույց է տալիս այն ժամանակամիջոցը, որի ընթացքում կատարվել կամ կատարվում է գործողությունը։ Այս դեպքում նրան համանիշ կարող է գործածվել ժամանակ ցույց տվող գոյականի հայցական հոլովը՝* շարունակ *կապի հետ։ Հատկանշական է, որ այս կիրառություններում գոյականը միշտ դրվում է հոգնակի թվով, որով ընդգծվում է գործողության կատարման ժամանակի երկարատևությունը։ Օրինակ՝ Սիմոնը* տարիներից ի վեր *ծառայում էր նրանց մոտ (Իս., 3, 258)* → *Սիմոնը* տարիներ շարունակ *ծառայում էր նրանց մոտ։* Դարեր շարունակ, *ժողովո՛ւրդ դու իմ, տեսել ես միայն փորձանք ու աղետ (ԵՁ, ԸԵ, 192)։*

Այս համանիշների սխեման կլինի՝

(Գբաց. հ. + ի վեր) + Բ → (Գհայց. հ. + շարունակ) + Բ

Մանրթություն.— Սխեմայում Բ տառի տակ դարձյալ պետք է հասկանալ ոչ միայն բայ, այլ նաև բաղադրյալ ատորոգյալ։

ՏԱՐԱԾԱԿԱՆ (ՏԵՂԻ ՊԱՐԱԳԱՅԱԿԱՆ) ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆԸ ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ՀԱՄԱՆԻՇՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ

Հայտնի է, որ գործողության կատարման հետ կապված տարածական հարաբերությունները արտահայտվում են նախադասության տեղի պարագայի միջոցով։ Այդ հարաբերությունները միատեսակ չեն։ Մի դեպքում տեղի պարագայի միջոցով ցույց է տրվում այն տեղը, որտեղ կամ որի մեջ կատարվում է գործողությունը, մի այլ դեպքում ցույց է տրվում այն տեղը, որտեղից սկսվում է գործողությունը, կամ այն տեղը, դեպի ուր ուղղված է գործողությունը և այլն։ Տեղի պարագայի միջոցով տրվող տարածական հարաբերությունները կարելի է բաժանել հիմնականում չորս խմբի՝ ա) այն տեղը, որտեղից սկսվում է գործողությունը, բ) այն տեղը, որի մեջ, որտեղ կատարվում է գործողությունը, գ) այն տեղը, որի միջով կատարվում է գործողությունը և դ) այն տեղը, դեպի որը ուղղված է գործողությունը։ Այս հարաբերություններից յուրաքանչյուրը լեզվում դրսևորվում է տարբեր քերականական միջոցներով, որոնք հաճախ հանդես են գալիս որպես համանիշներ։

Հատկապես տարածված են հոլովական վերջավորությունների և կապերի միջոցով տարածական նույն հարաբերություններն արտահայտող զուգահեռ ձևերը։ Ինչպես հայտնի է, կապերը, դրվելով հոլովների վրա, կա՛մ մատնանշում են բառերի միջև եղած բոլորովին նոր հարաբերություն (օրինակ՝ առանց քեզ, քո շնորհիվ), կամ ճշտում, ավելի որոշակի են դարձնում հոլովի միջոցով արտահայտած հարաբերությունը։ Վերջին դեպքում է, որ մենք գործ ունենք նույն հարաբերությունն արտահայտող շարահյուսական համանիշների հետ։

Տարածական նույնատիպ հարաբերություններ արտահայտող համանիշ շարքերը կարելի է խմբավորել հետևյալ կերպ.

1. Երբ տեղի պարագայի միջոցով տրվում է իրի, առարկայի որևէ տեղում, որևէ իրի մակերեսին գտնվելը կամ որևէ գործողության՝ տվյալ վայրում կատարվելը, տեղ ցույց տվող բառը դրվում է՝

ա) Տրական հոլովով. օրինակ՝ Անսվաղ պատերին ուրիշ ոչ մի զարդ չկար (ԱԲ, 119)։ Լուսինը բարձրացել էր. նրա շոյող լույսը ցոլում էր սառցի հղկված, փայլուն մակերեսին (ԹԴՀ, 1, 24)։ Սիմոնը նստել էր դարբասի քարին և քարի նման հոդսը ծանրացել էր նրա սրտին (ԱԲ, 201)։ Պառկել եմ փափուկ ծովախոտին (ԲՀ, ՍՉ, 94)։ Ահա նստած եմ տան դեմ ու կանաչած թթենին Դեմիրդ ստվեր է գցել, մա՛յր իմ անուշ ու անգին (ԵՉ, ԸԵ, 32)։

բ) Սեռական հոլովով և վրա կապով։ Վրա կապի օգնությամբ ավելի ճշտվում, որոշակի է դարձվում տարածական այս հարաբերությունը։ Այդ է պատճառը, որ լեզվում կապակցության այս ձևը ավելի է տարածված։ Օրինակներ՝ Նա նստեց կրակի դեմը, թախտի վրա (ՀԹ, 1, 373)։ Այնտեղ, դեպի Բեյրութ տանող ճանապարհի վրա, շատ տարիներ առաջ... Կ. Պոլսից եկած մի անցորդ թուրք աստիճանավոր տեսել էր նրան (ՎՓ, ԵԺ, 2, 542)։ Նա չիբուխը բերնին թիկն է տվել յափնջու վրա և... երազուն աչքերով նայում է տավարին (ՍՉ, ԵԺ, 3, 96)։ Դիլան դային նստեց քարի վրա (ԱԲ, 234)։ Եվ հազարավոր նարնջագույն տերևներ տեղացին կայտառ աղջկա ուսերի վրա (ԱԲ, 219)։ Քարակուռ բարձունքի վրա կանգնել էր մի կրակոտ երիտասարդ՝ ձախ ձեռքին բարձր բռնած կարմիր դրոշակը (Իս., 3, 183)։ Այժմյանից քո ճակատի վրա փայլում է ապագա հերոսի աստղը (Ր, 7, 497)։ Կանթեղի աղոտ լույսը ընկավ հիշատակարանի մանր տառերով գրված տողերի վրա (Շ, 4, 189)։

Այսպիսով՝ տարածական այս հարաբերությունն արտահայտող համանիշ ձևերի պատկերը հետևյալն է.

Անսվաղ պատերին ուրիշ ոչ մի զարդ չկար (ԱԲ, 119)։	Անսվաղ պատերի վրա ուրիշ ոչ մի զարդ չկար։

Պառկել եմ փափուկ ծովախոտին (ԲՀ, ՍՉ, 94)։	Պառկել եմ փափուկ ծովախոտի վրա:
Եվ հազարավոր նարնջագույն տերևներ տեղացին կայտառ աղջկա ուսերին:	Եվ հազարավոր նարնջագույն տերևներ տեղացին կայտառ աղջկա ուսերի վրա (ԱԲ, 219)։
Այժմյանից քո ճակատին փայլում է ապագա հերոսի աստղը։	Այժմյանից քո ճակատի վրա փայլում է ապագա հերոսի աստղը (Ր, 7, 497)։

Ահա տարածական այս հարաբերությունն արտահայտող շարահյուսական համանիշ կառուցվածքների սխեման՝

$$Բ + Գտր.\ հ. \rightarrow Բ + (Գսեռ.\ հ. + վրա)$$

Մանոթություն.— Այստեղ ևս Բ տառի տակ պետք է հասկանալ և՛ բայ, և՛ բաղադրյալ ստորոգյալ։

Տարածական նույն հարաբերություններն արտահայտող այս ձևերը թեև ընդհուպ մոտենում են նույնանիշներին, սակայն նույնանիշ չեն, այլ համանիշ, որովհետև վրա կապի գործածության ժամանակ հատկապես շեշտվում, ընդգծվում է գործողության՝ տվյալ առարկայի մակերեսին կատարվելու իմաստային հարաբերությունը։

2. Երբեմն վրա կապով տեղի պարագան ցույց է տալիս գործողության կամ եղելության կատարման տեղը ընդհանրապես՝ համանիշ հանդիսանալով ներգոյական հոլովով դրված տեղի պարագային։ Ահա այս համանիշների զուգահեռ օրինակներ.

Մուգ-կապույտ երկնքի վրա ամպի ոչ մի կտոր (ԳՄ, ԵՍ, 261)։	Մուգ-կապույտ երկնքում ամպի ոչ մի կտոր։
Ես կանգնել եմ պատրաստամբի վրա և նայում եմ հեռու (ԳՄ, ԵՍ, 183)։	Ես կանգնել եմ պատրաստամբում և նայում եմ հեռու։

Բասենի բարձրավանդակ բլուրների վրա գարնանային եղանակ էր (ՎՓ, ԵԺ, 2, 537)։	Բասենի բարձրավանդակ բլուրներում գարնանային եղանակ էր։
Ծառուղու վրա երևում է Արուս Ոսկանյանը... նույնքան գրավիչ ու գեղեցիկ, որքան բեմի վրա (ԳՄ, ԵՍ, 301)։	Ծառուղու վրա երևում է Արուս Ոսկանյանը... նույնքան գրավիչ ու գեղեցիկ, որքան բեմում:

Ինչպես երևում է բերված օրինակներից, վրա կապով տեղի պարագան համանիշ է լինում ներգոյական հոլովով տեղի պարագային հիմնականում այն դեպքերում, երբ մատնանշում է որևէ երևույթի, հատկանիշի երևան գալու տեղը։

Ահա այս համանիշների սխեման՝

Բ+(Գսեռ. հ.+վրա) → Բ+Գներգ. հ.

3. Երբ տեղի պարագան ցույց է տալիս այն վայրը, առարկան, որտեղ, որի մեջ կատարվում է գործողությունը, դրվում է այդ տեղը, առարկան ցույց տվող բառի ներգոյական հոլովով, կամ սեռական հոլովով՝ մեջ կապի հետ։ Սակայն այդ իմաստն արտահայտելու համար հաճախ, հատկապես XIX դարի վերջերի և XX դարի սկզբների գրականության մեջ հանդիպում ենք նաև հայցական հոլովի կիրառությանը։ Դա, մեր կարծիքով, հետևանք է այն բանի, որ հին հայերենում այդ իմաստն արտահայտելու համար գործածվել է նաև հայցական հոլովը ի նախդրի հետ։ Հետագայում նախդիրը ընկել է, և որոշ դեպքերում հայցական հոլովը առանց նախդրի ևս կատարել է (երբեմն այժմ էլ կատարում է) այդ պաշտոնը։ Տեղի պարագայի արտահայտության այս ձևը ժամանակակից հայերենի արդի էտապում գրեթե չի գործածվում, հնացած է։ Այժմ այդ իմաստով հիմնականում գործածվում է ներգոյական հոլովը կամ սեռական հոլովը մեջ կապի հետ։ Ահա զուգահեռ օրինակներ՝

Այդ երկրի մի կողմը ծփում էր Ախթամարա ծովակը, իսկ մյուս կողմում պատնեշ էին դրել Մոկաց անմատչելի լեռները (Ր, 7, 259)։	*Այդ երկրի մի կողմում ծփում էր Ախթամարա ծովակը...*
Տարածվել էր մի նուրբ ու թափանցիկ մշուշ. Մայր էր մտնում հեռուն արեգակը բոսոր (ԵՁ, Ըե, 25)։	*...Մայր էր մտնում հեռվում արեգակը բոսոր։*
...Ուզում էի դուրս գալ և թափառել դաշտերը, գյուղից հեռո՜ւ, հեռո՜ւ (Իս., 3, 255)։	*...Ուզում էի դուրս գալ և թափառել դաշտերում, գյուղից հեռո՜ւ, հեռո՜ւ։*
Խենթացած թափառում էր Ադամ, առանց դադարի, դրախտի մեկուսի վայրերը (Իս., 3, 319)։	*Խենթացած թափառում էր Ադամ, առանց դադարի, դրախտի մեկուսի վայրերում:*
Անդոն կրակ է արել դուրսը մուտքի մոտ (ԱԲ, 160)։	*Անդոն կրակ է արել դրսում մուտքի մոտ։*
Ամպերի նախիրն անհետացավ սարերի հետևը (ՆՁՀ, 215)։	*Ամպերի նախիրն անհետացավ սարերի հետևում:*

Տարածական այս հարաբերությունն արտահայտող բերված ձևերը նույնանիշ են, չունեն իմաստային և ոճական նրբերանգային տարբերություններ։ Հավանաբար հենց այդ էլ պատճառ է հանդիսացել, որ հայցական ձևերը դուրս են մղվել՝ իրենց տեղը զիջելով ներգոյական հոլովով կամ սեռականով ու մեջ կապով դրսևորված տեղի պարագային։

Մանրություն.— Հայցական հոլովի կիրառությանը ներգոյականի փոխարեն հատկապես շատ ենք հանդիպում Ավ. Իսահակյանի ստեղծագործություններում։

Ներգոյական հոլովը և սեռականը՝ մեջ կապի հետ նույնպես այս կիրառություններում նույնանիշներ են, սակայն ունեն կիրառական որոշ տարբերություններ. այն է՝ երբ տեղ ցույց տվող տվյալ բառի ներգոյականը ժամանակակից հայերենում չի գործածվում կամ հազվադեպ է հանդիպում, նրա փոխարեն գործածվում է սեռականը՝ մեջ կապի հետ։ Իհարկե, երբեմն այս երկու ձևերը հավասարապես գործածվում են, և մեկը կարելի է փոխարինել մյուսով. այսպես՝ Ճանապարհը... վեր է ձգվում անվերջ՝ խորհրդավոր ու մութ, Ու կորչում է հեռու երկնքի մեջ կապույտ (ԵՉ, ԸԵ, 24) → ...Ու կորչում է հեռու երկնքում կապույտ։ Մեր սիրելի Մարին մի որդի ուներ, որ սպանվեց այս դիվական պատերազմի մեջ (Իս., 3, 208) → ...Որ սպանվեց այս դիվական պատերազմում: Ճարտարապետը աշխատում էր Անիի մեջ և շրջակայքում (Իս., 3, 377) → ...Աշխատում էր Անիում: Ինչպես երևում է նաև բերված օրինակներից, եթե տվյալ բառի ներգոյական հոլովաձևը գործածական է, ապա այս կառուցվածքներում ավելի օրինաչափական ու հանձնարարելի է վերջինիս կիրառությունը։ Վերոբերյալ նույնանիշների սխեման հետևյալն է.

Բ + Գներգ. հ. → Բ + (Գսեռ. հ. + մեջ) → Բ + Գհայց. հ. (հնացած)

Մանրություն.— Ներգոյական և հայցական հոլովների այսպիսի համանիշ կիրառության հանդիպում ենք նաև այն ժամանակ, երբ բաղադրյալ ստորոգյալի ստորոգելիական վերադիրը ցույց է տալիս ենթակայի գտնվելու տեղը. օրինակ՝ երբ Փարիզ էի, մի քանի ընկերներից հրավեր ստացա... (Իս., 31 264) → երբ Փարիզում էի...: Ճիշտ է, սարերն իրենց տեղն էին, բայց նրանց անտառները չկային (ՀԹ, 2, 354) → Ճիշտ է, սարերն իրենց տեղում էին...: Մեծ աղջիկը՝ Պերճանուշը, կարծեմ Բաքու էր (Իս., 31 287) → ...կարծեմ Բաքվում էր: Այս կառուցվածքներում ևս հայցական հոլովի կիրառությունը արդեն հնացած է և ժամանակակից գրականության մեջ գրեթե չի հանդիպում։

Երբ տեղի պարագան ցույց է տալիս այն տեղը, որտեղ, որի մեջ կատարվում է գործողությունը, այն, ինչպես ասվեց, հիմնականում դրվում է տեղ ցույց տվող բառի ներգոյական հոլովով

կամ սեռականով՝ մեջ կապի հետ։ Սակայն երբեմն այդ նույն իմաստով գործածվում է տրական հոլովը. այսպես՝

Սահակ Պարթևը այդ տան մեջ օտար չէ (Ր, 7, 87)։	Սահակ Պարթևը այդ տանը օտար չէ։
Լսում էինք, որ նա «Նոր դար»-ի խմբագրատան մեջ սրբագրիչ է (Իս., 3, 385)։	Լսում էինք, որ նա «Նոր դար»-ի խմբագրատանը սրբագրիչ է։
Օտար երկնքի կամարների տակ երազիս մեջ (երազումս) տեսա մի չքնաղ աղջիկ։	Օտար երկնքի կամարների տակ երազիս տեսա մի չքնաղ աղջիկ (ՎՏ, 39)։
Ահմեդը ուղտերը քաշեց աղբյուրի գուռերի վրա... հետո երկար ու մեկ փռվեց ստվերի հովում:	Ահմեդը ուղտերը քաշեց աղբյուրի գուռերի վրա... հետո երկար ու մեկ փռվեց ստվերի հովին (Իս., 347)։
Հիմա նրա և Քյոռօղլու կերպարները նույնացան իմ աչքում:	Հիմա նրա և Քյոռօղլու կերպարները նույնացան իմ աչքին (Իս., 357)։
Բլրի ստորոտում մի տուն կա, մի հարկանի, սպիտակացրած պատերով...	Բլրի ստորոտին մի տուն կա, մի հարկանի, սպիտակացրած պատերով և կանաչաթիթեղ տանիքով (ԳՄ, ԵՍ, 108)։
Երեք տարուց հետո նույն քաղաքում վախճանվեցավ Սանդուխտը, որի մարմինը հայրը՝ Վարդանը, բերեց Հայաստան և թաղեց Թիլ ավանի հայրապետական տան տոհմային գերեզմանատան մեջ (Ր, 7, 88)։	...Բերեց Հայաստան և թաղեց Թիլ ավանի հայրապետական տան տոհմային գերեզմանատանը:

Տրական հոլովը ևս այս իմաստով գործածվում է հիմնականում այն դեպքերում, երբ տեղ ցույց տվող բառը ներգոյական հոլովաձև չունի կամ այդ ձևը հազվադեպ է հանդիպում (տե՛ս օրինակները)։

Այս տարածական հարաբերությունն արտահայտող համանիշ բառակապակցությունների կամ նախադասությունների սխեման է՝

Բ+(Գսեռ. հ.+մեջ) → Բ+Գներգ. հ. → Բ+Գտր. հ.

Հաճախ ներգոյական հոլովին համանիշ հանդես է գալիս տակ կապը, որով ավելի ճշգրտվում է տարածական հարաբերությունը։ Համեմատի՛ր ես ապրեցի երկար ժամանակ իմ հայրենի օջախի տակ (Իս., 3, 187) → ես ապրեցի երկար ժամանակ իմ հայրենի օջախում:

4. Երբ տեղի պարագան ցույց է տալիս այն տեղը, որին հասնում, մինչև որը ձգվում է նկարագրված երևույթը կամ գործողությունը, այն դրվում է կա՛մ այդ տեղը ցույց տվող բառի տրական հոլովով (ինչպես հայտնի է, տրական հոլովի հիմնական նշանակությունը հանգումն է), կամ հայցական հոլովով՝ մինչև կապի հետ։ Առաջին դեպքում ընդգծվում է հանգման գաղափարը, երկրորդ դեպքում՝ տեղի գաղափարը սահմանափակման երանգով։ Բերենք օրինակներ.

Բայց խորտակվել էր այն կրապատը, որ առաջ հասնում էր մինչև լերկ ժայռի կեսը (ՍԽ, ԿՇ, 10)։	Բայց խորտակվել էր այն կրապատը, որ առաջ հասնում էր լերկ ժայռի կեսին:
Ծաղիկների լայն ժապավենը, հասնելով մինչև հյուրանոց, պտույտ էր գալիս նրա շուրջը, ապա լայնանում...	Ծաղիկների լայն ժապավենը, հասնելով հյուրանոցին, պտույտ էր գալիս նրա շուրջը, ապա լայնանում... (ԳՍԹ, 2, 394)։
Նրա թեթև, սպիտակ ամառային մետաքսյա կապայի փեշերը հասնում են մինչև կանաչագույն պարսկական քոշերի կրունկները (Շ, 4, 87)։	Նրա... մետաքսյա կապայի փեշերը հասնում են կանաչագույն պարսկական քոշերի կրունկներին:

Ահա այդ հարաբերության համանիշ ձևերի կառուցվածքային պատկերը.

Բ + (մինչև + Գհայց. հ.) → Բ + Գտր. հ.

Ծանություն.— Երբեմն մինչև կապի հետ դնում են ոչ թե հայցական հոլով, այլ տրական, այսպես՝ Վիթխարի ծառերը հասնում էին մինչև բարձր ժայռերի կատարին (Իս., 3, 282). մի բան, որ առաջացել է այս երկու համանիշ ձևերի փոխազդեցությունից և հանձնարարելի չէ։

5. Երբ տեղի պարագայի միջոցով նշվում է այն տեղը, որին հանդում է շարժում ցույց տվող բայով արտահայտված գործողությունը, այն դրվում է՝ ա) տրական հոլովով. օրինակ՝ Բայց դեռ աղջիկ կուզես չքնաղ, անպարտելի փահլևան, Արի գնանք կապույտ բերդի թագավորի աղջկան (ՀԹ, 2, 131)։ բ) Տեղ ցույց տվող բառի սեռական հոլովով՝ մոտ կապի հետ. օրինակ՝ Նրանք հասան Արտաշատ քաղաքի կիսափուլ պարիսպների մոտ (Ր, 7, 439)։ Այս դեպքում ընդգծվում է որևէ առարկայի մոտ լինելու գաղափարը։

Ահա այս համանիշ շարքի պատկերը։

Երբ հասան վրաններին, առաջին ձիավորը շարունակեց ճանապարհը (ԱԲ, 190)։	Երբ հասան վրանների մոտ, առաջին ձիավորը շարունակեց ճանապարհը։
Նրանք հասան Արտաշատ քաղաքի կիսափուլ պարիսպներին:	Նրանք հասան Արտաշատ քաղաքի կիսափուլ պարիսպների մոտ (Ր, 7, 439)։
Էջմիածնում հյուր էի Կոմիտասին:	Էջմիածնում հյուր էի Կոմիտասի մոտ (Իս., 3, 371)։

Տրական հոլովի փոխարեն կարող են գործածվել նաև հայցական հոլովը՝ դեպի կապի հետ և սեռական հոլովը՝ կողմը կապական

բառի հետ։ Այս դեպքում ցույց է տրվում այն տեղը, դեպի որը ուղղված է գործողությունը. օրինակ՝ Երբ զարմացած հարցմունք արի ծանոթ գեղականից, նախ չուզեց ասի, ապա մատը դիմացի տունն ուղղեց և ասաց... → Մատը դեպի դիմացի տունն ուղղեց → Մատը դիմացի տանն ուղղեց → Մատը դիմացի տան կողմն ուղղեց։

Ինչպես երևում է բերված օրինակներից, հայցական հոլովի կիրառությունը այս տեղային հարաբերությունը ցույց տալու համար հանձնարարելի չէ, իսկ մնացած ձևերը հավասարապես գործածվում են։ Հատկապես շատ են հանդիպում դեպի և կողմը կապերով պարագաները։ Բերենք ևս մեկ-երկու օրինակ՝ Քիչ հետո նա նորից շրջվեց դեպի Զաբին և դժգոհ նայեց նրան (ԳՍԹ, 1, 28) → Քիչ հետո նա նորից շրջվեց Զաբու կողմ։ Տիգրանը լայն ճակատը սրբեց ու երազկոտ նայեց ծովի կողմը (ԳՍԹ, 2, 389) → Նայեց դեպի ծովը → Նայեց ծովին:... Երեսը շուռ տալով պատին (Շ, 4, 199) → Երեսը շուռ տալով դեպի պատը → Երեսը շուռ տալով պատի կողմը։ Բոլորի աչքերն ուղղված էին սեղանի շուրջ նստած չինովնիկների կողմը (ԱԲ, 208) → Բոլորի աչքերն ուղղված էին դեպի... չինովնիկները → ուղղված էին չինովնիկներին:

Ահա այս համանիշ շարքերի պատկերը՝

Բ + Գտր. հ. → Բ + (Գսեռ. հ. + մոտ)
Բ + Գտր. հ. → Բ + (Գսեռ. հ. + կողմը) → Բ + (դեպի + Գհայց. հ.)

6. Երբ պարագան ցույց է տալիս այն տեղը, դեպի որը ուղղվում է ենթակայի՝ շարժում ցույց տվող գործողությունը, այն սովորաբար դրվում է տեղ ցույց տվող գոյականի հայցական հոլովով։ Երբեմն ուղևորման իմաստային հարաբերությունն ավելի ընդգծելու համար հայցական հոլովի հետ գործածվում է նաև դեպի կապը։ Այս երկու ձևերը հանդես են գալիս որպես շարահյուսական համանիշներ այն դեպքում, երբ նախադասության բայ-ստորոգյալը ցույց է տալիս սկսված, բայց չավարտված գործողություն։ Օրինակ՝ Ես գնում եմ տուն → Ես գնում եմ դեպի տուն: Ուղևորվում եմ Մոսկվա → Ուղևորվում եմ դեպի Մոսկվա և այլն։

Դեպի որևէ վայր ուղևորվելու գաղափարը ավելի ևս ընդգծվում

է, երբ տեղ ցույց տվող բառը դրվում է սեռական հոլովով՝ ուղղությամբ կապական բառի հետ («Ես գնում եմ տան ուղղությամբ»։ Դեպի և ուղղությամբ կապերը որպես համանիշ կարող են հանդես գալ շարժում ցույց տվող բոլոր բայերի մոտ։ Այդպես չէ, սակայն, հայցական հոլովը, քանի որ կատարված-ավարտված գործողություն ցույց տվող բայերի մոտ հայցական հոլովը արտահայտում է հանգման իմաստ (Գնացի Մոսկվա)։ Այնինչ վերոհիշյալ կապերով արտահայտված տեղի պարագաները բոլոր դեպքերում ցույց են տալիս միայն գործողության կատարման ուղղությունը։ Այս դեպքում տվյալ տեղին հասնելու-հանգելու գաղափարը բացակայում է (համեմատի՛ր Ես գնացի դեպի Մոսկվա, Մոսկվայի ուղղությամբ)։

Գրականության մեջ (հատկապես XIX դարի վերջերի և XX դարի սկզբների) ուղևորման հայցականի փոխարեն հանդիպում ենք նաև ներգոյական հոլովի կիրառության. մի ձև, որ անհարթ է և այժմ ոչ հանձնարարելի։ Օրինակ՝ Այս առավոտ դեռ լույսը չծագած, երկու անձինք մուտք գործեցին Ողական ամրոցում (Ր, 7, 25)։ Ցած թողեց թարթիչները, հեռացավ սենյակի մի անկյունում և այնտեղ պառկեց (Ն. տ., 31)։ ...Քրիստոնեությունը մուտք գործեց Հայաստանում (Ր, 7, 176)։ Այս նախադասությունների համանիշ և ճիշտ ձևերն են՝ ... Երկու անձինք մուտք գործեցին Ողական ամրոց։ ...Հեռացավ սենյակի մի անկյունը։ ...Քրիստոնեությունը մուտք գործեց Հայաստան։

Երբեմն ուղևորման հայցականի փոխարեն կարող են գործածվել նաև վրա, մեջ կապերով տեղի պարագաներ՝ կապված գործողություն ցույց տվող բայի բայիմաստի հետ։ Օրինակ՝ բարձրանալ սարը, երկինք, բայց նաև՝ բարձրանալ ծառ → ծառի վրա, բարձրանալ նավը → նավի վրա։ Մտնել տուն, դպրոց, լսարան, սակայն նաև՝ մտնել ինֆնաթիոր → ինֆնաթիոի մեջ։

Ահա այս համանիշների սխեման՝

Բ + (դեպի + Գհայց. հ.) → Բ + (Գսեռ. հ. + ուղղությամբ) → Բ + Գհայց. հ. → Բ + Գներգ. հ. (հանձնարարելի չէ), երբեմն նաև՝ Բ + (Գսեռ. հ. + վրա (մեջ)

7. Գործողության՝ որևէ բանի միջոցով, որևէ տեղով կատարվելու տեղային հարաբերությունը դրսևորվում է բացառական կամ գործիական հոլովներով դրված տեղի պարագայով, երբեմն՝ նաև սեռական հոլովի և համապատասխանաբար մեջ, տակ, մոտ կապական բառերի բացառական կամ գործիական հոլովներով ձևավորված պարագայով։ Ահա այդ համանիշների պատկերը։

Սամվելի ասպախումբը մեծ դժվարությամբ կարողանում էր անցնել այդ տեղերից (Ր, 7, 260)։	Սամվելի ասպախումբը մեծ դժվարությամբ կարողանում էր անցնել այդ տեղերով:
Գնում էին երկու եղբայրները ուռենիների ստվերի տակից (ԳՄ, ԵՍ, 414)։	Գնում էին երկու եղբայրները ուռենիների ստվերի տակով:
Մի անցորդ անցավ քաղաքից այս Ու գնաց ու չեկավ նա ետ (ԵՉ, ԸԵ, 63)։	Մի անցորդ անցավ քաղաքով այս...
Ժայռը երկու մասի էր բաժանված, մեջտեղից մի նեղ կածան էր գնում։	Ժայռը երկու մասի էր բաժանված, մեջտեղով մի նեղ կածան էր գնում (ՎԱ, ԼՀ, 51)։
Երբեմն անցնում էին նրանց մոտից ծառի կոճղեր, գերանի կտորներ։	Երբեմն անցնում էին նրանց մոտով ծառի կոճղեր, գերանի կտորներ (Ր, 7, 18)։
Ինչո՞ւ, մի՞թե պատճառը Լիզայի աչքերն էին, որ ծառերի ճյուղերի արանքից նայում էին ինձ վրա։	Ինչո՞ւ, մի՞թե պատճառը Լիզայի աչքերն էին, որ ծառերի ճյուղերի արանքով նայում էին ինձ վրա (Շ, 4, 155)։

Ինչպես երևում է բերված օրինակներից, առաջին դեպքում (բացառական հոլով) ընդգծվում է անցատման գաղափարը, երկրորդ դեպքում՝ որևէ տեղի միջով կատարվելու գաղափարը։

Սեռական հոլովով և միջով կապական բառով արտահայտված տեղի պարագան հանդես է գալիս միայն որպես գործիական հոլովի համանիշ։ Այս դեպքում գործողության՝ որևէ տեղի միջով կատարվելու գաղափարը ավելի է ընդգծվում։ Օրինակ՝

Մենք անցնում ենք հայկական ավերված գյուղերով *(ԳՄ, ԵՍ, 479)։*	*Մենք անցնում ենք հայկական ավերված* գյուղերի միջով:
Ծանոթ սարսուռը անցնում է մարմնով:	*Ծանոթ սարսուռը անցնում է* մարմնիս միջով *(ԲՀ, ՍՉ, 78)։*
Ճամփան այդ բացատով *անցնում էր ու նորից մըտնում անտառ։*	*Ճամփան այդ* բացատի միջով *անցնում էր ու նորից մտնում անտառ (ՎԱ, ԼՀ, 44)։*
Շուկայով անցնելիս՝ *տեսնում ենք, որ մարդիկ խանութները փակում են (ՍՉ, ԵԺ, 3, 151)։*	Շուկայի միջով անցնելիս՝ *տեսնում ենք...*
Անիից էի վերադառնում և անցնում էի *հայկական մի* գյուղով:	*Անիից էի վերադառնում և* անցնում *էի հայկական մի* գյուղի միջով *(ՎՓ, ԵԺ, 2, 524)։*

Գործիական հոլովին համանիշ հանդես է գալիս նաև վրայով *կապական բառով ձևավորված տեղի պարագա, որով ընդգծվում է*

գործողության՝ որևէ տեղի մակերեսի վրայով կատարվելու հանգամանքը։ Այսպես՝

...*Մեղմ հովը* բերում էր իր թևերի վրայով *ուրախության ձայներ (Իս., 3, 189)։*	*Մեղմ հովը* բերում էր իր թևերով *ուրախության ձայներ։*
Նրանք անցնում էին *խորին, քարեղեն* հատակի վրայով *(Ր, 7, 170)։*	*Նրանք* անցնում էին *խորին, քարեղեն* հատակով։

Անցնել *բայի մոտ տեղ ցույց տվող գոյականը հաճախ դրվում է հայցական հոլովով՝ քերականորեն վերացարկվելով որպես ուղիղ խնդիր և ընկալվելով որպես գործողության անմիջական օբյեկտ. օրինակ՝* Անցնում ենք ինչ-որ անտառաշերտ, անցնում ենք ինչ-որ ճնճաղ արտ, *մտնում հերկը (ԲՀ, ՍՉ, 213)։ Նույն ձևով՝* անցնել գետը, անցնել փողոցը, ճանապարհը *և այլն։ Այդ նույն հարաբերությունը արտահայտվում է նաև բացառական հոլովով, սակայն այս դեպքում այն կորցնում է գործողության անմիջական օբյեկտ դիտվելու իր հատկությունը և վեր է ածվում զուտ տեղային հարաբերության. այսպես՝* Անցնում ենք ինչ-որ անտառաշերտից, ճնճաղ արտից, անցնել գետից, փողոցից *և այլն։ Հայցական հոլովի փոխարեն կարող է գործածվել նաև գործիական հոլովը, որով ևս ընդգծվում է զուտ տեղային հարաբերությունը։ Օրինակ՝ Մյուս օրը, երբ Համբոն* անցնում էր լեռները՝ *հեռվում երևաց իրենց գյուղը (ՀԹ, 1, 329) → Մյուս օրը, երբ Համբոն* անցնում էր լեռներով...։

Երբեմն գործողության կատարման հետ կապված տեղային նույնատիպ հարաբերություն է ցույց տրվում նաև տրական և բացառական հոլովների միջոցով, որոնց միջև լինում է միայն այն նուրբ տարբերությունը, որ առաջին դեպքում ընդգծվում է հանդման գաղափարը, երկրորդ դեպքում՝ անցատման։

Այսպես՝

Առանձնասենյակի պատերից կախված *էին ընտիր խաղողների գեղեցիկ և հյութալի ողկույզների գունավառ նկարներ (ՔԹՀ, 46)։*	*Առանձնասենյակի* պատերին կախված էին *...գունավառ նկարներ։*
Ու երգն է զնգում սարերի լանջից, Զորերի գրկից... *(ՎԴԹ, 4)։*	*Ու երգն է զնգում* սարերի լանջին, Զորերի գրկին...

Վերջին դեպքում որպես համանիշ կարող է հանդես գալ նաև ներգոյական հոլովը (սարերի լանջում, ձորերի գրկում...):

Եվ վերջապես՝ հազվադեպ տարածական նույնատեսակ հարաբերություն են արտահայտում նաև հայցական և տրական հոլովները։ Այսպես՝

Եկեղեցու խաչը... հանկարծ ընկավ ընկուզենու վրա և խրվեց գետին *(ԱԲ, 164)։*	*...խրվեց* գետնին → գետնի մեջ:
Հավաքում էր խիճերը, քարի կտորները, լցնում էր քթոցի մեջ *և տանում թափում* արտի եզերքին *(Իս., 3, 349)։*	*...Եվ տանում թափում* արտի եզերքին:
Նա երբեմն գնում էր շուկա և թևի տակ *մի բան դրած վերադառնում տուն։*	*Նա երբեմն գնում էր շուկա և* թևի տակին *մի բան դրած վերադառնում տուն (Իս., 3, 185)։*
...Մորն ու աղջկան հրավիրեց իրենց սայլը *նստելու։*	*Միտյան... մորն ու աղջկան հրավիրեց իրենց* սայլին *նստելու (ՀՔ, ՄՏՁ, 1, 459)։*

Երբ ցույց է տրվում այն տեղը, որտեղից սկսվում է մի որևէ գործողություն, կամ սկիզբ է առնում որևէ երևույթ, տեղի պարագան սովորաբար դրվում է բացառական հոլովով։ Միայն որոշ դեպքերում, երբ խոսողը անհրաժեշտություն է զգում ընդգծել որևէ երանգ, օգտագործում է այլ համանիշ ձևեր։ Այսպես՝ երբ անհրաժեշտ է լինում ընդգծել գործողության՝ որևէ բանի մակերեսից սկսվելու գաղափարը, բացառական հոլովի փոխարեն կարող է գործածվել սեռականը վրա բառի դարձյալ բացառական հոլովի հետ. օրինակ՝ ...Քարե սեղանից ուտելիքն անհետացավ (ԱՍեկ., ԳՀՏ, 249) → Քարե սեղանի վրայից ուտելիքն անհետացավ։ Քամալյանը վեր թռավ աթոռից և սեղանից վերցնելով մի ծխախոտ, վառեց (Շ, 4, 188) → Սեղանի վրայից վերցնելով մի ծխախոտ, վառեց։

Իսկ երբ անհրաժեշտ է լինում ընդգծել որևէ բանի միջից սկսելու, սկիզբ առնելու գաղափարը, կարող է գործածվել տեղ ցույց տվող բառի սեռականը՝ մեջ-ի բացառական հոլովի հետ։ Օրինակ՝ Ես չէի կարողանում խավարի միջից մի ելք գտնել (Շ, 4, 269) → Ես չէի կարողանում խավարից մի ելք գտնել։

Երբ տեղի պարագան ցույց է տալիս այն տեղը, որի տակ կատարվում է գործողությունը, դրվում է տեղ ցույց տվող բառի սեռական հոլովով՝ տակ կապի հետ։ Այս ձևը տարածված է և՛ գրավոր, և՛ բանավոր խոսքում։ Սակայն երբեմն, խոսքին հանդիսավորություն տալու համար, հատկապես հրապարակախոսության մեջ, տակ կապի փոխարեն գործածվում է նրան համանիշ ներքո կապը՝ ստեղծելով վերը նկարագրած տեղի պարագային համանիշ ձև, որը տարբերվում է առաջինից ոճական և կիրառական ընդգրկմամբ։ Օրինակ՝ Սյունազարդ դահլիճի կամարների ներքո հնչեց կոմիտասյան հոգեպարար մեղեդին (ԵԵ)։ Մթնոլորտի մշուշապատ շղարշի ներքո, երկրակեղևի քարակուռ պատյանի ներքո հարատևում է... մի հակոտնյա, վիթխարի պայքար («Գիտություն և տեխնիկա»)։

Շարժում, տարածում ցույց տվող մի շարք բայերի մոտ գործողության կատարման ամբողջական ընդգրկում ցույց տվող տեղի պարագաները կարող են արտահայտվել երկու համանիշ ձևերով՝

ա) տեղ ցույց տվող բառի գործիական հոլովով՝ մեկ *բառի հետ (վերջինս այստեղ ունի կապական արժեք և ցույց է տալիս տվյալ տեղի, առարկայի ամբողջական ընդգրկում), բ) նույն բառի ներգոյական հոլովով՝* ամբողջ *դերանվան հետ։ Օրինակ՝ Լուրը արագորեն տարածվեց* երկրով մեկ → *Լուրը արագորեն տարածվեց* ամբողջ երկրում: *Նրա ձայնը հնչեց* դպրոցով մեկ → *Նրա ձայնը հնչեց* ամբողջ դպրոցում:

Տարածական նույնատիպ հարաբերություն են արտահայտում և համանիշ են հետևյալ կառուցվածքն ունեցող տեղի պարագաները՝ Դուռս բացվում էր դեպի նեղ և երկայնաձիգ միջանցք *(Իս., 3, 189)* → *Դուռս բացվում էր* նեղ և երկայնաձիգ միջանցքի վրա:

Համանիշ կիրառություն ունեն նաև դեմ *և* առաջ (առջև) *կապերով ձևավորված տեղի պարագաները, ինչպես՝* Իմ առաջ *կանգնած էր մի հսկա մարդ* → Իմ դեմ *կանգնած էր մի հսկա մարդ։* Սարի *դեմ փռված էր մի գեղեցիկ հարթավայր* → Սարի առաջ *փռված էր մի գեղեցիկ հարթավայր։*

Ահա այս զույգ համանիշ կառուցվածքների պատկերը.

Բ + Գբաց. հ. → Բ + Գգործ. հ., Բ + Գգործ. հ. → Բ + (Գսեռ. հ. + միջով), Բ + Գգործ. հ. → Բ + (Գսեռ. հ. + վրայով), Բ + Գբաց. հ. → Բ + Գտր. հ. → Բ + Գներգ. հ., Բ + Գհայց. հ. → Բ + Գտր. հ., Բ + Գբաց. հ. → Բ + (Գսեռ. հ. + վրայից), Բ + Գբաց. հ. → Բ + (Գսեռ. հ. + միջից), Բ + (Գգործ. հ. + մեկ) → Բ + (ամբողջ + Գներգ. հ.), Բ + (դեպի + Գհայց. հ.) → Բ + (Գսեռ. հ. + վրա), (Գսեռ. հ. + առաջ) + Բ → (Գսեռ. հ. + դեմ) + Բ

ԶԵՎԻ ՊԱՐԱԳԱՅԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄԸ ՀԱՄԱՆԻՇ ԶԵՎԵՐԻ ՕԳՆՈՒԹՅԱՄԲ

Հայտնի է, որ ձևի պարագան ցույց է տալիս գործողության կատարման ձևը, որակը, գործողության հատկանիշը և այլն։ Վերջիններս բնութագրվում են տարբեր միջոցներով։ Մի դեպքում ձևի պարագայի միջոցով տրվում է այն վիճակը, որի մեջ գտնվում է ենթական գործողությունը կատարելիս, մի այլ դեպքում գործողության կատարման կամ եղելության դրսևորման ձևը ցույց է

տրվում համեմատության միջոցով և այլն։ Դրա հետ կապված բազմազան են նաև ձևի պարագայի դրսևորման քերականական միջոցները։ Օրինակ՝ Լորիների տակ մտորում եմ լուռ, Հեռուն մի ջութակ հեծում է տխուր (Իս., 1, 233)։ Գյուղացիք զարմացած նայեցին քարտեզին (ԱԲ, 695)։ Բերված օրինակներից առաջինում ձևի պարագաների միջոցով տրվել է գործողության հատկանիշը, որակը։ Դրանք արտահայտվել են մակբայների միջոցով (լուռ, տխուր)։ Երկրորդ օրինակում գործողության ձևը տրվել է ենթակայի վիճակը տվյալ գործողությունը կատարելիս նկարագրելու միջոցով. մի բան, որ արտահայտվել է հարակատար դերբայով (զարմացած)։ Երբեմն տարբեր միջոցներ են գործածվում նաև գործողության կատարման միևնույն ձևը դրսևորելու համար։ Այս դեպքում յուրաքանչյուր քերականական միջոցը միայն որոշ իմաստային կամ ոճական նրբերանգ է տալիս ձևի պարագային։ Թվարկենք տարբեր իմաստային հարաբերություններ ցույց տվող ձևի պարագաների արտահայտման համանիշ քերականական ձևերը առանձին-առանձին։

1. Երբ գոյականով արտահայտված ձևի պարագայի միջոցով ցույց է տրվում այն դրությունը, վիճակը, որի մեջ գտնվում է ենթական գործողությունը կատարելիս, այն դրվում է՝ 1) գործիական հոլովով, 2) մեջ կապի հետ սեռական հոլովով, 3) ներգոյական հոլովով։ Այսպես՝

Այդ օրը ես անցկացրի հոգու ուրախ տրամադրության մեջ (Շ, 4, 155)։	Այդ օրը ես անցկացրի հոգու ուրախ տրամադրությամբ։
Երկար ժամանակ նա անշարժ դրության մեջ նայում էր քրտնած ապակիների միջով (Շ, 4, 195)։	Երկար ժամանակ նա աշշարժ դրությամբ նայում էր քրտնած ապակիների միջով։
Սմբատը լուռ, անշարժ կանգնած էր միևնույն դիրքում, միշտ ծրարը ձեռքում բռնած (Շ, 4, 18)։	Սմբատը լուռ, անշարժ կանգնած էր միևնույն դիրքով, միշտ ծրարը ձեռքում բռնած։

Նվաղարանները հնչում էին, հարձերը պարում էին... և ամբողջ գիշերներ լուսանում էին *ուրախ, անհոգ,, աղմկալի* խրախության մեջ *(Ր, 7, 495)։ → ...Ամբողջ գիշերներ* լուսանում էին *ուրախ, անհոգ, աղմկալի* խրախությամբ: *Եվ երբ հեռվից ետ նայեցի, տեսա թշվառ ծերունուն միշտ* նույն դիրքի մեջ, *նստած իր ավերված արտի կողքին, գլուխը ձեռքերին և ալեզարդ մազերը տեղացող անձրևի տակ (ՎՓ, ԵԺ, 2, 52) → Եվ երբ հեռվից ետ նայեցի, տեսա թշվառ ծերունուն միշտ* նույն դիրքով, *նստած իր ավերված արտի կողքին...։*

Ներգոյական հոլովի, ինչպես նաև մեջ կապով սեռականի գործածման դեպքում ենթակայի՝ տվյալ դրության մեջ լինելը հատկապես շեշտվում է։ Բերենք մեկ օրինակ ևս։

Գեղեցիկ էր *կախարդական կղզին՝ յուր* վայրենի շքնաղության մեջ *(Ր, 7, 495)։*	Գեղեցիկ *էր կախարդական կղզին յուր վայրենի* շքնաղությամբ:

Այստեղ արդեն գործիական հոլով գործածելիս ձևի պարագան ստանում է միջոցի խնդրի իմաստային երանգ, այսինքն՝ այս ձևերը դադարում են համանիշ լինելուց։

Երբ ձևի պարագան ցույց է տալիս այն դրությունը, հանգամանքը, որի մեջ կատարվում է գործողությունը, կարող է արտահայտվել գոյականի գործիական հոլովով կամ տակ *բառի հետ սեռական հոլովով։ Այսպես՝* Լուցկու լույսով *երկու գիշատիչները՝ Ավագյանն ու կատուն, նայեցին իրար (ՆՀՀ, 18) →* Լուցկու լույսի տակ *երկու գիշատիչները՝ Ավագյանն ու կատուն, նայեցին իրար։*

Գործիական հոլովով դրվելու դեպքում ձևի պարագան ունենում է միջոցի խնդրի իմաստային երանգ, այսինքն՝ ցույց է տալիս, որ տվյալ իրավիճակը միաժամանակ միջոց է հանդիսացել գործողության կատարման համար։

Երբ ձևի պարագան ցույց է տալիս այն դրությունը, իրավիճակը, որի մեջ, որի առկայության պայմաններում կատարվում է

գործողությունը, այն, ինչպես ասվեց, կարող է դրվել նաև սեռական հոլովով՝ տակ կապական բառի հետ։ Սակայն երբեմն, հատկապես հրապարակախոսության լեզվում, խոսքին հանդիսավորություն տալու նպատակով, տակ-ի փոխարեն գործածվում է ներfn կապը՝ ստեղծելով առաջինին համանիշ կառուցվածք. օրինակ՝ Քայլերգի հնչյունների տակ շարասյունները քայլեցին դեպի հրապարակ → Քայլերգի հնչյունների ներfn շարասյունները շարժվեցին դեպի հրապարակ։ Ես երկար ժամանակ գտնվում էի ներկայացման ազդեցության տակ → Գտնվում էի ներկայացման ազդեցության ներfn:

Ծանոթություն.— Հետաքրքրական է այն երևույթը, որ տակ և ներfn կապերով ձևավորված պարագան, նայած կապվող բառերի իմաստային առանձնահատկություններին, կարող է կատարել ձևի պարագայի, տեղի պարագայի և կամ պատճառի պարագայի պաշտոն։ Այսպես, «Մենք ապրում ենք ազատ երկնքի տակ → երկնքի ներfn»: Այստեղ երկնքի տակ, երկնքի ներfn տեղի պարագաներ են։ «Նա այդ կատարեց rոպեի ազդեցության տակ → rոպեի ազդեցության ներfn»: Այստեղ նույն կառուցվածքն ունեցող պարագաները ցույց են տալիս գործողության կատարման պատճառը, հետևաբար պատճառի պարագաներ են։ Իսկ վերևում բերված նախադասություններում հնչյունների տակ → հնչյունների ներfn, ազդեցության տակ → ազդեցության ներfn ձևի պարագաներ են։

Հաճախ գործողության կատարման, որևէ եղելության դրսևորման ձևը որոշվում է նրան հարակից այլ գործողություն նկարագրելու միջոցով։ Այս դեպքում ձևի պարագան կարող է լինել կա՛մ երկրորդական նախադասություն և կամ նրան համանիշ դերբայական դարձված։

Դերբայական դարձվածով արտահայտված ձևի պարագան կարող է ունենալ իրար համանիշ տարբեր քերականական կառուցվածքներ։ Շատ է տարածված հատկապես անորոշ դերբայի գործիական հոլովով ձևավորված ձևի պարագա դերբայական դարձվածը, որին որպես համանիշ երբեմն համապատասխանում է հարակատար դերբայով կազմված դերբայական դարձված։ Դերբայական դարձվածի մյուս անդամները կառուցվածքային փոփոխու-

թյան չեն ենթարկվում։ Օրինակ՝ Ոսկանի ձեռքից փախած՝ նա վայր է ընկել Բրնուտում (ՀԹ, 1, 330) → Ոսկանի ձեռքից փախչելով՝ նա վայր է ընկել Բրնուտում։ Աչքերը Հասոյին ուղղած՝ բարձրանում էին (ՎՓ, ԵԺ, 2, 342) → Աչքերը Հասոյին ուղղելով՝ բարձրանում էին։

Հարակատար դերբայով արտահայտված ձևի պարագան ցույց է տալիս հիմնականում այն վիճակը, գրությունը, որի մեջ գտնվում է ենթական գործողությունը կատարելիս։ Հարակատար դերբայով արտահայտված անդամի ձևի պարագա լինելը շեշտելու նպատակով երբեմն նրա հետ գործածվում է կերպով կապը։ Մի ձև, որն ունի գրքային բնույթ և ավելի գործածվում է գրավոր խոսքում. օրինակ՝

Նա շփոթված կերպով վեր թռավ, առաջ վազեց, աղաղակելով... (Ր, 7, 245)։	Նա շփոթված վեր թռավ, առաջ վազեց...

Երբ ձևի պարագան ցույց է տալիս մի հարակից գործողություն, եղելություն, որի չկատարվելու պայմաններում կատարվում է ենթակայի գործողությունը, այն դրվում է կա՛մ անորոշ դերբայի գործիական հոլովի ժխտական ձևով (չ ժխտական մասնիկով), կամ նույն դերբայի սեռական հոլովով՝ առանց կապի հետ։ Օրինակ՝

Լիզան, առանց հակառակելու նստեց դաշնամուրի մոտ (Շ, 4, 157)։	Լիզան, չհակառակելով, նստեց դաշնամուրի մոտ։
Մանեն վազում էր առանց ետ նայելու (ՆԴ, 3, 140)։	Մանեն վազում էր ետ չնայելով։

Երբ ձևի պարագան ցույց է տալիս որևէ գործողության կատարման կամ որևէ երևույթի, եղելության դրսևորման ձևը մեկ այլ նման գործողության, երևույթի, եղելության հետ համեմատելու

միջոցով, նրա դրսևորման համար կարող են գործածվել ինչպես *(երբեմն նաև* որպես), նման *և* պես *կապերը՝ համապատասխան կապի խնդրի հետ միասին։ Օրինակ.*

Երկնքից հրաշեկ արևը կրակ էր մաղում, և առավոտը կիզող էր, ինչպես միջօրեին: *(Իս., 3, 197)։*	*... Առավոտը կիզող էր* միջօրեի նման, միջօրեի պես:
Ազատությա՛ն Զանգ, դու վեհ ղողանջե՛ Կովկասյան վսեմ, վեհ բարձունքներից, Ինչպես մրրիկ *շաչե՛, շառաչե՛, Մինչև սիգապանծ ազատն Մասիս (Իս., 1, 41)։*	Որպես մրրիկ *շաչե, շառաչե* → ... Մրրիկի նման *շաչե, շառաչե* → Մրրիկի պես *շաչե, շառաչե։*
Գետը, ինչպես մի անարկու վիշապ, *գոռում էր, գոչում էր։*	*Գետը, մի* անարկու *վիշապի* նման, *գոռում էր, գոչում էր (Ր, 7, 18)* → *Մի անարկու* վիշապի պես:
Հակոբ աղան գունատվել էր, ինչպես իր ձեռքի կտավը:	*Հակոբ աղան գունատվել էր* իր ձեռքի կտավի պես *(ԳՄ, ԵՍ, 48)* → Իր ձեռքի կտավի նման:
Հրա՛շք աղջիկ, անհայտ երկրի մանուշակ, ...Դու իջնում ես կարող, որպես մանու խայթ, քնքուշ, որպես անդարձ բախտի հիշատակ *(ՎՏ, 37)։*	*...Դու իջնում ես կարող,* Ինչպես մանու խայթ, քնքուշ, ինչպես անդարձ բախտի *հիշատակ* → *Դու իջնում ես* մանու խայթի նման կարող և անդարձ բախտի նման քնքուշ → խայթի պես կարող, հիշատակի պես քնքուշ:

Այս երկու ձևերի տարբերությունը միայն ոճական է։ Առաջին դեպքում (ինչպես, որպես կապերի գործածության ժամանակ) խոսքը ավելի վերամբարձ, բանաստեղծական, որոշ չափով նաև գրքային է դառնում, երկրորդ և երրորդ դեպքերում (նման և պես կապերի գործածության ժամանակ) խոսքը առօրյա, խոսակցական, հասարակ է դառնում։ Այս ձևերը տարբեր են նաև համեմատության արտահայտման չափով. առաջինների գործածության դեպքում համեմատության գաղափարը առավել է շեշտվում։

Զևի պարագան կարող է միանալ լրացվող բառին նաև համեմատ կապով։ Այս դեպքում այն ունենում է հիմունքի որոշ իմաստային երանգ։ Կապակցության այս ձևը ևս հանդիպում է հիմնականում XIX դարի վերջի և XX դարի սկզբների գրականության մեջ։ Այժմ դրա փոխարեն գործածվում են առավելապես նման և պես կապերը. օրինակ՝ Գլխավոր գործակատար Գրիգորը, սովորականին համեմատ, եկել էր մագազինի բանալիները աղա Մակարից վերցնելու (Շ, 4, 42) → սովորականի նման → սովորականի պես:

Երբեմն համեմատություն ցույց տվող ձևի պարագան միանում է բայ-ստորոգյալին իբրև կապի միջոցով. օրինակ՝ խաղում էր մոր ոտքերի տակ իբրև մանուկ, մոր աչքերի տակ դասերը սերտում իբրև աշակերտ և արհեստը բանում իբրև պատանի (Իս., 208)։ Այս դեպքում այն մոտենում է մասնական բացահայտիչին և համանիշ է լինելով կամ հանդիսանալով դերբայական ձևերով ու համապատասխան գոյականով ձևավորված ձևի պարագային. այսպես՝ լինելով մանուկ, խաղում էր մոր ոտքերի տակ, լինելով աշակերտ՝ մոր աչքերի տակ դասեր էր սերտում և լինելով պատանի՝ արհեստը բանում։ Մյուս կողմից այն համանիշ է նման կապով ձևավորված ձևի պարագային. օրինակ՝ խաղում էր մոր ոտքերի տակ մանկան նման, մոր աչքերի տակ դասերը սերտում աշակերտի նման և արհեստը բանում պատանու նման:

Գեղարվեստական գրականության մեջ խոսքին որոշակի ոճավորում, բազմազանություն տալու համար երբեմն (հազվադեպ) գործածվում են նաև զերդ, և հանց հնացած կապերը, որոնք ևս համանիշ են որպես, նման, պես կապերին և, վերջիններիս նը-

ման, ձևավորում են համեմատության իմաստային հարաբերություն արտահայտող ձևի պարագաներ. օրինակ՝ Մին մանկան պես լաց է լինում, Մին ոռնում է գերդ գազան (ՀԹ)։ Գերդ գազան ձևի պարագան համանիշ է գազանի նման, գազանի պես, որպես գազան ավելի սովորական ու տարածված ձևերին։

Հաճախ ներգործական սեռի բայով արտահայտված ստորոգյալի մոտ ձևի պարագան ցույց է տալիս ոչ թե գործողության կատարման ձևը կամ ենթակայի՝ գործողությունը կատարելիս որևէ դրության, վիճակի մեջ լինելը, այլ գործողության օբյեկտի՝ որևէ դրության, վիճակի մեջ լինելը։ Այսպես՝ Ամեն անգամ, երբ մտքիս մեջ իրականացնում եմ նրան, միշտ տեսնում եմ այդ թաթին աշխատանքի վրա, բահը՝ ձեռին և քրտինքը՝ ճակատից ծորուն (Իս., 3, 250)։ Այստեղ աշխատանքի վրա ձևի պարագան ցույց է տալիս գործողության օբյեկտի (թաթին) ինչ դրության մեջ լինելը։ Աշխատանքի վրա ձևի պարագային կարող է փոխարինել աշխատելիս ձևը, որը հանդիսանում է առաջինի շարահյուսական համանիշը։ Այս համանիշները տարբերվում են սովորական շարահյուսական համանիշներից նրանով, որ սահմանազատվում են իրարից նաև խոսքի մասային պատկանելությամբ. առաջին դեպքում գործ ունենք գոյականի հետ, երկրորդ դեպքում՝ զուգընթացական դերբայի հետ։ Այս առումով սրանք որոշ չափով մոտենում են բառային-ձևաբանական համանիշներին։

Բառային-ձևաբանական համանիշների հետ են առնչակցվում նաև այն համանիշ ձևի պարագաները, որոնք ցույց են տալիս գործողության հատկանիշը, կատարման ձևը և դրսևորվում են որակական ածականով կամ մակբայով, այդ նույն ածականով՝ կերպով կապի հետ և նույն ածականից որեն ածանցով բաղադրված մակբայով. օրինակ՝ Ուզում եմ մեկին քնքշորեն սիրել, ուզում եմ անուշ փայփայել մեկին (ՎՏ, 68) → Քնքուշ սիրել → քնքուշ կերպով սիրել։ Քո պայծառ գահից մեղմորեն իջիր (ՎՏ, 49) → մեղմ իջիր → մեղմ կերպով իջիր։ Նա արագ հեռացավ → արագորեն հեռացավ → արագ կերպով հեռացավ։

Նույն ձևով որպես համանիշներ կարող են հանդես գալ ածականներից —ություն ածանցով կերտված գոյականների գործիական

հոլովով, ածականով ու կերպով կապով և նույն ածականից —որեն ածանցով կերտված մակբայով դրսևորված ձևի պարագաները. օրինակ՝ Մի չլավացած վերք կար ծերունու սրտի մեջ, որին ես անզգուշությամբ դիպա (Իս., 3, 187) → ...որին ես անզգուշորեն դիպա → ...Որին ես անզգույշ կերպով դիպա։

Այսպիսով՝ վերևում թվարկված համանիշների շարքը կարելի է ավելացնել մեկ անդամով ևս՝ ֆնֆուշ սիրել → ֆնֆուշ կերպով սիրել → ֆնֆշությամբ սիրել, մեղմ իջնել → մեղմորեն իջնել → մեղմությամբ իջնել → մեղմորեն իջնել → մեղմ կերպով իջնել և այլն։ Համանիշների այս շարքի սխեման կլինի.

Ա + Բ → (Ա + կերպով) + Բ → Գ գործ. հ. + Բ → Մ + Բ

Երբեմն որպես ձևի պարագաներ հանդես են գալիս մոտ և հեռու տեղ ցույց տվող մակբայները՝ հաճախ կերպով կապական բառի հետ, ցույց տալով տվյալ գործողության դրսևորման աստիճանը։ Սակայն այս ձևերը անհարթ են և ոչ հանձնարարելի։ Գրական լեզվում որպես ձևի պարագա հանձնարարելի և ավելի գործածական են նույն բառերի բացառական հոլովաձևերը։ Այսպես՝ Եվ ահա մենք մի օր առանձին գտնվելով՝ ավելի մոտ կերպով ծանոթացանք միմյանց հետ (ՎՓ, ԵԺ, 1, 303) → Ավելի մոտ ծանոթացանք միմյանց հետ → Ավելի մոտից ծանոթացանք միմյանց հետ։ Ես նրան հեռու կերպով գիտեմ → հեռվից գիտեմ։

Ժողովրդական-խոսակցական լեզվում, երբեմն, գործողությունը կատարվելիս սուբյեկտի կամ օբյեկտի ինչ վիճակում լինելը ցույց տալու համար գործածվում են բայի անորոշ դերբայով արտահայտված ձևի պարագաներ։ Այս պաշտոնով հանդես են գալիս գերազանցապես ան— ժխտական նախածանցը կամ կիսա— բաղադրիչը ունեցող դերբայներ. ինչպես՝ Կիսահագնվել դուրս թռատնից (ՎԱ, ԼՀ, 236)։ Հագուստը թողեց կիսակարել: Դաշտերը մնացին անջրել:

Նշված ձևերից ան— ժխտական նախածանցով կազմվածները (մասամբ նաև կիսա— բաղադրիչով կազմվածները) կորցրել են իրենց բայական հատկանիշները և ձեռք են բերել մակբայական, մասամբ նաև ածականական արժեք (հմմտ. անգրել բուլթ, կտորը

անշափել կտրել): *Մի բան, որ կապված է* ան— *նախածանցի՝ ածական կամ մակբայ կերտելու հատկության հետ (հայտնի է, որ բայերի ժխտական ձևերը կազմվում են չ ժխտական մասնիկի միջոցով)։*

Գրական, ինչպես նաև ժողովրդական-խոսակցական լեզվում, վերը նկարագրված ձևերին նույնանիշ գործածվում և ավելի տարածված են համապատասխան հարակատար դերբայները, ըստ որում ան— *նախածանցի փոխարեն հանդես է գալիս չ ժխտական մասնիկը և կամ գործածվում է անորոշ դերբայի սեռական հոլովը՝* առանց *կապի հետ։ Այսպես՝* կիսահագնված *դուրս թռա տնից։ Հագուստը թողեց* կիսակարած: *Դաշտերը մնացին* չջրած (առանց ջրելու): *Կտորը* առանց չափելու *կտրեցի։*

ՊԱՏՃԱՌԱ-ՀԵՏԵՎԱՆՔԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԳՐԱԾԵՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՆՇ ՁԵՎԵՐԸ

Բնության երևույթների, առարկաների միջև եղած պատճառա-հետևանքային կապը նախադասության մեջ արտահայտվում է բայի և մի շարք պարագաների հարաբերությամբ։ Դրանք են պատճառի, հիմունքի, նպատակի, պայմանի, զիջման պարագաները։ Պատճառահետևանքային հարաբերություններ են դրսևորում նաև մի շարք ժամանակի պարագաներ։ Վերոհիշյալ պարագաների այդ ընդհանրությունը հիմք ընդունելով՝ Մ. Աբեղյանը սրանք միավորում է մեկ խմբի մեջ՝ անվանելով հիմունքի պարագաներ։ Ընդհանուր առմամբ դրսևորելով պատճառա-հետևանքային հարաբերություններ՝ հիշյալ պարագաները իրենց քերականական բնույթով որակապես տարբերվում են իրարից, ընդգծում են տվյալ հարաբերության որևէ կողմը։ Այսպես՝ պատճառի պարագան ցույց է տալիս տվյալ գործողության կամ երևույթի առաջացման պատճառը (ցրտից դողալ), *նպատակի պարագան ցույց է տալիս այն նպատակը, որի համար կատարվում է գործողությունը, պայմանի պարագան՝ այն պայմանը, որի առկայությամբ միայն կկատարվի գործողությունը և այլն։ Այս պարագաները ունեն այն առանձնահատկությունը, որ, ի*

տարբերություն մյուս պարագաների, չեն արտահայտվում մակբայներով, դրսևորվում են միայն գոյականների կամ գոյականաբար գործածված այլ խոսքի մասերի, մեծ մասամբ անորոշ դերբայի տարբեր հոլովներով, ինչպես նաև հոլովական կապակցություններով։ Վերջիններս կա՛մ բոլորովին նոր իմաստ են տալիս պարագայական հարաբերությանը և կամ ավելի ճշտում, որոշակի են դարձնում միայն հոլովների միջոցով դրսևորված հարաբերությունները՝ հանդիսանալով վերջիններիս համանիշները։

Բերենք այդ պարագաներից յուրաքանչյուրի քերականական դրսևորման համանիշ ձևերը՝ ցույց տալով նրանց ոճական ու կիրառական, որոշ չափով նաև իմաստային տարբերությունները։

Պատճառի պարագա

Ինչպես ասվեց, պատճառի պարագան ցույց է տալիս գործողության կատարման, որևէ երևույթի կամ հատկանիշի առաջացման պատճառը։ Այդ պատճառով այն կարող է լրացնել ինչպես բայով արտահայտված պարզ ստորոգյալի, կամ այլ անդամի, այնպես էլ բաղադրյալ ստորոգյալի։ Պատճառի պարագան արտահայտվում է հետևյալ քերականական միջոցներով.

ա) Գոյականի կամ որպես այդպիսին վերցված այլ խոսքի մասի բացառական հոլովով։ Սա պատճառի պարագայի ամենատարածված ձևն է և հավասարապես հատուկ է ինչպես գրավոր, այնպես էլ ժողովրդական-խոսակցական լեզվին. օրինակ՝ Իսկ շալվարը սևացել էր, ով գիտե, քանի տարի ջրի ու օճառի երես չտեսնելուց (ՍԽ, ԿՇ, 19)։ Արտասվում էր ավելի անզորությունից (ՍԶ, 2, 493)։ Իսկ հարսս գործարանի ծանր աշխատանքից թոքախտով մեռավ (Իս., 3,188)։

Ծանոթություն.— Ներքին հույզ, հոգեկան վիճակ, դրություն ցույց տվող մի շարք չեզոք սեռի բայերի մոտ պատճառի պարագաները, հատկապես բացառական հոլովով դրվածները, կարող են դիտվել որպես սեռի պահանջով դրված պասիվ ներգործության խնդիր։ Դրա լավագույն ապացույցն այն է, որ երբ չեզոք սեռի բայ-ստորոգյալը վեր ենք ածում պատճառական սեռի, այսինքն՝ պասիվ կառուցվածքի նախադասությունը վեր ենք ածում ակտիվ կառուցվածքի, այդ պարա-

գանները փոխակերպվում են ենթակաների. այսպես՝ Այդ ձայնից նա վախեցավ → Այդ ձայնը նրան վախեցրեց: Նրա այդօրինակ վարմունքից բոլորս վշտացանք → Նրա այդօրինակ վարմունքը բոլորիս վշտացրեց:

բ) Պատճառական հարաբերությունները անխառն ներկայացնելու և ավելի ընդծելու համար հաճախ, հատկապես գրավոր խոսքում, բացառական հոլովին զուգահեռ գործածվում են պատճառով և հետևանքով կապական բառերը՝ սեռական հոլովով խնդրի հետ. այսպես՝ Իսկ շալվարը սևացել էր... ջրի ու օճառի երես չտեսնելու պատճառով → չտեսնելու հետևանքով: Արտասվում էր ավելի անզորության պատճառով → անզորության հետևանքով:

Երբ պատճառի պարագայով տրվում է որևէ երևույթի, գործողության առաջացման դրական պատճառը, այն ձևավորվում է շնորհիվ կապով, որին համանիշ կարող է գործածվել միայն պատճառով կապը. օրինակ՝ Քո օգնության շնորհիվ ես հասա զգալի հաջողությունների → Քո օգնության պատճառով...: Բացասական պատճառ ցույց տալու դեպքում պատճառով, հետևանքով կապերին համանիշ գործածվում են նաև երեսից, ձեռքից կապական բառերը. ինչպես՝ Քո անհոգության երեսից ես շատ տուժեցի → Քո անհոգության պատճառով (հետևանքով) ես շատ տուժեցի → Քո անհոգության ձեռքից ես շատ տուժեցի:

Ինչպես երևում է նաև բերված օրինակների համեմատությունից, երեսից, ձեռքից կապական բառերով ձևավորված պատճառի պարագաները գործածվում են առավելապես ժողովրդական-խոսակցական լեզվում և ունեն կիրառության նեղ ոլորտ (ցույց են տալիս միայն բացասական պատճառ): Այնինչ շնորհիվ կապը ավելի գրավոր լեզվին է հատուկ և գործածվում է հիմնականում որևէ գործողության կամ երևույթի առաջացման դրական պատճառը ցույց տալու համար: Այսպիսով՝ պատճառով կապով ձևավորված պատճառի պարագան կարող է փոխակերպվել մի կողմից երեսից, ձեռքից կապերով պատճառի պարագայի՝ ցույց տալով բացասական պատճառ, մյուս կողմից՝ շնորհիվ կապով պատճառի պարագայի՝ ցույց տալով դրական պատճառ: Իհարկե, շնորհիվ կապը ևս խոսքային հատուկ միջավայրում և հատուկ հնչերանգով կարող է արտահայտել բացասական պատճառ, սակայն այս դեպ-

քում այն ձեռք է բերում հանդիմանության, արհամարհանքի, ծաղրի դրսևորման երանգ. օրինակ՝ Քո այդ վարմունքի *շնորհիվ ես շատ դժվարությունների հանդիպեցի → քո այդ* վարմունքի պատճառով → fn այդ վարմունքի երեսից:

գ) Պատճառի պարագայի իմաստ են արտահայտում և կարող են բացառական հոլովով փոխարինվել մեջ *և* տակ *կապերով ձևավորված մի շարք կապակցություններ, որոնք ունեն տեղի որոշակի իմաստային երանգ. ինչպես՝ Նրա գլուխը ճերմակել էր կյանքի ծանր* փորձություններ*ի* մեջ *(ՔԹՀ, 4) → Նրա գլուխը ճերմակել էր կյանքի* ծանր փորձություններից: *Շամպայնի շշերը պայթյունով բացվեցին, և դահլիճը* թնդաց ուռաներ*ի* մեջ *(Իս., 3, 264) → Դահլիճը թնդաց* ուռաներից: *Լեղապատառ փայտահատին մնում էր կամ փախչել, կամ օձի պես ծռմռատել Պանինի մտրակի* հարվածներ*ի* տակ *(Աբ, 4) → օձի պես ծռմռատել Պանինի* հարվածներից: *Ծառերի ճյուղերը խոնարհվել էին* ձյան ծանրություն*ից (ՎԱ, ԼՀ, 31)→ Ծառերի ճյուղերը խոնարհվել էին* ձյան ծանրության տակ: *Հանախ իմ հոգին թուլանում, ընկճվում էր դրանց* ազդեցություն*ից (Մ, 2, 440) → ընկճվում էր դրանց* ազդեցության տակ: *Վերջին օրինակում կապական պատճառի պարագան* (ազդեցության տակ) *չունի տեղի իմաստային երանգ։*

Որպես բացառական հոլովով դրված պատճառի պարագայի համանիշ երբեմն կարող է գործածվել համար *կապով պատճառի պարագան. օրինակ՝ Շատ շնորհակալ եմ* fn բարեսրտության համար *(Ր, 7, 21) → Շատ շնորհակալ եմ* fn բարեսրտությունից:

դ) Երբեմն պատճառի պարագան դրվում է նաև գործիական հոլովով։ Այս դեպքում այն համատեղում է նաև միջոցի խնդրի իմաստ, մի բան, որ պայմանավորված է գործիական հոլովի առանձնահատկությամբ։ Օրինակ՝ բավականին ընդարձակ սենյակը, որ պատրաստած էր հյուրերի համար, փայլում էր մաքրությամբ *(Մ, 1, 19)։ Իսկ հարսս գործարանի ծանր աշխատանքից* բոքախտով մեռավ *(Իս., 3, 188)։ Պատճառի պարագայի այս ձևերը կարելի է փոխարինել բացառական հոլովով (փայլում էր* մաքրությունից, բոքախտից *մեռավ), որով ավելի է ընդգծվում պատճառի իմաստը։ Սակայն դրանք* պատճառով, հետևանքով *կա-*

պական բառերով ձևավորված պարագաներով փոխարինելու դեպքում խոսքը դառնում է անհարթ, ոչ սահուն (համեմատի՛ր Փայլում էր մարդության պատճառով, Մեռավ թոքախտի հետևանքով):

Երբեմն որպես պատճառի պարագայի համանիշ ձևեր հանդես են գալիս գործիական հոլովը և տակ կապական բառով կապակցությունը. օրինակ՝ Այդ մարդը այնքան զգայուն է, որ ո՛վ գիտե, ինչ կարող է անել ոգեի ազդեցությամբ (Շ, 4, 348) → ոգեի ազդեցության տակ: Շատերն սկսեցին գինու ազդեցությամբ կատակներ անել ու ծիծաղել (Շ, 4, 25) → գինու ազդեցության տակ կատակներ անել։

Անորոշ դերբայի գործիական հոլովով արտահայտված պատճառի պարագան հաճախ ունենում է ժամանակային հաջորդականության իմաստային երանգ. օրինակ՝ Բեգոյի գալով տղաները վերստին համոզվեցին, թե նա ինչ էր իրենց համար (ԽՀ, ՈՒՄ, 39)։ Ամեն շարժվելով ճղփում էր նրա տակ լճացած արյունը և կրկին սկսում էր ծորել գնդակատեղից (ՀԹ, 1, 331)։ Այս պատճառի պարագային համանիշ կարող է լինել հետո կապական բառով ձևավորված պարագան, որի դեպքում ժամանակային հարաբերությունը ավելի է ընդգծվում, մղվում է առաջին պլան. այսպես՝ «Բեգոյի գալուց հետո տղաները վերստին համոզվեցին, թե նա ինչ էր իրենց համար»։ «Ամեն շարժվելուց հետո»...։ Իսկ հետևանքով կապի կամ բացառական հոլովի գործածության դեպքում արդեն գերակշռում է պատճառի հարաբերությունը. այսպես՝ Բեգոյի գալու հետևանքով տղաները վերստին համոզվեցին...։ Ամեն շարժվելուց ճղփում էր նրա տակ լճացած արյունը։

Ծանոթություն.— Զուտ պատճառի նշանակություն ունեն առիթ, պատճառ, հետևանք, շարժառիթ և այլ պատճառի իմաստ ունեցող բառերի գործիականները, որոնք, սակայն, միշտ հանդես գալով սեռական հոլովով դրված լրացման հետ՝ այս կիրառություններում աստիճանաբար կորցրել են իրենց նյութական իմաստը՝ վերածվելով կապական բառերի։

դ) Ժամանակի պարագայի որոշակի իմաստային երանգ ունեն վրա կապով ձևավորված մի շարք պատճառի պարագաներ, որոնց ևս, որպես համանիշ կարող է գործածվել բացառական հոլովը։

Սակայն վերջին դեպքում պատճառի պարագան կորցնում է ժամանակ դրսևորելու իմաստային երանգը։ Բերենք այս համանիշների օրինակներ։ Այս մտքի վրա *ուրախություն տեղի էր տալիս ահավոր երկյուղի (ԱԲ, 138)* → Այս մտքից *ուրախություն տեղի էր տալիս...։ Բայց* մեր ծիծաղի վրա *քույրս ներս է մտնում, կարծելով՝ էլ չենք պարապում (ՍՉ, ԵԺ, 3, 18)* → *Բայց մեր* ծիծաղից *քույրս ներս է մտնում։* Շների աղմուկից, *նիզակը ձեռքին, մոտ վազեց մի հովիվ (Ր, 7, 326)* → *Շների* աղմուկի վրա, *նիզակը ձեռքին, մոտ վազեց մի հովիվ։ Նեսոն* սրա վրա *ուրախացավ (ՀԹ, 1, 412)* → *Նեսոն* սրանից *ուրախացավ։*

Վրա *կապով պարագան երբեմն պատճառի հետ միասին ունենում է հիմունքի իմաստային երանգ։ Այս դեպքում նրան համանիշ է լինում ոչ թե բացառական հոլովը, ինչպես նախորդ դեպքերում էր, այլ գործիական հոլովը. օրինակ՝* Իմ խնդիրքի վրա *ուղեկիցներից մեկը ռուսերեն լեզվով տվեց գուսանի երգի բովանդակությունը (Իս., 3, 294)* → Իմ խնդիրքով *ուղեկիցներից մեկը ռուսերեն լեզվով տվեց գուսանի երգի բովանդակությունը։ Ժամանակի պարագային խիստ մոտենում է նաև երբեմն հանդիպող տրական հոլովով պատճառի պարագան, որին համանիշ կարող են լինել դարձյալ բացառական հոլովը և* վրա *կապով պարագան. օրինակ՝* Դռան ձայնին *Դիլանը գլուխը դուրս հանեց (ԱԲ, 229)* → Դռան ձայնի վրա *Դիլանը գլուխը դուրս հանեց* → Դռան ձայնից *Դիլանը գլուխը դուրս հանեց։ Այս անգամ նրա* կոչին *շատերն եկան (Մ, 3, 332)* → *Այս անգամ նրա* կոչի վրա *շատերն եկան։*

Երբեմն տրական հոլովով է դրվում նաև հոգեկան վիճակ, ներքին հույզ արտահայտող ստորոգյալների լրացնող պատճառի պարագան, որին համանիշ գործածվում է սեռական հոլովը՝ համար *կապի հետ։ Վերջին դեպքում պատճառային հարաբերությունը ավելի է ընդգծվում. օրինակ՝* Նա ուրախ էր *միսս Ուիլկինսոնի մոտից* հեռանալուն *(թարգմ.)* → Նա ուրախ էր *միսս Ուիլկինսոնի* մոտից հեռանալու համար:

Այսպիսով՝ պատճառային հարաբերության դրսևորման համանիշ ձևերի շարքը կլինի՝

Բ+Գբաց. → Բ+(Գսեռ. +պատճառով) → Բ+(Գսեռ. +հետևանքով),
Բ+Գբաց. → Բ+(Գսեռ. +պատճառով) → Բ+(Գսեռ. +շնորհիվ),
Բ+Գբաց. → Բ+(Գսեռ. +պատճառով) → Բ+(Գսեռ. +երեսից (ձեռքից),
Բ+(Գսեռ. + մեջ) → Բ+Գբաց., Բ+(Գսեռ. +տակ) → Բ+Գբաց.,
Բ+Գգործ. → Բ+Գբաց., Բ+Գգործ. → Բ+(Գսեռ. +տակ),
Բ+(Գսեռ. +վրա) → Բ+Գբաց., Բ+(Գսեռ. +վրա) → Բ+Գտրակ.,
Բ+(Գսեռ. +վրա) → Բ+Գգործ., Բ+Գտր. → Բ+(Գսեռ. +համար)

Հիմունքի պարագա

Պատճառի պարագային իմաստով խիստ մոտենում է հիմունքի պարագան, սակայն սրանք որակապես տարբերվում են իրարից։ Եթե պատճառի պարագան ցույց է տալիս այն իրական պատճառը, որը օբյեկտիվորեն գոյություն ունի և որի հետևանքով կատարվում է գործողությունը, ապա հիմունքի պարագայի միջոցով տրվում է այն առարկան, երևույթը, որը հիմք է հանդիսանում որևէ եզրակացություն, դատողություն անելու և կամ ծառայում է որևէ գործողության, իրողության, երևույթի գոյությունը խոսողի կողմից հիմնավորելու համար (համեմատի՛ր հետևյալ նախադասությունները. «Շատ կանգնելուց հոգնեցի» և «Ըստ օդերևույթաբանական կայանի տվյալների այսօր անձրև է գալու»)։

Հիմունքի պարագան ևս ունի քերականական դրսևորման մի շարք ձևեր, որոնք հաճախ կարող են փոխարինել իրար՝ ստեղծելով համանիշ բառակապակցություններ։ Թվենք դրանք։

ա) Ժողովրդական-խոսակցական լեզվում և գեղարվեստական գրականության մեջ հիմունքի պարագայի դրսևորման ամենատարածված ձևը գործիական հոլովն է։ Գործիական հոլովով հիմունքի պարագայի պաշտոնում հանդես են գալիս հիմնականում -ություն ածանցով գոյականները և անորոշ դերբայը։ Դա բացատրվում է հիմունքի պարագայի էությամբ. որևէ իրողություն, գործողություն, եզրակացություն կարելի է հիմնավորել կա՛մ մեկ այլ գործողություն, կամ որևէ երևույթ վկայակոչելով. օրինակ՝ Իսկ ինձ հասած

տեղեկություններով անգլիացի Կրիպսը մի տեղ ասել է (ԳՍԹ, 1, 134)։ Մոռս պատմելով՝ ես ծնվել եմ գարնան մի առավոտ, վաղ արշալույսին (ՍՁ, եժ, 3, 509)։ Կապիտանի կարծիքով մեծամիտ մարդիկ հիմա ենթարկվում են իրեն (ՍՁ, եժ, 3, 509)։

բ) Հիմունքի պարագա հատկապես շատ է գործածվում գիտական և հրապարակախոսական գրականության մեջ։ Այդտեղ, և առհասարակ գրավոր խոսքում, հիմունքը դրսևորվում է ավելի հաճախ ըստ և համաձայն կապերի օգնությամբ, որոնց կիրառության ոլորտը վերջին շրջանում խիստ ընդլայնվել է, ընդգրկելով նաև գեղարվեստական գրականությունը, մասամբ նաև բանավոր խոսքը։ Օրինակներ՝ Քույր Աննայի գուշակության համաձայն ես բոլորովին կազդուրվել էի (Մ, 2, 445)։ ...Մարդիկ հիմա ենթարկվում են իրեն, լսում են իր կարգադրությունները,— վազում են իր առաջ, կռանում, ձգվում, հրացանները բռնում իր թելադրության ու ցանկության համաձայն (ՍՁ, եժ, 3, 509)։ Ըստ այդ ցուցակի՝ նավի վրա ութ մարդ էր (ԱԲ, 256)։ Նրա հիմնած վանքերի թիվը, ըստ ժամանակակից պատմագրի վկայության, հասնում էր 2040-ի (Ր, 7, 185)։ Ըստ մեր նախնական պայմանի, ձկների փորը տվի իրեն, իսկ մարմինը խորովեցի (ՎԱ, ԼՀ, 24)։

Ըստ և համաձայն կապերի գործածության դեպքում հիմունքի պարագան ունենում է համապատասխանության իմաստային երանգ, այսինքն՝ որոշ չափով մոտենում է ձևի պարագային (տե՛ս վերևի օրինակները)։ Համապատասխանության իմաստային երանգը ավելի է սաստկանում, երբ վերոհիշյալ կապերի փոխարեն գործածվում են համապատասխան և համեմատ կապերը, այսպես՝ Ըստ այդ որոշման աշխատանքն սկսվելու է ժամը 5-ին → Այդ որոշման համապատասխան աշխատանքն սկսվելու է ժամը 5-ին → Այդ որոշման համաձայն աշխատանքն սկսվելու է ժամը 5-ին։ Ինչպես երևում է համանիշ նախադասությունների համեմատությունից, հիմունքի նշանակությունը ամենացայտունը դրսևորված է ըստ կապի առկայության դեպքում։ Համեմատի՛ր նաև հետևյալ նախադասությունները. Աստղիկը՝ Արտիշատի գեղեցիկ դիցուհին, իր վաղեմի սովորության համեմատ, լողանում էր Մուրադ գետի ալիքների մեջ (ԸԷՍԳ, 500) → Ըստ իր վաղեմի սովորության լողա-

նում էր → Համաձայն իր վաղեմի սովորության ... Իր վաղեմի սովորությանը համապատասխան → Իր վաղեմի սովորությամբ:

Հիմունքի պարագան ժամանակակից հայերենում կարող է ձևավորվել նաև հիման վրա կապով, որն ունի կիրառության ավելի նեղ ոլորտ, գործածվում է առավելապես գիտական, հրապարակախոսական գրականության մեջ, ինչպես՝ «Այդ ծրագրի հիման վրա Ռուսաստանը բաժանվում էր վեց զոնայի»։

Այսպիսով՝ հիմունքի պարագայական հարաբերության դրսևորման համանիշների շարքի պատկերը հետևյալն է.

Բ + Գգործ. → Բ + (Գսեռ. + համաձայն) → Բ + (ըստ + Գսեռ.) → Բ + (Գսեռ. + հիման վրա) → Բ + (Գսեռ. + համեմատ) → Բ + (Գսեռ. + համապատասխան)

Նպատակի պարագա

Բայի գործողության հետ կապված նպատակային հարաբերությունները դրսևորվում են նպատակի պարագայի միջոցով։ Վերջինս նույնպես ժամանակակից հայերենում ունի արտահայտման մի քանի եղանակներ, որոնք հաճախ փոխարինում են իրար՝ հանդիսանալով համանիշ ձևեր։ Ահա դրանք։

ա) Նպատակի պարագայի դրսևորման ամենատարածված ձևը ժամանակակից հայերենում տրական հոլովն է։ Տրական հոլովով են դրվում՝ 1) մի շարք գոյականներ, որոնք ցույց են տալիս այն առարկան, որին հասնելու, որը ձեռք բերելու նպատակով կատարվում է գործողությունը և կամ գործողության անուն հանդիսացող գոյականներ. օրինակ՝ գնալ ջրի, գնալ հացի, հրավիրել զբոսանքի, գնալ զորաշարժի (Զորքը գնում էր Արագածի լանջերը զորաշարժի (ՎԱ, ԼՀ, 279)։ 2) Ավելի հաճախ նպատակի պարագան դրսևորվում է անորոշ դերբայի տրական հոլովով, ցույց տալով այն գործողությունը, որի կատարմանն է ուղղված նախադասության բուն գործողությունը. օրինակ՝ Երկու հոգու գնդի շտաբն էին կանչել հետախուզության ուղարկելու (ՀՔ, ՄՏՁ, 1, 338)։ Նա երբեմն կանգ էր առնում հակառակորդի դիրքերի կողմը նայելու (Ն. տ., 2, 109)։

Նա քաղաք էր գնացել հատկապես իմանալու *գները (ԱԲ, 483)։*

բ) Երբեմն գոյական նպատակի պարագան տրական հոլովի փոխարեն դրվում է հայցական հոլովով՝ ստեղծելով առաջինին համանիշ ձև։ Այսպես՝ Երանի էր, որ ապրեի այդ ժամանակ և նրանց հետ կոիվ գնայի *(Իս., 3, 257)։ Մի ժեռ քարի տակ աղբյուր կա զուլալ, Ու ջուրն են եկել Երկու աղջնակ (ՎԴԹ, 5)։*

Սրանց համանիշ ձևերն են՝ կովի գնայի, ջրի են եկել: *Գոյականի հայցական հոլովի կիրառությունը նպատակի պարագայի պաշտոնով հատուկ է ժողովրդական-խոսակցական լեզվին, որից էլ երբեմն թափանցում է գեղարվեստական գրականության մեջ։ Գրական լեզվի համար այս ձևերը հանձնարարելի չեն։ Բացառություն են կազմում մի քանի բառակապակցություններ, որոնք արդեն ձեռք են բերում դարձվածքային արժեք. ինչպես՝* ուխտ գնալ, կոիվ գնալ, տես գալ *(«Ու չեկավ նա տես») և այլն։*

գ) Սահմանափակ թվով գոյականներ՝ նպատակ, գործ, մտադրություն, խնդիր, հարց, *նպատակի պարագա են դառնում գործիական հոլովով. օրինակ՝ Գոնսալոն ստիպված էր* կարևոր գործով թողնելու *հավաքույթը (Իս., 3, 263)։ Նա* եկել *էր բոլորիս հուզող* հարցով: *Ես* գնացի *բոլորովին* այլ նպատակով: *Գործիականին համանիշ երբեմն կարող է հանդես գալ նույն գոյականի սեռական հոլովը* համար *կապի հետ։ Այսպես՝* կարևոր գործի համար *թողնել հավաքույթը, գալ բոլորիս հուզող* հարցի համար, *գնալ այլ* նպատակի համար *և այլն։ Սակայն, ինչպես երևում է նաև բերված օրինակներից, հիշյալ գոյականների գործիական հոլովաձևերը ձեռք են բերում կապական արժեք և շատ հաճախ գործածվում են նպատակային հարաբերություններ դրսևորելու համար ոչ թե առանձին, այլ սեռական հոլովով դրված մի գոյականի կամ անորոշ դերբայի հետ։ Դա վերաբերում է հատկապես* նպատակով *ձևին, որը վեր է ածվել* համար *կապի համանիշի։ Հմմտ. Նա եկել է* հանգրստանալու համար → հանգստանալու նպատակով:

դ) Անորոշ դերբայի տրական հոլովին համանիշ հաճախ գործածվում է սեռականը՝ համար *(երբեմն նաև* նպատակով) *կապի հետ։ Այսպես՝ Կանչել հետախուզության* ուղարկելու → ուղարկելու համար (նպատակով): *Միջոցներ տրամադրել* շենքը կառուցելու →

կառուցելու համար: Պետք է նկատել, որ այժմ ավելի տարածված և հանձնարարելի է տրական հոլովի կիրառությունը, որովհետև վերջինս լրիվ արտահայտում է նպատակային հարաբերությունները։ Կապերը գործածվում են միայն այն դեպքերում, երբ անհրաժեշտ է լինում հատկապես շեշտել այդ հարաբերությունները, ինչպես նաև ոճական տեսակետից խոսքը բազմազան դարձնելու, միօրինակությունից խուսափելու համար։

Գեղարվեստական գրականության մեջ երբեմն տրականով նպատակի պարագային համանիշ գործածվում է անորոշ դերբայի հայցական հոլովը, հատկապես այն դեպքերում, երբ այն լրացնում է ոչ թե ստորոգյալին, այլ վերջինիս համար նպատակի պարագա հանդիսացող տրական հոլովով դրված անորոշ դերբայի. օրինակ՝ Ամեն միջոցի դիմեց համոզելու և հրապուրելու ինձ մնալ Թյուրքիայում և նվիրվել թյուրք գեղարվեստական թատրոնի ստեղծմանը (ՎՓ, ՀՀ, 207)։ Այս պատճառով նա գործ դրեց յուր բոլոր ճարպկությունը համոզելու Ամալյային վերադառնալ Կովկաս (Մ, 2, 61)։ Բերված օրինակներում կողմնակի նպատակի պարագաները կարող են գործածվել նաև տրական հոլովով, սակայն այդ դեպքում ոճը կդառնա անհարթ (հմմտ. «Համոզելու ու հրապուրելու ինձ մնալու թյուրքիայում և նվիրվելու...», «Համոզելու Ամալյային վերադառնալու Կովկաս»):

Երբեմն հայցական հոլովով է դրվում նաև նախադասության բուն նպատակի պարագան, սակայն այդ կիրառությունը այժմ հնացած է. օրինակ՝ թողնենք ուրեմն նրան զվարճանալ առայժմ յուրայինների հետ (Մ, 5, 15)։

Ծանոթություն.— Երբ պատրաստվել բայի մոտ նպատակի պարագան անորոշի տրական հոլովաձևի փոխարեն գործածվում է հայցական հոլովով, մասամբ կորցնում է նպատակային հարաբերություն դրսևորելու արժեքը՝ վերածվելով բազադրյալ ստորոգյալի մասի։ Հմմտ. Հասկացավ, որ ամանում պատրաստվում են շահին դիմավորելու (ԳՍԹ, 2, 402) → Պատրաստվում են շահին դիմավորել:

Ե) Ժողովրդական-խոսակցական լեզվում հաճախ որպես նպատակի պարագա գործածվում են բայի ըղձական եղանակի ապառնի ժամանակի ձևերը, որոնք այս կիրառություններում կորցրել են իրենց

դիմային և եղանակային արժեքը՝ հանդես գալով անորոշ դերբայի տրական հոլովի համանիշ։ Օրինակ՝ Քնելու ժամանակը որ գալիս է ու աղջիկները գնում են քնեն, մերն արջին ասում է (ՀԹ, 2, 418)։ Աստիճանների վրա նստած գյուղացիները նրան տեղ տվին անցնի (ԱԲ, 139)։ Գնացել էի մեր բաղի քանդված պատը նորոգեմ (ԱԲ, 381)։

Այս ձևերը առաջացել են նպատակի պարագա երկրորդական նախադասությունների անշաղկապ կապակցություններից և ժամանակակից գրական հայերենի համար հանձնարարելի չեն։ Վերջինում այս իմաստով գործածվում են կա՛մ անորոշի տրական հոլովը, կա՛մ շաղկապով միացած երկրորդական նախադասություն. այսպես՝ Գնում են քնելու → Գնում են, որ քնեն: Տեղ տվին անցնելու → Տեղ տվին, որ անցնեն: Գնացել էի նորոգելու → Գնացել էի, որ նորոգեմ:

զ) Երբեմն գոյականի տրական հոլովին համանիշ ևս կարող է գործածվել սեռական հոլովը՝ համար կապի հետ. օրինակ՝ Խմում են կովող քաջերի փառքին, Որ կռվի դաշտում կյանք չեն խնայում, Եվ ընկածների սուրբ հիշատակին... (ՀԹ, 2, 141)։ Սա հեքիաթային նվեր եղավ ճարտարապետի համար, որ անմիջապես գործադրեց պստիկ գոհարի պահպանման նպատակին (Խ., 3, 378)։ Նա իրեն ապաստարան ընտրեց ծովափնյա ժայռը (ՀԹ, 2, 331)։ Ընդգծված նպատակի պարագաներին համանիշ կարող են լինել փառքի համար, հիշատակի համար, պահպանման նպատակի համար, իր համար կապական արտահայտությունները։

է) Հրապարակախոսության լեզվում, երբեմն նաև գեղարվեստական գրականության մեջ, խոսքին հանդիսավորություն տալու համար նպատակային հարաբերությունները հաճախ արտահայտվում են գրաբարյան ի նախդրի և հայցական հոլովի միջոցով։ Վերջինս (հայցական հոլովը) ևս այս կառուցվածքներում հաճախ գործածվում է գրաբարյան ձևավորմամբ, որով ստեղծվում է նպատակային հարաբերություն արտահայտելու հատուկ ոճ. օրինակ՝ Սյունաց անապատի առաքյալները ապրում են միայն գործելու համար և գործում են իրոք ի շահ ժողովրդի (Մ, 5, 232)։ Ի նշանավորումն Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափո-

խության 52-րդ տարեդարձի, հրամայում եմ... (ՍՀ)։ Ի փառս *մեր մեծ հայրենիքի,* ի բարօրություն *մեր ժողովրդի և այլն։ Սովորա-կան, առօրյա լեզվում այդ ձևերին համանիշ գործածվում է հա-մապատասխան բառի սեռական հոլովը՝* համար *կապի հետ. այս-պես՝* շանի համար, նշանավորելու համար, փառքի համար, բար-օրության համար *և այլն։*

Հրապարակախոսության լեզվում նպատակի պարագան կարող է ձևավորվել նաև հանուն *կապով՝ սեռական հոլովի հետ, որը ևս համանիշ է* համար *կապով նպատակի պարագային. օրինակ՝* հա-նուն մեր ժողովրդի → մեր ժողովրդի համար, հանուն ժողովուրդ-ների բարեկամության → ժողովուրդների բարեկամության համար, հանուն մեր երջանիկ ապագայի → մեր երջանիկ ապագայի համար *և այլն։*

Սրանք են նպատակի պարագայի դրսևորման հիմնական հա-մանիշ ձևերը ժամանակակից հայերենում։ Համանիշների այս շարքը կարելի է պատկերել հետևյալ սխեմայով.

Բ + Գտր. → Բ + Գհայց. → Բ + (Գսեռ + համար)
Բ + Գգործ. → Բ + (Գսեռ. + համար)
Բ + Դանոր. տր. → Բ + (Դանոր. սեռ. + համար) → Բ + Դանոր. հայց.
Բ + (ի + Գհայց.) → Բ + (հանուն + Գսեռ.) → Բ + (Գսեռ. + համար)

Պայմանի պարագա

Իմաստային հարաբերությունների բնույթով հիմունքի պարա-գային խիստ մոտենում է պայմանի պարագան, որը ցույց է տալիս այն պայմանը, հանգամանքը, որի առկայության դեպքում միայն հնարավոր է գործողության կատարումը և կամ որևէ եղելության, իրողության երևան գալը. այսինքն՝ տվյալ պայմանը միաժամա-նակ հիմք է հանդիսանում գործողության կատարման համար։ Պայմանի պարագան ձևավորվում է հիմնականում կապերի միջո-ցով. ըստ որում որպես կապի խնդիր հանդես են գալիս մեծ մա-սամբ անորոշ դերբայը և գործողության անուն հանդիսացող գոյա-

կաններ, իսկ կապի դերով՝ դեպքում, պարագայում և պայմանով կապական բառերը։ Սրանցից առաջին երկուսը հանդես են գալիս որպես համանիշ, համատեղում են որոշ ժամանակային և հիմունքի իմաստ, կարող են փոխարինել իրար, սակայն տարբերվում են կիրառության ոլորտով։ Դեպքում կապական բառը շատ ավելի տարածված է. գործածվում է և՛ բանավոր, և՛ գրավոր խոսքում, իսկ պարագայում գրքային է, ունի խիստ սահմանափակ կիրառություն։ Պայմանով բառը դրսևորում է զուտ պայմանային հարաբերություն և այդ պատճառով չի կարող գործածվել նախորդների փոխարեն։ Բերենք օրինակներ։

Նա հարկավորված դեպքում չէ խնայում իր զենքը գործ դնել և իր նման մարդերի դեմ (Ր, 9, 412) → Նա հարկավորված պարագայում չէ խնայում իր զենքը։ Դժվարանալու դեպքում դիմիր նրան → դժվարանալու պարագայում դիմիր նրան։ Նեղության դեպքում նա միշտ օգնության է գալիս → Նեղության պարագայում նա միշտ օգնության է գալիս։

Պայմանով բառը պայմանի պարագայի պաշտոնով հանդես է գալիս հիմնականում այս, այդ, այն ցուցական դերանունների հետ։ Առաջին երկու դեպքում անհրաժեշտ պայմանը տրված է լինում նախորդ նախադասությունների մեջ, վերջին դեպքում՝ երկրորդական նախադասությամբ։ Պայման բառի գործիական հոլովի փոխարեն երբեմն կարող է գործածվել սեռական հոլովը դեպքում կապական բառի հետ։ Երկրորդ դեպքում պայմանի պարագան ձեռք է բերում հիմունքի իմաստային երանգ. Համեմատի՛ր հետևյալ նախադասությունները. Միայն այն պայմանով է հնարավոր հասնել դրական արդյունքների → Միայն այս պայմանի դեպքում է հնարավոր հասնել դրական արդյունքների։

Ծանոթություն.— Վ. Առաքելյանը «Հայերենի շարահյուսություն» արժեքավոր աշխատության մեջ պայմանի պարագա է համարում նաև հակառակ դեպքում կապակցությունը[1], որը սակայն արդեն վիր է ածվել հակադրական նշանակություն ունեցող շաղկապական կապակցության (կապակցության հակադրական նշանակություն ունենալը ընդգծում է նաև Վ. Առաքելյանը)։

---

[1] Տե՛ս Վ. Առաքելյան, Հայերենի շարահյուսություն, հատոր 1, 1958, էջ 392։

Հիմունքի պարագայի հետ պայմանի պարագայի իմաստ է համատեղում նաև անորոշ դերբայի գործիական հոլովը, երբ լրացնում է ապառնի ժամանակով գործածված ստորոգյալի. օրինակ՝ Զաշխատելով ոչ մի արդյունքի չես հասնի: Գիրք կարդալով դու գրքերում շատ նորանոր բան կիմանաս: Պայմանի իմաստը ավելի է ընդգծվում, երբ գործիական հոլովի փոխարեն գործածվում է սեռական հոլովը՝ դեպքում կապական բառի հետ. ինչպես՝ Զաշխատելու դեպքում ոչ մի արդյունքի չես հասնի։ Գիրք կարդալու դեպքում դու գրքերում շատ նորանոր բան կիմանաս։

Այսպիսով, պայմանի պարագայի հարաբերության քերականական դրսևորման համանիշների պատկերը կլինի՝

Բ+(Դ, Գսեռ. + դեպքում) → Բ+(Դ, Գ.սեռ. + պարագայում)
Բ+(Դսեռ. + դեպքում) → Բ+Դգործ.
Բ+(Դ (գ)սեռ +պայմանով) → Բ+(Դ(գ)սեռ. +պայմանի դեպքում)

Սխեմայում Դ տառը նշանակում է անորոշ դերբայ, Դ, Գ-ն՝ անորոշ դերբայ կամ գոյական, իսկ Դ(գ)-ն՝ անորոշ դերբայ կամ ցուցական դերանուն։

Պետք է նշել, որ պայմանի պարզ պարագան ժամանակակից հայերենում համեմատաբար քիչ կիրառություն ունի։ Պայմանային հարաբերություններ արտահայտելու համար ավելի հաճախ գործածվում են պայմանի երկրորդական նախադասությունները, որոնք համանիշ են առաջիններին և ավելի ճշգրտորեն են ներկայացնում պայմանային հարաբերությունները (դրանով էլ բացատրվում է նրանց տարածվածությունը լեզվում)։

Զիջման պարագա

Պատճառա-հետևանքային հարաբերություններ են դրսևորվում նաև զիջման պարագաների միջոցով։ Զիջման պարագան ցույց է տալիս այն պատճառը, հիմունքը, նաև պայմանը, հակառակ որի կատարվում է գործողությունը, երևան է գալիս որևէ իրողություն։

Մ. Աբեղյանը այս պարագան անվանել է զիջման կամ հակառակ հիմունքի, ըստ որում, ինչպես ասվել է, հիմունք ասելով նա

հասկանում էր պատճառը, նպատակը, պայմանը։ Այս տեսակետից հակառակ հիմունքի անվանումը արդարացնում է իրեն, որովհետև այն հակադրվում էր և՛ պատճառի, և՛ պայմանի, և՛ նպատակի պարագաներին։ Հետագայում հիմունքի պարագա կոչվեց միայն պատճառի պարագայի մի տարատեսակը, իսկ տվյալ պարագան կոչվեց միայն հակառակ հիմունքի[1], փաստորեն հակադրվելով միայն հիմունքի պարագային։ Այնինչ այս պարագան հակադրվում և առնչակցվում է ինչպես հիմունքի, այնպես էլ պատճառի ու պայմանի պարագաներին։ Այդ պատճառով, ավելի ճիշտ է տվյալ պարագայի համար զիջման պարագա տերմինը։

Պարագայի այս տեսակի համար զիջման տերմինն է ընդունել նաև Ս. Աբրահամյանը «Ժամանակակից հայերենի քերականություն» արժեքավոր աշխատության մեջ[2]։

Զիջական հարաբերությունները ևս, պայմանի հարաբերությունների նման, դրսևորվում են մեծ մասամբ բարդ նախադասություններում։ Պարզ նախադասության մեջ զիջման պարագան քերականական ձևավորում է ստանում միայն կապերի օգնությամբ։ Այդ կապերն են՝ հակառակ, չնայած, չնայելով, հանդերձ։ Վերջիններս հանդես են գալիս որպես համանիշներ և հաճախ կարող են փոխարինել իրար։ Իհարկե, սրանցից յուրաքանչյուրի գործածությունը ունի իր որոշակի կիրառական և ոճական առանձնահատկությունները։ Այսպես, հանդերձ կապը գրքային է, ունի կիրառության նեղ ոլորտ, բանավոր խոսքում գրեթե չի հանդիպում։ Այս կապի կիրառությունը խոսքին տալիս է որոշ գրքայնություն, հանդիսավորություն, միաժամանակ ընդգծում է տվյալ երևույթի առկայությունը։ Հակառակ և չնայած կապերը իմաստով և կիրառությամբ ավելի մոտ են, կարող են իրար փոխարինել, թեև հակառակ-ի դեպքում հակադրությունը ավելի է ընդգծվում։ Չնայելով կապը ավելի գործածական էր XIX դարի վերջերի և XX դարի սկզբների

---

[1] Տե՛ս Գ. Սևակ, Հայոց լեզվի շարահյուսություն, Երևան, 1968, Վ. Առաքելյան, Հայերենի շարահյուսություն, հատոր 1, Երևան, 1958։

[2] Տե՛ս Ս. Աբրահամյան, ժամանակակից հայերենի քերականություն, 1969, էջ 319։

գրականության մեջ, ունի ավելի շաղկապական կիրառություն (որ շաղկապի հետ կազմում է չնայելով որ բարդ զիջական շաղկապը)։

Ահա օրինակներ։ Մի օր, սովորությանս հակառակ, փոխանակ շուտով տուն վերադառնալու, գնացի այգի (Շ, 4, 155) → Մի օր-չնայած սովորությանս, ...գնացի այգի։ Բժիշկը տեսավ, որ հակառակ յուր սպասածին, լուսարարը չի ծռում լեզուն (Մ, 4, 149) → Չնայած յուր սպասածին, լուսարարը չի ծռում լեզուն։ Չնայած անտանելի շոգին ու թեժ արևին, Բաղդադի փողոցները լիքն էին ժողովրդով (ՀԹ, 3, 280) → Չնայելով անտանելի շոգին ու թեժ արևին, Բաղդադի փողոցները լիքն էին ժողովրդով։ Նա, չնայելով իր երիտասարդ հասակին, շատ փորձված էր (Ր, 3, 155) → Նա, չնայած իր երիտասարդ հասակին, շատ փորձված էր։ Չնայելով հաճախակի այցելություններին, նա վերջին օրն էլ այնպես անծանոթ էր Ամալյային, ինչպես և առաջ (Մ, 1, 245) → Չնայած հաճախակի այցելություններին, նա վերջին օրն էլ այնպես անծանոթ էր Ամալյային, ինչպես առաջ։ Այդ բոլորով հանդերձ Սեդան ցնծում էր այն մտքից, որ ուր որ է յուրայիններն օգնության կհասնեին (ԱՍեկ., ՈՎՄ, 617) → Չնայած այդ բոլորին, Սեդան ցնծում էր այն մտքից...

Ահա համանիշների այս շարքի սխեման՝

Բ + (հակառակ + Գսեռ. հ.) → Բ + (չնայած + Գտր. հ.) → Բ + (չնայելով + Գտր. հ.) → Բ + (Գդրբ.հ + հանդերձ)

ՄԻԱՍՆՈՒԹՅԱՆ ՊԱՐԱԳԱՅԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄԸ ՀԱՄԱՆԻՇ ՁԵՎԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ

Դրսևորման համանիշ ձևեր ունի նաև միասնության պարագան, որը ցույց է տալիս այն առարկան կամ առարկաների խումբը, որոնք հանդես գալով ենթակայով կամ ուղիղ խնդրով արտահայտված առարկայի (առարկաների) հետ՝ համատեղ կատարում կամ իրենց վրա են կրում գործողությունը։ Միասնության պարագան դրսևորվում է հետևյալ համանիշ ձևերով.

1. Գոյականի, դերանվան կամ գոյականաբար գործածված բա-

ռի գործիական հոլովով։ Օրինակ՝ Վեր կացանք մի օր հինգ ու վեց հոգով, թրով-թվանքով որսի գնացինք (ՀԹ, 1, 478)։ Քույրս իր ընտանիքով տեղափոխվեց Երևան, ես էլ հետը (ՎԱ, ԼՀ, 69)։ Նա իր ամբողջ ունեցվածքը՝ տներով, այգիներով, արհեստանոցով կտակեց եղբոր որդուն։

2. Հետ կապով՝ գոյականի, դերանվան կամ գոյականաբար գործածված բառի սեռական հոլովի հետ։ Այս դեպքում միասնության հարաբերությունը ավելի որոշակի է դրսևորվում։ Օրինակ՝ Իր բրիգադի անդամների հետ այդ մեքենայի մեջ տեղ գտավ և Արփիկը (ԱՍԿ., ՈՎՄ, 259)։ Նորերս «Տարաղը» մի չորս ոտանավոր տպեց իբրև նվեր իր բաժանորդներին, որ նամակիս հետ ուղարկում եմ Ձեզ (ՀԹ, 5, 144)։ Քույրս իր ընտանիքի հետ տեղափոխվեց Երևան։

Հահախ, միասնության հարաբերությունն ավելի ընդգծելու համար, հետ կապին ավելանում է միասին բառը՝ ստեղծելով վերևի պարագաներին համանիշ ձև։ Օրինակ՝ Արփիկենց ընտանիքը պատրաստություն էր տեսնում իր հարկի տակ ընդունելու Սեդային իր տղայի հետ միասին (ԱՍԿ., ՈՎՄ, 195)։ Այո, հեռագրի հետ միասին կստանայիր և նամակս (ՀԹ, 5, 75)։ Երբ մեքենան կանգ առավ, բոլորի հետ միասին ընդառաջեց և Ստեփանյանը (ԱՍԿ., ՈՎՄ, 523)։ Իր բրիգադի անդամների հետ միասին այդ մեքենայի մեջ տեղ գտավ և Արփիկը։

Միասնության հարաբերությունն ընդգծելու համար երբեմն միասին բառը դրվում է նաև գործիական հոլովով արտահայտված միասնության պարագայի վրա, հատկապես երբ վերջինս գոյականաբար գործածված թվական է։ Այսպես՝ Նրանք երեքով միասին գնացել են Հանգստյան տուն։ Այդ գործը մենք կատարեցինք վեցով միասին։

3. Հանդերձ կապով՝ գոյականի, դերանվան կամ գոյականաբար գործածված բառի գործիական հոլովի հետ։ Օրինակ՝ Կյորեսի հարբած ուխտավորները ծաղրում և ահագին գոռում գոչյունով Կանաչ եկեղեցու ուխտից քշում էին Կիզակով Իսակին հանդերձ ընտանյոք (ԱԲ, 304)։ Օջախի կենացը խմեցինք հանդիսավոր ոտընկայությամբ և քանանաներով հանդերձ մաղթեցինք անսպառ ույժ

օջախի հարստությանը (ՀԹ, 5)։ Սրանից հետո որքան էլ ահռելի լինի Գերմանիան իր քառասուն տարվա պատրաստություններով՝ իր զինակիցներով հանդերձ *խորտակվելու է Երրյակ Համաձայնության առջև (ՀԹ, 4, 306)։*

Ինչպես երևում է նաև օրինակներից, միասնության պարագայի այս ձևը հնացած է, գրքային և հանդիպում է հազվադեպ (հանդերձ *կապը այժմ գործածվում է գերազանցապես զիջման հարաբերություններ դրսևորելու համար)։*

Այսպիսով՝ միասնության պարագայի արտահայտության համանիշ ձևերի սխեման կլինի՝

Գդործ.հ. + Բ → (Գսեռ հ. + հետ) + Բ → (Գսեռ.հ. + հետ միասին) + Բ → (Գդործ. հ. + հանդերձ) + Բ

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱԲ— Ակսել Բակունց, Երկեր, Երևան, 1955։
Ալ., ՀԱ— Ալազան, Հյուսիսային աստղ, 1956։
ԱՀՍ— Անդրանիկ Հովսեփյան, Սիրտը, 1957։
Անթ.— Սովետական գրականության անթոլոգիա, 1950։
ԱՇ, ՍԱԱ— Ա. Շահինյան, Սուրի և Սամի արկածները, 1962։
ԱՍԵԿ., ԳՁՏ— Անահիտ Սեկոյան, Գարունը ձյան տակ, 1964։
ԱՍԵԿ., ՈՎՄ— Անահիտ Սեկոյան, Ոսկե վազերի մեջ, 1958։
ԲՀ, ՍՁ— Բաղիշ Հովսեփյան, Սերմնացանները չվերադարձան, 1962։
ԲՎ, ԻԳԵ— Բոդդան Վերդյան, Ինչպես է դալիս երջանկությունը, 1957։
ԳՄ, ԵՍ— Գուրգեն Մահարի, Երիտասարդության սեմին, 1956։
ԳՍԹ— Գարեգին Սևունց, Թեհրան, 1953։
ԳՌՇ., Մ— Գագիկ Ռշտունի, Մագիլների մեջ, 1959։
ԴԴ— Դերենիկ Դեմիրճյան, Երկերի ժողովածու, 1956։
ԴԴՎ— Դերենիկ Դեմիրճյան, Վարդանանք, 1951։
ԵՁ, ԸԵ— Եղիշե Չարենց, Ընտիր երկեր, 1955։
ԵԵ— Երեկոյան Երևան, օրաթերթ։
ԸՀՍԳ— Ընտիր էջեր սովետահայ գրականության, 1960։
ԹԴՀ— Թեոդոր Դրայզեր, Հանճարը, 1960։
Իս.— Ավետիք Իսահակյան, Երկերի ժողովածու, 1950—1951։
Իս., ԱԷ— Ավետիք Իսահակյան, Արձակ էջեր, 1954։
ԻԷՐ, ՓԱ— Իլյա Էրենբուրգ, Փարիզի անկումը, 1944։
ԽՀ, ՈԻՄ— Խաչիկ Հրաչյան, Ուրցի Մարան, 1961։
ՀԲ, ԾԱ— Հայնրիխ Բոյլ, Ծաղրածուի աչքերով, 1967։
ՀԹ— Հովհաննես Թումանյան, Երկեր, 1958։
ՀՔ, ՄՏՁ— Հրաչյա Քոչար, Մեծ տան զավակները, 1959։

ՀՍ— Համո Սահյան։
ՀՇ— Հովհաննես Շիրազ, Քնար Հայաստանի, 1958։
Մ— Մուրացան, Երկերի ժողովածու, 1952—1961։
Մ. Ման.— Միքայել Մանվելյան, Երկերի ժողովածու, 1959։
ՄԳՄ— Մուրացան, Գևորգ Մարզպետունի, 1951։
ՄԱՎ— Մկրտիչ Արմեն, Վարդավան, 1962։
ՆԴ— Նար-Դոս, Երկերի ժողովածու, 1955։
ՆՋՀ— Նաիրի Զարյան, Հացավան, 1960։
ՆՋ, ՊՊՆ— Նաիրի Զարյան, Պարոն Պետրոսն ու իր նախարարները, 1958։
ՆՋ, ԱԳ— Նաիրի Զարյան, Արա Գեղեցիկ, 1947։
Շ— Շիրվանզադե, Երկերի ժողովածու, 1950։
ՊՍ— Պարույր Սևակ։
ՊՍ, ԱՋ— Պարույր Սևակ, Անլռելի զանգակատուն, 1959։
ՊՍ, ՄԱՄ— Պարույր Սևակ, Մարդը ափերի մեջ։
ՍՋ, ԵԺ— Ստեփան Զորյան, Երկերի ժողովածու, 1960—1962։
ՍՋ, ՊԹ— Ստեփան Զորյան, Գապ թագավոր, 1944։
ՍՋ, ՀԲ— Ստեփան Զորյան, Հայոց բերդը, 1959։
ՍԱ— Սովետական արվեստ, ամսագիր։
ՍԳ— Սովետական գրականություն, ամսագիր։
ՍԿ— Սիլվա Կապուտիկյան։
ՍՀ— Սովետական Հայաստան, օրաթերթ։
ՍԽ, ԿՇ— Սերո Խանզադյան, Կարմիր շուշաններ, 1958։
ՍՍՇ— Ստաֆֆի, Ստեփան Շահումյան, 1960։
ՍԳԱ— Սովետական գրականության անթոլոգիա, 1950։
ՎՓ, ԵԺ— Վրթանես Փափազյան, Երկերի ժողովածու, 1958։
ՎԱ, ԼԿ— Վախթանգ Անանյան, Լեռնային կածաններով, 1956։
ՎԱ, ԼՀ— Վախթանգ Անանյան, Լեռներ հայրենի, 1963։
ՎԱ, ՀԳ— Վախթանգ Անանյան, Հովազաձորի գերիները։
ՎԱ, ՈՊ— Վախթանգ Անանյան, Որսորդական պատմվածքներ, 1953։
ՎՏ— Վահան Տերյան։
ՎԴԹ— Վահագն Դավթյան, Թոնդրակեցիներ, 1961։
ՎՓ, ՀՀ— Վահրամ Փափազյան, Հետադարձ հայացք, 1956։
Ր— Ռաֆֆի, Երկերի ժողովածու, 1955—1956։
ՔԹՀ— Քրիստափոր Թափալցյան, Հայրենաշեն, 1963։

ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՑԱՆԿ

Արեղյան Մ., *Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965։*

Աբրահամյան Ա. Ա., *Բայը ժամանակակից հայերենում, Երևան, 1962։*

Աբրահամյան Ս. Գ., *Ժամանակակից հայերենի շարահյուսության մի քանի հարցեր, Երևան, 1962։*

Աբրահամյան Ս. Գ. *Ձթեքվող խոսքի մասերը և նրանց բառական ու քերականական հատկանիշների փոխհարաբերությունը ժամանակակից հայերենում, Երևան, 1965։*

Աբրահամյան Ս. Գ., *Ժամանակակից հայերենի քերականություն, Երևան, 1969։*

Աղայան Է. Բ., *Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Երևան, 1966։*

Առաքելյան Վ. Գ., *Հայերենի շարահյուսություն, 1 և 2 հատորներ, Երևան, 1958 և 1964։*

Առաքելյան Վ. Գ., *Ժամանակակից հայերենի հոլովների և հոլովական կապակցությունների իմաստային առումները, Երևան, 1957։*

Ասատրյան Մ., *Բայի սեռերը ժամանակակից հայերենում, Երևան, 1959։*

Գյուլբուդաղյան Ս., *Միակազմ նախադասությունները ժամանակակից հայերենում, Երևան, 1967։*

Պողոսյան Պ., *Բայի եղանակային ձևերի ոճական կիրառությունները արդի հայերենում, Երևան, 1959։*

Ջաճուկյան Գ. Բ., *Ժամանակակից հայերենի զարգացումը և կառուցվածքը, Երևան, 1969։*

Սեակ Գ., *Հայոց լեզվի շարահյուսություն, Երևան, 1965։*

Апресян Ю. Д., Идеи и методы современной структурной лингвистики, М., 1966 г.

Апресян Ю. Д., Проблемы синонима, ВЯ, 1957, № 6.

Апресян Ю. Д., Метод непосредственно составляющих и трансформационный метод в современной структурной лингвистике, «Русский язык в национальной школе», 1962 г., № 4.

Балли Ш., Французская стилистика, М., 1961 г.

Виноградов В. В., Вопросы изучения словосочетаний, ВЯ, 1954, № 3.

Гвоздев А. Н., Очерки по стилистике русского языка, М., 1952 г.

Засорина Л. Н., Трансформация как метод лингвистического эксперимента в синтаксисе, сб. «Трансформационный метод в структурной лингвистике», М., 1964 г.

Ковтунова И. И., О синтаксической синонимике, «Вопросы культуры речи», вып. 1. Москва, изд-во АН СССР.

Милых М. К., Вопросы грамматической стилистики. К синонимике частей речи, «Русское языковедение», вып. 1, Ростов на Дону, 1945 г.

Николаева Т. М., Трансформационный анализ прилагательных с прилагательным-управляющим словом, сб. «Трансформационный метод в структурной лингвистике», М., 1964 г.

Пешковский А. М., Принципы и приемы стилистического анализа художественной прозы, сб. „Ars poetica", М., 1927 г.

Пешковский А. М., Вопросы методики родного языка, лингвистики и стилистики, М., 1930 г.

Сайкиев Х. М., К вопросу о синтаксической синонимике в современном русском литературном языке, «Ученые записки Казахского гос. университета им. С. М. Кирова». т. XIV, вып. 1, Алма-Ата, 1952 г.

Сухотин В. П., Синтаксическая синонимика в современном русском литературном языке, М., 1960 г.

Соболева П. А., О трансформационном анализе словообразовательных отношений, сб. «Трансформационный метод в структурной лингвистике», М., 1964.

Уорс Д. С., Трансформационный анализ конструкций с творительным падежом в русском языке, сб. «Новое в лингвистике», II, М., 1962 г.

Харрис З. С., Совместная встречаемость и трансформация в языковой структуре, «Новое в лингвистике», т. II, М., 1962 г .

Хомский Н., Синтаксические структуры, «Новое в лингвистике», т. II, М., 1962 г.

Шаумян С. К., Структурная лингвистика, М., 1965 г.

Шамуян С. К., Теоретические основы трансформационной грамматики, «Новое в лингвистике», т.II, М., 1962 г.

Шаумян С. К., Соболева П. А., Аппликативная порождающая модель и исчисление трансформаций в русском языке, М., 1963 г.

Шаумян С. К., и Соболева П. А., Аппликативная порождающая модель и формализация грамматической синонимики, ВЯ, 1965 г. № 5.

Шенделс Е. П., Понятие грамматической синонимии, «Научные доклады высшей школы, филологические науки», вып. 1, М., 1959 г.

Шумилина А. Л., К вопросу о синтаксической синонимике, «Исследования по лексикологии и грамматике русского языка», М., 1961 г.

Лексическая синонимия, сборник статей, М., 1967 г.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջաբան 5
Ներածություն 7

ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԵՎ ԲՆՈՒՅԹԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ՀԱՄԱՆԻՇՆԵՐ 43

1. Միակազմ և երկկազմ համանիշ նախադասություններ . . . 43
2. Թերի և լրիվ համանիշ նախադասություններ 67
3. Նախադասության բնույթի փոփոխության հետ կապված համանիշներ 73

Դրական և ժխտական կառուցվածք ունեցող համանիշ պատմողական նախադասություններ 75
Պատմողական և հարցական համանիշ նախադասություններ . . . 84
Հարցական և հրամայական բնույթի համանիշ նախադասություններ . 107
Հրամայական և պատմողական համանիշ նախադասություններ . . 108

ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՆԻՇ ՁԵՎԵՐԸ 119

1. Ստորոգյալի արտահայտության հետ կապված շարահյուսական համանիշներ 119

Ներգործական և կրավորական կառուցվածքի համանիշ նախադասություններ 119
Ստորոգյալի միջոցով դրսևորված ժամանակի համանիշ ձևերը . . 127
Ներկա ժամանակի դրսևորումը համանիշ ձևերի օգնությամբ . . . 130
Անցյալ ժամանակի դրսևորումը համանիշ ձևերի օգնությամբ . . 141
Ապառնի ժամանակի դրսևորումը համանիշ ձևերի օգնությամբ . . 166
Ստորոգյալի թվի հետ կապված համանիշություն 182

2. Ենթակայի արտահայտության համանիշ ձևերը ժամանակակից հայերենում 183
3. Գոյականական անդամի լրացումների արտահայտության հետ կապված համանիշներ 197

Որոշիչ-որոշյալի հարաբերության դրսևորման համանիշ ձևերը . . 197
Հատկացուցիչ-հատկացյալի հարաբերության դրսևորման համանիշ ձևերը 211
Բացահայտիչ-բացահայտյալի հարաբերության դրսևորման համանիշ ձևերը 214

4. Նախադասության բայական անդամի լրացումների արտահայտության համանիշ ձևերը 219

Խնդիրներ 221

Բայի սեռի հետ կապված խնդրառությունը և նրա արտահայտման համանիշությունը 221

Ուղիղ խնդիր 221

Ներգործող խնդիր 225

Բայիմաստի հետ կապված խնդրառությունը և նրա արտահայտման համանիշ քերականական ձևերը 228

Հանգման խնդրի արտահայտության համանիշ ձևերը . . . 229

Վերաբերության խնդրի արտահայտության համանիշ ձևերը . 238

Միջոցի խնդրի արտահայտության համանիշ ձևերը . . . 244

Սահմանափակման խնդրի արտահայտության համանիշ ձևերը . 245

Անջատման և բացառման խնդիրներ 246

Պարագաներ 248

Ժամանակային հարաբերությունների դրսևորումը համանիշ ձևերի միջոցով 248

Տարածական (տեղի պարագայական) հարաբերությունների արտահայտությունը շարահյուսական համանիշների միջոցով . . . 260

Ձևի պարագայի դրսևորումը համանիշ ձևերի օգնությամբ . . . 276

Պատճառահետևանքային հարաբերությունների քերականական դրսևորման համանիշ ձևերը 285

Պատճառի պարագա 286

Հիմունքի պարագա 291

Նպատակի պարագա 293

Պայմանի պարագա 297

Զիջման պարագա 299

Միասնության պարագայի դրսևորումը համանիշ ձևերի միջոցով . . 301

Համառոտագրություններ 304

Օգտագործած գրականության և աղբյուրների ցանկ 306

ՆՎԱՐԴ ԱՎԵՏԻՍԻ ՊԱՌՆԱՍՅԱՆ

НВАРД АВЕТИСОВНА ПАРНАСЯН

ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ՀԱՄԱՆԻՇՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Տպագրվում է Հայկական ՍՍՀ ԳԱ
Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի
Գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝
Ս. Գ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ
Կազմը՝ ՅՈՒ. ԱՌԱՔԵԼՅԱՆԻ
Տեխնիկական խմբագիր
Ս. Կ. ՋԱՔԱՐՅԱՆ
Սրբագրիչ՝ Լ. Կ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՎՖ 03509 Պատվեր 266 Տպաքանակ 2000
ԽՀԽ 1242 Հրատ. 3255
Հանձնված է արտադրության 20/V 1970 թ., ստորագրված է
տպագրության 6/XI 1970 թ., տպագրական 19,37 մամուլ,
հրատ. 14,1 մամուլ, պայման. 18,01 մամուլ։
Թուղթ № 1, 60×84 1/16։ Գինը 1 ռ. 10 կ.։

ՀՍՍՀ Մինիստրների սովետի մամուլի պետական կոմիտեի
պոլիգրաֆարդյունաբերության գլխավոր վարչության
№ 7 տպարան, Երևան, Տերյան 127